

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԿ Դ. ՓՈԼԱՆՅԱՆ

ՔՐԴԵՐԸ ԱԲԲԱՍՅԱՆ
ԽԱՆԻՖԱՅՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(X-XI դդ.)

ԵՐԵՎԱՆ

1999



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԿ Դ. ՓՈԼԱԳՅԱՆ

**ՔՐԴԵՐԸ ԱՐՔԱՍՑԱՆ
ԽԱՆԻՅԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՆՔՐՁԱՆՈՒՄ
(X - XI դդ.)**



ԵՐԵՎԱՆ 1999 թ.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

АРШАК П. ПОЛАДЯН

**КУРДЫ В ЭПОХУ
АББАСИДСКОГО ХАЛИФАТА
(X-XI вв.)**

Ереван - 1999 г.

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARSHAK P. POLADIAN

**THE KURDS IN THE PERIOD
OF ABBASID CALIPHATE
(X-XI - TH CENTURIES)**

EREVAN - 1999

ԳՏՀ 9
ԳՄՊ 63.3
Փ 769

ԳԻՐԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է
Արմին և Բերսեօսի մեքենամեկնողական - ԱՄՆ
ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄ

This Publication was made possible by
Armen and Bersebo Jerejian Foundation Inc. USA

ԽՄՐԱԳԻՐ
ՆԻԿՈՍՅԱՆ ԿՈՎՊԵՆՀՈՄՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՎՏՈՐ, ՊՐՈՇԵՍՈՐ

Փոլադյան Արչակ
Փ 769 Զյուլերը Արքայազան խալիֆայության ժամանակաշրջանում
(X-XI դդ.) եր.: «Ձմանգակ-97» - 304 էջ:

Աշխատությունում արաբալեզու, հայկական, բյուզանդական և այլ սկզբնաղբյուրների ու գիտական հարուստ գրականության հիման վրա, ստացված ամբողջ պատմական լայն կտավի վրա, շարադրված է շրջերի պատմությունն Արքայազան խալիֆայությունում X - XI դդ.:

Համագամանոթն լուսարանվում են շրջական ցեղերի տեղաշարժերը, քրտական և մահմեդական դինաստիաների, ինչպես նաև Բյուզանդական կայսրության և սելջուկ-թյուրքերի փոխհարաբերությունները, սոցիալ-տնտեսական և այլ խնդիրներ:

Աշխատությունը մեխատեսված է արևելագիտ-պատմագրանների, արքայազանների, տասնադների և արաբամահմեդական մշակադարի էթնոհիմնադր-ները հետաքրքրվողների համար:

Փ 0503000000 99 ք.
0003(01)99

ԳՄՊ- 63.3

ISBN 99930-2-056-7

© «Ձմանգակ-97», ք.
© Փոլադյան Ա., 1999 ք.

Ա Ո Ա Ջ Ա Բ Ա Ն

Քրդերի X-XI դդ. պատմությունն իրավամբ համարվում է Ար-
բայան խալիֆայության նպատակ երկրների և ժողովուրդների
պատմության քաղկագուցիչ մասը:

Լինելով քրդերի պատմության թերևս ամենահետաքրքրա-
կան փուլերից մեկը՝ այն նշանավորվեց ռազմաքաղաքական
բուռն իրադարձություններով և սոցիալ-տնտեսական խորք փո-
փոխություններով:

Ժամանակաշրջանը մասնավորապես առանձնանում է նրա-
նով, որ զանգվածաբար ընդունելով իսլամը, քրդական ցեղերը,
ավատատեր վերնախավի գլխավորությամբ, առաջին անգամ
հարաբերական համախմբվածության փորձ կատարեցին, որի
չնոբիվ պատմության թատերաբեմում իրար հետևից երևան նե-
կան քրդական անկախ և կիսանկախ դիմաստիաներ, որոնք, լի-
նելով ավատատիրական ժամանակավոր կազմավորումներ և
ռազմաքաղաքական որոշակի պայմանների արդյունք, աստի-
ճանաբար կազմալուծվեցին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հիմնական առանձնա-
հատկություններից մեկն էլ այն է, որ խալիֆայության տարբեր
վայրերում իր քաղաքական և տնտեսական դիրքերն ամրապն-
դելու և ազդեցության ոլորտն ընդլայնելու լուրջ միտումներ դրսե-
կոտող քրդական ցեղային վերնախավը գրեթե ամբողջությամբ
անցավ իսլամին ծառայության, դրանով իսկ ոչ միայն նպաս-
տեց ցեղակիցների նոր տեղաշարժերին, այլև խթանեց նրանց
ներգրավմանը, այսպես կոչված, արարածառնեղական հասա-
րակական-քաղաքական և մշակութային կյանքի ոլորտներում:

X-XI դդ. քրդական ցեղերի նման անմախտադեպ և շեշտակի
ակտիվացումը սերտորեն կապված էր ամենից առաջ Մերձավոր
և Միջին Արևելքում ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական
այն խորք ճգնաժամի հետ, որը դեռևս IX դ. կեսերից սկսեց ապ-
րել Բաղդադի Արբասյան արքունիքը: Տարբեր մահանգներում
հիշյալ շրջանից սկիզբ առած ժողովրդական խռչող շարժումնե-

րը, հակաարարական և հակաավատատիրական պայքարը, ինչպես նաև տեղական կառավարիչների անցատողական նկրտումները և ավատատիրական շահագործման սաստկացումն ու դրա հետևանքով հասարակության ծայր աստիճան շերտավորումը, մեծապես խարխլեցին արտարական աշխարհակալության դիրքերը:

IX-X դդ. հպատակ ժողովուրդների, մասնավորապես իրանական տարրի՝ շիականության դրոշի ներքո մղած հակաարքասյան տևական պայքարն, այնուամենայնիվ, չոչսպիելի հաջողություն արձանագրեց: 945թ. իրանական Բուիմների (ժազումով ղեկմիկ, դայլամի) կողմից Բաղդադի նվաճումից հետո Արքասյան արքունիքը շուրջ երկու դար գրկվեց քաղաքական իշխանությունից, և արևելյան խալիֆայության ամծայրածիր տարածքներում ճանաչվեց միայն նրա հոգևոր իշխանությունը:

Իրանական տարրի ակտիվացումը նոր լիցք հաղորդեց նաև տարբեր մահանգներում քրդական ցեղերի ռազմաքաղաքական գործողություններին: Այս շրջանից սկսած մինչև XI դ. սելջուկ-թյուրքերի երևան գալը Մերձավոր և Միջին Արևելքում, պատմական համգամանքների բերումով, քրդերը կամա թե՛ ակամա գործուն շփումներ հաստատեցին մահմեդական իշխանությունների հետ՝ առամձին վայրերում ձևոք բերելով քաղաքական որոշակի ինքնուրույնություն:

XI դ. 20-30-ական թվականներից հետավոր Միջին Ասիայից դեպի արևելյան խալիֆայության տարածաշրջան սկիզբ առավ թյուրքական վայրագ ցեղերի՝ բախտոզ օղուզների եզու շարժումը, որը նույն դարի 40-ականներին հող մախսապատրաստեց սելջուկ-թյուրքերի ավերիչ արշավանքների համար: Մերձավոր և Միջին Արևելքում սելջուկ-թյուրքերի երևան գալն ու երկարատև տիրապետությունը րախտորոշ վնաս հանդիսացավ տարածաշրջանի երկրների և ժողովուրդների կյանքում:

Քոչվորական նոր աշխարհակալության լուծը դաժան և սոսկալի եղավ խալիֆայության քոյոթ ժողովուրդների, այդ թվում նաև քրդերի համար: Աստիճանաբար գրավելով քրդական շրջանները նույնպես, սելջուկ-թյուրքերի հուժկու հարվածների հետևանքով իրար հետևից քայքայվեցին նաև քրդական դինաստիաները:

Քրդերի պատմության այս ուշագրավ, բարդ և ռազմաքաղա-

քական քազում իրադարձություններով չի ժամանակաշրջանն առ այսօր լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել արևելագետների կողմից: Արևելյան և եվրոպական լեզուներով առկա հրատարակություններում գլխավորապես լուսարանվում են քրդերի նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության եիմնախնդիրները: Կա քացատրվում է նախ և առաջ նրանով, որ ցարդ անհրաժեշտ յավով չրջանառության մեջ չեն դրվել քրդերի միջնադարյան պատմության ուսումնասիրությանը նպաստող տարաբնույթ սկզբնաղբյուրների հաղորդումները:

Ենչտ է, քեպետ վերջին շրջանում այս քացը լրացնելու ուղղությամբ քե՛ մեզանում, քե՛ արտասահմանում փոքրիշատե տեղաշարժեր նկատվում են, այնուամենայնիվ, կատարված աշխատանքը գոնացուցիչ համարել չի կարելի¹:

Քրդերի X-XI դդ. պատմության ուսումնասիրությունն ինքնին ուշագրավ է, և այն հետաքրքրական մաս մերօրյա մերձավոր-արևելյան տարածաշրջանում տեղի ունեցող բուն իրադարձությունների, հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական գործընթացների պատմական մախաղդյալներն առավել ճշգրիտ մեկնաբանելու գիտական տեսանկյունից:

Խնդրո առարկա քեման խիստ այժմեական է ոչ միայն քրդե-

¹ Г. Акопов, *Арабские источники по истории курдов и версии их арабского происхождения*. - *Արժանիք և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, III, Երևան, 1967, էջ 175-207, *Шараф Хан Вадлиси, Шараф-наме*, пер., пред., примечания и приложения Е. И. Васильевой, т. I, М., 1979, т. II, М., 1976, А. Панаэки, *Новые источники по истории курдского народа*. - *Արժանիք և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, VII, Երևան, 1975, էջ 209-225, *Мела Мехмуд Байазидж, Таварих-и кадим-и Курдистан* ("Древняя история Курдистана"), т. I, пер. "Шараф-Наме" Шараф-хана Вадлиси с персидского языка на курдский язык, изд. текста, пред., указатели и оглавление К. Курдоева и М. Мусазаяна, М., 1986, *Мах. Шараф-ханум Курдистани, Хроника Ардалан*, пер. с персидского, введение и примеч. Е. И. Васильевой, М., 1990, А. Поладжян, *Курды в VII-X веках по арабским источникам*, Ереван, 1987, *Mirell Gallenti, Curdi e Kurdistan opere italiane del XIII-XIX secolo*, In. - "Rev. oriente Moderno Anno LXII, No XI, Roma, 1978. *Տես՝ արարելին քարգմանությունը՝ Միջին Գալիերի, առ-Սուրահ ալ-բուրեի Ֆի մուալիմար ալ-խալիմն*. - *«Սուրուրար ալ-մալմա ալ-իլմի ալ-իրակի»*, VIII, Բաղդադ, 1981, էջ 227-300, *Արշակ Փալալյան, ալ-Արբաղ հասար ալ-մասաղեղ ալ-արարիլա*, Բեյրութ, 1995:

րի պատմական զարգացման փուլերն ուրվագծելու, այլ՝ մեր-
ժավորարևելյան մի շարք երկրներում արդի քրդական հիմ-
նախնդիրը օրյեկտիվորեն գնահատելու և դրա պատմական ար-
ժատները լուսարանելու տեսակետից մույնպես: Այն միաժամա-
նակ բացառիկ կարևոր նշանակություն ունի հայագիտական
համալիր ուսումնասիրությունների համար, քանի որ հայերը և
քրդերը հնուց ի վեր դրացի ժողովուրդներ են և շատ հարցերում
նրանց պատմությունը միահյուսված կամ խաչաձևված է:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ստեղծված ռազմա-
քաղաքական բարենպաստ պայմանների հետևանքով սկիզբ ա-
ռառվ քրդական ցեղերի ռազմագաղթը դեպի հյուսիս՝ պատմա-
կան Հայաստանի հարավարևմտյան շրջանները: Հետագայում,
XV-XVI դդ., այդ ռազմագաղթը, հատկապես քուրք-խրանական
հակամարտությունների ընթացքում, սուհեիզմի դրոշի ներքո
կողմնորոշվելով դեպի Օսմանյան Թուրքիա¹, հող մախսապատ-
րաստեց քրդական ցեղերի խոշոր զանգվածների՝ Կենտրոնա-
կան Հայաստանի լեռնային շրջաններ ներքափանցելու համար:
Ապա, ավելի ուշ, XIX-XX դդ. հայկական կոտորածներից հետո,
աստիճանաբար նրանք վերաբնակվեցին Արևմտյան Հայաս-
տանի գոծքե ռոջ տարածքում:

Ժամանակակից քուրդ մտավորականությունը, խեղաթյուրե-
լով պատմական իրողությունները, ակտիվ քարոզչություն է ձեռ-
նարկել՝ փորձելով Արևմտյան Հայաստանը դիտարկել իբրև
քրդական էքնոսի ձևավորման բնօրրան՝ քրդերի պատմական
հայրենիք: Նման քարոզչության սնանկությունը ցույց տալու,
պատմական իրողությունը փաստելու հանգամանքներն իրենց
հերթին ներկա թեմայի ընտրությունն ավելի այժմեական են
դարձնում:

Աշխատության ժամանակագրական շրջանակներն ընդգր-
կում են մուտավորապես երկհարյուրամյա պատմություն՝ X դ. ա-
ռաջին կեսից սկսած մինչև XI դ. վերջը՝ Մեծ սելջուկների տիրա-
պետության ժամանակաշրջանը: Այն լիովին համապատասխա-
նում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների

¹ Վ.Ա.Բաշտոբզյան, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայս-
րությունում, Երևան, 1989թ., էջ 21-27:

պատմության պարբերացմանը:

Մույն աշխատությունը, հանդիսանալով հեղինակի նախորդ գործերի շարունակությունը, իր հարցադրումներով և քարճրացված հիմնախնդիրներով, փաստորեն, արևելագիտության կողմից առաջին փորձն է քրդերի՝ Աբրասյան խալիֆայության ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելու ուղղությամբ: Այդ մասին մեզ հասած նյութերը, որոնց քաջարձակ մեծամասնությունը վերաբերում է ռազմաքաղաքական անցուղարձեղին, գլխավորապես արտացոլվել են միջմաղարյան արարալեզու պատմական, աշխարհագրական և այլ կարգի աղբյուրներում, որոնց զգալի մասը չի դրվել գիտական շրջանառության մեջ:

Արարալեզու և հարևան այլ ժողովուրդների սկզբնաղբյուրների ուսումնասիրության շնորհիվ առաջին անգամ ի մի են բերվել աշխարհագրական հսկա տարածքում ցրված քրդերի X-XI դդ. պատմության տարբեր կողմերի վերաբերյալ տվյալները, որոնցով էլ պայմանավորված են աշխատության կառուցվածքն ու քննարկվող հարցերը:

Լինելով այդպիսին՝ ուսումնասիրության մեջ արծարծվել են միայն այնպիսի խնդիրներ, որոնց մասին այս կամ այն չափով փաստական նյութ են ընձեռում ամենախիմնական սկզբնաղբյուրները՝ արարալեզու հեղինակների երկերը:

Քացի պատմական զանազան խնդիրներից, աշխատության մեջ ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման կտավի վրա առաջին անգամ հետազոտության առարկա է դարձել քրդական երեք դիմաստիանների՝ Հասամվայիների, Աննազինների և Մարվանյանների պատմությունը: Այդ ընտրությունը պատահական չէ. հաշվի է առնվել այն հանգամանքը, որ վերոհիշյալ դիմաստիանների էթնիկական տարրը հիմնականում քաղկացած է եղել քրդական ցեղերից, որոնք էլ հանդիսացել են դրանց հիմնադրման և զոյատևման նախապայմանը: Քացի այդ, նկատի են առնվել աշխարհագրական այն տարածքները, որտեղ քրդերը շարունակում են ապրել մինչև մեր օրերը:

Աշխատությունում առաջին անգամ փորձ է կատարվել լրացնել այն քացը, որն առկա է քրդերի միջմաղարյան պատմության հետազոտման քննազավառում: Ելնելով դրանից՝ հեղինակը նպատակ է ունեցել հնարավորին չափ մամրակլեկիտ ուսումնասիրել միջնադարյան արարալեզու պատմիչների, ժամանակա-

գիրների, աշխարհագիրների, կենսագիրների մեծածախալ գործերը քննադրի լեզվով, ինչպես նաև, կարեւորության շրջանակներում, հայկական, քյուզանդական, ասորական, պարսկական, այդ թվում նաև քրդական աղբյուրները, որոնք նրբեմն շահեկան նյութ են պարունակում խնդրո առարկա թեմայի այս կամ այն հարցի վերաբերյալ:

Խճբավորելով և գիտական մշակման ու վերլուծության ենթարկելով IX-XV դդ. արարալեզու հեղինակների երկերում և օժանդակ այլ աղբյուրներում քրդերի X-XI դդ. պատմության տարրեր կողմերի լուսարանմանը նպաստող ցրված տվյալները՝ աշխատության հեղինակն իր աջակցությունը և հետևյալ խնդիրները.

- ցույց տալ քրդերի դերն Արբասյան խալիֆայությունում՝ ռազմաքաղաքական իրադարձությունների լայն կտավի վրա,
- լուսարանել քրդական ցեղերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքը, տեղաբաշխումը և տեղաշարժերի դրդապատճառները,
- քննական վերլուծության ենթարկել ուսումնասիրվող ժամանակաշրջանում քրդերի արարական ծագման վարկածի առաջացման և մշակման քաղաքական դրդապատճառները,
- վերլուծել քրդական երեք դինաստիաների՝ Հասանվայիյեների, Ամնազյանների և Մարվանյանների ձևավորման պատմական միաստորյալները, գործունեությունը, նրանց փոխհարաբերությունները հարևան իշխանությունների հետ,
- լուսարանել քուրդ-թյուրքական փոխհարաբերությունները՝ Մերձավոր Արևելքում Մեծ սելջուկների երևան գալուց հետո,
- դիտարկել իսլամի դերը քրդական ցեղային վերնախավի ռազմաքաղաքական կողմնորոշման մեջ և գործողություններում:

Աշխատությունը շարադրելու համար հիմնախարհիսխ են դարձել պատմական և աղբյուրագիտական վերլուծության սկզբունքները, որոնք մշակվել են հայ, ռուս և արևմտաեվրոպական արևելագիտության և պատմագրության կողմից:

Քրդերին վերաբերող հիմնական և օժանդակ սկզբնաղբյուրների հատրդումները վերլուծելու և դրանք Մերձավոր և Միջին Արևելքի պատմության ընդհանուր կտավի վրա մեկնաբանելու համար օգտագործվել են՝ հայ, ռուս, եվրոպացի և արևելյան պատմաբան-արևելագետների աշխատությունները:

ԱՂՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. ԱՂՐՅՈՒՐՆԵՐ

Միջնադարյան արաբալեզու աղբյուրներն առաջնակարգ տեղ են զբաղում Արևելքի ժողովուրդների գրավոր հիշատակարանների շարքում և այժի են ընկնում ոչ միայն իրենց ջանակով, հաղորդած նյութերի առատությամբ ու քաղմագանությամբ, այլև՝ հիմնահարցերի, ժամանակագրական, ինչպես նաև տարածքային ընդգրկումներով: Դրանք հանդիսանում են աղաթական խալիֆայության և առհասարակ հայատակ և հարևան ժողովուրդների ու երկրների միջնադարյան պատմության, թերևս, ամենահիմնական սկզբնաղբյուրները: Ուստիև, առանց չափազանցության կարելի է ասել, որ այսօր արաբամահմեդական աշխարհի միջնադարյան ռազմաքաղաքական և մշակութային պատմությունը և դրա հետ սերտորեն չազդեալված մյուս խնդիրների ուսումնասիրությունը համարյա անհնար է՝ առանց արաբալեզու տարաբնույթ սկզբնաղբյուրների ներգրավման¹:

Հայտնի է, որ VII դ. 30-40-ական թվականներից ձեռնարկված արշավանքների շնորհիվ արաբները միաժեզին հսկայական տարածքներ: Իսլամի՝ միաստվածության ուսմունքի քարոզչության դրոշի ներքո և Մուհամմադ մարգարի վախճանվելուց հետո ձևավորված արաբական խալիֆայության գերիշխանությունը ճանաչվեց ամձայրածիր տարածքների վրա: Այսպիսի

¹ В.И.Бедлев, Введение.-Арабские источники по истории туркмен и Туркменики IX-XIII вв. - Материалы по истории туркмен и Туркменики", т. I, М-А, 1939, с. 12.

կան պետությունը թեպետ իր առաջացման ու ճնալորման մի շարք կողմերով նման էր քարքարոս հոմերի, գոթերի, թյուրքերի աշխարհակալություններին, սայց, ի տարրերություն նրանց, ավելի երկար գոյատևեց և յափազանց մեծ ազդեցություն բողեց համաշխարհային պատմության վրա:

Խալիֆայությունում տարրեր քաղաքակրթությունների փոխազդեցությունը ծնեց մի նոր, բարձր զարգացած մշակույթ, որի լեզուն՝ արաբերենը, իսլամի տարածման հետ միասին, VIII-IX դդ. դուրս եկավ արքունիքի շրջանակներից և դարձավ արաբամահմեդական աշխարհի գրավոր մտքի, գիտության և հաղորդակցության հիմնական լեզուն:

Իբրև խալիֆայության պետական և Դուրանի լեզու, արաբերենով սկսեցին գրել մաս հպատակ ժողովուրդների տարրեր մտածողներ¹, կարևոր ավանդ ներդնելով միջնադարի մշակույթի, հատկապես գիտության և գրականության զարգացման բնագավառում²: Սիա թե ինչու մեր օրերում համաշխարհային արևելագիտության մեջ ընդունված է միջնադարյան արաբամահմեդական գրականությունն ընդհանրապես անվանել արաբալեզու, քանզի նրա ստեղծման և զարգացման գործում զգալի դեր են խաղացել մաս խալիֆայության հպատակ տարրեր ժողովուրդներ: Մի գրականություն, որը ցայսօր ոչ միայն չի կորցրել իր գիտական հետաքրքրությունն ու կարևորությունը, այլև հանդիսանում է համաշխարհային գրավոր մտքի խոշորագույն նվաճումը, որը, դժբախտաբար, ամբողջությամբ վերցրած, դեռևս շարունակում է մնալ դժվար մատչելի³:

* * *

Արաբական պատմագրությունն սկիզբ է առել վաղ միջնադարում՝ արաբական արշավանքներից և խալիֆայության կազմա-

¹ Նույն տեղում, էջ 12-13:

² А. Б. Халидов, Ислам и арабский язык. "Ислам, религия, общество, государство", М., 1984, с. 69-75., նույնի "Арабский язык. Очерки истории арабской культуры, X-XV вв.", М., 1982, с. 13-74.

³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս И. Кречковский, Избранные соч., т. I, М., 1935, т. IV, М., 1957, Х.А.Р. Гибб, Арабская литература, М., 1960.

վերումից հետո: Նրա մախնական զարգացման գործում մեծ դեր են խաղացել մախ և առաջ պատմական գրույցներն ու հարկամատյանների նյութերը, ինչպես մաև 'Դամասկոսի ու Բաղդադի' խալիֆայության երկու մայրաքաղաքների գիվանների վաստաթղթերը: Մուսավորապես VIII դ. երկրորդ կեսից սկսվեց պատմական գրույցների գրատույնը: Որքան մեզ հայտնի է, մեան մախաձեռնության հեղինակն էր VIII-IX դդ. ակամավոր պատմիչ ար-Աակիդին, որի գործը՝ «Ջիթաթ ար-մադազի» («Գիրք մվաճումների»), գլխավորապես արաբական արչականցների վերաբերյալ մեզ չի հասել և առնչյալ կորած է համարվում: Ալ-Աակիդիի հաղորդումները մեծ չափով արտացոլել են հետագա տարբեր մատենագիրների երկերում:

Արաբական պատմագրության զարգացման համար կարևոր նշանակություն են ունեցել մաև պարսից արքաների հայտնի մատյանը՝ Խվաթայ-Մամակը և Աստվածաշնչի (Հին և Նոր կտակարանների) նյութերը¹:

Աղբյուրների մեան ենքի վրա ձևավորվեց արաբական պատմագրությունը, որը, սակայն, քառն զարգացում ապրեց միայն IX դարից: Ըստ որում, եթե սկզբնական շրջանի պատմիչներն իրենց երկերում կանգ էին առնում հիմնականում արաբական մվաճումների, խալիֆաների և այլ գործիչների գործունեության, իսլամի տարածման նղանակների և համանման հարցերի վրա, ապա հետագա հեղինակներն իրենց գործերը շարադրեցին համաշխարհային՝ տիեզերական պատմության շրջանակներում:

Ելնելով ռազմաքաղաքական միտումներից՝ ինչպես պատմագրությունը, այնպես էլ աշխարհագրությունը, իրրև գիտություններ, արժանացան արքունիքի և ամիրայական տների առանձնահատուկ ուշադրությանը:

Արաբական խալիֆայությունում աշխարհագրության զարգացման գործում զգալի դեր խաղացին արքունիքի վարչական

¹ Ա. Տեք-Առնդյան, Արաբական ամիրայությունները Բազջատուեյազ Հայաստանում, Երևան, 1965, էջ 11, նույնի՝ Արաբ պատմագրությունը և իրն ար-Աակիդը-Օտտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, XI, արաբական աղբյուրներ, Բ, Իրն ար-Աակից, քարզմ. քննարկից, ստաշարսն և ծանոթ. Ալամ Տեք-Առնդյանի, Երևան, 1981, էջ 6:

ճարմինների գործունեությունը և առևտրի ցանցի ընդլայնումը: Խալիֆայության հարկերի և տուրքերի քաշխումն ու հավաքումն ամենից առաջ պահանջում էին մանրամասն նկարագրել նվաճված տարածքները՝ քնակելի վայրերը, երկրագործության, անասնապահության և արհեստագործական արտադրանքը, ինչպես նաև որոշ չափով երկրի ընդերքի հարստությունները, որոնք հողի հետ միասին համարվում էին խալիֆայության սեփականությունը:

Արարալեզու աշխարհագրական առաջին գրավոր սկզբնաղբյուրը՝ «Քիթաբ ալ-մասալիք ուալ-մամալիք» («Ճանապարհների ու երկրների մատյան») մեզ է հասել IX դարից: Հեղինակը ծագումով պարսիկ Իբն Խուրդադրեյին է, որի գրառած տեղեկությունները հետագայում լայնորեն օգտագործվեցին մուսուլման աշխատությունների հեղինակների կողմից¹:

Իբն Խուրդադրեյի, ալ-Յակուբի և IX-X դդ. այլ մատենագիրների, ինչպես նաև հարկամատյանների նյութերի հիման վրա X դ. արաբական աշխարհագրությունը թևակոխեց զարգացման մոր փուլ: Ասպարեզ եկավ աշխարհագիրների մի նոր և փայլուն համաստեղություն, որը դրեց արաբական աշխարհագրության դասական դպրոցի հիմքը: Այս շրջանի ականավոր ներկայացուցիչներից էին Իբն ալ-Իսրախին, Իբն Հաուկալը, Աբու Դուլաֆը, Իբն ալ-Ֆակիհը, ալ-Մուկադդասին, հանրահայտ մատենագիր-աշխարհագիր ալ-Մասուդին և ուրիշներ, որոնք այդ գիտությունը հասցրեցին մոր մակարդակի՝ թողնելով կոթողային աշխատություններ:

IX-XI դդ. աշխարհագիրների նյութերի հիման վրա, փաստորեն, XII-XIII դդ. երևան եկան աշխարհագրական քառադասներ: Դրանց հաջորդեցին, ինչպես հայտնի է, Մամլուքյան շրջանի (1250-1517թթ.) Եգիպտոսում գրված հանրագիտարանները²:

Խալիֆայության և հպատակ երկրների ու ժողովուրդների միջնադարյան պատմության ուսումնասիրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում XII-XIII դդ. ականավոր աշխարհագիր Յակուբ ալ-Համավիի աշխատությունները: Այս հեղինակը համաաշխարհային հռչակ ձեռք բերեց մասնավորա-

¹ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայություններ, էջ 20-21:

² Նույն տեղում, էջ 20:

պես իր «Մուջամ ալ-բուդան» (Երկրների քառագիծը) քազմահատոր աշխատության շնորհիվ: Այն մի համապարփակ համարագիտարան է, որը մինչև օրս ոչ միայն չի կորցրել իր գիտական արժեքը, այլև համարվում է արևելագետների և միջնադարագետների սեղանի գիրքը: Յուրաքանչյուր տեղանվան հետ միասին տրվում են նաև մի շարք պատմաաշխարհագրական տեղեկություններ¹:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմական անցյալը, մշակույթը և դրանց հետ սերտորեն շաղկապված այլևայլ հիմնահարցեր հետազոտելու համար առաջնակարգ նշանակություն ունեն սեփական գրավոր հուշարձանները: Մակայն, պետք է արձանագրել, որ հակասակ այդ իրողության շատ հաճախ քրդերի պատմության տարբեր դարաշրջանների ուսումնասիրությունը, ինչպես հայտնի է, հնարավոր է դառնում միայն հարևան ժողովուրդների սկզբնաղբյուրներով: Որպես այդպիսին, մեզն հետազոտությունները, իբրև կանոն, միշտ էլ կարող են թերի լինել, և բնական պատճառներով, կատարելապես չեն լուսաբանում այս կամ այն խնդիրն իր բոլոր կողմերով:

Քրդերի հին և միջնադարյան պատմության մասին մեզ հասած քրդական միակ աղբյուրը Բաղեչի քուրդ իշխան, XVI դ. հեղինակ Շարաֆ խան Բիդլիսի «Շարաֆ-Նամե» երկն է, որը XIX դ. 60-ական թթ.-ից սկսած, Վ.Ալեյամինով-Ջերմուլի և Ֆ.Շ. Շարմուսայի հրատարակությամբ, լայնորեն մտավ գիտական շրջանառության մեջ²: Պարսկերեն գրված այդ աշխատությունը, որի հրատարակությունն իրականացվել է մի քանի լեզուներով, այդ թվում և քրդերեն³, գրվել է գլխավորապես արաբալեզու

¹ Նույն տեղում, էջ 25:

² Scheref-nameh ou Histoire des Kourdes Par Scheref, Prince de Bidlis, Publiee Pour la Premier Foie, Par V. Vellaminof-Zernof, Texte persan, M., St.Pbg., t. I, 1860, t. II, 1862.

³ Шараф Хая Бидлиси, Шараф-наме, пер., пред., примечания и приложения Е. И. Васильевой, т. I, М., 1967, т. II, М., 1976, Мела Махмуд Байазиди. Таварих-и кадим-и Курдистан ("Древняя исто-

նյութի հիման վրա: Սակայն, որքան տարօրինակ է, քայք ցան վիաստ է, որ քուրդ պատմիչն իր երկում չափազանց քիչ տեղ է հատկացրել մեզ հետաքրքրող թեմային:

Քրդերի հարևան ժողովուրդների՝ հայկական, պարսկական, ասորական, բյուզանդական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի մասին եզակի և հույժ կարևոր նշանակություն ունեն IX-XV դդ. արաբալիզու սկզբնաղբյուրները: Քեպետև դրանց հաղորդած փաստական նյութը միշտ չէ, որ ունի անհրաժեշտ մակարդակ, այնուամենայնիվ, առայժմ մնում են որպես քրդերի միջնադարյան պատմության ուսումնասիրության անենափեմական հուշարձանները: Արաբալիզու սկզբնաղբյուրների մանրազնին և համալիր հետազոտումը վկայում է, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմության մասին նյութերը գլխավորապես վերաբերում են ռազմաքաղաքական իրադարձություններին:

Քրդերի X-XI դդ.պատմության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր են հաղորդում XI դ. հեղինակներ Իբն Միսքավայիը¹, Աբու Շուքա՝ առ-Նուզրավարին², Հիլալ առ-Մարին³ և այլք: Լինելով դեպքերի ժամանակակիցներ՝ նրանք հազվագյուտ տվյալներ են հաղորդում քրդական դինաստիաների, քրդերի և հարևան արաբ Համդանյանների, իրանական Բուիների հարաբերությունների մասին:

Մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ և օգտակար

рия Курдистана»), т. I, пер. с персидского языка на курдский язык, изд. текста, пред., указатели и оглавление К.Курдоева и М.Муссаляна, М., 1986, Շարաֆ-Նամե, քարիխ մոխասաօ Քուրդիստան, Քահրան, 1343 (պարսկերեն), Շարաֆ խան ալ-Բիդլիսի, Շարաֆ-Նամե, I, Թեյրոֆ, 1987...

¹ Ibn Miskawaihi, The Experiences of the Nations, ed. by H.F. Amidroz, V. I-II, Oxford, 1920-1921.

² Abu Shuja Rudhrwari, Continuation of the Nations (arab. textes), ed. by H.F. Amidroz, and D.S.Margolions, V. III, Oxford, 1921.

³ Hilal as-Sabi, Kitab al-Wuzara and fragment of his history (389-393a.h.) ed. by H.F.Amidroz, Leiden, 1904.

նյութեր են պարունակում XII դ. հեղինակներ՝ Իբն ալ-Ջաուզիի¹, Իբն ալ-Կալամիի² և այլոց մատենագրությունները: Վերին Միջագետքի և Հայաստանի նարավ-արևմտյան գավառներում քրդական Մարվանյան դինաստիայի քաղաքական և որոշ չափով սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար եզակի նշանակություն ունեն մասնավորապես XII դ. արաբ պատմիչ Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի վկայությունները³:

Իբն ալ-Ազրակը ծնվել է Մայյաֆարիկիցում Ղահրկերտ, պատմ. Տիգրանակերտ, այժմյան Միլվան) քարձրաստիճան արարի ընտանիքում: Նա վարել է մի քանի պաշտոններ. հիմնականում վերակացուի պաշտոն Մայյաֆարիկիցի շրջանում, Հիսն Քայֆայում, Դամասկոսում և Վրաստանում: Դրա հետ մեկտեղ քավական շատ է ճանապարհորդել, եղել է Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում Իրանում, Իրաքում, Ֆազիրայում, Միրիայում, Հայաստանում և այլուր:

Հիջրի 540 (1153) թ. Իբն ալ-Ազրակը մեկնել է Վրաստան և որոշ ժամանակ ծառայության անցել վրաց թագավոր Դավիթ Շինարարի (1089-1125 թթ.) որդու՝ Դմիտրի Առաջինի (1125-1156 թթ.) մոտ:

Արթիմիս հետ միասին նա եղել է վրացական մի քանի նահանգներում, Արխագիայի թագավորի մոտ, Ալլամների երկրում ընդհուպ մինչև Դերքենդ, հանդիպել է արաբների հետ, որոնք, ինչպես ինքն է վկայում, այնտեղ էին հաստատվել 500 տարի առաջ: Այդ ամենի մասին Իբն ալ-Ազրակը շատ հետաքրքրական և եզակի նշանակություն ունեցող տվյալներ է հաղորդում իր երկրում⁴: Նրա նյութերը խիստ կարևոր են տվյալ ժամանակաշրջանի՝ ինչպես Անդրկովկասի երկրների պատմության, այնպես

¹ Իբն ալ-Ջաուզի, ալ-Մոնրազիմ ֆիր-բարիխ, VII-X, Հայդարաբադ, 1359 (այստեղև՝ Իբն ալ-Ջաուզի):

² Ibn al-Qalanisi, History of Damascus, by H.F. Amidroz, Leiden, 1908.

³ Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկի, բարիխ, հակակահուռուս կաղապար ընտանիքի Արդ ալ-Լաուիֆ Աուադ, ալ-Կահիրա, 1959 (այստեղև՝ Իբն ալ-Ազրակ):

⁴ Г.В. Церетели, Арабская хрестоматия, Тбилиси, 1949, с. 12, В.Ф. Минорский, История Ширвана и Дербенда, М., 1963, с. 222-225.

էլ մահմեդական աշխարհի հետ ունեցած փոխհարաբերութիւն-
մերի ուսումնասիրության տեսանկյունից¹:

Իրն ալ-Ազրակի աշխատության ամբողջական խորագիրն է «Թարիխ Մայյաֆարիկին վա Ամադ» (Մայյաֆարիկինի և Ամի-
դի պատմություն): Սակայն պատմագիտական գրականության
մեջ այն ավելի շատ հայտնի է «Թարիխ Մայյաֆարիկին» կամ
«Թարիխ ալ-Ֆարիկի» (ալ-Ֆարիկիի պատմություն) վերնագրե-
րով: Նրա «Պատմությունը», որի սկիզբն ու վերջը կորած է հա-
մարվում, երկու՝ Մեծ (Օր. 5.803) (209 թերթ) և Փոքր (Օր.6.310)
(140 թերթ) խմբագրություններով գտնվում է Իրիտանական
քանգարանում: Երկու ձեռագրերն էլ մերկայացնում են նույն
քննադիրը՝ «Մայյաֆարիկինի պատմությունը»:

Իրն ալ-Ազրակի քրիտանական ձեռագրից առանձին քաղ-
վածքներ քարգմանաբար հրատարակել են արևելագիտներ Հ.Ֆ.
Ամեդրոզը², Մ. Կանարը³, Վ. Մինորսկին⁴, Գ. Մերեբելին⁵, Ա.
Տեր-Ղևոնդյանը⁶:

1959 թվականին, Կահիրեում արաբ գիտնական Բադավի
Արդ ալ-Լատիֆ Ավատը Մեծ ձեռագրից հրատարակեց մի մեծ
հատված Մարվանյան դինաստիայի մասին՝ «աղ-Իատլա ալ-
Մարվանիյա» («Մարվանյան պետություն»)՝ խորագրով: Մույն
հատվածը (ձեռ. քուրթ. 121-Ա-160-Բ) հրատարակյի կողմից ու-

¹ Յ.Տ.Տիխարուաձե, "Тарих Майяфарикин" ал-Фарикн как источник по истории Кавказа, в кн.: IV Всесоюзная конференция арабистов, тезисы, докл. и науч. сообщения, Ереван, 1985, с. 109.

² History of Damascus by Ibn al-Qalanisi, ed. by H.F.Amedroz, Leiden, 1908, p. 360-365.

³ M. Canard, Sayf ad-Daula, Recueil de textes, Alger, 1934, p. 71-78, 208-210, 257, 276-280, 283-285.

⁴ V. Minorsky, Caucasus in the History of Mayyafariqn. - BSOAS London, 1949, V. XIII, p. 1, p. 27-35; В.Ф. Минорский, История Ширвана и Дербенда, с. 222-225.

⁵ Г.В. Церетели, Арабская христометия, Тбилиси, с. 68-75.

⁶ Ա. Կ. Տեր-Ղևոնդյան, Ֆարիկիի "Նփրկերտի պատմությունը" (ԺԲ դ.) Հյուսիսային Հարաստանի դկարքի մասին. Մերձավոր և Միջին Արևելքի հրկրներ և ժողովուրդներ, VI, արարական երկրներ, Ե., 1974, էջ 195-212:

⁷ Տես՝ Իրն ալ-Ազրակ, նշվ. աշխ.:

դեկզվել է ընդարձակ առաջադրանով՝ արաբերեն և անգլերեն լեզուներով: Տեքստը երկու՝ Մեծ և Փոքր, ինչպես նաև Բողոքինի գրադարանում (N: Bod. March 333) պահված Ամանուն հեղինակի մեկ այլ ճեռագրի հետ համեմատության շնորհիվ քավական վերականգնվել է: Առանձին գրքով հրատարակած հատվածը Ռ. Ավադի կողմից գիտական խոր վերլուծության չի ենթարկվել, քերի են նաև ծանոթագրությունները: Այնուհանդերձ, արաբ գիտնականին հաջողվել է գիտական շրջանակներին ներկայացնել Մարվանյան դինաստիայի պատմության մասին Իբն ալ-Ազրակի ամբողջական տեքստը:

Առաք պատմարանի հրատարակած հատվածը և կցած առաջաբանը բուրբերեն է քարգմանել Մ.Ամին Բոզարալանը, որը «Մարվանյան քրդերի պատմություն» խորագրով տպագրվել է երեք անգամ: Այն վերջին անգամ լույս է տեսել Գերմանիայում¹:

Մեզ հետաքրքրող հատվածը քաղկազած է մոտավորապես 6 քաժիններից: Ժամանակագրական կարգով Իբն ալ-Ազրակը ներկայացնում է դինաստիայի հիմնադրման պատմությունը՝ սկսած Բադից: Պետք է ասել, որ այս քաժինը, որտեղ նկարագրվում են X դ. 80-ական թթ. Վերին Միջագետքում քուրդ առաջնորդի ռազմական գործողությունները, քավական աղքատ է: Օրինակ, նույն շրջանի վերաբերյալ ավելի ընդարձակ տեղեկություններ են հաղորդում այլ արաբ հեղինակներ, հատկապես Իբն ալ-Ասիրը: Այդ քաժնում նա, փաստորեն, տալիս է դինաստիայի էլիմադրումը, սակայն համարյա լուր է դեպի հյուսիս քրդերի տարածման, ռազմական գործողությունների մասին: Դինաստիայի պատմության մամրամասներն սկսվում են 990 թ-ից, Բադի սպանությունից հետո: Առհասարակ խնդրո առարկա հատվածի առաջին մասը, ամբողջությամբ վերցրած, քերի է և զգացվում է նյութի պակաս: Իսկ երկրորդ մասը XI դարից, իրոք, պառնակում է փաստական հարուստ նյութ:

Մարվանյան դինաստիայի մասին Իբն ալ-Ազրակի մեզ հասած տվյալները կարելի է բաժանել մի քանի խմբերի: Ջգաչի մաս են կազմում ռազմաքաղաքական անցուղարձերին վերաբերող նյութերը, ուր ցույց են տրվում դինաստիայի փոխհարաբե-

¹ Ibsul-Ezrak, Mervani Kurtleri tarihi, Turkcesi: Mehmet Emin Bo-zarslan, Köln, 1989.

րություններն իրանական Բուլիների, արար Համդամյանները, Բյուզանդիայի հետ: Ավելի մանրամասն ներկայացվում են Մարվանյանների և սելջուկ-թյուրքերի փոխհարաբերությունները: Իրն ալ-Ազրակի երկում խիստ տակավ նյութեր են արտացոլվել քուրդ աժիրանների և հայերի, մասնավորապես Վասպուրականի Աթորունիների շփումների մասին: Չափազանց հետաքրքրական են Մարվանյան տոհմածառին, շատավիղներին վերաբերող տվյալները, որոնք իրենց հերթին ամբողջացնում են դինաստիայի պատմությունը: Սակավ, բայց չափազանց ուշագրավ են պատմիչի վկայությունները դինաստիայի ներքին կյանքի վերաբերյալ:

Դժվար չէ նկատել, որ Իրն ալ-Ազրակի՝ մեզ հետաքրքրող հասվածը գրվել է հիմնականում բանավոր նյութերի հիման վրա: Դրանք հեղինակի անձնական դիտարկումների և տարբեր մարդկանց հետ ունեցած բազմաթիվ հանդիպումների ու շփումների արդյունք են: Այս առիթով արժե նշել, որ հեղինակի ժամանակաշրջանում դեռևս թարմ են եղել հուշերն ամիրայության և նրա տարրեր իշխանների գործունեության ու վարած քաղաքականության մասին: Էլ չենք խոսում այն փաստի մասին, որ նրա պապը՝ Աբու-լ-Հասան Ալի Իրն ալ-Ազրակը երկար ժամանակ տարրեր պաշտոններ է վարել քրդական այդ դինաստիայում, որն էլ, մեր կարծիքով, հանդիսացել է պատմիչի գրառած նյութերի հիմնական սկզբնաղբյուրը: Ինքը ևս, ինչպես երևում է, անձնական ծանոթություն է ունեցել կամ հանդիպել է Մարվանյան առանձին շատավիղների հետ, որոնք էլ նրան տարբեր տեղեկություններ են հաղորդել իրենց նախնիների մասին: Կարծում ենք, որ աշխատության վերջին բաժինն ամբողջությամբ գրվել է Ջազիրաթ Իրն Օմարի տարբեր վայրերում քննություն հաստատած Մարվանյան հետնորդների և մեծահասակ մարդկանց հաղորդած նյութերի հիման վրա:

Ենթադրում ենք, որ, այդուհանդերձ, մեզ հետաքրքրող հասվածը շարադրելու համար պատմիչի ձեռքի տակ եղել են մեծ գրավոր աղբյուրներ: Որպես ուսումնասիրման նյութ, կարող էին հանդիսանալ Մարվանյան դարաշրջանի վակֆայիմի դիվանների մատյանները: Բացի այդ, Իրն ալ-Ազրակը, լինելով Մարվանյան դինաստիային ենթակա տարբեր վայրերում, ակամատես է եղել նրանց հետքերին, անձամբ ծանոթացել քուրդ ամիրաների

գմբեթավոր դամբարանների և Մայյաֆարիկի մի ու Ամիդի պարիսպների վերականգնման և կառուցապատման մասին թողած վիճական արձանագրություններին:

Այսպիսով, Իրն ալ-Ազրակ ալ-Ֆարիկի «Թարիխ Մայյաֆարիկին» երկն ուրույն տեղ է զբաղեցնում միջնադարյան արաբալեզու աղբյուրների համակարգում և նրա հաղորդած բազմաթվա նյութերը, փաստական եզակի հաղորդումները լույս են սփռում միջնադարյան արաբամահմեդական ժամանակաշրջանի պատմության զանազան խնդիրների վրա: Ինչպես նշվեց, ամբողջությամբ հրատարակված չլինելով հանդերձ, այնուամենայնիվ արևելագետների կողմից այն ստացել է իր արժանի գնահատականը՝ լայնորեն դրվելով գիտական շրջանառության մեջ¹:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմության տարբեր հարցեր լուսարանելու համար համեմատաբար ավելի առատ և բազմաթվաթյա տվյալներ են հաղորդում հատկապես XIII դ. տեղեկերական պատմության հեղինակները: Նրանց մեջ առավել աչքի է ընկնում հանրահայտ պատմիչ, «ալ-Ջանել ֆիթ-թարիխ» (Լիակատար պատմություն) բազմահատորանոց մատենագրության հեղինակ Իրն ալ-Ասիրը²: Ծնվելով Ջազիրա իրն Օմարում՝ պատմիչը հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալ քրդական իրականությանը, շփվել քրդերի հետ: Նյութերի բազմազանության և շարադրանքի յուրահատուկ եղանակով Իրն ալ-Ասիրը հանդիսանում է կարևորագույն հեղինակներից մեկը, որի

¹ Այդ մասին տե՛ս նաև՝ H.F. Amedroz, Three Arabic Mss. on the History of the city of Mayyafarigin, JRAS, 1902, p. 748-812, V. Minorsky, E. I, III, p. 174, նույնի՝ Studies in Caucasian History, London, 1953, p. 79-106, C. Brakelman, GAL, I. Supplementband, pp. 569-570, S.A. Karawi, The Forgotten Ruler (Shaddadits), v. III, Tehran, 1929, p. 75, B.C. Пугуридзе, Арабский историк XII века о Тбилиси, Известия ИЯИМК, т. XIII, Тбилиси, 1943, с. 139 (վրաց. լիզվով), Г.В. Церетели, Семитские языки и их значение для изучения истории грузинской культуры, труды науч. сес. Тбилисского госунта, N. I, Тбилиси, 1947, с. 39 (վրաց. լիզվով), Э.Т. Сихаруладзе, ал-Фарихи в Грузии. - Семитологические штудии, I, Тбилиси, 1985, с. 81-91, (վրաց. լիզվով, անմեթոմը՝ աստերիսով):

² Իրն ալ-Ասիր, ալ-Ջանել ֆիթ-թարիխ, I-IX, ալ-Կահիրա, 1349-1357թթ (այստեղևո՛ւ Իրն ալ-Ասիր) :

տվյալները մեր կողմից օգտագործված աղբյուրների շարքում ամենախիճնակաճան են և կենտրոնական տեղ են զբաղեցնում:

Իրն ալ-Ասիրի տիեզերական «Պատմությունը», որն արարածահմեղական պատմագրության գլուխգործոց ստեղծագործություններից է, իրոք համարվում է մահ քրդերի միջնադարյան պատմության հետազոտման կարևորագույն և արժանահավատ աղբյուրներից մեկը:

Ժամանակագրական կարգով նա հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում, մասնավորապես քրդական ցեղերի մերթին կյանքի, մահմեդականացման փուլերի և այլ խնդիրների մասին: Չոքոյի տակ ունենալով մատենագրական տվյալների մի ճոխ հավաքածու՝ Իրն ալ-Ասիրն իր երկում փաստական ուշագրավ նյութ է տալիս քրդական դինաստիաների ռազմաքաղաքական պատմության և հարևան իշխանությունների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների, քրդական ցեղերի տեղաշարժերի վերաբերյալ և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի և նրա հետ առնչվող հիմնախնդիրների լուսաբանման համար շահեկան նյութ են պարունակում մահ XIII դ. պատմիչներ Իրն ալ-Վարդի¹ և արաբալեզու առերի պատմիչ Աբու-լ-Ֆարաջ Իրն ալ-Իրբի² երկերը: Թեպետև այդ հեղինակները միմյանցից տարբերվում են հաղորդած նյութերի քվանդակությամբ, մատուցման եղանակով և ոճով, սակայն հաճախ լրացնում են իրենց մախորդների տվյալները՝ հմարավորություն ընձեռելով ճշտելու այս կամ այն խնդիրը:

Մեր նյութի ուսումնասիրության համար այլևայլ հեղինակների հաղորդած տվյալների շարքում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում XIII դ. հայտնի կենսագիր Իրն Նալիքբանի³ տեղեկությունները: Բավական կարևոր են մահ ծագումով քուրդ, Այյուրյան գերդաստանի XIII-XIV դդ.

¹ Իրն ալ-Վարդի, Թարիխ, I-II, ալ-Կահիրա, 1285թ. (այսուհետև՝ Իրն ալ-Վարդի):

² Իրն ալ-Իրբի Աբու-լ-Ֆարաջ, Թարիխ մուխթասար աղ-դուալ, Բեյրութ, 1958 (այսուհետև՝ Աբու-լ-Ֆարաջ Իրն ալ-Իրբի):

³ Իրն Նալիքբան, Ուաֆիյաթ ալ-ալան, I-II, 1838 (այսուհետև՝ Իրն Նալիքբան):

հայտնի պատմիչ Աբու-լ-Ֆիդայի¹ տիեզերական «Պատմութեան» մեջ տեղ գտած տվյալները: Քեև պատմիչը շատ հաճախ կրկնում է Իբն ալ-Ասիրին, բայց որոշ դեպքերում նրա հաղորդումները կարևորություն են ներկայացնում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի և նրա հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրության գործում:

Արաբալեզու աղբյուրների մեջ պետք է հիշատակել մահ XIV դ. հեղինակ Իբն Քասիրի տիեզերական «Պատմությունը», ուր տալիս է մյուսիքի են տեղ գտել քրդական դիմատիպների մասին²:

XIV դ. արաբ պատմիչներից մեր մյուսի համար առանձնապես կարևոր նշանակություն ունի հանրահայտ Իբն Խալլունի³ «Պատմությունը», որն իր քոլանդակությամբ շատ արժեքավոր է և, որպես այդպիսին, երբեմն լրացնում է իր նախորդ հեղինակների հաղորդումները: Ի դեպ, տեղին է նշել, որ Իբն ալ-Ասիրի «Վիակատար պատմություն» կոթողային քաղմահատորանոց աշխատությունն սկսած XIII դարից դարձավ արաբալեզու պատմագրության ամենից շատ օգտագործվող աղբյուրը, որին դիմել են միջնադարյան գրեթե բոլոր հեղինակները:

Ի տարբերություն իր նախորդների, Իբն Խալլունը ևս մշակել և շարադրամքի յուրանատուկ ոճով ներկայացրել է Իբն ալ-Ասիրի և այլ պատմիչների հաղորդումները քրդերի մասին՝ տալով ռազմաքաղաքական անցքերի համառոտ և ընդարձակ նկարագրություններ: Մեր մյուսի համապարփակ ուսումնասիրության համար որոշակի կարևորություն են ներկայացնում XIV-XV դդ. արաբ հեղինակների, մասնավորապես Իբն Թադրիբիդիի հաղորդումները⁴:

Քրդերի X-XI դդ. ռազմաքաղաքական իրադարձությունների, քրդական ցեղերի տեղաբաշխման, տեղաշարժերի, ինչպես մահ

¹ Աբու-լ-Ֆիդա, ալ-Մոխթասիր Ֆի ախար ալ-բաշար, I-V (այսուհետև՝ Աբու-լ-Ֆիդա)

² Իբն Քասիր, ալ-Քիդայա տան-նիմայա Ֆիր-բարիս, VII-XII, ալ-Կասիրա, 1932 (այսուհետև՝ Իբն Քասիր)

³ Իբն Խալլուն, Քիթաբ ալ-իթր ոս-դիտան ալ-մաքթա ուալ-խարար, Մաք, 1284 (այսուհետև՝ Իբն Խալլուն)

⁴ Իբն Թադրիբիդի, ամ-Նույուն ազ-զահիրա Ֆի բարիս Միսր ուալ-Կահիրա, III-VI, ալ-Կահիրա, 1932 (այսուհետև՝ Իբն Թադրիբիդի):

տոցիալ-տնտեսական որոշ խնդիրների ուսումնասիրության համար եզակի նշանակություն ունեն մաս արաբալեզու աշխարհագիրների բազմաբնույթ հաղորդումները: Այս առումով հույժ կարևոր են IX-X դդ. հեղինակներ Իբն Խուրդադեբիյի¹, Իբն ալ-Ֆակիհի², Աբու Դուլաֆի³, ալ-Իսրախիհի⁴, Իբն Հաուկալի⁵, ալ-Մուկադդասի⁶, ինչպես նաև XII դ. հեղինակ ալ-Իդրիսի⁷, Յակուբ ալ-Համավի⁸ և այլոց վկայությունները:

Առավել հետաքրքրություն են ներկայացնում հատկապես X դ. ականավոր պատմիչ-աշխարհագիր ալ-Մասուդի⁹ հաղորդումները:

Որքան հայտնի է, ալ-Մասուդին ծնվել է Բաղդադում, ճանապարհորդել է Իրանում, Հնդկաստանում՝ մինչև Չինական ծով, Կասպից ծովի հարավային շրջաններում, Ասորիքում, Պաղեստինում, Եգիպտոսում (այստեղ էլ նա մահացել է 956թ.): Ալ-Մասուդի գրչին են պատկանում պատմաաշխարհագրական բազմաթիվ ստեղծագործություններ, որոնց մեծ մասը մեզ չի հասել և կորած է համարվում: Արևելագիտական գրականության մեջ

¹ Ibn Khordadbeh, Kitab al-Masalik wal-Mamsalik et excerpta e Kitab al-Kharaḡ suciore Kudama ibn Djaḡfar, ed. M.J. de Goeje.-In: Bibliotheca Geographorum Arabicorum (BGA), Pars VI.-Lugduni Batavorum Apud E.J.Brill, 1889.

² Ibn al-Fakih, Compendium libri Kitab al-Boldan, ed. M.J. de Goeje.-In: BGA, Pars V.-Lugduni Batavorum Apud E.J.Brill, 1885.

³ Вторая записка Абу Дуаѳа, изд. текста, пер., введение и комментарии П.Буагакова и А.Халидова, М., 1960.

⁴ Al-Isakhri, Vitae regnorum, ed. M.J. de Goeje.-In: BGA, Pars I.-Lugduni Batavorum Apud E.J.Brill, 1870.

⁵ Ibn Haukal, Vitae et Regna, ed. M.J. de Goeje.-In: BGA, Pars II.-Lugduni Batavorum Apud E.J.Brill, 1873.

⁶ Al-Moqaddasi, Descriptio imperii Moslemici, ed. M.J. de Goeje.-In: BGA, Pars III.-ed. 2-da.-Lugduni Batavorum Apud E.J.Brill, 1906.

⁷ Al-Idrisi, OPVS Geographicvm, f. IV, VI, Neapoli-Romae, 1974, 1976.

⁸ Յակուբ ալ-Համավի, Մուլան ալ-բուդան, I-V, Քիլոսթ, 1955-1957 (այստեղևն՝ Յակուբ)

⁹ Al-Masudi, Kitab at-Tanbih wal-Ishruf, ed. M.J. de Goeje.-In: BGA, Pars VIII.-Lugduni Batavorum Apud E.J.Brill, 894.Եւոյժի՝ Մուսուդ ազ-զահաբ ըստ մասնիցն ալ-բաուխար, I-V, Քիլոսթ, 1966-1970 (այստեղևն՝ ալ-Մասուդի):

հաճախ ալ-Մաստդիլին համարում են այսպէսնորի Հելոդոտ¹:

Ալ-Մաստդիլն Մդ. քերև միակ հեղինակն է, որ բավական մամբանասներ է հաղորդում քրդական ցեղերի, նրանց տեղաշարժերի, էքնիկական ծագման, հսկատաալիքների և լեզվի մասին: Այդ իմաստով նրա տեղեկությունները, հաճախ եզակի նշանակություն ունենալով, լույս են սփռում այս կամ այն խնդրի վրա:

Ներկա աշխատությունը շարադրելու համար ուսումնասիրության առարկա են դարձել մեծ քանակությամբ ինչպես տալազիր, այնպես էլ ձեռագիր սկզբնաղբյուրներ: Մակայն, հարկ է նշել, որ թե՛ աշխարհագիրները և թե՛ մատենագիրները հաճախ կրկնում են միմյանց և այս կամ այն դեպքի, վայրի, ցեղի մասին երբեմն տալիս են համատուտ և ընդարձակ, երբեմն էլ՝ իրարամերձ տեղեկություններ: Այնուհանդերձ, հաղորդելով աշխարհագրական և պատմական քնույթի մամբանասներ, նրանք լրացնում են միմյանց և հնարավորություն են տալիս քիչ թե շատ լուսարանելու X-XI դդ. քրդերի պատմության կարևոր մի շարք խնդիրներ: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել նաև, որ աղբյուրագիտական մյուսի ներկա վիճակը, այնուամենայնիվ, հնարավորություն չի ընձեռում քազմակողմանի ուսումնասիրության ենթարկել քրդերի պատմության խիստ ուշագրավ այդ ժամանակաշրջանը: Համապատասխան մյուսերի քացակայության պատճառով առամձին հարցեր ընդհանրապես չեն լուսարանվել:

Արարալեզու պատմաաշխարհագրական ծով գրականությունից հետո մեր ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն են մերկայացրել հայկական, քյուզանդական, ասորական և պարսկական մատենագրական երկերը: Այդ աղբյուրներն իրենց քնույթով տարբեր են և քազմապիսի, որոնք յուրահատուկ նշանակություն ունեն տվյալ ժամանակաշրջանի ոչ միայն Հայաստանի, այլև՝ Անդրկովկասի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների կյանքում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններն ու զանազան երևույթները պարզարանելու համար: Մակայն ափսոսանքով պետք է նշել, որ հիշյալ աղբյուրները, որոնց հաղորդած կցկտուր տեղեկություններն երբեմն եզակի նշանակություն ունեն ուսումնասիրության մեջ արծարծվող այս կամ այն հարցը լուսարանելու հա-

¹ Ա. Տեր-Ղևոնդյան, Արարական ամիրայություններ, էջ 15:

մար, խիստ ժլատ են, և քրդերի խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար չափազանց քիչ տվյալներ են պարունակում:

Օժանդակ այս սկզբնաղբյուրների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում, մասնավորապես, հայ հեղինակների գործերը: Ի տարբերություն արաբամահմեդական պատմագրության ավանդույթների՝ հայ հեղինակներն, ինչպես հայտնի է, իրենց գործերում առավել ուշադրություն են սևեռել Հայաստանի ռազմաքաղաքական պատմությանը, ներքին կյանքին և այլն: Այս խնդիրների առնչությամբ էլ նրանք ելրեմն անդրադառնում են Հայաստանի հարավ-արևմտյան գավառներում X-XI դդ. իրադարձություններին՝ կապված արաբական ամիրայությունների, քրդական տարրի ներթափանցման և Մեծ սելջուկների այլապանքների հետ: Այս խմատտով մեր նյութի համար արժեքավոր տվյալներ են հաղորդում, հատկապես Արիստակես Լաստիվերցին¹, Ասողիկը², Մատթեոս Ուտիայեցին³ և այլք:

Հայտնի է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանից տարբեր դրդապատճառների հետևանքով ասորական մատենագրությունն սկսեց անկում ապրել: Այդուհանդերձ, խնդրո առարկա ժամանակաշրջանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Միրայիկ Ասորու⁴, Անանուն Եղեճացու⁵ և ասորի այլ հեղինակների գործերը⁶:

Պարսիկները քավական գործուն դեր խաղացին արաբամահ-

¹ Արիստակես Լաստիվերցի, «Պատմություն, քաղցմամբությունը՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1971:

² Ստեփանոս Տարսնկույ Ասողական, Պատմություն Տիգրերական, Բ տպ., Ի.Ս. Պետերբուրգ, 1885 (այուհետև՝ Ասողիկ):

³ Մատթեոս Ուտիայեցի, Ժամանակագրություն, քաղցմ., ներածութ. և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973 (այուհետև՝ Ուտիայեցի):

⁴ Chronique de Michel les Syrien, par J.B. Chabot, I-III, Paris, 1900-1910.

⁵ Օտայ աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, XII, Անանուն Եղեճացի, Ժամանակագրություն, քաղցմ. քննադրից, առաջարան և ծանոթագրություններ՝ Լ. Հ. Տեք-Պետրոսյանի, ասորական աղբյուրներ, Երևան, 1982:

⁶ Histoire de Yehya Ibn Saïd.-Patrologia Orientalis, T. XXII, F. III, Paris, 1932, տն'ա մակ նույնի՝ Ռ.Ն. Գ.Ա արևելագիտության ինստիտուտի Մանկա-Պետերբուրգի քաժամնունի ձեռագրախոնդ, ձեռ. հ. 1708, Արու-լ-Հաբաջ Իրն ալ-Իրրի, նշվ. աշխ.:

մեղական պատմաաշխարհագրական գրականության և առհասարակ մշակույթի զարգացման քննազավառում: Նրանց ստեղծագործությունները, որոնք գրվեցին հիմնականում արաբերեն լեզվով, հանդիսանում են արաբամահմեդական գրականության անկապտելի մասը: XI դարից հետո միայն պարսկալեզու պատմագրությունն սկսեց զարգանալ, շարունակելով արաբալեզու մատենագրության ավանդույթները: Այս առթիվ պետք է նշել, որ քաջառությանը Նասիրի Ռոսրուլի (XII.)¹ և Համդուլլահ Ղազվինիի (XIV.)² հաղորդումների, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ուսումնաբարձական պատմության վերաբերյալ տեղեկությունները շատ քիչ են արձանագրվել պարսիկ հեղինակների երկերի էջերում:

Մեր ուսումնասիրության և ժամանակաշրջանի ռազմաբարձական պատմության ընդհանուր հարցեր լուսարանելու համար քիչ թե շատ շահեկան նյութեր են պարունակում նաև բյուզանդական սկզբնաղբյուրները: Այդ իմաստով առանձնահատուկ հետաքրքրական են, մասնավորապես, Կոնստանտին Ծիրամածինի³, Հովհաննես Սկիլիցեսի⁴, Իսահակ Կոմնենոսի⁵ և այլոց հաղորդումները:

Այսպիսով, միջնադարյան ռազմալեզու աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ, այնուամենայնիվ, քրդերի միջնադարյան, մասնավորապես X-XI դդ. պատմության հարցերը լուսարանելու համար հիմնական աղբյուրներն առ այսօր շարունակում են մնալ արաբալեզու հեղինակների ռազմահատորանոց երկերը:

¹ Насир-и Хусрай, Сафар-наме, Книга путешествия, пер. и вступительная статья Е. Бертельса, М.-Л., 1933.

² Համդուլլահ Մոսրուսի Ղազվինի, Նուզհաթ ալ-կուզաթ, Թահրաթ, 1337 (պարսկերեն):

³ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, բյուզանդական աղբյուրներ, Բ. Կոնստանտին Ծիրամածին, քարգմ. քննազից, առաջարկում և ծանոթ.՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970թ.:

⁴ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, X, բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես, քարգմ. քննազից, առաջարկում և ծանոթ.՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979թ.:

⁵ Նույն աեղում:

2. ԹԵՄԱՅԻ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿ

Քրդերի և Զուրդիստանի նկատմամբ ընդհանուր հետաքրքրությունն Արևմուտքում և դիվանագիտական շրջանակների կողմից սկսվեց հիմնականում XIXդ երկրորդ կեսից: Արևմուտքի տարրեր տևրությունների քաղաքական-հասարակական գործիչներ, նվեելով որոշակի նկատառումներից և կատարելով տարրեր գերատեսչությունների պատվերներ, մեծ ու փոքր ծավալի գործեր գրեցին քրդերի և Զուրդիստանի մասին: Դրանք առատ նյութ են մատակարարում քրդերի մեր և ներագույն պատմության, ազգագրության և այլ հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներին¹: Հակառակ այդ իրողության, ինչպես նշվեց վերևում, քրդերի հին և միջնադարյան պատմությունն ամբողջությամբ և նրա հետ աղերսվող զանազան հիմնախնդիրներ քազմակողմանի և լուրջ հետազոտման կարիք ունեն:

Քրդերի X-XI դդ. պատմությունն ընդհանուր գծերով թերևս առաջին անգամ արծարծվեց ռուս արևելագետ Վ. Մյնոթսկու «Քրդեր, Զուրդիստան» «Իսլամական հանրագիտարանի» համար գրված հոդվածում²: Բնական է, 25 էջանոց հոդվածում հեղինակն ի վիճակի չէր լուսարանելու X-XI դդ. պատմական ընթացքները, քանի որ հանրագիտարանի ընթերցողներին նա ամփոփ ներկայացրել է Զուրդիստանը, քրդերի էթնիկական ծագումը, պատմությունը, մշակույթը՝ հին շրջանից մինչև XX դար: Թե՛ ուսումնասիրվող ժամանակաշրջանի և թե՛ այլ խնդիրների լուսարանման համար Վ. Մյնոթսկին օգտագործել է հիմնականում արարալեզու մի քանի հեղինակների հաղորդումները:

Վ. Մյնոթսկու «Քրդեր, Զուրդիստան» հոդվածը, որը կարևոր ներդրում էր արևելագիտության մեջ, հետագայում ուղեցույց հանդիսացավ քրդագետ-արևելագետների, այդ թվում նաև XX դ. քուրդ պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ Մուհամմադ Ամին Ջաքիի համար: Սակայն, որքան էլ զարմանալի թվա, քրդերի պատմությանը նվիրված իր «Քրդերի և Զուրդիս-

¹ Ալեյի ժամրամասն տե՛ս՝ Библиография по курдоведению, составитель Ж.С. Мусазаян, Москва, 1963.

² V. Minorsky, Kurds and Kurdistan, Et, V. II, Leiden-London, 1927, հմմ. նոր հրատարակության հետ՝ Et, V. V, Leiden-London, 1981.

տամի համառոտ պատմությունը հին շրջանից մինչև այժմ՝ խոսակցորդ աշխատությունում Մ.Ա.Չաքին 4-5 էջերի շրջանակներում, առանց փաստական տվյալների սուկ ընդհանուր գծերով է անդրադարձել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրադարձություններին¹։

Նույնատիպ մոտեցում է նկատվում նաև քրդագետ Ռաշիդ Յասինի երկում²։ Քրդերի էթնիկական ծագման հիմնախնդրին հիմնական ուշադրությունը սևեռած Յասինին իր աշխատության համապատասխան մասում, ըստ էության, կարևորություն չի տվել խնդրո առարկա ժամանակաշրջանին։

Քրդերի X-XI դդ. ռազմաքաղաքական պատմությունը, քրդական զեղերի հսկայաբարակապ պայքարը, տեղաշարժերը, զբաղմունքը, դավանանքը, մահմեդականացման գործընթացը և կարևոր այլ խնդիրների գրեթե դուրս են մնացել արևելագետ-քրդագետների ուշադրությունից։

Ժամանակաշրջանն ամբողջությամբ և նրա հետ ազերսվող քաղաքական հարցեր ըստ էության չեն լուսարանվել քրդագետներ Իհսան Նուրիի³, Մ. Օրանգի⁴, Արշակ Մաֆրաստյանի⁵ և այլոց ռազմաասիոլոգիաներում։ Այն համարյա անտեսվել է նաև վրաց քրդագետ Ա. Մենքաշաշվիլիի կողմից⁶։

Անկախօժեղ է ավելացնել, որ քրդերի X-XI դդ. պատմությունը գրեթե տեղ չի գտել նաև ռուս, արևելյան և եվրոպացի հետազոտողների՝ արարական խալիֆայությանը, քրդերին և Զուրդիստանին նվիրված պատմագիտական ընդհանուր ուսումնասիրություններում։ Այդ հեղինակները կամ լռել են քրդերի միջնադարյան այս ժամանակաշրջանի մասին, կամ լավագույն դեպքում այս կամ

¹ Մոհամմադ Ամին Չաքի, *Խոջասար քարիխ ալ-քուդդ ուս-Ջուրդիստան*, (պարսերեն) Միսր, 1936, Ս. 140-145 (այստեղից՝ Մ.Ա.Չաքի, *Խոջասար*)։

² Ռաշիդ Յասին, *Քուդդ ուս Փեյլասթիկ մեժադի ուս քարիխ ու Թեհրան* (պարսերեն) (Այստեղից՝ Ռ. Յասին, *Քուդդ*)։

³ Իհսան Նուրի, *Թաքվիտ ոիշ ուս մեժադի քուդդ, Թեհրան, 1333* (պարսերեն)։

⁴ Մ.Օրանգ, *Քուդդ-չեմասի, Թեհրան, 1346* (պարսերեն)։

⁵ A. Seferastian, *Kurds and Kurdistan*. London, 1946.

⁶ A. Ментешашвили, *Вопросы истории курдов Ближнего Востока X-XX вв.*, Тбилиси, 1978, Նույնի՝ *Курды*, М., 1984.

այն խնդրի անուշությամբ մի քանի մախադասությամբ անդրադարձել են մաև քրդական ցեղերի զործողություններին¹:

Ի տարբերություն Արրասյան լալիֆայության ժամանակաշրջանի՝ քրդերի համընդհանուր պատմության հետազոտման արդի վիճակի, X-XIgg. քրդական դիմաստիաների ուսումնասիրության քննազավատում համեմատաբար կատարվել են որոշ աշխատանքներ:

Քրդական դիմաստիաների նկատմամբ արևելագետների հետաքրքրությունը դրսևորվեց դեռևս ամցյալ դարի վերջերից: Այդ ուղղությամբ առաջին փորձը պատկանում է եվրոպացի հայտնի արևելագետ Ստեմլի Լեմուլիցին²: Արաբամահմեդական դիմաստիաներին նվիրված նրա հիմնական աշխատությունում տեղ գտան մաև քրդական մի քանի դիմաստիաներ: Մաևայն եվրոպացի արևելագետի կողմից դրանք դիտվում են որպես մահմեդական՝ քրդական ծագմամբ³:

Արևելագետ-միջնադարագետները, ովքեր ծանոթ են Ստեմլի

¹ Shu' M. Canard, Histoire de la Dynastie de Hamdanides de Jazira et de Syrie, T. I, Paris, 1953, G. Driver, The Dispersion of the Kurds in Ancient times. <<JRAS>>, pt. IV, 1921, A.R.Ghassomlou, Kurdistan and Kurds, Prague, 1965, Major Sheikh A. Wahced, The Kurds and their country, Lahore, 1958, Jamal Nebez, Kurdistan und Seine Revolution, München, 1972, В. Никитин, Курды, М., 1964, В. Минорский, Курды. Заметки и исследования, Петроград, 1915, О. Виллевеский, Курды, М.-Л., 1961, ալ-Գրամի Սալիդ, Սին Ամման իյու ալ-Իմադիյա, ալ-Կահիրա, 1939, Ռաֆիկ Հիմի, ալ-Արբազ մուեզու Ֆաթթ ար-թարիխ իյա սամաթ 1920, ալ-Մոսուլ, 1934, Մուհամմադ ալ-Ֆիլ, ալ-Արբազ Ֆի Ցազար ալ-իլ, Քեյտոթ, 1964, Շաքրի Էսաբար, ալ-Ջուդղ ուալ-մասալա ալ-քուրդիյա, Բաղդադ, Մահմուդ ադ-Ղուսան, ալ-Կադիյա ալ-քուրդիյա, Բաղդադ, 1959, Մուլլեմ ալ-Իրար աշխամաի, Բաղդադ, 1973, Ջարալթ Բալալ, Արբի Ֆի աղտարիիա ար-թարիիյա, Բաղդադ, Մուլիման Սալիդ, Թարիխ ալ-Մոսուլ, I, ալ-Կահիրա, 1923, Ֆալաու աա-Մամեր, աղ-Նատրա ալ-Կամադանիյա Ֆի ալ-Մոսուլ ուս Հալաթ, I, Բաղդադ 1970, Հ.Մ.Ջաանն, ալ-Ջազիրա ալ-Ֆուրարիյա ուալ-Մոսուլ, Բաղդադ, 1977, ալ-Ղամբատի Ամին Սամի, ալ-Արբազ Ֆի շամալ ալ-Իրար, ալ-Կահիրա, -, Կ. Լց Սարենթ, Բուղդան ալ-խալիյա աշխարհիյա, Բաղդադ, 1959, Կաթլ Բրոքելման, Թարիխ աշխուր ալ-խալանիյա, Քեյտոթ, 1963, Կոլլ Կահեն, Թարիխ ալ-արար ու աշխուր ալ-խալանիյա, Քեյտոթ, 1977...

² Стефан Лен-Пуаз, Мусульманские династии, С.-Петербург. 1899.

³ Կոլլ տեղում, էր 114, 118.

Լեմպուլի աշխատանքին նմանաօրից գործերի, գիտեն, որ դրանք հանրագիտարանային են, ուր յուրաքանչյուր դիմատիպին տրամադրված է առավելագույնը 2-3 էջ: Ստենլի Լեմպուլի հիշյալ գիրքը հետագա հետազոտողների համար ծառայեց որպես ուղեցույց և հիմնախնդիրներ մշակելու յուրօրինակ պլան-պրոսպեկտ:

Ներկա աշխատությունում ուսումնասիրության առարկա դարձած քրդական Հասանվայիների, Ամնազիների և Մարվանյան դիմատիպներին անդրադարձել են նաև «Մահմեդական դիմատիպներ» գրքերի հեղինակներ Ե.Յամբասուեյը¹, Կ.Բուսվոյսը², արար պատմաբան Ահմադ Սաիդ Մուլեյմանը³ և այլք:

Արաբալեզու սկզբնաղբյուրների հաղորդումների հիման վրա վերոհիշյալ հեղինակները մեկ-երկու էջերի շրջանակներում հակիրճ անդրադարձել են մեզ հետաքրքրող դիմատիպների գործունեությանը՝ տալով ամիրայական տների տոհմածառը: Բնական է, նրանց ուշադրությունից դուրս են մնացել ռազմաքաղաքական պատմության մի շարք խնդիրներ, որոնք ուսումնասիրության առարկա չեն դարձել նաև հետագա հեղինակների կողմից:

Վերին Միջագետքում Հայաստանի հարավ-արևմտյան գավառներում X-XI դդ. հաստատված Մարվանյան դիմատիպի պատմությունն առաջին անգամ ուսումնասիրության առարկա դարձավ եվրոպացի հայտնի արևելագետ Հ.Ամեդրոզի⁴ կողմից: Նրա «Մարվանյան դիմատիպի Մայյաֆարիկիում X-XI դդ.» խորագրով ուշագրով հոդվածն, ըստ էության, առաջին լուրջ քայլն էր քրդական դիմատիպների քաղաքական պատմության ուսումնասիրության քննազավառում: Արաբալեզու մատենագիրների, մասնավորապես Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի հաղորդումներով, Հ.Ամեդրոզն անդրադարձել է Մարվանյանների ռազմաքաղաքական գործունեությանը:

¹ Ե. Յամբասուեյ, Մուջան ալ-աննար ուս-լ-ուսարաթ ալ-հաֆիժա իբ ար-թառիխ ալ-խալեֆի, ալ-Կահիրա, 1951, ս. 206-207, 321...

² К. Босворт, Мусульманские династии. М., 1971, с.87-88.

³ Ահմադ Սաիդ Մուլեյման, Քարիխ աղ-դուալ ալ-խալեֆիյա, ուս-Մուջան ալ-ուսարաթ ալ-հաֆիժա, I-II, 1969, I, ս. 251-252:

⁴ H.F.Amedroz, The Marwanid Dynasty at Mayyafariqin in the Tenth and Elevent Centuries. A.D.-JRAS, 1903, p. 123-154.

ՀԱՄԵՂՐՈՎՁԵ ԵՎՐՈՍՎԱՅԻ ԱՌԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎՆԵՆ ԷՅ, ՈՐԸ ԳԻՏԱԿԱՆ շՐՋԱՆԱՌՈՒՅՐՅԱՆ ՄՆԵՂ ՊՐԵՑ ԻՐՆ ԱՂ-ԱՂՐԱԿԻ ՄԱՐԿԱՆՅԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՔԵՐՈՂ ԽԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ: ՆՐԱ ԽՈՂՎԱԾԻ ԽՐԱՎԱՐԱԿՈՒՄԻՅԸ ԽԵՏՈՒ, ԱՍՏԻՃԱՆԱՐԱՔ ԱՃՆԵՂ ԱՐՆԵՎԱԳԵՏՈՒՆԵՐԻ ԽԵՏԱՔՐՐՈՒՅՐՅՈՒՄՆԵՆ ԻՐՆ ԱՂ-ԱՂՐԱԿԻ ՄԻՆՅ ԱՅՂ ԱՆԽԱՅՈՒ ՃԵՏԱԳՐԻ ՆԿԱՏՈՒՄՆԵՐ: ԹԵՎԵՆՈՒ, ԻՆՅԱԿԵՍ ՆՂՎԵՑ, ԵՎՐՈՍՎԱՅԻ ԱՐՆԵՎԱԳԵՏՈՒՄՆԵՐՈՒՄՆԵՐԸ, ՔԱՅՑ ՆՐԱ ԽՈՂՎԱԾՆ, ըՍՏ ԷՈՒՅՐՅԱՆ, ԽԱՆՂԻՍԱՆՈՒՄ Է ԻՐՆ ԱՂ-ԱՂՐԱԿԻ «ՊԼԱՏՈՒՅՐՅԱՆ» ԽԱՄԱՌՈՒՄ ՎԵՐԱՇԱՅԱՂՈՐԴԱՆՔԸ:

ԽՆՂՐՈՒ ԱՌԱՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՂՋՋԱՄԻ ՄՆԵՂ ԽԵՏԱՔՐՐՈՂ ՔՐՈՂԱԿԱՆ ՂԻՄԱՍՏԻՊԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՍՎԱՅԻ ՄԱՐՔԵՐ ԱՐՆԵՎԱԳԵՏՈՒՆԵՐ ՔԱՌ-ԽՈՂՎԱԾՆԵՐ ԵՆ ԳՐԵՂ «ԺՎԱՄԱԿԱՆ ԽԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ» ԽԱՄԱՐ: ԱՅՂ ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐԻՅԸ ԵՆ Կ.ԿԱՒԵՆՆԸ¹, Վ. ՄԻՆՈՐՍԿԻՆ², Կ. ՋԵՔԵՐՍՔԵՆՆԸ³ և ԱՅՂԸ⁴:

ԵՎՐՈՍՎԱՅԻ ԱՐՆԵՎԱԳԵՏՈՒՆԵՐԸ ԽԱՍԿԱՆԱՂԻ ԱՎԱՏՃԱՏՆԵՐՈՎ, ԱՆՅՈՒՅՈՒ, ԽՆԱՐԱՎՈՐՈՒՅՐՅՈՒՄ ԻՆՄ ՈՒՆԵՑԵՂ ԳԻՏԱԿԱՆ ԽԱՄԱՎԱՐՓԱԿ ՎԵՐԿՈՒՄՅՈՒՄՆԵՐԻ ՆՆՔԱԿԵՂ ՔՐՈՂԱԿԱՆ ՂԻՄԱՍՏԻՊԱՆՆԵՐԻ ՌԱԳՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼ-ՈՄՆՈՒՍԱԿԱՆ ԽԱՐԱՔԵՐՈՒՅՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՎԱՏՈՒՅՐՅՈՒՄԸ: ՆՐԱՆՔ ըՆՂԻՏԱՆՈՒՐ ԳԾՆԵՂՈՎ «ԺՎԱՄԱԿԱՆ ԽԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ» ըՆՔԵՐԳՈՂՆԵՐԻՆ ըՆՂԱՄՆԵՂ ՄՆԵՐԿԱՅԱԳՐԵՂ ԵՆ ՄՈՎՅԱԼ ՂԻՄԱՍՏԻՊԱՆՆԵՐԻ ԻՄԱՄԱՂՈՒՄԸ, ԳՐԱՂՆԵՐԱԾ ՄԱՐԱԾՔՆԵՐԸ և ՌԱԳՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԼՈՐ ԽՐԱՂԱՅՈՒՅՐՅՈՒՄՆԵՐԸ: ՎԵՐՈՒԽԻՇՅԱԼ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԽՈՂՎԱԾՆԵՐԸ ՇԱՐԱՂՐԵՒՈՒ ԽԱՄԱՐ, ՈՐԱԿԵՍ ՍԿԳՆԱՂՔՅՈՒՐ, ՕԳՏԱԳՈՐԾԵՂ ԵՆ ՔԱԳԱՏԱՎԵՍ ԱՐԱՔԱԿՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԽԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ:

XXՂ 20-30-ԱԿԱՆ ՔՔ.-ԻՅ ՄԻՋՆԱՂԱՐՅԱՆ ՔՐՈՂԱԿԱՆ ՂԻՄԱՍՏԻՊԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՎՐԱ ԽՐԱՎԻՐԵՑԻՆ ՆԱՆ ՔՈՒՐՂ ՄՈՒՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՂԱՂՈՒՅՐՅՈՒՄԸ: ԱՅՂ ԱՍՎԱՐԵԹՈՒՄ ԱՌԱՅԻՆ ՎՈՐԾՂ ՂԱՐԾՅԱԼ ԱՎԱՏԿԱՆՈՒՄ Է Մ.Ա.ՋԱՔԻԻՆ: ՆՐԱ «ՔՐՈՂԱԿԱՆ ԱՎԵՏՈՒՅՐՅՈՒՄՆԵՐՆ

¹ Cl. Kahen, *Hasanwayh*, E I, V. III, London, 1966, p. 158-259.

² V. Minorsky, *Annazids*, E I, V. I, p. 512-513.

³ K. Zettersteen, *Marwanids*, E I, V. III, London, 1936, p. 309-310.

⁴ H. Bowen, *Nasr al-Dawla*, E I, V. III,

ու դիմաստիաները մահմեդական ժամանակաշրջանում»¹ հավակնոտ խորագրով ծավալուն աշխատությունում տեղ են գտել ոչ միայն խնդրոտ առարկա ժամանակաշրջանի, այլև ուշ միջնադարի քրդական դիմաստիաները: Քուրդ պատմաբանի աշխատությունն իր բովանդակությամբ և շարադրանքի ռժով, փաստորեն, հանդիսանում է Ե.Ն. Բիդլիսիի քրդական դիմաստիաներին նվիրված երկի վերաշարադրանքը: Նրա տեսադաշտից դուրս են մնացել քազմաթիվ աղբյուրներ, որոնք կարևոր նյութ են պարունակում քրդական դիմաստիաների պատմության տարրեր հիմնադրների վերաբերյալ:

Քննական մոտեցում չդրսևորելով իր իսկ օգտագործած մի քանի սկզբնաղբյուրների (Իբն ալ-Ասիր, Աբու Շուջա առ-Ռուզբավարի և այլն) նկատմամբ՝ Մ.Ա. Չաքին չափազանց ուժնացրել է քրդական դիմաստիաների դերը արաբամահմեդական դիմաստիաների համակարգում՝ դրանք ներկայացնելով որպես պետություններ: Բացի այդ, առանց սկզբնաղբյուրների խորը և համալիր ուսումնասիրության, ինչպես նաև եղած նյութերի ոչ աներաժեշտ մակարդակով համադրման և վերլուծության, նա չի տվել քրդական դիմաստիաների ճիշտ և գիտական բնութագիրը չի անդրադարձել դրանց՝ որպես Արքասյան ժամանակաշրջանի ավատատիրական ժամանակավոր կազմավորումներ երևան գալուն և զոյատևելու դրդապատճառներին, հարևան իշխանությունների հետ ունեցած փոխհարաբերություններին և այլն: Այդ պատճառով էլ նրա եզրակացություններն ու տեսակետներն այս կամ այն հարցի վերաբերյալ շատ հաճախ կասկած են հարուցում և վերամայման խիստ կարիքն ունեն: Մ.Ա. Չաքին առանց փաստական հիմքի քրդական ծագում է վերագրել իրանական մի շարք դիմաստիաների, որոնց «ազգային պատկանելիությունը» ցայսօր շարունակում է մնալ վիճելի:²

Բնավ ցանկություն չունենալով նսեմացնել քուրդ պատմաբանի կատարած աշխատանքը՝ նշենք, որ այն, իրոք, այքի չի ընկնում ոչ միայն իր աղբյուրագիտական հենքով, այլև՝ հիմնախնդիրների գիտական վերլուծությամբ և արաբամահմեդական ժա-

¹ Մ.Ա. Չաքի, Թարթիս աղ-դուալ տա-լ-իմաբաս ալ-քուրդիյա իի ալ-ահդ ալ-խարսի, ալ-Կահիրա, 1948 (այսուհետև՝ Մ.Ա. Չաքի, Թարթիս):

² Նույն տեղում, էջ 29-68, 131-166...

մանակաշրջանի պատմության կատարյալ իմացությամբ:

1970-ական թթ. Իրաքում քրդական գիտությունների ակադեմիան մի քանի աշխատանքներ հրատարակեց խնդրո առարկա ժամանակաշրջանի դիմաստիանների մասին: Քրդական Հասանվայիիների և Աճնագիների ուղղմարտադրական պատմության վերաբերյալ առանձին հոդվածներով հանդես եկան քուրդ մտավորականներ Ջալիլա Նաջի ալ-Հաշիմին¹ և Մուհամմադ առ-Ռոժբայանին²:

Թեպետև վերոհիշյալ հեղինակների հոդվածները նորություն էին և որոշակի առաջընթաց արձանագրեցին իշյալ ժամանակաշրջանի քրդական դիմաստիանների պատմության ուսումնասիրության ասպարեզում, սակայն նրանց ևս չի հաջողվել պատմական լայն կտավի վրա շարադրել Հասանվայիիների և Աճնագիների պատմությունը, ցույց տալ նրանց տեղն ու դերը տարածաշրջանի կյանքում: Ջ. Ն. ալ-Հաշիմիի և Մ. Ջ. առ-Ռոժբայանիի հոդվածները ևս գրվել են քացառապես արաբալեզու մատենագիրների հաղորդումների հիման վրա:

Մեծ Հայքի հարավ-արևմտյան գավառներում X դ. 80-ական թթ. (Նվերկերտ կենտրոնով) հաստատված Մարվանյան դիմաստիան ևս ուսումնասիրության առարկա է դարձել առանձին քուրդ մտավորականների կողմից: Այս դիմաստիայի պատմությանն իր աշխատությունում անդրադարձել է քուրդ հեղինակ Հուսեյն Հոզնի Մուկրիանին³:

Երբ Մ. Ա. Ջաքին, այնուամենայնիվ, զանազան հանգամանքների թերումով հնարավորություն չի ունեցել ներգրավել Մարվանյան իշխանության պատմությանը վերաբերող տարաբնույթ սկզբնաղբյուրներ, ապա նույնը չի կարելի ասել Հուսեյն Հոզնի Մուկրիանիի մասին: Իր գրքի համապատասխան բաժնում, անդրադառնալով խնդրո առարկա թեմային, Հ. Մուկրիա-

¹ Ջ.Ն. ալ-Հաշիմի, ալ-Իմաթա ալ-Հասանվայա ֆի ադ-Ֆիհմավաթ ուս-Շահրեզուր.-«Մնացաթ ալ-մաջմա՝ ալ-իլմի ալ-քուրդի», 1/8, Բաղդադ, 1975, ս. 729-749 (Այսուհետև՝ Ջ.Ն. ալ-Հաշիմի):

² Մ.Ջ. առ-Ռոժբայանի, Իմարաթ քանի Այաթ ուս-հուրումարումեմ ֆի դարրի Իրան (380-510 հ.) -«Մնացաթ ալ-մաջմա ալ-իլմի ալ-քուրդի» V, Բաղդադ, 1977, ս. 479-505 (այսուհետև՝ առ-Ռոժբայանին):

³ Հ.Հ.Մուկրիանի, Փիշգավաթան, Ռովանդուզ, 1972, ս. 4-37:

մին հանգել է այնպիսի ձգտողականությունների, որոնք ոչ միայն չեն ամրապնդվում փաստերով, այլև՝ հիմնականում սխալ են և խիստ կասկածելի: Նախ և առաջ չկան հղումները, հայտնի չէ, թե մա ինչ աղբյուրներից է օգտվել, և ինչի հիման վրա է հանգել նման ձգտողականությունների: Այդ ամենի հետևանքով նրա գործն ընդհանրապես փտատնություն չի ներշնչում: Հ.Հ.Մուկրիանիի շարադրանքը կրում է սիրողական բնույթ, ուր խեղաթյուրվել են պատմական փաստերը: Ուստիև մեր աշխատանքում ձգտել ենք կարևորություն շտալ Հ.Մուկրիանիի գրքին և քննարկման առարկա չդարձնել նրա մեկնաբանությունները, որոնք քննադատության են ենթարկվել մույմիսկ քուրդ պատմաբանների կողմից:

Մարվանյան ամիրայության պատմության ուսումնասիրության ասպարեզում քրդական պատմագրության մեծագույն «ձեռքբերումը» պետք է համարել իրաքցի քուրդ գիտնական Արդ առ-Ռակիբ Յուսեֆի «Դոստուկյան պետությունը Միջին Բուրջիստանում»¹ մեծագրությունը: Այն մույմպես գրվել է հիմնականում արաբալեզու հեղինակների հաղորդումների հիման վրա: Ի տարբերություն քուրդ այլ պատմաբան-մտավորականների, Ա. Յուսեֆն այնքան է դիմել Իրն ալ-Ազրակին, որ նրա աշխատությունը ևս հաճախ պատմյալի երկի վերաշարադրանքի տպավորություն է քողում:

Իրաքցի պատմաբանի գրքում քննարկման առարկա են դարձել գլխավորապես ռազմաքաղաքական պատմության հարցեր:

Թեպետև մեծագրության վրա կատարվել է, իրոք, զգալի աշխատանք, սակայն այն զերծ չէ սկզբունքային մի շարք թերություններից, սխալ մեկնաբանություններից, ավելորդաբանություններից, դրոնք մեծապես խճճում են Մարվանյան դիմատիպի պատմությունը: Գրքում քաղված շատ են չափազանցվում մեզ հասած գրավոր սկզբնաղբյուրների հաղորդումները: Իր երկարաշունչ շարադրանքում Ա. առ-Ռակիբ Յուսեֆը մեծ ճիգեր է գործադրել գումազարդելու Մարվանյանների հետ կապված դեպքերն ու իրադարձությունները:

Բացի այդ, պատմական լայն կտավի վրա չեն վերլուծվել ռազմաքաղաքական անցքերը, խոքը քննության չեն ենթարկվել

¹ Արդ առ-Ռակիբ Յուսեֆ, աղ-Դոսուլա աղ-գոսթակիյա Ֆի Զուրխստան ալ-սուտա, 1, Բաղդադ, 1972 (այսուհետև՝ Ա.Ռ. Յուսեֆ):

տարբեր ամիրաների գործունեության հետ կապված զանազան խնդիրները: Միաժամանակ քավարար յավով չի լուսարանվել դինաստիայի հիմնադրումը, գոյատևումը և անկումը: Գրքում քացակայում է հիմնահարցերի համալիր մշակումը և վերլուծությունը, ընդ որում թերի են կամ ընդհանրապես չեն լուսարանվել մի շարք կարևոր հիմնահարցեր, որոնց վերաբերյալ, թեև տակավ, քայց ուշագրավ մյուսեր են պարունակում արարալեզու հեղինակների մեզ հասած երկերը:

Հրապուրվելով և ոգևորվելով Մարվամյանների ռազմաքաղաքական գործողություններով՝ քուրդ պատմաբանը փորձ չի կատարել ցույց տալ, թե այդ իշխանությունն ինչ դրդասպառնառների հետևանքով հանդես եկավ պատմության ասպարեզում, քաղաքական ինչպիսի իրավիճակի արգասիք էր: Արդ առ-Ռակիբ Յուսեֆի գրեթե քուրդ տեսակի մտածելունները բխել են քրդասիրական սնապարծության դիրքերից: Օրինակ, «Դոստուկյան պետությունը Միջին Զուրդիստանում» հավակնուտ խորագիրը վերջ շարադրվածի պերճախոս վկայությունն է: «Միջին Զուրդիստան» ասելով մա առանց երկմտելու ի նկատի ունի Մեծ Հայքի հարավ-արևմտյան գավառները¹: Դրանում էլ կայանում է հեղինակի թերևս մեծագույն սխալը, որով և մա ոչ միայն կրկնում է իր որոշ քուրդ գործընկերների մեզ հայտնի տեսակետները, այլև՝ խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը, Զուրդիստանի մաս համարելով հայկական Մուշը, Սասունը, Վանը, Բիթլիսը և այլն²:

Անդրադատանալով Մարվամյան դինաստիային ենթակա տարածքներին՝ Արդ առ-Ռակիբ Յուսեֆն իր գրքի առաջին բաժնում ուղղակի գրում է. «982 թ. հիմնադրվեց Դոստուկյան պետությունը Մեծ Զուրդիստանի մի մասում, որը մենք կոչում ենք Միջին Զուրդիստան: Այս հատվածը գտնվում է Թուրքական պետության գերիշխանության ներքո, որն այժմ, Զուրդիստանի այլ մասերից զանազանելու համար, կոչվում է Թուրքական Զուրդիստան...»³: Կարծում ենք մեկնաբանություններն ավելորդ են:

¹ Լույն տեղում, էջ 14-29:

² Լույն տեղում, էջ 14:

³ Լույն տեղում:

Այննայտ է, որ Արց առ-Ռակիրի մման մտտեցումներն ու եզրակացությունները գուրկ են գիտական հիմքերից:

Ինչ վերաբերում է «Մեծ Քուրդիստան», «Միջին Քուրդիստան» և նման այլ տերմինների գործածմանը միջմադարյան ժամանակաշրջանի համար, ապա հարկ է նշել, որ Քուրդիստանի մեզ հայտնի չորս բաժանումները և նրա այլ մասնատված անվանումները նոր երևույթ են, մեր դարի ծնունդ են և կրքեք չեն դիտվել և ընկալվել որպես քաղաքական բաժանումներ:

Դրանք թե՛ պատմական անցյալում և թե՛ մեր օրերում զուտ ազգագրական միավորներ են ցուցանշում, թույլտ քուրդ պատմաբանները թիչ ցանքեր չեն գործադրում այդ տերմինները դիտելու որպես քաղաքական բաժանումներ: Այս առթիվ անհրաժեշտ է նշել, որ միջին դարերում արաբական տիրապետության ողջ ընթացքում «Քուրդիստան» որպես քաղաքական և վարչատարածքային միավոր գոյություն չի ունեցել: Հանգամանք, որը համարվում է արևելագիտության, թերևս, ամենակենտու խնդիրներից մեկը, որն իր հերթին նոր բարդություններ է առաջացնում քրդերի պատմության ուսումնասիրության քննազավատում:

«Քուրդիստան» տերմինը, որպես աշխարհագրական անուն և ազգագրական միավոր առաջին անգամ երևան է եկել XII դարում, սերջուկ-թյուրքերի տիրապետության շրջանում: Արևելագիտական գրականության մեջ առ այսօր ընդունված է եղել այն կարծիքը, որ այդ տերմինը գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է XIV դ. պարսիկ պատմիչ Համդոլլահ Ղազվինիի կողմից, որը վերաբերել է, ինչպես նշվեց, XII դարին՝ Սելջուկյան շրջանին: Քրդերի հարևան ժողովուրդների միջմադարյան մատենագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ ավելի վաղ այն արձանագրվել է հայկական աղբյուրներում: Այն առաջին անգամ տեղ է գտել XI-XII դդ. հայ պատմիչ Մատթեոս Ռոտհայեցու ժամանակագրության մեջ¹: Այս փաստը, ինչ խոսք, նոր լույս է սփռում խնդրի հետազոտման վրա և ցույց է տալիս, որ XII դարից աստիճանաբար «Քուրդիստան» տերմինն սկսում է շրջանառության մեջ մտնել, որով տվյալ ժամանակաշրջանում ևս նկատի են ունեցվել քրդական

¹ Մատթեոս Ռոտհայեցի, էջ 40, 94, հմմ. նաք հրատարակության հեռ՝ Երևան, 1991, էջ 68-69, 156-157:

կամ քրդաբնակ տարածքները: Թե՛ Համդուլլահ Ղազվինին և թե՛ Մ. Ուոհայեցին «Քուրդիստան» անվան տակ մատնանշել են աշխարհագրական տարրեր գոտիներ: Պարսիկ պատմիչը «Քուրդիստան» անվան տակ ընդգրկել է թվով տասնվեց շրջան և ամրոց (Դինավար, Քերմանշահ, Շահրեզուր և այլն), որոնք բուն քրդական էին կամ ընկերակցված էին քրդերով: Ըստ Հ. Ղազվինիի, լեռնային այդ հատվածներն ընդգրկում էին «Արարական Իրաքի, Խուզիստանի, Աջամական Իրաքի, Ատրպատականի և Դիլար Բաքրի» սահմանային գոտիների միջև ընկած տարածքները¹:

Իր հերթին Մ. Ուոհայեցին «Քուրդիստան» («Քրդիստան») անելով ի նկատի ունի միայն Մարվանյանների հիմնական տիրույթները՝ Ամիդի և Մայյաֆարիկիների գավառների միջև ընկած վայրերը², որոնք, պետք է ենթադրել, մտնում էին նաև Համդուլլահ Ղազվինիի մատնանշած «Քուրդիստանի» սահմաններում:

Ինչպես նշվեց, թե՛ Մ. Ուոհայեցին և թե՛ Հ. Ղազվինին «Քուրդիստան» անվան տակ ի նկատի են ունեցել քրդերի տարածման, զբաղեցրած տարածքները, այն չեն դիտում որպես քաղաքական-պետական միավոր, կամ թաժամում: Ուստի, կարծում ենք, որ Արդ առ-Ուակիբ Յուսեֆի «Քուրդիստան» տերմինի և նրա այլ քաղաղիչ մասերի օգտագործումը Մարվանյան իշխանության ժամանակաշրջանի համար ոչ միայն սխալ է, այլև՝ հերթական քայլ է Հարավային Հայաստանի քրդացման ուղղությամբ: Այս կապակցությամբ տեղին է մեջ քերել անվանի արևելագետ Վ. Մինոբսկու այն միտքը, որ նա նշում է. «Կասկած չկա, որ քրդերն աստիճանաբար գրավեցին Հայկական թագավորության մի մասը, որն անկում ապրեց XI դ., և որ շատ վայրերում նրանք գտնվում են ոչ իրենց իսկական տարածքների վրա»³:

Բացի վերոհիշյալից, քուրդ պատմաբանի աշխատությունում առկա են բազմաթիվ այլ սխալներ: Օրինակ, առ այսօր հայտնի չէ քրդական ամիրայության հիմնադրումը, որն Արդ առ-Ուակիբն առանց փաստական նյութերի թվագրում է 982թ.: Խորությամբ և

¹ Հ.Մ. Ղազվինի, էջ 127-129:

² Մատթեոս Ուոհայեցի, էջ 40, 94: Տե՛ս նոր հրատ., էջ 68-69, 156-157:

³ В. Минорский, Курды. Заметки и впечатления, с. 8.

ատարկայորեն լուսարանված չեն Մարվանյանների և հարևան իշխանությունների, պետությունների փոխհարաբերությունները, դիմաստիայի սոցիալ-տնտեսական ինստիտուտները և այլն:

Մեծ Հայքի հարավ-արևմտյան գավառներում Մարվանյանների ռազմական գործողություններին որոշ չափով անդրադարձել են մահ հայ պատմաբան-արևելագետներ Լեոն¹, Ա. Տեր-Ղևոնդյանը², Ս. Բոռնազյանը³, Վ. Վարդանյանը⁴ և այլք իրենց աշխատությունների համապատասխան բաժիններում:

Վերջ նշված գիտնականների ուսումնասիրություններում խնդրոտ առարկա թեման լուսարանվել է մակերեսորեն, այնքանով, որքանով այն առնչվել է իրենց հետազոտության այս կամ այն խնդրի հետ:

Հայ արևելագիտության մեջ Մարվանյան դիմաստիայի պատմության տարրեր հիմնահարցեր առաջին անգամ հաստուկ ուսումնասիրության առարկա են դարձել սույն աշխատության հեղինակի կողմից⁵:

¹ Լեո, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1967, էջ 599, 602, 607, 610, 635, 639:

² Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 190-191, 193, 195-196, 230, 259:

³ Ս. Բոռնազյան, Հայաստանը և սելջուկները, XI-XII դդ., Երևան, 1980, էջ 39, 68, 71...

⁴ Վ. Վարդանյան, Վասպուրականի Աբծրոմյաց թագավորությունը 908-1021 թթ., Երևան, 1969, էջ 194, 200:

⁵ А. Поладян, Курдская династия Марванидов и ее взаимоотношения с соседними мусульманскими эмиратами (вторая пол. X в.) .- "TV Всесоюзная конференция арабистов", тез. докладов и научных сообщений, Ереван, 1985, с. 105-106, նույնի՝ Մարվանյանների շինարարական գործունեությունը ըստ Իրն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի պատմության.- "Երիտասարդ արևելագետների համընթացական XII գիտական նստաչափի զեկուցումների թեզեր", Երևան, 1986, էջ 20-21, Մարվանյան ամիրայությունում ավատատիրական հողատիրության մի քանի մեքի մասին (ըստ Իրն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի պատմության) .- "Երիտասարդ արևելագետների համընթացական XIII գիտական նստաչափի զեկուցումների թեզեր", Երևան, 1987, էջ 21-22: Курдская династия Марванидов и ее взаимоотношения с соседними мусульманскими эмиратами (вторая пол. X в.) .- "Проблемы современной советской арабистики", (сб. стат.), проблемы истории и филологии,

Այսպիսով, չնայած քրդերի X-XI դդ. պատմության ուսումնասիրության արդի վիճակին, խնդրո առարկա ժամանակաշրջանն իր մի շարք կողմերով չարունակում է մնալ որպես քրդերի միջնադարյան պատմության չհետազոտված ժամանակաշրջաններից մեկը:

Ներկա աշխատությունը, որպես այդպիսին, իր բովանդակությամբ, ծավալով, հարցադրումներով, ինչպես նշվեց, առաջին փորձն է թե՛ մեր և թե՛ արտասահմանյան արևելագիտության մեջ: Միաժամանակ այն հավակնություն չունի իրավիշյալ քրդերի X-XI դդ. պատմության բոլոր իրադարձությունները լուսարանող գործ: Նրա այս կամ այն բացը լրացնելու և ճշտելու գործում մեծապես օգակար կարող են լինել քրդերի հարևան ժողովուրդների նոր գրավոր սկզբնաղբյուրների տվյալների հանգամանորեն և մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Ереван, 1990, с. 90-96, Մարվանյան զինաստիան և Մեծ սելուլները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVI, Երևան, 1996թ., էջ 166-185: К вопросу о взаимоотношениях Марванидов и Византики в X-XI веках. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVII, Երևան, 1998թ., էջ 109-123:

ԶՐԴԱԿԱՆ ՅԵՂԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ ԱՐՔԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արքայան խալիֆայությունը¹, որը հաճախ անվանում են մակ «Բաղդադի» կամ «Արևելյան», արյունահեղ կռիվներից և երկարատև պայքարից հետո անցավ իշխանության զուխ՝ հսկայական ժառանգություն ստանալով Դամասկոսի Օմայաններից:

Իրանական տարրի ակտիվ միջամտությամբ Արքայանները տիրեցին ամծայրածիր տարածքի՝ իր պատրաստի վարչատարածքային քաժամումներով ու պետական մարմիններով:

Նոր հարստությունն իր կառուցվածքով և պաշտոնական գաղափարախոսությամբ ավատաստիրական, թեոկրատիկ միապետություն էր: Խալիֆան ուներ զերագույն ինժամի, հոգևոր և աշխարհիկ ամիրայի իրավունք:

Արքայանները սկզբից ևեք ժողովրդական լայն զանգվածների շրջանում սկսեցին քարոզություն մղել, որ իրենք, իբրև Մարգարեի ընտանիքի հետնորդներ, համարվում են Ալլահի ընտրյալներ և նրա կամակատարներ²: Նրանց օրոք չչարունակվեցին արարական մվաճումները, զերխնդիր դարձավ կենտրոնական իշխանության ամրապնդումը, որի ուղղությամբ ձեռնարկված քարենորոգումները նպատակ ունեին պետական կառավարումն էլ ավելի կենտրոնացնելու և հարստության սցիալ-քաղաքական ու տնտեսական հեմարանը կայունացնելու:

¹ К. Э. Восворт. Мусульманские династии, с. 32-36.

² Ալ-Յուզուջի. Դիշասար ին ան-նիզամ ալ-Արաբիյա, ս. 42:

‘Իրանից ելնելով՝ Արքայազնները, ի տարբերություն Օմայանների, անհրաժեշտ համարեցին պետական շինարարության մեջ տեղեկություն և կենտրոնական ապարատում օգտագործել ոչ արար, հակաօմայան տրամադրություններ ունեցող տարրերին: Նրանք մասնավորապես հենվեցին իրանցիների և իրանական ավատատիրական վերնախավի՝ դեհկանների վրա, որոնց գործուն մասնակցությամբ ցայսպայսվեց և գահրճվեց արվեց ‘Գամակոսի Օմայան հարստությունը:

Նման քաղաքականությունը մեծապես նպաստեց իրանական մավալիների (հպատակների) ներքափանցմանն իշխող հարստության վարչական գրեթե բոլոր մարմիններ: Իրանցի մավալիները ներքին խորք առելությամբ էին տրամադրված արարների և, հատկապես, օմայանների նկատմամբ:

Արքայան խալիֆայությունում առաջացավ մի նոր՝ «վեզիրի» բարձրաստիճան պաշտոն, որն երկար ժամանակ վարեցին իրանցի խաչոր հողատեր արիստոկրատիայի ներկայացուցիչները՝ Բարմաքիները:

«Վեզիրի» պաշտոնը խիստ թուլացրեց արաբական արիստոկրատիայի դիրքերը, հնարավորություն տվեց Սասանյան օրենքների աստիճանական կիրառմանը խալիֆայությունում: Վեզիրը խալիֆայի առաջին օգնականն ու հեղինակավոր խորհրդատուն էր, որին ենթարկվում էին վարչաֆինանսական ապարատը, պետական վերահսկողության գերատեսչությունը և այլ դիվաններ¹: Խալիֆայից հետո վեզիրն արքունիքում երկրորդ դեմքն էր, տեղակալը քաղաքացիական հարցերով՝ անսահմանափակ իրավունքներով²: Նրա լիազորություններն այնքան մեծ էին, որ կարող էր ինքնուրույն լուծել շատ հարցեր: Մեծ վեզիրների իշխանությունը սահմանափակվեց միայն Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809թթ.), որը 802 թվականին իրանական Բարմաքիներին հեռացրեց պետական այդ պաշտոնից, դաժանորեն ոչնչացրեց նրանց գերդաստանը, րոնագրարվեց ունեցվածքը³:

¹ E. A. Белов, Арбы, Ислам, с. 240.

² Նույն տեղում:

³ Ե. Բարբեյան, էջ 187:

Մարզերի գլուխ կանգնած էին փոխարքաները՝ կառավարիչները (ամիրյ, ամիրան, ոստիկանը)՝ քարձրագույն ավատատիրական ազնվականությունից: IX դարից այս պաշտոնը դարձավ ժառանգական:

Արքայամների օրոք ակախի գործունեություն ծավալեցին ֆինանսների դիվանը, փոստը և այլ գներատեսչություններ: Բանակը հիմնականում կազմված էր վարձկան խորասանցիներից, ընդերքներից, բյուրքերից և սևամորթ ստրուկներից (զինջիմներից): Ալ-Մու-բախի խալիֆան (833-840թթ.) ստեղծեց նոր տիպի քանակ՝ պալատական զվարդիա, որը կազմված էր ղուլամներից (արարներն ղուլամ նշանակում է երիտասարդ, ռազմիկ ծառա և այլն)՝ ստրուկ ռազմագերիներից, որոնք մանուկ հասակից դաստիարակվում էին հատուկ պայմաններում: Տեղական կառավարիչների տրամադրության տակ դրվեցին զորագրկատներ, որոնք կազմված էին ժողովրդական աշխարհագորից (հեծելագոր, հետևակ):

Արքայամների օրոք զարգացում ապրեցին ավատատիրական հարաբերությունները: Պետությունը ճանաչվեց որպես հողի, ջրի և այլնի գերագույն սեփականատեր: Խոշոր հողատեր-ավատատերեր էին խալիֆաները, նրանց մերձավոր քարեկամները, մարզերի կառավարիչները, տեղական արիստոկրատիան:

Խալիֆայությունում կիրառվեցին հողատիրության մի քանի ձևեր՝ «մուլք», «իկտա», «վակֆ» և այլն: Ավատատերերի ձեռքում հողային տիրույթների կենտրոնացումը հանգեցրեց գյուղացիների ստրկացմանը և հողազրկմանը: Ավատատիրական շահագործման ժամը հարկերն ու պարտադրվածները, կեղեքումներն ու հալածանքներն առաջ քերեցին ժողովրդական հզոր շարժումներ ողջ խալիֆայության տարածքում:

Ինչպես Օմայյանների, այնպես էլ Արքայամների օրոք ժողովրդական ապստամբությունների շարժիչ ուժը գյուղացիությունն էր, որի հիմնական կարգախոսը գույքային հավասարությունն էր: Այդ պայքարը, որն առաջին հերթին ուղղված էր Արքայամների և նրանց կամակատար ավատատերերի դեմ, VIII դ. երկրորդ կեսին, արդեն ուներ արտահայտված դասակարգային բնույթ¹:

¹ Н.В. Пигулевская и другие, История Ирана, с. 107.

Խալիֆայությունում բռնկված ժողովրդական շարժումները, եսկաավառատափրական և հակաարաբական ելույթները մղվում էին հիմնականում կրոնական կարգախոսների տակ:

Արբասյանների գահակալությունից հետո ուժեղ քափով վերսկսվեցին մահ խաբիյիների շարժումները, որոնց հիմնական օջախներից էին Միջագետքը, Մոսուլի մարզը և այլ վայրեր:

VIII դ. կեսերից քրդական ցեղերը սկսեցին արձագանքել հակաարաբական և հակաավառատափրական գրեթե բոլոր ընդվզումներին: Թեպետև քրդերի այդ ելույթներն անկազմակերպ էին և տարերային բնույթ էին կրում, սակայն քավականայանի անհանգստություն էին պատճառում կենտրոնական իշխանությանը:

1. ԶՐԴԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ՊԱՅՏԱՆՆԵՐԸ

Արաբական ողջ տիրապետության ժամանակաշրջանում սկսած VIII դ. 30-40-ական թթ.-ից արաբալեզու աղբյուրները քրդական ցեղերին հիշատակում է հիմնականում ժամանակակից իրանական և իրաքյան Քուրդիստանների տարածքներում, մասնավորապես Հուլվանում¹, Քերմանշահում² (Կարմասիմում), Շահրեզուրում³, Մոսուլի մարզում⁴, ինչպես մահ հարակից իրանական որոշ մահամզներում՝ Ատրպատականում, Ֆարսում, Խուզիստանում⁵: Սակայն, մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս ցույց տալ քրդական ցեղերի քնակավայրերի ճշգրիտ սահմանները: Առավել ևս զանազան դրդապատճառներով մրանք մշտապես գտնվել են շարժման մեջ, և երբեմն ուղղակի անհնար է պարզել այն կամ այն ցեղի տեղա-

¹ Al-Jakubi, p. 270.

² Ալ-Բարսզուրի, Քիթաբ ֆուհար ալ-բուլդան, տը-Կահիթա, 1901 (այստեևտև՝ ալ-Բարսզուրի):

³ Նույն տեղում, էջ 340-341, Iba al-Fekih, p. 129.

⁴ Նույն տեղում, էջ 339, Իբն ալ-Ասիբ, II, էջ 365:

⁵ Նույն տեղում, էջ 339, Յակուբ, I, էջ 128, ԱՂ-Գ-Ա Արևկրդիստանյան ինստիտուտի Սանկա-Պետերբուրգի բաժանմունքի ձևագրաֆոնդ, այսպ. ձև, N-C-350, II, լիստ 97 ա:

չարժևելու ստույգ դրույապատճառն ու ժամանակը: Այրուհանդերձ, հայտնի է, որ, օրինակ, Մատուլի մարզը և դրա հարակից շրջանները, որոնց «քրդական ամրությունների» մասին սկզբնաղբյուրներն ակնարկում են դեռևս VII դ.¹, ինչպես նաև Ջազիրայի և Ջիրայի առանձին փայտեր բնակեցված էին քրդերով:

Արարական սկզբնաղբյուրների անդևկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արբասյան խալիֆայությունում քրդերի կրանքում լայն տարածում ստացած հասարակական ծնկյ տոհմա-ցեղային հարաբերություններն էին: Մահմեդական միջնադարում արարական տոհմացեղային համակարգը խոր ռեսոս քողնց քրդական իրականության մեջ, մեծ ազդեցության ենթարկելով մահմեդականություն ընդունած քրդական ցեղերի ներքին կառուցվածքը: Այլ կերպ ասած, արարական երկարատև տիրապետությունը Մերձավոր և Միջին Արևելքում, արարների և քրդերի փոխադարձ և սերտ շփումներն ավելի շատ հող նախաուպատրաստեցին քրդական տոհմացեղային հարաբերությունների ամրապնդման համար:

Արարական աղբյուրներում քրդական ցեղերը հիշատակվում են ռազմացեղային մի քանի անվանումներով՝ «կարքիլա», «աշիրա», «տախիֆա», «կարում», «ջինա» և այլն: «Կարքիլան» ցեղային միություն էր, որը կարող էր ընդգրկել արյունակցական հետավոր կապեր ունեցող խմբերին²: Իսկ «աշիրան» արյունակցական մերձավոր խումբն էր³, որն ուներ ռազմական ֆունկցիա և երբեմն էլ միավորում էր այլ խմբերի՝ իրենց ռազմական կազմակերպություններով: «Քախիֆան» ճշամակել է որևէ ցեղի կամ ցեղային միության ճյուղ: XIII դարի հայտնի լեզվաբան Իբն Մամգուրն ընդգծում է, որ մեկից մինչև հազար մարդ կարող է համարվել «քախիֆա»⁴:

Ջրդերի մասին խոսելիս, արաբ հեղինակների օգտագործած արարական տոհմացեղային (ջամա'ա, կարում, ֆախա, ջիլ) ան-

¹ Նույն տեղում:

² Իբն Մամգուր, Լիսան ալ-սաթ, XIV, ալ-Կախիթա, 1302, ս. 75-76 (այսուհետև՝ Իբն Մամգուր):

³ Նույն տեղում, հ. VI, Կախիթի, 1300թ., էջ 250:

⁴ Նույն տեղում, հ. XI, Կախիթի, 1301թ., էջ 130:

վանումները միշտ չէ, որ համապատասխանել են իրականությանը՝ երբեմն կրելով պայմանական քնույր: Այսպես, օրինակ, քրդական հայտնի «ալ-Հադրամիյա» խոշոր ցեղային միությունը հաճախ կոչվել է «կարիլա», «աշիրա» և այլն:

Ջրդական ցեղերը, ըստ մեր ձևերի տակ նշած նյութերի, ունեցել են ցեղային միությանտություն: Մինչև X դար մեզ ծանոթ են ցեղային վերնախավի երկու դասի անվանումներ՝ «մուկդիմ» (կամ մուկադդիմ, հոգ. քիվ մուկադդիմում) և «ռայխա» (հոգ. քիվ առասա): Այս մասին առկա նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանցից ստացինը նշանակել է առաջնորդ, գլուխ և ընկալվել է որպես ռազմական կոչում: Մակսիմը ղեկավարում էր ցեղի անդամներին՝ ընդլվզումների և ռազմական այլ շարժումների ժամանակ՝ կրելով ռազմական պատասխանատվություն¹: Ռայխը ցեղապետ-ավատատերն էր, որի իշխանությունը ցեղում կամ ցեղային միությունում կրում էր միանձնյա և ժառանգական քնույր: Ռայխսն իբրև ավատատեր, որպես կանոն, ուներ «վալա» (քերդ) կամ «հիարն» (ամրոց) և որոշակի քանակությամբ զորք²:

Արար հեղինակները X դարից քրդական իրականությունում հիշատակում են ռազմաքաղաքական մեկ այլ ինստիտուտ: Դա ամիրաների ինստիտուտն էր³, որի երևան գալը կապված էր խալիֆայությունում IX-X դարերից ավատատիրական անջատողական թույն վերելքի հետ: Ամիրը կամ ամիրան համարվում էր առանձին տարածքում բնակվող ցեղերի ռազմաքաղաքական գերագույն առաջնորդը: X դարի երկրորդ կեսից ամիրների ինստիտուտը լայնորեն տարածվեց քրդական իրականության մեջ, և նրա ենթակայության ներքո շարունակեց գոյատևել մահ ռայխների դասը:

Արարական երկարատև տիրապետության հետևանքով զգալի տեղաշարժեր կատարվեցին մահ քրդերի կյանքում: Ավատատիրական շահագործման և զանազան կեղծքումների, ինչպես մահ ռազմաքաղաքական ու տնտեսական այլ դրդապատճառ-

¹ Իբն ալ-Ասիր, V, Կակիթ, 1357թ., էջ 250...

² Նույն տեղում, VI, էջ 77, 120, 190:

³ Hikal as-Sabi, Kitab al-Wuzara, ed. by H.F. Amidroz, Leiden, 1904, p. 148.

ճերի հետևանքով քրդական քնակավայրերի աշխարհագրությունը քավականաչափ փոխվեց: Այդ իրողությունն, ինչպես կտեսնենք, կապված էր թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական դրդապատճառների հետ:

Ալ-Մասուդին քերես միակ հեղինակն է, որն իր երկերում ներկայացրել է X դ. քրդական ցեղամուսններն ու քնակավայրերը: Ուշ շրջանի հեղինակների հաղորդումներից պարզվում է, որ նրա ցուցակը մեզ է հասել ոչ ամբողջությամբ, և որ նա իբր հիշատակել է 300 ցեղանուն¹: Նույնիսկ, եթե ալ-Մասուդիի երկերում տեղ գտած բոլոր ցեղամուսնները մեզ չեն հասել, այդուհանդերձ նրա հաղորդումները որոշակի պատկերացում են տալիս խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդերի տեղաբաշխման վերաբերյալ:

Ալ-Մասուդիի վկայությունների համաձայն, քրդերը տարածված էին հետևյալ շրջաններում՝ Քերմանում, Սաջիստանում (Սիստան), Խորասանում, Իսֆահանում, Ջիբալում՝ Նեհավանդում, Դինավարում, Համարանում, Շահրիզուրում, Դարաբադում, Սամարանում, Ատրպատականում, Հայաստանում, Ադվանքում (առ-Ռան), Բալլականում, Բաք ալ-Արուսարքմ (Դարբանդ), Ջալիբաում, Ասորիցում (Շամ), Մուղուրում (արաբաբյուզանդական սամանային գոտի) և այլուր²: Վերոհիշյալ տարածքներում նա հիշատակում է հետևյալ ցեղերին՝ «ալ-Բադիհեջան, ալ-Շուիջան, ալ-Շազիմջան (կամ ալ-Շադանաջան), ամ-Նաշավիբա, ալ-Թուզիջան, ալ-Լուրիյա, ալ-Ջուրկան, ալ-Ջավանիյա, ալ-Բարիսյան (կամ ալ-Բարսյան, ալ-Բարիսան), ալ-Ջալալիյա, ալ-Մուսթաբան, ալ-Ջարարիկա (ալ-Ջարարիկիյա), ալ-Ջուրդան, ալ-Քիբան (ալ-Կիկան), ալ-Մաջուրդան, ալ-Հադրանիյա և ուրիշներ»³: Ալ-Մասուդիի հաղորդումների համաձայն, ալ-Շուիջան ցեղը քնակվում էր Դինավարի, Նեհավանդի և Համարանի շրջաններում, իսկ ալ-Մաջուրդանը՝ Կանգավարում (Քանքավար), որը Ջիբալի նահանգի գավառներից էր՝ Հա-

¹ Ed-Dimichqui, p. 255.

² Al-Masudi, p. 89.

³ Նույն տեղում, էջ 88-89:

մաղանի և Հերոմանշահի միջև ընկած շրջանում: Աշ-Շուրսահ¹, աշ-Շաղիմյան (կամ աշ-Շաղամջան), ալ-Լուրիյա, ալ-Մաղա-
յան, ալ-Մազղամայան, ալ-Բարիսան, ալ-Ջալալիյա, ալ-Ջա-
րաբկիյա, ալ-Ջավանիյա, ալ-Մուսաբարան ցեղերը բնակվում էին
Ձիբալում:

Ըստ ալ-Մասուդիի, աղ-Դամարիյա ցեղը հաստատվել էր Ա-
սորիքում, իսկ ալ-Յակուբիյա և ալ-Ջուրկան ցեղերը՝ Մասուլի ու
ալ-Ջուդի լեռան (Արարատ) միջև ընկած տարածքում²: Մասուլի
մարզի հյուսիսային հատվածները բնակեցված էին հիմնակա-
նում քրդերով: Մեզ հասած վկայությունները հստակ չեն ընդգ-
ծում այդ տարածքներում քրդական ցեղերի գրադեցքած տա-
րածքների սահմանները: Այս հանգամանքն իր հերթին բարդաց-
նում է մեզ խնդիրը՝ ճշգրտելու այս կամ այն ցեղի բնակավայրե-
րը: Հայտնի է, որ արարական աղշավանքների աղշալույսին
սկզբնաղբյուրները քրդերին հիշատակում են Աղիարենում և հա-
րակից տարածքներում, որտեղ մատնանշվում է «քրդական ամ-
րայությունների» անկայությունը³: Այստեղ բնակվող քրդական
ցեղերը, որոնց անունները մեզ հայտնի են ավելի ուշ շրջանից,
տարածված էին հիմնականում Տիգրիսի արևելյան և արևմտյան
ափերին՝ Մեծ և Փոքր Չարերի հովիտներում:

Մասուլի մարզի հյուսիսային շրջաններում հայտնի էր քրդա-
կան ալ-Հաքքարիյա ցեղային միությունը, որը X դ. սկսեց բա-
վանցել Հայկական լեռնաշխարհ⁴: Միևնույն ժամանակաշրջա-
նում Հայաստանի հարավային մահանգներում հաստատվեցին
քրդական այլ ցեղեր: Օրինակ, Տիգրիսի արևելյան ափի երկայն-
քով բնակվում էր քրդական ալ-Բաշնավիյա ցեղը: Այստեղ Բաշ-
նավիները հաստատվեցին մուտավորապես X դարի սկզբներին⁵
և հետզհետե տարածվեցին Վերին Միջագետքում: Իրն ալ-Ասի-

¹ Աշ-Շուրսահը գերանում չէ այն մանեղական խաչքնի աղանդի անվան հո-
մանիչն է:

² Ալ-Մասուդի, II, էջ 251:

³ Ալ-Բաբազուրի, էջ 339:

⁴ As-Samani, al-Ansab, Leiden-London, 1912, p. 59; Յակուբ, I, էջ 54, II, էջ
184, V, էջ 408, Իրն Նրախթան, I, էջ 437; Իրն ալ-Ասիք, ալ-Լուրսք, III, ալ-
Գախիթա, 1361, ա. 292 (այսուհետև Իրն ալ-Ասիք, ալ-Լուրսք):

⁵ Յակուբ, IV, էջ 278:

րը նշում է, որ ալ-Քաշնավիյա քրդական ցեղին էր պատկանում Ֆանակ (Փինիկ) ամրոցը¹: Այս ցեղը միջմահարյան արարական աղբյուրներում հայտնի է եղել որպես «Ֆանակ» ամրոցի տեր²: XIII դարի հեղինակ ալ-Կազվինին ընդգծում է, որ «Ֆանակը» բարձր լեռան զագաթին գտնվող ամուր բերդ էր. Ջազիրա իրն Օմարից երկու փարսախս հեռավորության վրա: Այն երեք դար շարունակ (X-XIII) գտնվել է ալ-Քաշնավիյա քրդերի տիրապետության տակ³: Կորճայքում՝ ալ-Ջուդի (Արարադ) լեռան արևելյան մասերում Մ. Է. հիշատակվում է ալ-Ռուհադիյա ցեղը, որի առաջնորդ՝ Ալի իրն Դաուդ ալ-Քուրդին 892 թվականին դարձավ Մուսուլի կառավարիչ և, ալ-Մասադիի տվյալներով, վերը նշված մասում ուներ մի քանի դղյակներ⁴:

Տնօրիքի հարավում՝ Տիգրիսի արևելյան մասում քնակվում էին քրդական ադ-Դասինիյա ցեղերը, որոնք կրում էին Դասին լեռան անունը: Աշխարհագիր Յակուբն այս կապակցությամբ գրում է, որ «Դասինը հսկա լեռ է Մուսուլի հյուսիսում՝ Տիգրիսի արևելյան կողմում, ուր սպրում են մեծ թվով քրդական քաղաքներ, որոնց կոչում են ադ-Դասինիյա (դասինցիններ)»⁵: Յակուբն այս վկայությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Դասին անվանումը կրել են քրդական մի շարք ցեղեր:

Արարախզու սկզբնաղբյուրները Մուսուլի մարզի հյուսիսային հատվածներում հիշատակում են մահ ալ-Համիդիյա (ալ-Հումայդիյա) ցեղին⁶, որը X դ. երկրորդ կեսին արդեն ամրապնդվել էր արարա-քյուզանդական սահմանային գոտում՝ Դիյար Բաքր վարչատարածքային միավորման սահմաններում⁷: Այս ցեղն ավելի ուշ շարունակեց իր ազդեցությունը պահպանել առանձին տարածքների վրա: Այստեղ ալ-Համիդիյա ցեղին էին պատկա-

¹ Իրն ալ-Մսիք, ալ-Լուրսթ, I, էջ 127:

² Իրն ալ-Մսիք, VII, էջ 143-144, 341, Իրն Նարդան, IV, էջ 253:

³ Ալ-Կազվինի, Ասաք ալ-Քիլադ ռու-սասք ալ-Իրազ, Բեյքաթ, 1960, ս. 431-432 (այսուհետև՝ ալ-Կազվինի, Ասաք):

⁴ Al-Masudi, Kitab, p. 54.

⁵ Յակուբ, II, էջ 432:

⁶ Իրն Նարդան, IV, էջ 251:

⁷ Նալմ տեղում, III, էջ 433, Իրն ալ-Մսիք, VII, էջ 121-122:

նում «Ակր», «Շուշ» և այլ ամրոցներ: «Ակրը», արարածնեզու ինդի-նակների հարյուրյամենեով, խոնարհում ամուր բերդ էր, գտնվում էր Մոսուլի արևելյան հատվածում և հայտնի էր Ակր ալ-Համիդիյա (ալ-Հումայդիյա) անունով: Իսկ «Շուշը» ավելի բարձրադիր փոքր բերդ էր և գտնվում էր «Ակրի» մուտակայքում¹:

Մոսուլի մարզում բնակվող քրդական ցեղերից էին ալ-Մարա-նիյան (ալ-Մարբանիյա), ալ-Քիրան, ալ-Քուլսքիյան:

Քրդական ցեղերի կարևոր օջախներից էր էրքիլի (Արբելա) շրջանը, որը նույնպես ժամոմ էր Մոսուլի մարզի մեջ: Յակուբը գրում է, որ բազմաթիվ ամրոցներ ունեցող էրքիլի բնակչության մեծամասնությունը արարացած քրդերից էր²: Իրն ալ-Ասիրը նշում է, որ XII դարում այստեղ էին բնակվում քրդական ալ-Խա-րիյա, ալ-Հիքմիյա ցեղերը³: Դրանցից վերջինն արաբ աշխարհագիր Աբու Դուլաֆի տվյալներով X դարում գտնվում էր Շահ-րիզուրում⁴:

Մոսուլի մարզում և հարակից տարածքներում իր ազրեսիվ գործողություններով այքի էր ընկնում քրդական հայտնի ալ-Հադրանիյա խաչոր ցեղային միությունը: Եղած նյութերը քուլլ են տալիս ասելու, որ կիսաբույժորական կյանք վարող այս ցեղի հիմնական բնակավայրը Նիմվեից հյուսիս-արևելք ընկած շրջանն էր: Անասնապահ Հադրանիները ձմեռում էին հիմնակա-նում երկու Ջարբերի միջև ընկած վայրերում, որոնք հայտնի էին որպես «Մաշաբի ալ-Հադրանիյա» (Հադրանիների ձմեռանոց-ներ)⁵: Մինչև X դ. Մոսուլի գրեթե բոլոր շրջաններում և Ատրպա-տականում ու Դասինի լեռնային հատվածներում այս ցեղի տե-ղաչարժերը բավական մեծ շրջանակներ ընդունեցին: Աբու Դու-լաֆը նշում է, որ Դասինի շրջաններում բնակվող Հադրանի քրդերն անհնազանդ էին և ասպատակում էին հարակից վայրե-րը: Արքայազանները նրանց ինազանդեցնելով՝ վերականգնեցին ավերված շինությունները և Դասինում կարգուկանոն հաստա-

¹ Իրն ալ-Ասիր, VIII, էջ 243, Յակուբ, III, էջ 372:

² Յակուբ, I, էջ 137:

³ Իրն ալ-Ասիր, VIII, էջ 202, 237:

⁴ Вторая энциклопедия Абу Дулафа, с. 18.

⁵ The Heikal, p. 156.

տեցին¹: IX դարի վերջերից և X դարի սկզբներին Հաղրամիներն ակտիվ գործողություններ էին ծավալել մահ Ատրպատականում: Այս նահանգում, ուր քրդերը հիշատակվում են դեռևս արարական արշավանքների ժամանակ, Հաղրամիների տեղաշարժերի հիմնական վայրերն էին Ուրմիա լճի ավազանը, Մարաղան, Սալմաստը, Արդարիլը:

Բացի այդ, Հաղրամիները էրբիլի շրջանում ալ-Համդիդյա ցեղի գրաղեգրած տարածքի շրջակայքում ունեին իրենց ամրոցները²: Իրն Հաուկայի տվյալներից երևում է, որ Ուրմիա լճի մոտ ընկած Ուլմու շրջանը ևս գտնվում էր Հաղրամիների տիրապետության տակ: Այստեղ էին նրանք անցկացնում ամառը և Ուլմու քաղաքում առևտուր կատարում³:

Արրասյան խալիֆայության ժամանակաշրջանում քրդերը լայնորեն տարածված էին մահ Ջիրայի նահանգում⁴: Արաբ հեղինակները նրանց հիշատակում են Շահրիզուրում, Կարմասիմում (Քերմանշահ), Համադանում, Նիհավենդում և հարակից այլ վայրերում: Մասնավորապես Շահրիզուրը խնդրո առարկա ժամանակաշրջանում վերածվել էր սագմաքաղաքական իրադարձությունների կարևոր կենտրոնի: Այս շրջանը, որի բնակիչները արարակգու հեղինակների վկայությամբ հիմնականում քրդեր էին, գտնվում էր էրբիլի և Համադանի միջև⁵: X դարում Շահրիզուրի քրդերն այնքան էին հզորացել, որ համարյա չէին ենթարկվում կենտրոնական իշխանությանը: Արո Գուլաֆը նշում է, որ Շահրիզուրում «ալ-Ջալալիյա», «ալ-Յարսան», «ալ-Հիրմիյա», «աս-Սուվիլիյա» քրդական ցեղերից ծնունդ էին 60 հազար ընտանիքներ, որոնք ունեին մահ երկրագործական դաշտավայրեր⁶: Նույն հեղինակի վկայությամբ, Շահրիզուրի գլխավոր քաղաքն էր Նին Ազրայը, որի բնակիչները չէին ենթարկվում խալիֆային⁷:

¹ Вторая записка Абу Дулафа, с. 18.

² Իրն ալ-Ասիթ, VIII, էջ 49:

³ Ibn Haskal, 4շվ. աշխ., էջ 239:

⁴ Al-Istakhrī, p. 195; Ibn Haskal, p. 225.

⁵ Թակաթ, III, էջ 375-376:

⁶ Вторая записка Абу Дулафа, с. 18.

⁷ Նույն աղբյուր:

Համադասնից Ջննջան տատոյ ճամապարհի վրա էր գտնվում Մուխրավարոյ քաղաքը: Իրն Հատկապը գրում է, որ այս քաղաքը, որի բնակիչները խարիչիներ էին, մման էր Եահրիզուրին և գտնվում էր հիմնականում քրդերի տիրապետության տակ¹: Այլ-խարհագիրն այնուհետև ավելագնում է, որ Եահրիզուրից դեպի Անիլ, Ատրպատական, Ջազիրա և Մոսուլ ձգվում են քարձրաբեր լեռներ: Այս տարածքներում բնակվում էին «ալ-Համադիյա» (ալ-Համիդիյա), «ալ-Ավնիյա» (կամ ալ-Լավիյա), «ալ-Միհրամիյա» և քրդական այլ ցեղեր²:

Եահրիզուրի քրդական ռազմատենչ ցեղերից էր «ալ-Ջալալիյան», որը հաճախ հայտնվում էր Եահրիզուրի սահմաններից դուրս և քրդական «ալ-Եամարդիյա» ցեղի հետ միասին IX դարի երկրորդ կեսին մասնակցեց Մոսուլի մարզի խարիչիների շարժմանը³:

Կարմասինին (*Ջերմանչահ*), Եահրիզուրին, Դինավաքին, Նեհավանդին և Ջիրալին հարակից Ատրպատականի առանձին շրջաններում X դարում մեզ հայտնի քրդական ցեղերից էին «ալ-Բարզիհիյան» (ալ-Բարզիկան), «ալ-Այլամիյան», «ալ-Եադանյան», «ալ-Կալիիյա» և այլն⁴: X դարի կեսերին վերջ նշան վայրերում այս ցեղերի տիրապետությանը ենթարկվեցին որոշ շրջաններ⁵:

Իրն Հատկալի վկայությամբ, X դարում քրդերն իրենց ազդեցությունը տարածեցին մաև Կազվինի և Ջննջանի միջև ընկած Արիսը քաղաքի ու նրա ենթակա շրջանների վրա⁶:

Արարական արշավանքներից սկսած՝ արարալեզու աղբյուրները քրդերին հաճախ հիշատակում են իրանական այլ նահանգներում: Այսպես, օրինակ, Խուզեստանում ամենաշատը վկայակոչվում է «ալ-Լուրիյա» ցեղը, որին միջմադարի գրեթե բոլոր հեղինակները քուրդ են համարել: Այս առիվ հարկ է նշել,

¹ Ibn Haukel, 624, աշխ. էջ 263:

² Նույն տեղում, էջ 265:

³ Իրն ալ-Անիլ, VI, էջ 35-36, Իրն Խաղաւ, III, էջ 329:

⁴ Նույն տեղում, VII, էջ 101, 307-308:

⁵ Նույն տեղում:

⁶ Ibn Haukel, P. 258:

որ առ այսօր պարզ չէ ժամանակակից լուրերի (որերի) ծագումը: Հետազոտողների մի մասի կարծիքով լուրերն արևմտյան Իսրահի տեղաբնիկներ են և պատկանում են Ջազրու լեռան լեռն-լեզվախմբին¹:

Լուրիստանի մասին խոսելիս արաբ աշխարհագիրները նշում են, որ այն Խուզիստանի շրջաններից էր, քայք ընդգրկվել էր Ջիրալի կազմի մեջ²: Իրն Հաուկալն ու ալ-Իդրիսին գրում են, որ Բիլադ ալ-Լուրը (Լուրիստանը) հարուստ երկիր է, որիմ տիրում են քրդերը³: Յակուբն իբ հեբթին նշում է, որ լուրը քրդական մի ցեղ է, որը բնակվում է Իսֆահանի և Խուզիստանի միջև ընկած լեռներում: Այդ շրջանները կրում են նրա անունը և կոչվում են Բիլադ ալ-Լուր⁴: Լուրիստանում քրդերին հիշատակել է մահ արաբ մատենագիր-աշխարհագիր Աբու-լ-Ֆիդլան⁵:

Իրն Հաուկալն ու ալ-Իստախրին Խուզիստանի բնակիչների լեզվի մասին խոսելիս նշում են, որ այստեղ խոսում են արաբերեն, պարսկերեն և մեկ այլ լեզվով, որը կոչվում է խուզի: Ըստ արաբ աշխարհագիրների, վերջինս ինքնուրույն լեզու է. այն ո՛չ կրթայերեն է, ո՛չ ասորերեն և ո՛չ էլ պարսկերեն⁶: Ուշագրավ է, որ արաբալեզու աշխարհագիրներն ու մատենագիրներն այդ լեզուն քրդական չեն համարել, ոչ էլ մույնացրել քրդերենի հետ: Նրանց տվյալներից երևում է, որ այդ լեզվով հաղորդակցվել են Խուզիստանում, որն արաբ հեղինակների կողմից համարվել է «սատանաների» լեզու⁷:

Այսպիսով, կասկածի տակ չառնելով Խուզիստանում, ինչպես մահ Լուրիստանում քրդերի առկայությունը, ենթադրում ենք, որ

¹ Неродин Передней Азии, М., 1957, с. 264, G.N. Curzon, Persia and the Persian question, v. II, London, 1892, p. 306-314; V.Minorsky, "Lur" (II), v. III, London, 1963, p. 41-46, В.В. Бартольд, Соч., т. VII, М., 1971, с. 178-188.

² Ibs Henkal., p. 270-171, al-Istakhri, p. 88:

³ Ibs Henkal., p. 176, Al-Idrisi, f. IV, p. 400.

⁴ Յակուբ, V, էջ 16, 25:

⁵ D'Aboul-Fedae, Geographie, Paris, 1840, p. 312-313.

⁶ Ibs Henkal, p. 173-174, al-Istakhri, p. 91.

⁷ Al-Moqddasi, p. 418.

«բորոք» տերւիւնն այս պարագայում արար հեղինակների երկն-
յում երբեմն օգտագործվել է ոչ էքսիկալկան նշանակությամբ:
Դա հաստատվում է նաև Յարսում, Քերմանում և այլուր տվյալ
անբժինի կիրառությամբ ևս: Վերոհիշյալ նախնականների տեղաբ-
նիկ, քոչվոց-ամասնապահ ցեղերին քուրդ համարելով կամ
քրդերի նմանեցնելով՝ սկզբնաղբյուրները մկատի են ունեցել
ավյալ ժողովուրդների կենցաղավարույունը, գրադուները¹:

Միջագետքում, թերևս, միևնույն ժամանակ սկսվեցին քրդա-
կան ցեղերի աշխույժ տեղաշարժերը: Մոսուլի մարզից հարավ
քրդերի կենտրոններից մեկը դարձավ Վասիտ քաղաքը²:

Առավել ուշագրավ է քրդերի երևան գալը հարևան քրիստո-
նեական աշխարհում, մասնավորապես՝ Հայաստանում: Ինչպես
վերը նշվեց, արարալեզու հեղինակներն արարական արշա-
վանքների արշալույսին քրդերին հիշատակում են Մեծ Հայքի
Կորճայք գավառին սահմանակից շրջաններում³: Բուն Կորճայ-
քում նրանց հայտնվելը հնարավոր էր նախաարարական շրջա-
նում⁴: Արարական արշավանքների ընթացքում քրդերը հիշա-
տակվում են Այվանքում⁵ և Ատրպատականում⁶, իսկ բուն Հա-
յաստանում նրանց առկայության մասին լուրս են թե՛ արարալե-
զու և թե՛ հայկական սկզբնաղբյուրները:

Ավելի ուշ Հյուսիսային Հայաստանում արարալեզու հեղի-
նակները քրդերին հիշատակում են Դվինի շրջակայքում, որտեղ
Բագրատունիների օրոք (X դարի երկրորդ կես) ժամանակավոր
իշխան դարձավ քուրդ ամիրա՝ Մուհամմադ Ի-բն Շադդադը (951-
954): Դա առաջին քուրդ ամիրան էր Մեծ Հայքում⁷: Դվինի
շրջանում հաստատվել էր առ-Ռավադիյան, որն ըստ արարալե-

¹ Այդ մասին տե՛ս՝ Ibo Hsekai, p. 185-187, 220-221, al-Istakhrī, p. 113-114, 163-164.

² Адам Мей, Мусульманский ренессанс, М., 1966, с.379. Տես նաև Իբն ալ-Ֆարաբի, VI, էջ 381:

³ Ալ-Բարսազուրի, էջ 339:

⁴ Ա. Տեք-Ղևոնդյան, Արարական ամիրայությունները, էջ 193:

⁵ Իբն ալ-Ասիր, III, էջ 44; ալ-Բարսազուրի, էջ 221:

⁶ Ալ-Բարսազուրի, էջ 334:

⁷ Ա. Տեք-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 192:

զու հեղինակների, քրդական հայտանի Հաղթամիյա ցեղային միության մի ճյուղն էր: Առ-Ռավադիյա ցեղից էր սերում Մաղափ աղ-Դին ալ-Ալյուրին, որի նախահայրերը Գվինից էին¹: Այս ցեղը, մեր կարծիքով, Գվինում կարող էր հաստատվել միայն Ատրպատականից, որտեղ քրդերը զգալի թիվ էին կազմում:

IX դարի վերջերին և X դարում իրանական ժողովուրդների հակաարարական պայքարի վերելքով պայմանավորված՝ քրդերի տեղաշարժերն ավելի ակտիվացան: Մոտավորապես այս շրջանում սկսվեցին նրանց տեղաշարժերը դեպի հյուսիս², դեպի Հայաստանի հարավային շրջանները՝ Վասպուրական, Աղձնիք և այլուր: Արարների հարվածների և Վասպուրականի Մեհնթրիմ Արծրունի քազավորի ժամանակ սկիզբ առած զաղրերի հետևանքով Հարավային Հայաստանի որոշ շրջաններում հայ ազգաբնակչությունը խիստ նոսրացել էր: Այստեղ արարական ամիրայական տները չկարողացան պահպանել իրենց զերիչ-խանութայինը, և նրանց տիրույթներն անցան երկրի ոչ թե քնիկ տերերին, այլ՝ քրդական տարրին³: Այլ կերպ ասած, այն ճեղքը, որ Հայաստանի հարավային մասերում քացել էին արար նվաճողները, նպաստեց քրդերի դյուրին ներթափանցմանը, որն ինչպես զրում էր Լեռն, «չկատարվեց, ինչպես լինում է սովորաբար, այսինքն՝ լոկ զենքի և բռնության միջոցով»⁴: Վերը նշված հայկական շրջաններում քրդական ցեղերն ի հայտ եկան անաղմուկ և խաղաղ պայմաններում: Նրանք Կորճայքից սկսեցին տարածվել դեպի Աղձնիք՝ Խիզանի և Մղերդի կողմերը, ապա անցան Արզն և Նփրկերտ, իսկ հետագայում Բաղնշի վրայով մտան Վանա լճի ավազան⁵:

Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջաններում հետզհետե վերաբնակվեցին քրդական հայտնի ալ-Համդիյա (ալ-Հումդիլիյա),

¹ Իրն Թաղթիթիլլի, VI, էջ 12-13; Իրն ալ-Ֆուրս, Թաթիլլա, IV/ I, ալ-Քաթա, ս. 51 (այստեևակ՝ Իրն ալ-Ֆուրս):

² Ալ-Համազանի, Միճաթ Ֆազիլաթ ալ-արաթ, ալ-Կահիթա, 1953, ս. 133:

³ Ա. Տեր-Ղևանդյան, ճշվ. աշխ., էջ 192:

⁴ Լևա, Հայոց պատմություն, II, Երևան, 1967, էջ 640:

⁵ Ա. Տեր-Ղևանդյան, ճշվ. աշխ., էջ 193:

ալ-Քաշնավիյա և այլ գեղեր¹: Հատկապես արարա-բյուզանդական ստեմանազլխում բավական աչքի ընկավ ալ-Համդիյա գեղը: Տարածաշրջանում ստեղծված քաղաքական նպաստավոր պայմանները մոր լիցք հաղորդեցին ալ-Հաքքարիյա, ալ-Քուխիյա և այլ գեղերի գործողություններին: Նրանց մի մասը հետզհետե տարածվեց Անձևացյաց գավառում: Այս վայրը արարական աղբյուրներում հայտնի է ազ-Ջավազան անունով, որի հետաքրքիր նկարագրությունը տալիս է աշխարհագիր Յակուբը: Նա մասնավորապես խոսում է այստեղի ալ-Քուխիյա քղերի² Աղիլ (այժմ Մղերղի շրջանի Բարվարի գավառի Աղիլ գյուղն է), Բազ ալ-Համրա³, Ջուրգակիլ⁴ և ալ-Քաշնավիյա գեղի Բարկա, Բաշիր⁵ ու այլ ամրոցների մասին: Այսպես գրում է, որ Անձևացյաց գավառում կան շատ այլ ամրոցներ, որոնք պատկանում են ալ-Քուխիյա և ալ-Քաշնավիյա քղերին⁶:

Այսպիսով, արարական խալիֆայության երկարատև տիրապետության հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական քարոյ իրադրությամբ պայմանավորվեցին քրդական գեղերի տեղաշարժերը և արտագաղթերը հայրենի բնօրրանից դեպի հարևան տարածքներ: Այդ տեղաշարժերը, ըստ եղած տվյալների, ընդհանրապես սկիզբ առան մոտավորապես VIII դարի երկրորդ կեսից և զմալով լայն մասշտաբներ ընդունեցին:

Քրդական գեղերի հոծ զազվածներով տեղաշարժերի հիմնական վայրերից դարձավ հատկապես Մոսուլի մարզը, որտեղից նրանք Արբասյան առաջին խալիֆաների օրոք էլ սկսեցին տարածվել Միջագետքում: Այս շրջաններում պարբերաբար քրդական գեղերի խռովություններն ու տեղաշարժերը իրենց վրա սկսեցին կենտրոնական իշխանության ուշադրությունը: Քրդերին կարգի հրավիրելու նպատակով Արբասյան արքունիքը

¹ Իբն ալ-Ասիք, VII, էջ 143-144, Իբն Խալլան, II, էջ 251:

² Յակուբ, I, էջ 51:

³ Նույն տեղում, էջ 321:

⁴ Նույն տեղում, II, էջ 124:

⁵ Նույն տեղում, III, էջ 158:

⁶ Նույն տեղում:

հարկադրված եղավ մերք ընդ մերք դիմելու կարուկ միջոցներին¹:

IX-X դարերի Արքայան խալիֆայությունում հակաարաբական և հակաավատատիրական ժողովրդական իզոթ շարժումներն ու դրանց հետևանքով Բաղդադի արքունիքի քաղաքական գերիշխանության աստիճանական քայքայումը խալիֆայությունում արագացրին էրեհիկական խմբերի, այդ թվում՝ քրդերի տեղաշարժերը, արտահոսքը մի տեղից մյուսը: Բացի այդ, քրդական ռազմատեմնյ ցեղերի արտագաղթների գործում զգալի դեր խաղաց, ինչպես նշվեց, ամասնապահական-տնտեսական կացութաձևը, որը, ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի, քրդական իրականության մեջ լայն տարածում էր գտել և, փաստորեն, հանդիսանում էր նրանց հիմնական զբաղմունքը²:

Նոր արոտավայրեր՝ «ձմեռանոցներ» և «ամառանոցներ» որոնելու նպատակով քուրդ անասնապահները տեղից տեղ փոխադրվելով՝ հաճախ հեռանում էին իրենց հիմնական քնակավայրերից՝ գլխավորապես ժամանակակից իրանյան և իրաքյան Քուրդիստանների տարածքներից:

Ի դեպ, այս առթիվ ծարկ է ավելացնել, որ միջին դարերում իրանական, արաբական և այլ քույվոր-անասնապահների նման արտագնացությունները ոչ միայն չէին արգելվում, այլև՝ խրախուսվում էին մարզերի կառավարիչների կողմից, որովհետև տնտեսական այդ կացութաձևը քիչ թե շատ սկսել էր անկում ապրել³:

Օգտվելով խալիֆայությունում ստեղծված նպատակաւոր պայմաններից, ինչպես մահ նյնելով ռազմաքաղաքական որոշակի շահերից՝ X դարից քրդական ավագանին իր չուրջ համախմբելով ցեղակիցներին, սկսեց քացահայտ պայքար մղել առանձին շրջաններում, թե՛ հայրենի լեռնաշխարհում և թե՛ նրա սահմաններից դուրս:

Մոսուլի մարզում և հարակից շրջաններում քրդական ցեղերի

¹ Իբն ալ-Ասիր, V, Կահիրե, 1357, էջ 25-26, 41-42, Իբն Կալդուն, III, Կահիրե, 1284, էջ 202, առ-Տարաքի, քարիխ առ-ախուլ առ-շ-մալուք, VIII, ալ-Կահիրա, 1976, ս. 54-55 (այստեղից՝ առ-Տարաքի, Քարիխ):

² А. Поладян, Курды, с. 88-91.

³ К. Казн, Кочевники и оседлые в средневековом мусульманском мире-Мусульманский мир. 950-1150, М., 1981, с. 112-113.

գլխավոր հակառակորդներն էին արարական ցեղերը: Հայտնի է, որ Մոսուլի մարզում և Միջագետքի վերին հատվածներում դեռևս մայսաիսլամական շրջանում ապրում էին արարական ցեղեր¹: Արշավանքներից հետո այստեղ վերաբնակվեցին մեծ բվով նոր ցեղեր, որոնք սկզբից ևեք փոխադարձ շփման մեջ մտան քրդերի հետ՝ հաճախ հաստատելով խնամփառական կապեր: Մոսուլի մարզում IX երկրորդ կեսից իր հակախալիֆայության բուն պայքարով այքի ընկավ արարական թաղիք ցեղը: Այն հիմնականում բնակվում էր Դիյար Բարիխայում, որ բնակչության քայքայիչ մեծամասնությունը քրդեր էին: Նվաճումներից առաջ այս ցեղն ընդունել էր քրիստոնեությունը և հռոմեացիների քանակի կազմում համդես եկավ ընդդեմ արարականության: Այնուհետև, ինչպես արարական քրիստոնյա այլ ցեղեր, քաղիքացիները նույնպես արարական արքունիքին վճարեցին «չիգյա» (գլխահարկ)²: Ավելի ուշ շրջանում նրանք ընդունեցին իսլամի շիա ուղղությունը: Վերին Միջագետքում, Մոսուլի մարզում, քաղիքացիների տիրապետության տակ էին գտնվում առանձին շրջաններ, ունեին ամրոցներ և այլն: Նրանց առաջնորդ Համդան իրն Համդունը IX դարի վերջերին գործուն մասնակցություն ցուցաբերեց նաև խարիջիների շարժմանը³: Ապա X դ. սկզբներին թաղիք ցեղի առաջնորդները՝ սկսած Իբն Համդունի որդուց՝ Հուսեյնից, հակվեցին Բաղդադի արքունիքի կողմը:

Արբասյան ալ-Մու՛թադիլ և ալ-Մուքրաֆի խալիֆաները Հուսեյն իրն Համդան իրն Համդունին օգտագործեցին Ջիբալի Դուլաֆիների, Կարմատների, Տուլունների և այլոց դեմ: Այնուհետև քաղիքացիները ներգրավվեցին պալատական պաշտոններում:

905 թ. ալ-Մուքրաֆի խալիֆան Մոսուլի մարզի կառավարիչ նշանակեց Հուսեյնի երրորդ՝ Աբու ալ-Հայջա իրն Համդանին, որն մայրը քրդուհի էր: Այս մարզը շուտով դարձավ Համդանիների (Համդան իրն Համդունի անունով) ժառանգական տիրույթը:

Համդանիների ամիրայական տան ամենածաղկուն շրջանն սկսվեց Աբու ալ-Հայջայի նրկու որդիների իշխանության տարի-

¹ Չալաուլ տա-Մամնեց, աղ-Դաուլու ալ-Համդանիյա ֆի ալ-Մոսուլ առ-Հարս, I, ս. 81:

² Մուվնամե Մալեղ, Թարիխ ալ-Մոսուլ, I, էջ 94-95:

³ Նույն տեղում:

ներին¹։ Նրանցից Հասանց ժառանգեց իր պաշտոնն ու սկսեց գործել իբրև ինքնուրույն իշխան։ Եղորո՝ Ալիի հետ միասին նա կարողացավ քննչայնել իր ցեղակիցների բնակության սահմանները Դիյար Ռարխա՛այից դեպի արևմուտք։ Հասանը, որի կինը՝ Յարժան քրդուհի էր՝ Ահմադ իրն Ալի ալ-Քուրդի աղջիկը, 941 թ. Բաղդադի արքունիքից ստացավ Նասիր աղ-Դաուլա, իսկ եղբայրը՝ Ալին Մայֆ աղ-Դաուլա տխողորը² և ռազմական ակտիվ գործողություններ ծավալեց Մուղղուտ՝ արաբա-քյուզանդական սահմանային գոտիներում։ 944 թ. նա գրավեց Հալեպը և դարձավ Համդանիների մի նոր ճյուղի հիմնադիր։ Դրանով Վերին Միջագետքը, Հյուսիսային Սիրիան և քղական մի շարք շրջաններ դարձան մեկ ամիրայական տան տիրույթը, որը տահմանակից էր Բագրատունյաց Հայաստանին³։ Համդանիները, ինչպես նշվեց, սկզբից էլ նրկյուղ էին կրում քրդերից։ Իշխանության գլուխ անցնելով՝ նրանք առաջին հերթին քալավեցին նրանց հետ։ Երբ 905 թվականին Աբու ալ-Հայթա իրն Համդան իրն Համդունը ստանձնեց Մուսուլի կառավարչի պաշտոնը, նույն թվականին մարզում՝ Նինվեում բռնկվեց ալ-Հադրամիյա քրդերի խռչոք մի ապստամբություն՝ Մուհամմադ իրն Բիլալի գլխավորությամբ։

Ապստամբներին միացան քրդական ալ-Համիդիյա ցեղն ու Դասին լեռան բնակչությունը⁴։ 906 թվականի մարտ ամսին խալիֆայության լրացուցիչ զորքերի աջակցությամբ Համդանիներին հաջողվեց մեծ դժվարությամբ ճնշել այս հզոր ապստամբությունը, որին մասնակցեց Հադրանի քրդերի 5000 ընտանիք⁵։ Անհաջողություն կրելով՝ Հադրանիների մի մասն անցավ Ատրպատական, մի մասն էլ՝ Համդանիներից անվտանգություն խնդրեց և ճանաչեց նրանց զերիշխանությունը⁶։ Այս իրադարձու-

¹ Ի. ա. Մամեր, I, էջ 222-253։

² Նույն տեղում, էջ 241։

³ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայություններ, էջ 150, К. Босворт, Мусульманские династии, с. 82-84, М. Canard, Hamdanids, "Enc. of Islam" t. III, London, 1965; նույնի՝ Historie de la dinastie Hamdanides de Jazire et de Syrie, t. I, Paris, 1953...

⁴ Իրն ալ-Սաիր, VI, էջ 111-112, Իրն Էրաղան, III, էջ 356, IV, էջ 229։

⁵ Նույն տեղում։

⁶ Տե՛ս А. Поладжи, Курды, с. 53-55.

քյունից հետո գնալով էլ ավելի սրվեցին քրդերի և Համդյանիների փոխհարարերությունները Մոսուլի մարզում և Ջազիրայում: Քրդերն իրենց ընդլզումներով հաճախ անհամզատություն պատճառեցին թե՛ Համդյանիներին, և թե՛ Արքայան արքունիքին¹:

Որքան եզոքանում էին Համդյանիները, այնքան զնալով մեծանում էր Բյուզանդիայի ճնշումը արարա-բյուզանդական սահմանային գոտիներում (Մուրտրում): Համդյանիների տիրապետության տակ քացի Մոսուլից գտնվում էին 'Նիյար Ռարիա'ան, Մծրինը, Սինջարը, Կորճայրը, Մայյաֆարիկինը և շարակից այլ վայրեր: Նրանց տիրույթը սահմանակից էր Վասպուրականի հարավում Ամձևացյաց գավառի լեռնային շրջաններին: Հալեպի Համդյանիները, որոնց զբաղեցին Աղձնիքը, սահմանակից էին Տարոնի Թագրատունիների և Վանա լճի արևմտյան և հարավային շրջաններին²: Նրանց գործողություններն Աղձնիքում ավելի արդյունավետ եղան X դարի 30-ական թթ.:

Վերջ նշած վայրերում և Մոսուլի մարզում Համդյանիների և քրդերի տարածքային զերիշխանության համար մղվող պայքարը շարունակվեց ողջ X դարում և ավելի սուր բնույթ ստացավ 80-ական թվականներից՝ քրդական Մարզամյան դինաստիայի տիրապետության ժամանակաշրջանում:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդական ցեղերի զբաղմունքի վերարձրյալ մեզ են հասել կցկտոր տվյալներ, որոնք հնարավորություն չեն տալիս քավարար չափով լուսարանել տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրները: Այդուհանդերձ, այդ վկայություններից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանական ժողովուրդների, այդ թվում նաև քրդական ցեղերի հիմնական զբաղմունքն, ինչպես նշվեց վերևում, եղել է անասնապահությունը³: Քրդական ցեղերը տարվա տարրեր ցիկլներն անցկացնում էին համապատասխան վայրերում, որոնց արարաշխարհագիրներն ու պատմիչներից անվանել են «Մաշաքի վա մասայիֆ ալ-աքրադ» (քրդական ձմեռանոցներ և ամառանոցներ): Աշ-

¹ Նայն տեղում:

² Ա. Տեր-Ղևնդյան, Արարական ամիրայություններ, էջ 150:

³ К. Казн, Кочевники и оседлые в средневековом мусульманском мире., - " Мусульманский мир-950-1150", М., 1981, с. 113.

խարհագիր Իրն Հատկապէս, օրինակ, Ջիբրալ մահանգի իր կազմած յարտեզի վրա պարզորոշ ցույց է տալիս քրդերով բնակեցված շրջանները, որոնք բնդրկում էին գլխավորապես մահանգի կենտրոնական վայրերը¹: Արտ Դ-ուլաֆի և Յակուբի հաղորդումների համաձայն, միայն Շահրեզուրը համոզիսանում էր քրդական տարրեր գեղերի՝ վարսուն հազար բնտամիքի ձմեռանոցներ²:

Ըստ այդ հեղինակների, Ջիբրալի հայտնի շրջաններից էր Սիսարը, որն ընկնում էր Դինավարի, Համաղամի և Ասրպատականի միջև ընկած տարածքում: Ալ-Բալագուրից, Իրն ալ-Ֆակի-ից և այլք գրում են, որ Սիսար նշանակում է «ճրճուտն գլուխ», որովհետև այն շրջապատված էր երեսուն բլուրներով: Սիսարը, ըստ այդ հեղինակների, կոչվում էր նաև «Մաղկանիյա» (Ճ. հարյուր հարյուր), որովհետև այն ուներ ջրի հարյուր քնական աղբյուրներ³: Սինչև IX դարի երկրորդ կեսն այս վայրը համոզիսանում էր բոլոր ամասնապահների ժշտական այրտավայրը: Այս Արրասյան ալ-Մահդի խալիֆան Սիսարն առանձնացրեց որպես արքունիքի ամասունների արտավայր, ամբացրեց այն՝ վերջ տալով քրդերի ավազակային գործողություններին⁴:

Արևելյան խալիֆայության տարրեր շրջաններում քրդական ամասնապահական ձմեռանոցների և ամառանոցների ակալայության մասին խոսում են գրեթե բոլոր արաբ հեղինակները: Քուրդ ամասնապահներն առանձին վայրերում տարվա այս կամ այն գիկը անցկացնում էին այլ գեղերի, մասնավորապես արարների հետ: Նման համատեղ արտավայրի կամ «ամառանոցներ և ձմեռանոցներ» քրդական և արաբական գեղերն ունեին Մուսուլի, Ջիբրալի մահանգներում և այլուր⁵: Լեռնային շրջանների քնակլիմայական քարդ պայմանների հետևանքով ամասնապահ քրդերը գլխավորապես պահում էին մանր եղջրավոր և վոխաղբղղ անասուններ (գրաստ): Այս կապակցությամբ

¹ Вторая записка Абу Дулафа, с. 18; Յակուբ, III, էջ 375-376:

² Ibn Haukal, Opus Geographicum, ed. by J. H. Kramers, t. II, Leiden, 1939, p. 356.

³ Ibn Al-Fakih, p. 293; ալ-Բալագուրի, էջ 317-318:

⁴ Նայն տեղում:

⁵ Ibn Haukal, p. 144-145.

պետք է սովելացնել նաև, որ համաձայն մեր ճևոքի տակ նրան մյուսերի, քե՛ Ջիրալուստ և քե՛ հարակից վայրերում բնակչության երկմակամ գրադճուներն անասնապահությունն էր, մասնավորապես ոչխարաբուծությունը: Ջիրալի անասնապահների մշակած զանազան կաթնածրերքներից, հատկապես լավ համայուն ուներ պամիրը, որը վաճառքի էր հանվում Իրաքի, Իրանի տարրեր վայրեր¹: Քե՛ ամառամուտներում և քե՛ ձմեռամուտներում քուրդ քուրդ-անասնապահներն ապրում էին վրաններում²:

Քացի անասնապահական գրադճուներից, ըստ մեզ հասած կցկաուր տեղեկությունների, քրդերը մասամբ գրադվում էին նաև առևտրով: Անասնապահությունից ստացված սեփական արտադրանքը՝ կաթնամթերքից ստացված սննդի տարրեր տեսակները, քուրդը և կաշին հանվում էին տարրեր շուկաներ: Իսկ Համադանի շրջանի ժամանակին հայտնի «Չաբսիհան» աղի հանքից քրդերը նույնպես աղ էին արտահանում տարրեր վայրեր³:

Վատեղով մեզ հասած սկզբնաղբյուրների նյութերից՝ քրդական իրականության մեջ առկա էր նաև երկրագործությունը⁴: Մակայն անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով մենք հնարավորություն չունենք հարկ նրան չափով յուսարանել այդ խնդիրը: Ակնհայտ է միայն, որ X դ. վերջերին և XI դ. քրդական իշխանությունները, առանձնահատուկ ուշադրություն դարձրեցին գյուղատնտեսությանը: Մակայն, ինչպես անասնապահությունը, այնպես էլ գյուղատնտեսությունը խիստ անկում ապրեցին ռազմական ընդհարումների և մշտական բախումների հետևանքով:

Քրդերը, ըստ մեզ հասած կցկաուր տեղեկությունների, խոսել են քրդերենի տարրեր բարբառներով կամ խոսվածքներով: Ալ-Մասուդին գրում է, որ «Յուրաքանչյուր քրդական ցեղն ունի իր խոսվածքը՝ քրդերեն լեզվով⁵»:

¹ Al-Ishtakri, p. 203, Ibn Heskai, p. 267.

² Ibn Rosteh, p. 128.

³ Ibn al-Fakih, p. 245; Յակուբ, IV, էջ 258:

⁴ Ibn Rosteh, p. 18, al-Idrisi, f. VI, p. 681; Вторая записка Абу Дулафе, с. 18; Յակուբ, III, էջ 375-376:

⁵ Ալ-Մասուդի, II, էջ 249:

Քրդական իրականությանը քաջատեղյակ արար պատմիչ-աշխարհագրի տույժ վկայությունը բույլ է տալիս ենթադրելու, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում առկա է եղել բազմաբարբառ քրդերենը, որը հարևանների կողմից ճանաչվել է իբրև ինքնուրույն լեզու: Օրինակ, X դ. հեղինակ այ-Ֆրաննուխին, եիշատակելով ժամանակի մի քանի հայաճի լեզուներ՝ արարերեն, հունարեն և այլն, նշել է նաև քրդերենը՝ «ալ-լիսան ալ-քուրդի»¹:

Մեզ հայաճի չէ, քե որ քարքան էր ավելի լայն տարածում գտել քրդական իրականության մեջ, կամ էլ որևէ քարքանով արդո՞ր գրվել է որևէ ստեղծագործություն, և ի՞նչ գրերով: Այս հարցերը ցույց մտր են մնացել արևելագիտության համար: Հայտնի է, որ խալիֆայության երկարատև տիրապետության ընթացքում կամա քե՝ ակամա քրդական ցեղերը սեռնասական և կենցաղային զանազան առիթներով շփման մեջ մտան նվաճող-ների հետ: Այդ համզամարը, քնականարար, նպաստեց արարերենից քրդերենի ազդվելուն: Առավել ևս, որ ողջ խալիֆայությունում արարերենը համարվեց պետական լեզու, որով գրեցին նպատակ տարեր ժողովուրդներ: Քրդերի համար ևս դառնալով գրական և հարցալուստության հիմնական լեզու՝ X-XI դդ. արարերենով էին տարվում քրդական բոլոր իշխանությունների գրասենյակային գործերը: Քրդական իրականությունում արարերենը լայնորեն տարածում գտավ մահմեդական, մասնավորապես՝ Սուրանի ընթերցումների հետևանքով: Այլ խոսքով, արարական նվաճումներից հետո, սեփական գրերի և գրականության բազակայության պայմաններում, քրդական իրականության մեջ իր տեղը գրավեց արարերենը²: Քրդական ժազգմայր շատ գործիչներ սկսեցին ստեղծագործել արարերենով՝ դրանով իսկ որոշակի ժառայություններ մատուցելով արարածամեդական մշակույթին:

Չքաղեցնելով հիմնականում լեռնային հատվածները, որոնք ամմատչելի էին խալիֆայության համար, և որոնց զգալի մասի նվաճումն արարների կողմից կրում էր համարյա ձևական քնույթ, քրդական ցեղերը արձագանքում էին խալիֆայությու-

¹ Այ-Ֆրաննուխ, Քիչոս ալ-Ֆարս, I, ալ-Կահիրա, 1903, ս. 142 (այստեսան՝ այ-Ֆրաննուխ):

² Ա. Մալոյի, ալ-Մալիմա ալ-քուրդիյա, -Մալաբար ալ-մազմա ալ-քուրդի, 1/2, Մալաբար, 1974, ս. 168:

մում ծագած բոլոր տեսակի շարժումներին: Մասնավորապես, պետք է առանձնացնել նրանց մասնակցությունը դեռևս VII դարի կեսերից Այի խալիֆայի օրոք սկիզբ առած խարիջիական կրոնաքաղաքական շարժմանը¹:

Օմայան և Աբբասյան հարատւությունների տիրապետության ժամանակաշրջանում խլամի քոլի տակ խարիջիները մշակեցին ռազմաքաղաքական ծրագրեր և զինված պայքար մղեցին մահմեդական մասնավոր խոշոր հողատիրության, ավատատիրական շահագործման և կեղեքումների դեմ: Նրանց քաղաքական գլխավոր կարգախոսներից էր մահմեդական բնակչության գույքային և սոցիալական հավասարությունը: Իր մի քանի աղանդներով խարիջիների շարժումն նրկար ժամանակ ցնցեց խալիֆայության ներքին կյանքը:

Իսլամական այդ շարժման գաղափարները մեծապես արտահայտում էին խալիֆայության հպատակ ժողովուրդների, հատկապես ստորին խավերի շահերը²: Մակայն, կրոնական սուլեթանդության հետևանքով խարիջիները հետագայում հեղինակագրվեցին, և նրանց դեմ պայքարի ելան ոչ միայն խալիֆայության իշխանությունները, այլև՝ նույն մահմեդական բնակչությունը³: Խալիֆայության սոցիալ-տնտեսական և քաղաքական րևեռացման դեմ ուղղված խարիջիների մշակած դեմոկրատական ծրագրերը լայն արձագանք գտան հպատակ նրկրների ժողովուրդների գանազան խավերի, այդ թվում՝ քրդական միջավայրում: Քրդական շրջաններն սկզբից նեք գնալով դարձան սոցիալական այդ շարժման քաքստոց-աջակից վայրեր: Այլ կերպ ասած, խարիջիների շարժմանն այս կամ այն չափով քրդերի մասնակցությունը ցույց է տալիս, որ կրոնական կարգախոսների տակ սոցիալական ընդվզումները, որոնք հատուկ էին քրդ-հանրապես միջնադարին, պարարտ հող գտան նաև քրդական շրջաններում և վկայում են արարական տիրապետող ավատատիրական վերնախավի դեմ նրանց ընդդիմադիր տրամադրուր-

¹ Այլ մասին տե՛ս՝ Е.А.Беляев, *Арабы*, с. 158-162.

² И. Петрушевский, *Ислам в Иране*, с. 48.

³ Е. Беляев, *Мусульманское сектанство*, М., 1957, с. 35.

յունների մասին¹: Սակայն պետք է նշել մի կարևոր հանգամանք, այդ շարժման ընթացքում քրդերն ավելի հաղորդակից դարձան իսլամի գաղափարախոսությանը, որը մախադյալներ ստեղծեց նրանց կողմից այդ ուսմունքի զանգվածային ընդունման համար: X դ. երկրորդ կեսից, օգտվելով կենտրոնական իշխանության քայքայումից և մասնավորապես Բուխների կողմից Բաղդադի գրավումից, քուրդ ավատատերերը, ելնելով քաղաքական և տնտեսական շահերից, անցան իսլամի ծառայության: Այլ կերպ ասած, իսլամի գաղափարները քրդական վերնախավի կողմից օգտագործվեցին իրենց տիրապետությունը ամրապնդելու նպատակով²:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդական իրականության մեջ հին հավատալիքների, այդ թվում և քրիստոնեության առկայության հետ մեկտեղ մահմեդականացման գործընթացը բնակչության ողակապես մոլ փուլ³: Հայտնի է, որ իսլամի գաղափարների տարածումը քրդերի, ինչպես նաև խալիֆայության հալատակ այլ ժողովուրդների միջավայրում սկիզբ առավ VII դ. 30-40-ական թվականներից՝ արաբական նվաճումներից հետո: Սակայն մահմեդականացման բուն գործընթացն սկսվեց IX դարում: Իսկ X դարից և մասնավորապես XI դ. այդ գաղափարախոսության ընդունումը քրդերի կողմից կրեց զանգվածային բնույթ⁴:

¹ Ա. Փարսլյան, Զրդերի մասնակցությունը IX-X դդ. խաթիբիների շարժմանը, էջ 25-26, տես նալմի՝ Кыргыз, с. 71-72.

² Ա. Փարսլյան, Իսլամի տարածումը քրդերի մեջ VII-X դդ. (ըստ արաբական աղբյուրների) - Մեթոսկոբ և Միջին Արևելյի նրկցներ և ժողովուրդներ, XII, Երևան, 1985, էջ 167-168:

³ Լույն տեղում:

⁴ Լույն տեղում, էջ 156-169:

2. ԶՐԴԵՐՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Միջնադարյան արարալեզու հեղինակներն Ատրպատականում քրդերին հիշատակում են VII դարի 40-ական թթ. արարների կողմից նահանգի գրավման ժամանակ¹:

Արարական նվաճումներից հետո Մոսուլի մարզից և այլ շրջաններից դեպի Ատրպատական քրդական ցեղերի արտագաղթերը տեղի էին ունենում անաղմուկ, ռազմաքաղաքական այս կամ այն իրադարձությունների և սոցիալ-տնտեսական տարրեր դրդապատճառների հետևանքով: Խաչմարած քրդերը տարվա տարրեր եղանակները՝ ծմեղ և ամռան անց էին կացնում նահանգի արտավայրերում, հատկապես՝ հարավ-արևմտյան հատվածներում:

Արրասյան խալիֆայության աստիճանական քայքայումը և տեղական ուժեղ իշխանության քացակայությունը X դարի առաջին կեսից նպաստավոր պայմաններ ստեղծեցին Ատրպատականում քրդական տարրի ակտիվ գործողությունների համար: Այս շրջանում այքի ընկավ Սաջյան ամիրայական դինաստիայի օրոք անուն հանած Դայսամ իրն Իբրահիմ ալ-Քուրդին: Եղած տվյալները ցույց են տալիս, որ Դայսամի հայրն եղել է մահմեդական խարիջի հոսանքի հետևորդ և IX դարի երկրորդ կեսից այդ շարժման հայտնի պարագլուխ Հարուն ալ-Շարիի կողմնակիցներից մեկը:

Երբ 896/7թ. Հարունը սպանվեց և Մոսուլի մարզում ճնշվեց խարիջիների շարժումը, նրա հայրը փախավ Ատրպատական և ամուսնացավ, ինչպես ընդգծում են արաբ հեղինակները, տեղի քուրդ ռայխսներից (առաջնորդներից, ցեղապետերից) մեկի դստեր հետ, որն էլ ծնեց Դայսամին²: Դա նշանակում է, որ Դայսամը ծնվել է Ատրպատականում 897 թվականից հետո: Ատրպատականը, որի ազգաբնակչությունը քաղկացած էր իրանական խառը տարրերից, խալիֆայության գերիշխանության ժամանակաշրջանում հաճախ միացվում էր Արմինիա ոստիկանության հետ: Այս երևույթը մի վարչական վերապրուկ էր, որի

¹ Ալ-Քալազրի, էջ 334:

² Ibn Miskawaih, *The Experiences of the nations*, V, II, p. 32-33, Իրն ալ-Ասիթ, VI, էջ 286, Իրն իսլամ, III, էջ 413:

սկիզբը հասնում էր մինչև Մասանյան շրջանը¹: Այստեղ Սաջյանների գործունեությունը, որպես կառավարիչների սկսվեց 898 թվականին, երբ Ատրպատականի և Արմինիայի կառավարիչ Աշամակվեց Աֆշին մականունով Մուհամմադ իրն Արու սա-Մաջը²: Դայսամ իրն Իբրահիմ ալ-Քուրդիին, ինչպես նշում են արաբալեզու հեղինակները, ժառայեց Յուսուֆ սա-Մաջի մոտ (901-928), ակնհայտ հաջողությունների հասավ և համարվեց նրա հայտնի գորավարներից մեկը: Նա այնքան հզորացավ, որ Յուսուֆի մահից հետո տիրեց Ատրպատականին³: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ատրպատականում քաղաքական անկախության համար Դայսամի պայքարը սկսվեց մոտավորապես 928 թվականին, երբ սպանվեց Յուսուֆը⁴, քնպես դրանից հետո Սաջյանները մի քանի տարի մնացին այնտեղ:

Իրն Միսթավայիը և Իրն ալ-Ասիըը Դայսամ իրն Իբրահիմ ալ-Քուրդիի մասին առաջին տեղեկությունները հաղորդում են հիջրի 326 (937/8) թ. իրանական Ջիբալ մահանգի Ջիյարիների մախլիմ կառավարիչ Լաշքարի իրն Մարդիի Ատրպատականի վրա հարձակվելու կապակցությամբ⁵: Նրանց կարծիքով, մահանգն այդ թվականին արդեն գտնվում էր Դայսամի իշխանության ներքո: Պահպանված դրամներից երևում է, որ դեռ 934/5 (323) թ. Ատրպատականի իշխանն էր Մուֆիիը՝ Յուսուֆ իրն սա-Մաջի ժառանգ⁶: Պետք է ենթադրել, որ մահանգի իշխանությունը Դայսամին անցավ մոտավորապես 934-938 (323-326) թթ.⁷, որովհետև հայտնաբերված դրամական զանձերը վկայում են, որ հիջրի 325 (936/7) թ. նրա անունով դրամ է քոլարկվել

¹ Ա. Տեր-Ղևոնյան, Արարական ամիրայությունները, էջ 112:

² Իրն ալ-Ասիը, VI, էջ 91; տո-Տարրի, Քարիխ, X, Կահիրե, 1969, էջ 68:

³ The Miskawahi, V, II, p. 3; Իրն ալ-Ասիը, VI, էջ 286, Իրն Էնդուն, III, էջ 413:

⁴ В. Ф. Минорский. История Ширвана и Дербенда М., 1963, с. 86.

⁵ The Miskawahi, The Experiences of the nations, V, I, p. 398-404; Իրն ալ-Ասիը, VI, էջ 267-268:

⁶ The Nasakal, p. 236.

⁷ А. А. Бугков. Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты.-Эпиграфика Востока, 1955, X, с. 27-28.

Բարդայում (Պարսավում)¹: Սա նշանակում է, որ Մաշյան Մուֆեհիի իշխանության խառը շրջանում Դալսամն արդեն որոշ հաջողությունների էր հասել:

Արարախեզու սկզբնաղբյուրները վկայում են, որ Դալսամ ալ-Քուրդիի զորքի մեծամասնությունը քրոյեր էին և միայն փոքր գուրաջոկատներ կազմված էին իրանական դաշամիներից (ղեկնակներից)²: Պետք է ենթադրել, որ սկզբից էլ Դալսամը հենվում էր քուրդ ցեղակիցների վրա:

937/8 (հիջրի 326) թ. Ջիլալից մեծաթիվ զորքով Ատրպատականի վրա հարձակվեց Լաշքարի իրն Մարդին, որից Դալսամն իրար հեռակց կրեց մի քանի պարտություն: Լաշքարին գրավեց գրեթե ողջ մահանգը, բացի Արյարիից, որը համարվում էր նրա կենտրոնը (մայրաքաղաքը): Լաշքարիին հակահարված տալու նպատակով Դալսամն սկսեց բանակցել Ջիլարիների ամիրայական տան իշխան Վաշնգիրի հետ: Ռազմական օգնություն ստանալու դիմաց, որը քաղկացած էր «10 հազար հեծյալ քրդերից և այլ ուժերից», նա պարտավորվեց կատարել հետևյալը.

1) ապահովել զորքի բոլոր տեսակի ծախսերն Ատրպատական մուսոք գործելուց անմիջապես հետո՝ Ռնյի կողմից, մահանգի խումց քաղաքից,

2) Վաշնգիրի պատվին ուրբաթոյա խաուրա կատարել Ատրպատականի բոլոր մինարեքներից,

3) վճարել տարեկան հարյուր հազար դինար և Ջիլարի Վաշնգիրի զորքն ամհապաղ վերադարձնել Լաշքարիի հետ հաշիվները մաքրելուց հետո³:

Երբ Ջիլարիների ամիրայական տան բանակը Ռնյից ողջողվեց Ատրպատական, Լաշքարին առանց ռազմական ընդհարումների իր զորքը դուրս քերեց մահանգից, անցավ Անձևացյաց գավառը, որտեղից էլ մտադրվեց շարժվելու դեպի Մաուր: Մակաշն ճանապարհին հայ Արծրունիները Լաշքարիին ծուրակը գցելով սպանեցին նրան⁴:

¹ А. А. Бикоя. Два новых дирхема Дайсана иби Ибрахим ал-Курди. Эпиграфика Востока, 1971, XX, с. 74-76.

² Ibs Misakwehli, V, II, p. 31; Iy6 ալ-Ասիք, VI, էջ 286:

³ Ibs Misakwehli, V, I, p. 400-401.

⁴ Iy6 ալ-Ասիք, VI, էջ 267-268:

Ուազմաքաղաքական վերոհիշյալ իրադարձությունների նկարագրությանը բավական ժամրամասն անդրադարձել են Իրն Միսքավային ու Իրն ալ-Սոփը: Նրանց հաղորդումները, լրացնելով միմյանց, ավելի ամբողջական են դարձնում Դայսամի գործունեությունն Ատրպատականում:

Կրկին տիրելով Ատրպատականին՝ Դայսամն այնտեղից վտարեց մահ արաք Համդանիներին¹: Սակայն այս անգամ նա ստիպված եղավ պայքար մղել իր քուրդ ցեղակիցների դեմ, որոնք նահանգի ծայրամասերում բավական ազատ էին գործում, և զբաղվել էին նրան ենթակա որոշ տիրույթներ: Քրդերին հակահարված տալու և իր զորքը թարմ ուժերով համալրելու նպատակով նա ծառայության վերցրեց Մուսուլից և այլ վայրերից ժամանած վարձկաններին: Դայսամը համոզվեց, որ դայլամիների օգնությամբ կարելի է ծնկի բերել ընթուստ քուրդ սպատակներին: Դայսամի մոտ ծառայության անցան մահ դայլամցի ազնվականներ, որոնց թվում էր նրա ապագա հակառակորդի՝ Մարգրան իրն Մալարի կրտսեր եղբայր Մա'ալուք իրն Մուհամմադ իրն Մուսաֆիրը: Դայլամական զորախմբով Դայսամին հաջողվեց վերջ տալ քրդերի երկպառակություններին, նրանցից խել գրավված տիրույթները և ձեռքակալել մի քանի ցեղապետների²:

Նկարագրելով հիջրի 236-330 (937/8-941/2) թթ. իրադարձությունները՝ սկզբնաղբյուրները համարյա լռում են Դայսամի մասին: Այս հանգամանքը քերևս պետք է բացատրել նրանով, որ այդ տարիներին նրա իշխանությունում, ըստ երևույթին, էական ոչինչ տեղի չունեցավ:

Դայսամի և Մալարյանների հակամարտությունների մասին արաբալեզու մատենագիրներն սկսում են անդրադառնալ հիջրի 330 (941/2) թ.-ից: Եղած տվյալների համաձայն, նույն թվականին խիստ սրվեցին Մալարյանների և Դայսամի փոխհարաբերությունները, որում մեծ էր վերջինիս վեզիր Աբու ալ-Կասիմ Ալի իրն Ջա'աֆարի դերը: Բանն այն էր, որ Աբու ալ-Կասիմն սկսեց դավել նյութել Դայսամի դեմ, որի պատճառով էլ հետագվեց վեզիրի պաշտոնից: Նա հասցրեց փախչել և ապաստան գտնել Թարմ (Թարոմ) նահանգում (Դայլամում) Մալարյան դինաս-

¹ Նույն տեղում:

² Ihu Miskawsihi, V, I, p. 31; Իրն ալ-Սոփ, VI, էջ 286:

տիայի (916-մտա 1090թթ.)¹ Գալլամուռն և Ատրպատականում) հիմնադիր Մուհամմադ իբն Մուսաֆիքի մոտ: Այստեղ նրա հաս-
 նելը համընկավ Մուհամմադ Իբն Մուսաֆիքի դեմ նրա երկու
 աղաների՝ Մարզբանի և «Լահաուդանի խոռվուրջան հետ: «Ար-
 ցիմներս ձերքակալել էին խրեմց հորը և գրավել նրա ամրոցներն
 ու ափրույքները²: Արու ալ-Կասիմ Ալի իբն Ջա'աֆարը վեզիրի
 պաշտոնում ծառայության անցավ Մարզբանի մոտ և սկսեց
 նրան հրահրել Դաշամի դեմ: Մարզբանի և Արու ալ-Կասիմի
 մտերմությանն ամրապնդվեց նաև, ինչպես ընդգծում են Իբն
 Միսքավային ու Իբն ալ-Ասիրը, շիական «քրատիմիյա» աղանդի
 հետևորդ լինելու համզամանքով³: Դաշամի դեմ դավեր նյութե-
 լու նպատակով Արու ալ-Կասիմը ծածուկ կապեր հաստատեց
 նրանից դժգոհ տարրերի հետ:

Հիջրի 330 (941/2) թ. Մարզբանը ներխուժեց Ատրպատական, որի
 կողմն անցան շուրջ երկու հազար դալլամցի մարտիկներ, ինչպես
 նաև շատ յրդեր⁴: Պարտություն կրելով՝ Դաշամը հարկադրված ե-
 դավ փոքր զորախմբով փախել Հայաստան: Օգտվելով, ինչպես
 նշում է Իբն Միսքավայիը, Գազիկ աղ-Դալբանիի («Լասալուրականի
 հայ իշխան Գազիկ Արծրանի-Գազիկ Դերենիկ-904-943/4թթ.) հետ
 ունեցած բարեկամական կապերից՝ նա հաստատվեց նրա մոտ և
 պատիվների արժանացավ⁵: Դաշամը զոջաց իր կառուրած սխա-
 լի՝ քանակում մեծ բվով դալլամիների ներգրավելու համար, և սկսեց
 հավաքագրել քրդական զորախմբեր:

Իբն Միսքավայիը նշում է, որ ժամանակի լրջախոհ մարդիկ
 նրան խորհուրդ տվեցին զործ չունենալ դալլամիների հետ, իսկ
 անհրաժեշտության դեպքում նրանցից պահել ընդամենը 500
 մարդ⁶: Միևնույն ժամանակ Արու ալ-Կասիմ Ալի իբն Ջա'աֆա-
 րի դեմ Արու Մաիդ իբն Մուսա Իսքավայիի զլխավորությամբ
 դավադրություն կազմակերպեցին այս անգամ Մարզբանի մար-
 դիկ: Ալի իբն Ջա'աֆարը, զգալով այդ և հաշվի առնելով Մարզ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 32:

³ Նույն տեղում, էջ 33:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

քանի ազահորյունը, խորամանկ քայլ արեց. նա խոստացավ նրա համար մեծ հարստություն մեզք բերել թավրիզից: Մի խոմք մեծամեծ մարդկանց հետ Ալի իբն Ջա'աֆարին հաջողվեց մեկնել թավրիզ: Այստեղ 'Դայսամին նա հայտնեց իր պատրաստակամությունը՝ Ատրպատականում նրա իշխանությունը վերականգնելու համար: 'Դայսամն ընդունեց այդ առաջարկը միայն մի պայմանով, որ Ալի իբն Ջա'աֆարն ամենից առաջ ոչնչացնի դայլամիներին: Վերջինս թավրիզի բնակիչների օգնությամբ էլ ձերբակալեց դայլամիների զորամասնաճատարներին և իր զորքով անցավ 'Դայսամի կողմը: Ապա նրան միացան նաև Մարզբանից դժգոհ քրդերը¹: Մույն դեպքերն արագացրեցին Մարզբանի զործողությունները, և նա շտապեց թավրիզ: Քաղաքի արվարձաններում տեղի ունեցան թե՛ մարտեր: Քրդերը դարձյալ պարտվեցին, և 'Դայսամը պատսպարվեց թավրիզում, ապա գիշերով ծակեց քաղաքի պարիսպը և իր զորականների հետ մեկնեց Արդաբիլ: Թավրիզը բողնելով պաշարման մեջ՝ Մարզբանը ևս զորքով մեկնեց Արդաբիլ: Այստեղ էլ 'Դայսամը ձերբակալվեց և քանտարկվեց Թարոմի մահաճգում²:

Այս դեպքերի մասին խոսելիս Ամանուն հնդիմակը հաղորդում է, որ Մարզբանն Ատրպատականի վրա հարձակվեց ոչ թե հիջրի 330թ., այլ հիջրի 328 (939/40) թ.: Ըստ նրա՝ Մարզբանը Արդաբիլում 'Դայսամին պաշարեց 3 տարի շարունակ, որի ընթացքում քաղաքի արվարձանում կառուցեց մի ավան և կռչեց «աս-Սարիքա» (համբերող)³: Այս վկայությունից երևում է, որ Մարզբանն Արդաբիլը գրավեց հիջրի 331 (942/3) թ.: Իսկ պաշարման ժամկետը (3 տարի) համոզիչ չէ: Աշխարհագիր Իբն Հաուկալն իր հերթին ևս գրում է, որ Մալարջան Մարզբանն Արդաբիլը նվաճեց հիջրի 331թ. և քանդեց քաղաքի եսկա պարիսպը⁴:

'Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին շուրջ 7 տարի անցկացրեց Թարոմի ամրոցում և քացակայեց քաղաքական ասպարե-

¹ Նույն տեղում, էջ 33-34:

² Նույն տեղում, էջ 36-37: Տե՛ս Իբն ալ-Ասնը, VI, էջ 286-287, Իբն Խալլոմ, III, էջ 413-414:

³ Մուարաֆ Մաթեու, Քիբրայ ալ-ույուն տալ-հազաիլ ֆի ախթար ալ-հակիկ, 1/4, 'Իժմուշկ, 1972, ս.338 (այսուհետև՝ Ամանուն հնդիմակ) :

⁴ Ibn Haukal, p. 237.

զից: Ատրպատականում իր իշխանությունը վերականգնելու փորձերը նա կատարեց ալվի ուշ՝ իրանական Բուիճների օրոք: Հիջրի 337(948/9) թ. Մարզբանը հարձակվեց Ռեյի վրա, որտեղ պարտություն կրեց Բուի իշխան Ռուրն ադ-Ղատուլայից և ձերբակալվեց ու քանտարկվեց Ֆարսի հյուսիս-արևելյան մասում գտնվող Մունայրամ ամրոցում¹: Դրանից հետո Ռուրն ադ-Ղատուլայայի զորքը հարձակվեց Ատրպատականի վրա: Հաշվի առնելով մահանգում և քրդերի մեջ Դալասաճի հեղինակությունը՝ Մարզբանի եղբայրը՝ Վահուդանը, նրան ազատեց թարոնի ամրոցից և հանձնարարեց Ատրպատականի քրդերից զորք հավաքագրել և հանդես գալ Բուի զորանիւսմանատար Արդ առ-Ռազակի դեմ²: Իրն Միսրավայիը մշում է, որ Դալասաճի քրդական նոր զորքում ընդգրկվեցին նաև դալլամական քոկատներ: Նա շարժվեց դեպի Արդարիլ, բայց երբ իմացավ, որ այնտեղ է գտնվում Բուի զորավար Արդ առ-Ռազակը, թեքեց իր ուղղությունը և մեկնեց Պարտավի շրջան՝ իր զորքը համալրելու և ռազմամերթը հայրալքելու համար³: Մակայն նույն թվականին Արդարիլի մոտ Բուիճների հետ ունեցած ճակատամարտում Դալասաճը պարտություն կրեց⁴: Ապա որոշ ժամանակ անց Բուի զորահրամանատարը, մեզ անհայտ պատճառով, իր զորքը դուրս բերեց Ատրպատականից և մեկնեց Ջիրալ⁵: 949/50թ. Դալասաճը առանց մարտական գործողությունների մտավ Արդարիլ, որով էլ վերականգնեց իր իշխանությունը մահանգում: Այստեղ էլ նա նույն թվականից սկսեց իր ամուսնով դքսան բողադիկել⁶: Այնուհետև քրդական և դալլամական վարձկան զորքի օգնությամբ Դալասաճն իրեն ենթարկեց զրեթն ողջ Ատրպատականը և հարևան առանձին շրջաններ⁷:

¹ Իրն ալ-Ասիթ, VI, էջ 330:

² Նայն տեղում: Տե՛ս Ibn Miskawishi, V, II, p. 135.

³ Ibn Miskawishi, V, II, p. 136. Տե՛ս նաև՝ Իրն ալ-Ասիթ, VI, էջ 330:

⁴ Նայն տեղում:

⁵ Նայն տեղում, էջ 148:

⁶ А.А. Быхов. Два новых дирхема Дайсама ибн Ибрахиима ал-Курди, с. 74-76.

⁷ Ibn Miskawishi, V, II, p. 148-149

953/4 (հիջրի 342) թ. Մարզբանին հաջողվեց փախչել Սուժայ-
 րամ ամրոցից և շուտով հայտնվել Ասորպատակամուտ: Դա էլ
 ճակատագրական եղավ Դայամի համար: Խայտատակ պար-
 տություն կրելով Մարզբանի կողմնակիցներից՝ նա քրդական
 փոքրաթիվ զորախմբով փախավ կրկին Հայաստան՝ Վասպու-
 րականի հայ Արծրունիների մոտ, այնտեղից էլ՝ Բաղդադ¹: Մեզ
 հասած սկզբնաղբյուրների տվյալները վկայում են, որ Դայամը
 մի քանի տարի մնաց Բաղդադում, անցավ Սիրիա և այդ ընթաց-
 քում քավական ճիզեր գործադրեց Ասորպատական վերադառ-
 նալու համար: Մալարյան Մարզբանին քախքախելու նպատա-
 կով, նա ուսումնական օգնություն խնդրեց Բաղդադի Բուի հոփ
 իշխան Մուիզզ ադ-Դաուլայից, արաբ Համդանյան Նասիր
 ադ-Դաուլայից, Մայի ադ-Դաուլայից և ուրիշներից²: Մակայն
 ապարդյուն: 955/6թ. Ասորպատակամի քուրդ առաջնորդներից
 մեկի աջակցությամբ նա մտավ Սալմաստ քաղաքը: Այստեղ
 Դայամն անկախող զանվեց դիմադրելու Մալարյան Մարզբա-
 նին և կրկին փախավ ու ասպատակ գտավ հայ Արծրունիների
 մոտ³: Իրն ալ-Ասիրը գրում է, որ Մարզբանին հաջողվեց Հայաս-
 տանում ձերբակալել Դայամին, ասյա տեղափոխել Ասորպա-
 տական, «փոքրեց աչքերը, կուրացրեց և քանտարկեց: Մարզբա-
 նի մահից հետո նրա մարդկանցից մեկը սպանեց Դայամին՝
 վախենալով նրա ռիսակալությունից»⁴: Այս վկայությունից կա-
 րելի է ենթադրել, որ Դայամն սպանվեց 957/8թ. հետո:

Այսպիսով, X դարի 30–50–ական թթ. ընդմիջումներով Դայ-
 ամը կարողացավ համղես զալ Ասորպատականի ռազմաքաղա-
 քական քառերաքնմուտ: Նաեւանգում քրդական տարրի ասկա-
 յությունը նրան հնարավորություն տվեց մի քանի տարի անընդ-
 մեջ շարունակել պայքարը ինքնավարության համար: Բայց ան-
 կազմակերպվածության և ներքին երկպառակությունների ու
 արտաքին հարվածների հետևանքով նրա իշխանությունը եր-

¹ Նույն տեղում, էջ 148-151, 156, 161, Իրն ալ-Ասիր, VI, էջ 342-343:

² Նույն տեղում:

³ Իրն ալ-Ասիր, VI, էջ 343:

⁴ Նույն տեղում:

կար շտեմեց և Ատրպատականը ենթարկվեց Մաղարյաններին¹։

Վերոնիշյալ ռազմադարձարական իրադարձություններից հետո մինչև սելջուկ-թյուրքերի երևան գալը սկզբնադարձությունը համարյա լուծում են Ատրպատականում քրդերի գործունեության մասին։

3. ԶՐԴԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՎԱՐԿԱԾԸ ԱՐԲԱՍՅԱՆ ԽԱՆԻՉԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՄՇԱԿՄԱՆ ԴՐՈՎՊԱՏՏԱՆՈՒՆԵՐԸ

VII դ. 30-40-ական թթ. արաբական արշավանքներից հետո զգալիորեն մեծացավ արաբների հետաքրքրությունը խալիֆայության հպատակ երկրների և ժողովուրդների նկատմամբ։ Երև առաջին չորս խալիֆաների (632-661) և Օմայանների (661-750) օրոք հասկանալի պատճառներով արաբները հստակ պատկերացում չունեին նվաճված տարածքների և դրանց քնակիչների մասին, սուլա Ռադյադի Աբբասյան հարստության (750-1258թթ) տիրապետության ժամանակաշրջանում, արքունիքի ռազմադարձարական և տնտեսական շահերի դրոյմամբ իրավիճակը քիչ քե շատ փոխվեց։ Այս շրջանում (հիմնականում VIII դարից) սկզբնավորվող արաբալեզու պատմաաշխարհագրական գրավոր քաղմարիվ սկզբնադարձությունում, քաջի խալիֆայության ռազմադարձարական անցողարձների և աշխարհագրական նկարագրություններից, երբեմն փորձեր են կատարվել մահ հպատակ որոշ ժողովուրդների էթնիկական ծագումն ու ձևավորումը նկնարանելու ուղղությամբ։

Պետք է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ դա պատահական բնույթ չէր կրում, քիտում էր արաբական խալիֆայության բնդիանուր քաղաքականությունից և կապված էր նրա քաղաքական ճգնաժամային այս կամ այն փուլի հետ։ Արաբալեզու սկզբնադարձությունների և խալիֆայության պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ հատկապես անհնագանդ ժողովուրդների էթնիկական ծագման հարցերի՝ արաբ միջնադարյան գործիչների կողմից շահադետ պարզարանումները հեռանկարային նախադրյալներ էին ստեղծում ոչ միայն արաբական

¹ К. Э. Босворт, Мусульманские династии, М. 1971г., с. 127-129.

տիրապետության ամրապնդման, այլև նոր կրոնի տարածման համար: Այդ նպատակով էլ մահմեդական միջնադարի գրեթե բոլոր հեղինակներն այս հարցում ևս մեծապես դիմել են Աստվածաշնչի և դիցարանական ավանդությունների նյութերին՝ առաջ քաշելով այս կամ ժողովուրդների ինչպես արարական, այնպես էլ՝ սեմական ծագումը:

Այս կարգի մեկնաբանություններ բաժին ընկան նաև իրանական ռազմատենյ ժողովուրդներին, մասնավորաբար՝ քրդերին: Ովքե՞ր են եղել քրդերի նախահայրերը և երբվանի՞ց են նրանք «քրուրդ» անվան տակ հանդես եկել պատմության բառերարեմուտ¹: Այս խնդիրն ողջ մահմեդական միջնադարում իր վրա է երակիրել արաբալեզու հեղինակների ուշադրությունը, որի վերաբերյալ էլ հավաքել ու գրառել են հույժ ուշագրավ մի շարք վարկածներ²: Պետք է ենթադրել, որ սա մասամբ կապված էր այն հանգամանքի հետ, որ քրդերը, ապրելով աշխարհագրական լեռնային բարդ պայմաններ ունեցող նսկայական տարածքների վրա, քիչ թե շատ ակտիվ դեր էին խաղում արևելյան խալիֆայության ռազմաքաղաքական կյանքում:

Դատելով մեր ձեռքի տակ եղած մյութերից՝ Արրասյան խալիֆայությունում քրդերի էթնիկական ծագման հիմնախնդիրն ընդհանրապես չոչափվել է VIII դարից: Այդ ուղղությամբ արված առաջին փորձը վերաբերել է նրանց արաբական ծագմանը, որը լայն տարածում առաջավ միջնադարում, նույնիսկ քան քրդական իրականության մեջ³:

¹ Ավելի մանրամասն տե՛ս Դ. Ե. Ասոբ, Критическая история проблемы происхождения курдов (авт. док. дис.), Ереван, 1969г., В. Никитин, Курды, М., 1964г. с. 43-71; Th. Noldeke, Kurdu und Kurden, - "Beitrag zur alten Geschichte und Geographie Festschrift für H. Kiepert", Berlin, 1898, s. 73-81; G.R. Driver, The name Kurd and its Philological Connections, -The Journal of the Royal Asiatic society (JRAS), 1923, Pt. III, p. 393-403, V. Minorsky, The Kurds and Kurdistan, p. 1132-1134; У. У. Զարի, Խուրդար, էջ 40-84:

² Տես՝ Ա. Փորդյան, ալ-Արրաս, էջ 102-104:

³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Н. Мэрт, Еще о слове "Чалыби", с. 130-140, В. Никитин, Курды, с. 57, V. Minorsky, The Kurds and Kurdistan, p. 1134, Դ. Ե. Ասոբ, Арабские источники по этнической истории курдов, с. 175-207. Տե՛ս նաև նալնի՝ Критическая история проблемы происхождения курдов, с. 3-9, У. У. Զարի, Խուրդար, էջ 52, Օրմազ,

Այս վարկածին¹, որքան հայտնի է մեզ, առաքին անգամ անդրադարձել է VIII դարի հայտնի տոհմաբան Մուհայժ իրն Աբու ալ-Յակզանը², որը հեղինակել է մեզ չհասած մի քանի գործեր և որի հիշատակությունը գիտեղծել է հետագա հեղինակների գործերում³: Նրանց ավյալներով Աբու ալ-Յակզանն իր «Մեծ ծագումնաբանություն» («Քիթաբ ամ-ճաթ ալ-քաթիթ») գրքում ընդգծել է, որ քրդերի մախահայրը ոմն «Քուրդ իրն Օմար իրն Ամր իրն Մա'սա'ն-ն է⁴: Այս պնդումը որոշ հավելումներով ու փոփոխություններով տեղ է գտել հետագա դարերի մրաբալիզու աղբյուրներում:

VIII-IX դարերի հայտնի հեղինակ Հիշամ ալ-Քալիբն (Իրն ալ-Քալիբի), օրինակ, իր նույնանուն երկում («Քիթաբ ամ-ճաթ ալ-քաթիթ»), որը նույնպես նվիրված է արաբական ցեղերի տոհմաբանությանը, առաջարկում է քրդերի ծագման նոր տարբերակ: Նրա կարծիքով, քրդերի մախահայրը «Քուրդ իրն Օմար իրն Ամր Մա աս-Մաման» է⁵: Երբեմն «Մա աս-Մամայի» փոխարեն հիշատակվում է «Ամրու Մուզայիկյա»⁶, որը, ըստ արաբ ծագումնաբանության, մախադդի հետ նույն մարդն է:

Անհրաժեշտ է նշել, որ քրդերի էթնոգենեզի հիմնախնդիրը

Քուրդ-չեմախ, էջ 62-67, Ռ.Յասինի, էջ 6, 110-114, Ռ. ալ-Յիլ, ալ-Աքթալ, էջ 23-27, Շ.Խաթաթ, ալ-Քուրդ, էջ 7, նույնի՝ ալ-Աքթալ, էջ 507.

¹ Այդ մասին տես՝ Ա. Փոլադյան, «Քրդերի արաբական ծագման միջնադարյան վարկածը», -Երիտասարդ արևելագետների VII կոնֆերանսի թեզեր, Երևան, 1981թ.: Տես նույնի՝ Քրդերի արաբական ծագման միջնադարյան վարկածի չարքը (ըստ արաբական աղբյուրների).-«Մեծագոր և Միջին Արևելքի եղբայրներ և ժողովուրդներ», XV. Երևան, էջ 282-299, ալ-Աքթալ, էջ 104-125:

² Նրա մասին տես՝ ամ-Նուրիժ, Քիթաբ ալ-Ֆեհրեսթ, Տահրան, 1971, ս.106, Յակուբ, Մուհամ ալ-ադաբա, XI, ալ-Կահիբա, ս.180, Հաջի Խալիֆա, Քաշի ազ-զուհում, I, Մաանբու, 1944, ս. 179:

³ Ed-Dimichqul, p. 255, Իրն Ռասուլ, Տարթաբ ալ-սահաբ ֆի մա'թիֆաթ ալ-ամ-սաթ, Դիմաշ, 1948, ս.62 (այստեհանե՝ Իրն Ռասուլ), ամ-Նուայրի Ըսուաթ ալ-Դիմ, Նիհայաթ ալ-իթթ ֆի մա'թիֆաթ ալ-ադաբ, I, Միսր, 1923, ս. 351 (այստեհանե՝ ամ-Նուայրի):

⁴ Ed-Dimichqul, p. 255,

⁵ Նույն տեղում:

⁶ Ազ-Ջուրայդի, Քաթ ալ-արուս, II, ալ-Կահիբա, 1306, ս. 484 (այստեհանե՝ ազ-Ջուրայդի, Քաթ):

լուսարանն ընդազատում արար հեղինակները, վաղ միջնադարից սկսած, արամարանորեն ճիշտ են սկսել իրենց մեկնությունը: Երանց ամենից առաջ հետազոտքը է «չուրդ» էթնոցիմը, որի բացատրության ճանապարհին սխոլաստիկ զտրափարախտությունն ու կրոնական ավանդությունները մղել են իդեալիստական հիմնավորման: «Քուրդ» տերմինը դիտելով որպես առանձին էթնիկական խմբի ինքնամշակում՝ նրա մեջ մարմնավորել են այդ անունը կրող առասպելական մի մարդու՝ Քուրդ, որի անունով էլ, իբր քն, նրա սերունդը կոչվեց քուրդ, քրդեր (ուղ. քիվ արբադ): Այս մեկնարանության հիմնավորման համար արարելու հեղինակները դիմել են մախախտման արջանում լայն տարածում առաջած «Քուրդ» անձնանվանը:

Եվ այսպես, Արու ալ-Յակզանի և Իքն ալ-Քալբիի տարբերակներում քուրդ անձնանվանը հաջորդող անունները մեզ տալու են հետո՝ ակամայից անկշիվելով բուն արարական էթնոսի խնդիրների հետ: Միջնադարյան արար հեղինակների պատկերացումներով արարների էթնիկական բաղադրամասերը կազմված են եղել երկու հիմնական խմբերից, որոնք, առասպելական լինելով, կրում են Աստվածաշնչի ազդեցությունը: Ըստ այդ տվյալների, հյուսիսային արարների նահապետը Իսմայիլն է, Աստվածաշնչի Արքանաթի որդին, իսկ հարավային արարների՝ Յակբանը (Դահիանը): Այս երկու խմբերից առաջինը համարվում է արարացած արար (ալ-արար ալ-մուսթաարիբա), իսկ երկրորդը՝ իսկական արար (ալ-արար ալ-արիբա)¹: Այս խմբերի բնոգրված թագմարիվ ցեղերն ու ցեղային միություններն ունեն իրենց անվանումները, որոնք հետզհետե տարածվելով արարական թերակղզում, վերանվանվեցին նոր անուններով²:

Քրդերի արարական ծագման հարցում առաջարկված տոհմաժառանգն իրենց տարբերակներով երկու խմբերին էլ վերաբերում են: Օրինակ, Արու ալ-Յակզանի տարբերակում թերված անունները մտնում են Մուրդար ցեղային միավորման մեջ, որը համարվել է արարացած արար³, իսկ Հ. ալ-Քալբիի տարբերակի անուննե-

¹ Իքն Մանգու, II, էջ 76:

² E. A. Sellev. Архив, Ислам, с. 68.

³ Իքն Ռաուդ, էջ 57:

րից հանդիպում ենք իսկական արարների տոնածառի մեջ¹:

Արարական արդյունքներում այս տարրերակներից հետզհետե ճշդագոյություն է կազմվել նոր անուններով, որոնց կրքեմն չենք հանդիպում արարական տոնածառանոցյանը նվիրված գործերում: Օրինակ, IX դարի հեղինակ Իբն Դուրեյդը, նույնպես ընդունելով քրդերի արարական ծագումը, նրանց նախահայրն է համարել «Քուրդ իբն Մարդ իբն Օմար իբն Ա՛մր»-ին²: Ինչպես երևում է, այս տարրերակում Մարդը նոր անուն է: Մույն տոնածառանոցումը որոշ անունների նմանությամբ հանդիպում է Իբն ալ-Ջավանիի, ալ-Արկաթիի և այլոց գործերում: Քրդերին համարելով արար Կայս խոշոր ցեղային միության մի ճյուղ՝ նրանք տալիս են ամբողջ տոնածառը՝ ընդհուպ մինչև արարացած արարների առասպելական Ադնամ նախահոյրը: Համածայն այս ծագումնաբանության, քրդերը համարվում են «Քուրդ իբն Ա՛մրու իբն Մա՛սաս՛ա իբն Մու՛ափյա իբն Բաքր Հաուազին իբն Մանսուր իբն Ա՛քրամա իբն Խաֆսաս իբն Կայս իբն Ալլամ իբն Մուրդայր իբն Նիզար իբն Մա՛աղ իբն Ադնամ»-ի սերունդը³: Իբն Ռասուլը որոշ չափով կրկնելով Արու ալ-Յակզանին՝ ընդգծում է, որ նրանց «Մա՛սասա Վասիկ իբն Մուննահար»-ի սերունդն են⁴:

Իսահմեղական միջնադարում մշակված այլևայլ տարրերակների ամբողջ մի շարք գրի է առել եզրագծացի պատմիչ ալ-Մակրիզին: Ըստ նրա, «քրդերը սերում են Քուրդ իբն Մուրդ (ոմանց մոտ Մարդ է, -Ա.Փ.) իբն Ա՛մրու իբն Մա՛սաս՛ա իբն Մու՛ափյա իբն Բաքր իբն Հավազինից: Ասում են, թե նրանք Ա՛մրու Մուզայիկյա իբն Ա՛մր Մա աւ-Մամայի սերունդն են: Ասում են, թե նրանք Համիդ իբն Քարիկ-Համիդ իբն Ջուհայր իբն ալ-Հարիս իբն Ասաղ իբն Արդ ալ-Ազա իբն Կասսա իբն Քիլարի սերունդն են»⁵: Նման տարրերակներին ալ-Մակրիզին անդրադարձել է իր

¹ Նույն տեղում, էջ 19:

² Ibn Haukal, p. 187, al-Idrisi, IV, p. 419:

³ Ալ-Ջուգայդի, Քաջ, II, էջ 485:

⁴ Իբն Ռասուլ, էջ 62:

⁵ Ալ-Մակրիզի, Քիլար աւ-սուլայ լիմարայ զուալ ալ-ճուլուք, 1/1, ալ-Կանկար, 1934, ս. 3-4 (այստե՛ստ՝ ալ-Մակրիզի, Քիլար աւ-սուլայ):

մեկ այլ աշխատությունում ևս¹:

Քրդերի արարական ծագման վարկածն իր խայտարիտ պատմամեթոդ աստիճանաբար տարածվեց խալիֆայությունում, դրան անդրազարժան հեղինակներ ալ-Իսրախիթի², Իբն Հատիկալի³, ալ-Իդրիսի⁴, Իբն Յուսուֆ Արդ ալ-Քաադ⁵, Աբու ալ-Քաաբար ան-Նասաֆի⁶, Իբն Խալիֆթան⁷, Իբն Մանգուր⁸, Իբն ալ-Վարդի⁹, Աբու ալ-Ֆիդան¹⁰, Իբն Խալիֆուն¹¹, ալ-Հանրալի¹², աղ-Դիմաշկի¹³, ալ-Ֆիրուզաբադի¹⁴, Իբն Քասուտան¹⁵ և ուրիշներ: Այն տեղ գտավ մահ միջնադարյան արարական պոեզիայում: Ուշագրավ է մեջբերել անհայտ քանաստեղծի հանգավորված քանաստեղծությունը, որը կրկնում են տարբեր հեղինակներ, և որը քարզմանաբար հնչում է հետևյալ կերպ. «Կյանքովդ եմ երգվում ես, քրդերը ոչ թե որդիներն են (անբունդը) պարսկական, այլ՝ Քուրդ իբն Ամրու իբն Ամրի»¹⁶:

¹ Ալ-Մակրիզի, Քիրաթ ալ-մաաթիֆ առ-է-իքիրաթ քիզիքի ալ-խատուս առ-է-սուր, II, ալ-Կահիրա, 1270, ս.232 (այստե՛ստ՝ ալ-Մակրիզի, Քիրաթ ալ-մաաթիֆ):

² Al-Isakhi, p. 114.

³ Ibn Haskal, p. 187, 221.

⁴ Al-Idrisi, t. IV, p. 419.

⁵ Աղ-Չուրայլի, Քարալի ալ-կաուր ֆի զիքր ալ-մաուր քանի Այյուբ, Դի-մաշկ, 1969, ս.36 (այստե՛ստ՝ աղ-Չուրայլի, Քարալի):

⁶ Նույն տեղում:

⁷ Իբն Խալիֆան, II, Կահիրե, 1299թ., էջ 194-195:

⁸ Իբն Մանգուր, IV, 1300թ., էջ 382:

⁹ Իբն ալ-Վարդի, I, էջ 72:

¹⁰ Aboul Fedae, Histor. ante islamica Arabica, 1831, p. 150.

¹¹ Իբն Խալիֆուն, II, 1284թ., էջ 300:

¹² Իբն ալ-Հանրալի, Դոս ալ-Հաթր ֆի քարիխ Այյան Հալաթ, 1/1, Դիմաշկ, 1973, ս. 515-516:

¹³ Ed-Dimichqui, p. 247-255.

¹⁴ Ալ-Ֆիրուզաբադի, ալ-Կամուս, I, ալ-Կահիրա, 1281, ս.363:

¹⁵ Ibn Batoutah, Voyages, t. II, Paris, 1854, p. 22

¹⁶ Տե՛ս Իբն Մանգուր, IV, էջ 382, Իբն Խալիֆան, II, էջ 195:

Քրդերի էթնիկական ծագման վերաբերյալ արարալեզու սկզբնաղբյուրներում գոյություն ունեցող վարկածների և դրանց հետ առնչվող նյութերի ուսումնասիրությունը հիմք է առնելու եզրակացնելու, որ արարական ծագման վարկածն իր մի քանի տարրերակներով ամփոփ ձևակերպում ստացավ X դարի աշխարհագիր-մատենագիր ալ-Մասուդիի երկերում: Եւս հավասրել և գրասել է միջնադարյան դիցարանական վարկածներին մի ամբողջ շարք: Հեղինակի շարադրանքից երևում է, որ նա, ինչպես նշվեց վերևում, շփվել է քրդերի հետ և խնդրո առարկա քննաչի մասին նյութեր է գրի առել թուն քրդական իրականությունից: Այլ կերպ ասած, ալ-Մասուդին այն հեղինակներից է, մեր կարծիքով, թերևս միակը, որ քաջատեղյակ է եղել քրդական էթնիկական ծագմանը վերաբերող վարկածներին: Նրա ցանքերի շնորհիվ էլ մեզ են հասել հույժ հետաքրքրական տեղեկություններ, որոնք տեղ են գտել հետագա դարերի հեղինակների գործերում:

Ալ-Մասուդին քրդերի ծագման խնդիրներին անդրադարձել է իր էիմնակագծ երկու՝ «Մուրաբ ազ-զահար վա մա'ադին ալ-ջաուհար» և «Քիթաբ ար-քամրիհ ու ալ-իշրաֆ» աշխատություններում: Հենց սկզբից էլ նա արդարացիորեն ընդգծել է, որ քրդերի ծագման շուրջ գոյություն ունեն խիստ տարածայնություններ և գանազան կարծիքներ¹:

Եթե վաղ և նույնիսկ ուշ շրջանի արարալեզու հեղինակներից շատերը համախ կառչել են «Քուրդ» առասպելական անձնանունից, ապա ալ-Մասուդիի երկերում դրան համարյա կարևորություն չի տրվել: Կանգ առնելով մի քանի տարրերակների վրա՝ նա փորձել է քրդերի ծագումը սերել արևելյան խալիֆայության տարածքում հաստատված հայտնի արքա ցեղային միավորումներից: Այդ կապակցությամբ նա գրում է. «մարդկանցից ոմանք գտնուց են, քե քրդերը [սերվել են] Ռաքիա'ա իրն Նիզար իրն Մա'ադ իրն Աղմանի Քաքր իրն Վալիլից... Որոշ մարդիկ գտնուց են, որ նրանք [սերվել են] Մուդղար իրն Նիզարից և Քուրդ իրն Մարդ իրն Մա'ասա'ա իրն Հավագինի սերունդն են... Ոմանք էլ կարծում են, քե նրանք Ռաքիա'այից և Մուդղարից են»²: Այնուհետև ալ-Մասուդին ընդգծում է. «Որքան էլ որ ասա-

¹ Ալ-Մասուդի, II, էջ 249:

² Նույն անդամ:

ցինք քրդերի մասին, այս քրդերն ծագման վերաբերյալ մարդկանց մեջ ամենատարածվածը և ամենաճշմարիտը այն է, որ նրանք սերվել են Ռարիա'ա իրն Նիզարից»¹:

Կատարված մեջբերումից ակնհայտորեն երևում է, որ ալ-Մասուդիի մոտ գլխավորապես շեշտվում են արարական ցեղերի առասպելական նախահայրերը՝ Ռարիա'ա իրն Նիզարը և Մուդդար իրն Նիզարը, որոնք, ըստ միջնադարյան ծագումնաբանների, եղբայրներ են և արարացած արարների Ադնամ նահապետի ժոռոները²:

Քրդերի արարական ծագումն իր բազմազան տարբերակներով զնալով տարածվեց նաև հայտնի քուրդ Այյուրիների³ վրա (1169թ. մինչև XV դ. վերջը): Հայտնի է, որ Այյուրյան դիմաստիան, ի դեմս Մալախ աղ-Ղիճի, չափազանց ակտիվ ռազմաքաղաքական գործունեություն ծավալեց մահմեդական դարաշրջանում և փառաբանվեց հատկապես խաչակիրների դեմ պայքարում: Նրա քրդական թե արարական ծագմանն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, հատուրդելով հակասական տեղեկություններ: Բոլոր հեղինակները միաբերան հաստատել են, որ Այյուրյան տոհմն եղել է Ռավարի քրդերից, որի նախահայրը՝ Շադին Ղվինից (Հայաստանից) մեկնել է Բաղդադ, այնուհետև Թարսիս, ուր և նրա հետնորդները ռազմաքաղաքական ակտիվ գործունեություն ծավալեցին⁴: Այս կարգի տեղեկությունները (այսինքն՝ Այյուրիների քուրդ լինելը-Ա.Փ.) հաստատում են նաև հայկական աղբյուրները⁵:

Այյուրյանների արարական ծագման վերաբերյալ զանազան կարծիքներ, թեպետև կասկածելի են համարվել, կրկնվել են շատ հեղինակների կողմից: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ

¹ Նույն տեղում, էջ 249-251:

² Իզմ Հազմ, *Ջամհարյա անաջ ալ-աջաջ, ալ-Կահիրա*, 1962, ս. 7-11:

³ Այդ մասին տես՝ K. Босворт, *Мусульманские династии*, с. 94-98, СI. Cahen, *Ayyubidid*, -(ЭИ), Т. I, London, p. 796-807, Ա. Շամրասեր, *ալ-Մուսարաթ ալ-Խարիմա*, I, էջ 150-159, Գուրկյո Ալթ ալ-Կադեբ Նուրի, *Սիլատար Մալախ աղ-Ղիճ ալ-Այյուրի ֆի բիստ Այաթ առաշ-Շամ, Թաղդադ*, 1976, ս. 62-65...

⁴ Իբն Թուրքիբիբի, VI, Կահիրե, 1936, էջ 3-12:

⁵ Կիլիկյան Գամեակեցի, *Պատմություն հայոց*, Երևան 1961, էջ 150:

նրանք, ամենից առաջ ընդգծելով միջնադարում զերիշխող տե-
սակետը Այլուրյանների քուրդ լինելու մասին¹, այլևայլ տեղե-
կություններով նրանց ծագումը կապել են արարական այս կամ
այն ցեղի և մուսլիսկ Օմայան խալիֆաների հետ²: Որոշ հեղի-
նակների հաղորդումները ցույց են տալիս, որ Այլուրյան առան-
ձին իշխաններ մուսլիսկ չեն ժխտել իրենց արարական ծագու-
մը: Ավելին, նրանք իբր հայտարարել են, որ հանգամանքների
բեղումով պարզապես ապրել են քրդերի մեջ և խնամիական կա-
պեր են հաստատել նրանց հետ³: Հասկանալի է, որ Այլուրյան-
ների արարական ծագման վարկածն ու իսլամը հուսալի հնա-
րավորություն էին տալիս՝ ընդլայնելու իրենց ռազմաքաղաքա-
կան գործունեությունը մահմեդական աշխարհում:

Արար հեղինակների նյութերի ոչ բազմակողմանի և քննի ու-
սումնասիրությունը ժամանակակից որոշ արար պատմաբաննե-
րին քույլ է տվել արար համարել ոչ միայն Այլուրյան դինաս-
տիան, այլև՝ քրդական Ռավադի ցեղը⁴:

Քրդերի արարական ծագումը, ինչպես վկայում են մեզ հա-
սած սկզբնաղբյուրները, քիչ թե շատ արծազանք գտավ խալի-
ֆայության տարրեր շրջաններում ցար ու ցրիվ քրդական ցեղե-
րի մեջ: Այդպիսի վկայություններ են հաղորդում Իբն Հատուկայը⁵
լեռնաբնակ քրդերի մասին, և ալ-Իսթախրին⁶: Այս առթիվ ման-
րամասներ է հաղորդում ալ-Մասուդին: Իր «Մուրուջ ազ-զա-
հար» գրքում նա ընդգծում է, որ քրդական առանձին ցեղեր ի-
րենց ծագումը կապում են Ռարիա՛ա իբն Լիզար և Մուդդար իբն
Լիզարի հետ⁷: Իսկ «Քիքար ար-բանրին ուսու-իշրաֆ»-ում, մկա-

¹ Իբն Խալիֆան, II, էջ 495:

² Ալ-Համբալի, Հունա ալ-կուլուբ ֆի մամալիթ րաֆի Այլուր, Բաղդադ, 1978, ս.
21-23, ազ-Ջուրբայի, Քարուֆի ալ-կուլուբ, էջ 36, ալ-Մակքիզի, Քիքար աս-
սուլուբ, I/1, էջ 40-41...

³ Իբն Կասիլ ալ-Մագհիբի, Մաֆրաթ ալ-բուրս, I, ս. 3-4:

⁴ Կասիի Մա՛ջաֆ, Ուրուբաթ ալ-աբամա ալ-մանսուքիմ ինս ալ-բուլդամ ալ-
աբամիյա ֆի քիբալ սո-Ռամ սուլ-Ջազիրա ուս-Շանրիզուր սա-Ազաբ-
բայյամ, III, Բաղդադ, 1978, ս. 102-109:

⁵ Ibn Haukal, p. 221.

⁶ Al-Isakhri, p. 114

⁷ Ալ-Մասուդի, II, էջ 251:

բազրելով քրդական ցեղերի տեղաբաշխումը խալիֆայության տարրեր մասնորո՞մ՝ նա գրում է. «Քուրդ քանիմաց ծերունիները, որոնց հետ հանդիպեցինք մեր հիշատակած երկրներում, հայտնեցին, որ ծագումով իրենք Քուրդ իրն Մարդ իրն Սա'ա-սա'ն իրն Հարթ իրն Հավազինի սերնդից են: Նրանցից ոմանք գտնում են, թե իրենք Սուրայ իրն Հավազինի (սերունդն) են... Քրդերից ոմանք գտնում են, թե Ռաքիա'այից և Բաքր իրն Վայիլից են...»¹: Ինչպես ցույց են տալիս ալ-Մատուդիի վերոհիշյալ վկայությունները, X դարում արաբական վարկածն իր մի քանի տարրերակներով գոյություն է ունեցել քրդական միջավայրում ևս: Այդ մասին ուշագրավ է նաև ալ-Մակրիզիի հիշատակությունը, որտեղ նշվում է, որ քրդական ալ-Մարվանիյա ցեղը գտնում է, թե սերվել է Օմայան դինաստիայի հայտնի գորահրամանատար Մարվան իրն Հաքքիմի (մահ. 680թ.) սերնդից: Իսկ ալ-Հաքքարիյա ցեղում ոմանք իրենց ծագումը նույնպես կապում են արաբների հետ²:

Հարկ է նշել, որ այս կարգի դատողությունները հաստատում է նաև քրդական պատմագրությունը: Շարաֆ խան Բիդլիսին իր «Շարաֆ մամն»-ում ընդգծում է, որ քրդական եզլայ Գասընի, Խալդի, Բասայան, ինչպես նաև րոհրամիների մի մասը, Մահմուդի ու Գումրուլի ցեղերը իրենց ծագումը կապում են արաբ Օմայանների հետ³: Նրա կարծիքով, Հաքքարիայի Շամրո և Իմադիայի Բահդինան իշխանները սերում են Աքրասայան խալիֆաներից⁴: Իսկ Ջազիրայի իշխանները իրր թե Մուհամմադ մարգարեի սիրելի գորավար Խալիլ իրն ալ-Վալիդի հետնորդներն են⁵:

Բիդլիսիի երկը պարունակում է նույնամանա այլ տեղեկություններ, որոնց համաձայն քուրդ բարձրաստիճան ընտանիքներ և ցեղեր իրենց ծագումը վերագրել են Օմայան կամ Աքրասայան

¹ Al-Masudi, Kitab at-Tanbih, p. 89-

² Ալ Մակրիզի, Քիթաբ աւ-սուրթ, 1/1 էջ 3: Տես նաև նույնի՝ Քիթաբ ալ-մաւաիֆ, II, էջ 232-233:

³ Шараф-хан Бидлисн, Шараф-наме, Т.1, с. 83

⁴ Նայն տեղում, էջ. 152, 167:

⁵ Նայն տեղում, էջ. 175:

խաղիխաններին և ուրիշ արար սզմվական ընտանիքների¹: Բիշ-
լիսիի այս սովյակների իսկուրչունն ինտրկե յժվար և պարզարա-
մնլ, բայց դրանք հետաքրքիր են այն առումով, որ ուրվագծում
են վարկածի վիճակն արդեն ուշ միջնադարում:

XIX դարի քուրդ պատմարան Մելա Մահմուդ Բայազիդին,
պաշտպանելով քրդերի արարական ծագման տեսակետը, իր
աշխատության առաջարամն սկսել է հետևյալ տողերով. «Յոդ
հայամի լինի մեծարժան աշակերտներին և բանինաց [մարդ-
կանց], որ քրդական ցեղերն առաջացել են նախկին արար ընդ-
վիններից: Անցյաում արարական այս ցեղերի մի մասն ընտա-
նիքներով և նրխաներով հեռացավ [քնորանից], եկավ հաս-
տատվեց այս տարածչում: Նրանք բոլորն էլ կազմում էին միաս-
նական մի տոհմ՝ «կարիլա»: Նրանց բոլորի լեզուն նախկինում
եղել է արարերեն...»²:

Հեղինակն այնուհետև սովելացնում է, որ արարական աքլ ցե-
ղերը, ապրելով այժմյան քրդական տարածքներում, հետզհետե
ժողացան իրենց մայրենի լեզուն՝ արարերենը³:

Վ.Միմոսկին այս առթիվ ևս նշում է, որ քրդական ցեղերում և
հատկապես նրանց ղեկավար ընտանիքներում տիրում է այն
համոզմունքը, որ իրենք քրդացած արարներ են⁴: Ավելին, այսօր
էլ Մերձավոր և Միջին Արևելքի քուրդ ազգարնակչության մեջ
շարունակվում են գոյատևել նման պնդումները:

Քրդերի արարական ծագման վարկածը, որքան էլ տարօրի-
նակ թվա, մեր կարծիքով, մեծ տարածում գտավ՝ հատկապես
եզդիական համայնքում: Նարեր ի վեր կրոնական հողի վրա
հալածվելով մահմեդականության և մահմեդական ժողովուրդնե-
րի, այդ թվում նաև քրդերի կողմից, եզդիների մեջ տիրել է և քիչ
թե շատ շարունակվում է գոյատևել այն կարծիքը, որ իրենք ծա-

¹ Նույն տեղում, էջ. 220, 232, 290, 313, 354...

² М. Мохмуд Байазиди, Нравы и обычаи курдов, М. 1963 г., с. 9. Տե՛ս
նաև ընագիրը՝ էջ 202:

³ Նույն տեղում, էջ 10:

⁴ В. Минорский, Заметки и впечатления, с. 14.

գումով արար Օմայան տեմի խալիֆաների սերմնից են¹: Օմայանների և նրանց տարրեր ճյուղերի ու միջնադարյան արար քարծրաստիճան ալևալլ ընտանիքների հետ են կապում իրենց ծագումը եզդի հոգևորականության իշտո դասերը²: Եզդիների և Օմայան խալիֆաների ազգակցական կապն արտացոլվել է նաև եզդիական «Մասհաֆե ուաշ» («ՄԼ մատյան») սուրբ գրքայեւում³:

«Արքին շքսանում եզդիներն սկսել են հետզհետե հրաժարվել այս ծագումնաբանությունից: Նրանց սուրբ գրքերի նոր մշակումներում քիչ է հղովվում առհասարակ «Եշդիդ» անունը, զարգացվում է այն գաղափարը, որ իրենք զրադաշտական են՝ «զադադոշքի» և այլն⁴:

Այսպիսով, շնայած արարական ծագման վարկածը լայնորեն տարածվեց մահմեդական միջնադարում, այնուհանդերձ քրդերի էթնիկական ծագման հիմնախնդիրը արարալեզու աղբյուրներում մնաց վիճելի և անլուծելի: Արար հեղինակներից Իբն Մուբայրան, առ-Տարաթին, ադ-Դիմավարին, ալ-Մակդիսին, Իբն ալ-Ասիրը, ադ-Դումայրին և այլք, ղեմելով իրանական դիցարանության և Մասանյան ավանդության նյութերին, մատնացույց են անում քրդերի իրանական ծագումը: Առանձին հեղինակներն էլ տատանվել են և կրկնել մախորդներին: Ուշագրավ է, որ Այյուբյան պատմիչ Աբու ալ-Ֆիդայն այս խնդրում ևս չի ծավալվել, որի աշխատությունում բուցիկ ձևով տեղ են գտել միջնադարյան մի քանի կարծիքներ: Քրդերին նա մե'րք համարել է իրանական մի ցեղ, մե'րք քուրդ արարներ, որոնք իր քե հետո դարձել են նաքատացի: Հետևելով մեկ այլ ավանդության Աբու ալ-Ֆիդայն ընդգծում է հետևյալը. «Ասում են, քե քրդերն աջամների ա'արարներ են», այսինքն՝ իրանական քոչվորներ⁵: Նույնանման տեղեկություններ են պարունակում Իբն ալ-Կար-

¹ Խամայիլ Թեկ Չոլ, ալ-Յազդիդյա կաղնձան ռա-հաղիսան, Բալբոյք, 1934, ս. 13, Մայիլ ադ-Դյաշի, ալ-Յազդիդյա, Բաղդադ, 1973, ս. 15-74:

² Մաղիկ ադ-Դամաշի, ալ-Յազդիդյա, ալ-Մասուլ, 1949, ս. 33-63:

³ Ի. Չոլ, ալ-Յազդիդյա, էջ 77:

⁴ Ս. ադ-Դյաշի, ալ-Յազդիդյա, էջ 236-237:

⁵ Aboul Fedae, *Histor. antislam*, p. 150.

դիւ «Պատմութիւնը»¹ և այլոց գործերը:

Միջնադարյան դիցարանական վարկածները և հասկապես արարականը, որքանով հայտնի է մեզ, առաջին անգամ ճիշտ բնութագրում են ստացել ալ-Մակրիզի կողմից: Իր երկու աշխատութիւններում, ի մի բերելով այդ վարկածները, մա գրում է. «Մրանք Ֆակիհների (իմաստուններ, գիտնականներ, օրենսդիրներ) արածներն են քրդերի մասին, որոնցով նրանք ձգտում էին սիրաշահել նրանց ... Իրականում քրդերը մի գեղ են աջամական (իրանական) ցեղերից»²:

Ինչպես երևում է, արարական վարկածն իր զանազան տարբերակներով հերքվում է ալ-Մակրիզի կողմից: Կիսելով նրա կարծիքը՝ հարկ ենք համարում ավելացնել, որ խնդրին վերաբերող նյութի հետազոտումը աներկբայելի է դարձնում այն, որ վարկածը չէր կարող առաջ քաշված լինել քրդական միջավայրում: Դա հաստատվում է և այն հանգամանքով, որ վարկածն արձանագրվել է արարական աղբյուրներում և, ամենակարևորը, մեզ ներկայացվող տոհմածառերը հազիվ թե վաղ միջնադարում ծանոթ լինեին քրդական լեռնարձակ ցեղերին: Բացի այդ, վկայությունների շարադրանքում ցցուն ձևով նկատվում է արարական ոգին և նրան բնորոշ մտածելակերպը, հանգամանք, որը բույլ է տալիս ենթադրելու, որ վարկածը գուրկ է ճշմարտությունից և նրա տարբերակների անուններն սոսկ մտացածին են: Ինչպես նշվեց, զուգահեռ անցկացնելով քրդերի (քուրդ էթնոնիմի) և ոմն «Քուրդի» անձնանշան, ինչպես մաև առանձին ցեղային միությունների և նրանց մախահայրերի միջև, արար հեղինակները ձգտել են լրացուցիչ մամրամասներով հիմնավորել իրենց տեսակետը:

Հետևելով արարական աղբյուրների վկայությունների ընթացքին՝ պետք է ենթադրել, որ միայն «Քուրդ» անունը, ըստ երևույթին, չի բավարարել համոզիչ կերպով արար համարելու ալլալիզու էթնիկական այս խմբին: Որոշ չափով հավատարժան պատասխան տալու, քրդերին մախսկին արարներ ներկայացնելու և նրանց Արարիայից մեկնելու ու ալլազգիների մեջ բնակվելու պատումը հավանական դարձնելու համար, արար հեղինակները դիմել են պատմական հայտնի դեպքերին և իրադարձու-

¹ Իրն ալ-Կարդի, I, էջ 72:

² Ալ-Մակրիզի, Քիբթա ալ-Մաուսիթ, II, էջ 232:

յունեներին: Մեզ արդեն ծանոթ է. ալ-Քալիին առաջիններից է, որ այդ փաստը կապել է Եմենի Մարիք ամբարտակի փլուզման հետ: Նա գրում է, որ քրդերը, լինելով «Քուրդ իրն Օմար իրն Մա աս-Սամայի սերունդը, ընկան (նաստատվեցին) այն տաքածքը, որում [այժմ] գտնվում են, կրք հեղեղը խորտակեց ալ-Արիմը և ցրվեց Եմենի քնակյությունը...»¹:

Հայտնի է, որ Եմենի այդ ամբարտակը, որը Մարիք քաղաքը և չրջակայքը պաշտպանում էր լեռնային ջրհեղեղներից, կատուցվել էր Մարայի իշխանների կողմից: VI դարում (մ.թ. 542-570 թթ.-ի միջև) ջուրը խորտակեց ամբարտակը և քարուքանդ արեց սարացիների մայրաքաղաք Մարիքն ու չրջակա բնակավայրերը²:

Ամբարտակի փլուզումը հսկայական վնաս հասցրեց երկրի գյուղատնտեսությանը³, քեև քանքեր գործառնվեցին այն վերականգնելու համար, բայց Եմենում, ըստ երևույթին, ոտոզման համակարգը և տեխնիկան խիստ նվազեցին⁴: Դրա հետևանքով վերսկսվեց Հարավային Արաբիայից (Եմենից) արաբական ցեղերի արտագաղթը դեպի հյուսիս՝ Սիրիա, Միջագետք և այլուր: Այս արտագաղթերը և Եմենում Մարա իշխանության անկումն առավելապես պայմանավորված էին նաև երկրում առևտրի հետընթացով⁵:

Իրն ալ-Քալիին, ահա, պատմական այս իրադարձությունների հետ է կապել քրդերի արտագաղթը Եմենից:

Այս առթիվ ալ-Մասուդին գրում է, թե քրդերն իրր «եին ժամանակներում քաժանվեցին արաբներից զանազան իրադարձությունների հետևանքով, նաստատվեցին լեռներում և հովիտներում, որտեղ ապրեցին քաղաքի և շեների աջամ⁶ ու ֆուրս¹

¹ Ste' Ed-Dimichqai, p. 255.

² A. Мюллер, История ислама, т. I, СПб, 1895, с. 27-28.

³ E. Беллен, Арабы, ислам, с. 62.

⁴ Նույն տեղում:

⁵ A. Мюллер, История ислама, т. I, с. 29.

⁶ «Աջամ» անվանումն ունի մի քանի նշանակություն: Մեզրեական չրջանում արտոցները «աջամ» անելով է նկատի ունենի ոչ արաբախա ժողովուրդներին: Հետագայում այս անվանումն սկսվեց օգտագործվել միայն իրանցիների նկատմամբ:

ժողովուրդների հարևանությամբ: Նրանք մոռացան իրենց լեզուն (արաբերենը-Ա.Փ.), խոսեցին աջամների լեզվով...»²: Արաբիայից քրդերի դուրս գալը ալ-Մասուդիի մոտ կապվել է նաև արաբ «Լասսանիների»³ կռիվների»⁴ հետ: Իսկ մեկ այլ պատճառն, ըստ ալ-Մասուդիի, այն է, որ քրդերը, հաստատվելով «լեռներում» արտավայրեր և ցուր հայքայքելու նպատակով, ուրիշ ժողովուրդների հարևան դառնալու հետևանքով մոռացան արաբերենը»⁵: Շարունակելով նույն միացրը՝ ալ-Մասուդին իր «Քիրքար ար-քանրիի ուալ-իչրաֆի» աշխատությունում գրում է, որ քրդերը զանազան հակամարտությունների հետևանքով, անհիշելի ժամանակներից դուրս են եկել Արաբիայից և, հաստատվելով «աջամների հողում» (Իրանում), մոռացան իրենց լեզուն և [բազմամալով] դարձան տոհմեր ու ցեղեր»⁶:

Այսպիսով, արաբալեզու հեղինակների նրկերում քրդերը համարվում են եկվոր, և նրանց Արաբիայից դուրս գալը կապվում է մի քանի պատճառների՝ հատկապես արաբական ցեղերի արտագաղթների հետ, որոնք, ինչպես վկայում են պատմական տվյալները, տեղի են ունեցել նախաիսլամական շրջանում:

Այս առիվ տեղին կլինի նշել, որ նրբ Կոստանդնուպոլիսը դարձավ Հռոմեական կայսրության կենտրոնը, Արևելքում առևտրական ուղիների վրա ձևավորվեցին արաբական իշխանություններ Պետրան (Նարատացիներ-գոյատևեցին մինչև 106թ.) և Պալմիրան⁷: Դա նպաստեց արաբական ցեղերի ակտիվացմանը, և հետզհետե նրանք տարածվեցին կայսրության ու Իրանի սահմանամերձ գոտիներում: 272թ. Պալմիրայի անկումից հետո Միրիայում իշխանության գլուխն անցան արաբ Դաս-

¹ «Յարաբաուսի նշանակում է պարսիկ: Երբեմն նշանակում է նաև իրանցի»:

² Ալ-Մասուդի, II, էջ 249:

³ Լասսանիները ծագումով եմենից էին, որոնք Դամասկոս կենտրոնով իշխեցին Միրիայում և Պաղեստինում: Այս դինաստիան գոյատևեց մինչև իսլամի երևան գալը:

⁴ Ալ-Մասուդի, II, էջ 249:

⁵ Նույն տեղում:

⁶ Al-Masudi, Kitab at-Tanbih, p. 89.

⁷ Н. В. Пигулевская, Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв., М.-Л., 1964, с. 22.

սանիները, որոնք Հոռմնական կայսրության կողմից¹ օգտագործվում էին քեղվիմներին հակահարված տալու համար: Նույն ժամանակաշրջանում (III դարից) ակտիվացան Իրաքի արաբները, որոնց հաջողվեց հիմնադրել Լախմիների իշխանությունը: Այս շրջանում է, որ արաբական ցեղերը տարբեր դրդապատճառներով սկսում են Միջագետքից շածվել և խորսմալ Հոռմնական կայսրության հողերում: Այնուհետև, ժամանակ առ ժամանակ, օգտվելով Մասանյան Իրանի թուլությունից, նրանք ոչ միայն սկսում են ուժեղացնել ասպատակությունները, այլև իրենց հուսերով տարածվում են Միջագետքի հյուսիսային և արևելյան շրջաններում²:

Այսպիսով, քրդերի քմիկ շլիմելու և արաբական ծագման վարկածը արաբ ենդիմակները հիմնավորել են իրենց հայտնի ռազմաքաղաքական իրադարձություններով՝ նախախաղամական շրջանում դեպի Մասանյան Իրանի և Հոռմնական կայսրության սահմաններն արաբական ցեղերի տեղաշարժերով: Ահա, թե ինչու արաբական վարկածն իր վրա է հրավիրել ոչ միայն արաբական, այլև՝ քրդական որոշ շրջանների ուշադրությունը: Քրդերն, իբրև իրանալեզու ժողովուրդ, ամշուշտ, սիմական ժողովուրդների հետ չեն ունեցել և չեն էլ կարող ունենալ էթնիկական որևէ ընդհանրություն: Այլ խոսքով, քրդական առանձին ցեղերի արաբացումը և հակառակ երևույթները սկզբնավորվեցին հիմնականում արաբական խալիֆայության ձևավորումից հետո, քուրդարաբական տարաբնույթ փոխվումների ընթացքում: Անժխտելի փաստ է, որ այս ընթացքում իսլամի գաղափարախոսությունը, խալիֆայության երկարատև տիրապետությունը, նրա վարած քաղաքականությունը և այլն, ավելի իրական հնարավորություններ էին ստեղծում արաբացման համար: Կարելի է ենթադրել, որ այդ գործընթացը քիչ թե շատ արագացվեց, մոտավորապես X-XI դարերից, երբ քրդերի կողմից զանգվածային կերպով ընդունվեց իսլամը: Անդրադառնալով մեզ հետաքրքրող խնդրին՝ աշխարհագիր Ցակուրը գրում է, որ Էրբիլի քնակաւթյունն արաբացած քրդեր են³:

¹ Կ. Քրոքերման, ճշվ. աշխ., էջ 23:

² Н. В. Гингулаевская, ճշված աշխ., էջ 29:

³ Ցակուր, I, էջ 138:

Այդուամենայնիվ, հարց է առաջանում, քե ի՞նչն էր արարեն-
 ռին մղում առաջ քաշելու քրդերի արարական ծագման վարկա-
 ծը: Հարցի պատասխանը, մեր կարծիքով, հարկ է որոնել այն
 պատմական գործընթացների մեջ, որ սուրբեց խալիֆայությունն
 իր գոյության երկար ու ճիգ դարերի ընթացքում: Հայտնի է, որ
 Օմայան դինաստիայի անկմամբ (750թ.) քիչ քե շատ սկիզբ ա-
 տավ խալիֆայության քայքայումը: Դրանով լայն քափ ստացան
 ժողովրդական շարժումները և ավատատիրական երկպառա-
 կությունները: Արբասյան արքունիք, և հատկապես նրա վարչա-
 կան գերատեսչություններ, ինչպես Տշվեց, սկզբից էլ ներքա-
 վանցեց իրամական տարրը, որը վարելով խալիֆայության մեր-
 քին և արտաքին քաղաքականությունը, նոր լիցք էր հաղորդում
 իրամական ժողովուրդների գործողություններին: Հասարակա-
 կան-քաղաքական կյանքում լայնորեն կիրառվելով Մասանյան
 Իրանի վարչատնտեսական օրենքները՝ հետզհետե ասպարեզից
 դուրս էին մղվում Օմայան պետության օրենքները: Այս առթիվ
 ալ-Ջահիզը մշել է, որ Օմայան պետությունը արարական էր,
 իսկ Արբասյանը՝ իրամական¹: Իսկ IX-X դարերից խալիֆայու-
 յան արքունիքում նկատելի դարձավ մաև բյուրքական տարրի
 գործունեությունը: Քաղաքական այս նոր իրողությունները
 նպաստավոր պայմաններ էին ստեղծում մաև քրդական տարրի
 ակտիվացման համար: Իսկ տարրեր վայրերում նրա զանազան
 ելույթները կարող էին ճակատագրական նշանակություն ունե-
 նալ խալիֆայության համար, մամավանը, որ ապրելով լեռնա-
 յին այնպիսի զանգվածներում, Բաղդադի արքունիքը օղակի մեջ
 էր վերցրել: Մեր կարծիքով, մման համզամամքը հաշվի առնե-
 լով, արարներն սկսեցին մույմացնել էքնիկական տարրեր պատ-
 կանելիություն ունեցող երկու խմբերի ծագումը՝ ջանալով ինչ-որ
 չափով սիրաշահել քրդերին և դրանով մեղմել նրանց հակաա-
 րարական տրամադրությունները: Խմղող առարկա քեմալի վրա
 լույս են սփռում սկզբնաղբյուրների հաղորդումները: Հայտնի է,
 որ արարները որոշակի ժամանակահատվածում, հատկապես Ռա-
 բիա՛ա, Մուղդար և Բաքր ցեղերի հետ: Արարական այս երեք ցե-
 ղային խոշոր միավորումների անունով էլ կոչվում էին Ջազիրա-

¹ Ալ-Ջահիզը, ալ-Բայան ուա-թարյին, II, Բաղդադ, 1960, ս.63:

յի (Վերին Միջագետք) տարածքների՝ Դիյար Ռաբիա'ա, Դիյար Մուդղար, Դիյար Քաքը¹:

Ջազիրան (Վերին Միջագետք), որտեղ արարական այս ցեղերի մի մասը հաստատվել էր դեռևս մալախալամական շրջանում, արարալեզու աշխարհագիրներն այն քաժամում էին երեք քուրանների (շրջանների), որոնք մտնում էին խալիֆայության երրորդ փոխարքայության կազմի մեջ: Այդ փոխարքայությունն, ինչպես հայտնի է, ընդգրկում էր Արմինիան (Հայաստան, Վիրք, Աղվանք), Ատրպատականը, Վերին Միջագետքը և Փոքր Ասիայի սահմանամերձ շրջանները²: Աճողջ Ջազիրայի մայրաքաղաքն էր Մոսուլը: Արքայանների օրոք այն քաժամվեց 2 վարչական միավորների՝ Մոսուլ (ալ-Մոսուլ) և Ջազիրա³:

Արարական նվաճումներից սկսած՝ դեպի այս տարածք սկսեցին արարական ցեղերի մոր արտագաղթերը: Նրանց մի մասը, ինչպես նշվեց վերևում, Օմար խալիֆայի օրոք ակտիվորեն մասնակցեց նվաճումներին: Ջազիրայում արարական ցեղերի անընդունակ, քաղաքական ու տնտեսական կշիռը մեծացան հատկապես Օմայանների օրոք, երբ վերջիններիս կողմից լայնորեն սկսվեց Միջագետքի գաղութացումը:

Այսպիսով, Դիյար Ռաբիա'ան (Մոսուլ կենտրոնով), Դիյար Մուդղարը (Ռակկա կենտրոնով) և Դիյար Քաքը (Ամիդ կենտրոնով), որպես վարչատարածքային միավորներ մտնելով Ջազիրայի կազմի մեջ, ընդգրկում էին հսկայական քվով ընակավայրեր: Քացի տեղական ազգաբնակչությունից՝ հայերից, ասորիներից, քրդերից և այլն, խալիֆայության տիրապետության ասանձին ժամանակաշրջանում այստեղի քաղաքական և տնտեսական կյանքում ակտիվ դեր էին խաղում արարները: Ջազիրայում, Մոսուլի մարզում, ինչպես նշվեց, քրդական ցեղերի ակտիվացումը խիստ նկատելի էր հատկապես Արքայանների օրոք: Այստեղ կամա թե՛ ակամա նրանք շփումների մեջ պլախի մտնելին առաջին հերթին արարական ցեղերի հետ:

¹ Sbu' II, V, II, London, 1965, p. 343-349.

² Ա. Տեր-Ղևոնդյան, Արարական խալիֆայության կյանքային փոխարքայությունը, -Մերձագոթ և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, III, Երևան, 1967թ., էջ 164:

³ А. Тер-Гезовцян, Армянскя и арабскяя халифат, Ереван, 1977, с. 152.

X դարի հեղինակ Հասան ալ-Համադանին, նկարագրելով արարական Բանու Շայրան ցեղային միության Դիյար Բաքրու՝ զբաղեցրած տարածքները, ցույց է տալիս, որ նրանց էր պատկանում Տուր Արդինից մինչև Խորասան մահամզը: Նրա կարծիքով, Բանու Շայրանի հետ «քրեակվում էին միմիայն քրդերը»¹:

Դիյար Ռաբիա՛յում համեմատաբար զգալի թիվ էին կազմում քրդերը: Մոսուլի մարզում արարական Ռաբիա՛ս և Մուդդար ցեղային միությունների հետ միասին քրդական ցեղերն ունեին անասնապահական ձմեռանոցներ և ամառանոցներ²: Իսկ երկու Ջարերի միջև ընկած արոտավայրերում և հովիտներում Իրն Հաուկալի վկայությամբ ձմեռում էր ալ-Հադրամիյա խոշոր ցեղային միությունը, որից հետո այստեղ ամառն էր անցկացնում արար Շայրանի ցեղը³:

Այսպիսով, տնտեսական կացությանը՝ անասնապահությունն անհրաժեշտ էր դարձնում երկու կողմերի շփումները, որոնք շատ հաճախ ուղեկցվում էին արյունահեղ հակամարտություններով և ռազմական ընդհարումներով: Խնդրո առարկա քե՛մային առնչվող արարալեզու սկզբնաղբյուրների նյութերի ուսումնասիրությունը բույլ է տալիս ենթադրելու, որ վերը նշված տարածքներում արարական ցեղերի առկայության վաղեմությունը և քրդերի հետ ունեցած կենցաղային որոշ ընդհանրությունները, հիմք են ծառայել նրանց՝ արարական ծագման վարկածն առաջ քաշելու համար, որն ուներ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նպատակներ:

Քրդերի առաջացումն արարական Ռաբիա՛ս, Մուդդար և Բաքր ցեղային միություններից ոչ միայն կարող էր մեղմացնել նրանց մշտական հակասությունները, այլև՝ կենչտացնել քրդական լեռնային զանգվածների լիակատար յուրացումը արարների կողմից՝ մեծացնելով իսլամը տարածողների տնտեսական և ռազմաքաղաքական կշիռը: Ուշագրավ է կրկին նշել ալ-Մասուդիի վկայությունն այն մասին, որ մարդկանց մեջ ամենատարածված և ամենաճշմարիտ տեսակետն այն է, որ քրդերը սեր-

¹ Հասան ալ-Համադանի, Ուսաֆ Ջազիրայ ալ-արաբ, ալ-Կահիրա, 1953, ս. 133:

² Ibn Haskal, p. 144.

³ Նույն տեղում, էջ 156:

վել են Ռաբիա'ն իրն Եփզարից¹: Այս ցեղային միությունն ամուրդ կրող շրջանը՝ Դիյար Ռաբիա'ան, ընդգրկում էր այժմյան իրաքյան Բուրդիստանի մի մասը, որտեղ, ինչպես նշվեց, հիմնական բնակչությունը բաղկացած էր քրդերից: Այս փաստն ինքնին ևս մեկ անգամ վկայում է, որ արարական վարկածը բնավ էլ պատահական բնույթ չի կրել, և դրա առաջ յաշումը մահ ամուր հիմքեր էր տեղծում քրդական անհնազանդ ցեղերի մեջ իսլամի տարածման համար: Բացի այդ, նման պնդումները հնարավորություն էին տալիս միաժամանակ արարական ռազմական գործողությունների մեջ ներգրավել լատինալեզու յապետյան տարրեր մասերում տարածված քրդական ցեղերին: Այլ խոսքով, քրդերի արարական ծագման վարկածի մշակումը և զոյատևումը վերջին հաշվով բխում էր լատինալեզու յապետյան ռազարականությունից, ինչպես մահ իսլամի, այսպես կոչված, «եղրալեզու յապետյան» սկզբունքից: Այն արասացույցում էր նվաճված երկրների ժողովուրդներին միաժուլելու ուղղությամբ արարների գործադրած ջանքերը: Ինչ վերաբերում է քրդերի մեջ վարկածի արձագանքին, ապա դա միանգամայն հասկանալի է: Բնական է, որ նման պատգամները քրդական առանձին խավեր վարկածի նկատմամբ անտարբեր վերաբերմունք չէին կարող ունենալ: Այդ գործում, մեր կարծիքով, մեծ շահագրգռվածություն էին հանդես բերում քուրդ ցեղապետերը: Արարական ծագումը, մասնավորապես որ այն առաջարկում էին իսլամ տարածողները, քուրդ ավատատերերին երաշխիքներ էր տալիս հորսնալու որոշակի շրջաններում և հնարավորություն էր ընձեռում ընդլայնելու իրենց ազդեցության ոլորտը: Այլ խոսքով, ձևականորեն ընդունելով թե՛ արարական ծագումը, թե՛ իսլամը, քրդական վերնախավն ստանում էր անտեսական և քաղաքական որոշակի անկախություն:

Այսպիսով, երկուստեք անտեսական և քաղաքական շահերի հանդեպնումը խոր հիմքեր ստեղծեցին քրդերի արարական ծագման վարկածի մշակման և երկար զոյատևման համար: Այն միջմաղաքի թերևս ամենատարածված և փաստարկված վարկածն էր, որը մահմեդականության անկախությանը զուգընթաց որոշակի հետք բողեց քուրդ ժողովրդի հասարակական-պատմական զարգացման բնականոն ընթացքի վրա:

¹ Ալ-Մասուդի, II, 251:

ՔՐԴԵՐԸ ՁԻՐԱԼՈՒՄ

(X դարի երկրորդ կես-XI դարի առաջին կես)

1.ՔՐԴԵՐԸ ԵՎ ԴԱՅԼԱՄԻՆԵՐԸ

Հակաաբրաայան հզոր շարժումների հետևանքով IX դարի ընթացքում խալիֆայության գերիշխանությունն աստիճանաբար քուլացավ Իրանի մեծ մասում: Խալիֆայության տիրապետության տակ մնացին միայն Ջիրալը¹ և հարակից շրջանները (Արևմտյան Իրանը):

Օգտվելով ստեղծված քաղաքական բարենպաստ իրավիճակից՝ քրդերը ևս որոշակի ակտիվություն դրսևորեցին խալիֆայության տարրեր վայրեքում: Եղած տվյալները քույլ են տալիս եզրակացնելու, որ այդ շրջանում (IX դարում և մասնավորապես X դարից) նկատվեց քրդական տարրի շեշտակի ակտիվացումը հատկապես Արևմտյան Իրանում, որտեղ X դ. 20-30-ական թթ. ռազմաքաղաքական ակտիվ գործողություններ ծավալեցին իրանական դալայմիները²:

¹ «Ջիրալ» արտերին «ջարալ» (ին) գոյականի հոգնակի բիվն է: Վարչաառաժարյին բաժանում արտաբան խալիֆայությունում: Համաչան կենտրոնով: Այն ընդգրկում էր Իրաքի և Իրանի միջև ընկած լեռնային գոտիներն ու շրջանները: XII դարից արտաբան Իրաքից զանազանվեցա համար Ջիրալը կալվեց Իրակ ալ-Աջամ աբաժական Իրաք: (Տե՛ս՝ Յակուբ, II, էջ 99; Կ. Լք Սարիեք, էջ 240): Ջիրալի կազմի մեջ էին ձուլում Ռեյր, Իսֆահանը, Համադանը, Դիմափարը, Ջերմանչանը և այլ վայրեր: Արաք աշխարհագիրները Ջիրալի մաս են համարել Համադանից հյուսիս՝ Առաքա-տականի միջև ընկած լեռները: Ջերմանչանի և Աղբթեյանի միջև ընկած մահանգն այժմ կոչվում է Ալեքիան՝ Սիմնա կենտրոնով: Տե՛ս՝ Բ.Յ. Բարտոլեա, Сочинения, т. VII, М., 1977, с. 198.

² Դալայմիների մասին մանրամասն տես՝ V. Minorsky, *La Domination des Dailamites*, Paris, 1932, նույնի՝ Daylam, El, p. 193: Հայ մատենագիրները կա-

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թե՛ քրդական և թե՛ դալարամիական վարձկան ջոկատները X-XI դարերից սկսած՝ իրենց ռազմական գործողություններով, ինչպես նշում է հայտնի արևելագետ Կ. Բոսվորտը, նոր լիցք հաղորդեցին արևելյան խալիֆայության մահմեդական աշխարհի իրամական տարրի ակտիվացմանն ընդհանրապես¹:

Այդուհանդերձ, ի տարբերություն քրդերի, թե՛ Արքայյան խալիֆայության գվարդիայում և թե՛ մանր ու խոշոր ավատատիրական իշխանությունների քանակում ավելի շոշափելի էր դալարամիների քիվը: Մրանց հանգամանքները յուրյովին այլ էին, քան՝ քրդերինը: Այնուհայտ է, որ Գալարմի շրջանի (Կասպից ծովի հարավ-արևմտյան հատված) լեռնային ռազմատեմնչ բնակիչները, որոնք IX դարում ընդունեցին իսլամ՝ շիական ուղղությամբ, լինելով աղքատ տարածքի տերեր, սալբուստի միջոց հայրայելու նպատակով, լքեցին իրենց հայրենիքը և ծառայության անցան տարրեր տիրակալների վարձկան գործերում:

Նման սոցիալական ցածր ծագում ունեւր դալարամիական գորավարներից մեկը՝ Մարդավիջ իրն Ջիլարը, որը ծառայության էր անցել Մամանյանների մոտ (Արևելյան Իրանում և Միջին Ասիայում 819-1005թթ.): Տարարիստանում Ալիականների առաջնորդ Ուրբուշի մահից հետո պայքարն սկսվեց նրա արյունակիցների և Մամանյան քանակի միջև: Այդ պայքարում մեծ դեր խաղացին դալարամիական գորաջոկատները՝ Մարդավիջի գլխավորությամբ: Իր գորականների աջակցությամբ 928թ. նա գրավեց Տարարիստանն ու Գուրգանը (Վրկանը), որով հիմք դրվեց Ջիլարիների դինաստիայի (928-մոտավորապես 1090 թթ.)²: 932-

ակց ծովի ետրազայն գավառների իրանական այս տարբին կնշատակում են "դիմիկ" անվանմամբ: Այս մասին տես՝ Կ.Ն. Юзбашин, Дийламыты в Повествовании Аристахеса Ластиверци-Палавтинский сборник, вып. VII (70), М., 1962, с. 146-151: Որաչ կեսագրությունը քալարամիներից են սերում պատմական Հայաստանի Գեղարմուտ և արևելյան սյրմյան գավառներին: Տես՝ Դ.Տ. Асатрян, Язык заза и армянский (предварительные заметки), Գեղարմուտիստիական հանդես, I (116), Երևան, 1987, էջ 159-161:

¹ Կ. Э. Босворт, Нашествия варваров, -Мусульманский мир 950-1150 гг., М., 1981, с. 27.

² Տես՝ Կ. Э. Босворт, Мусульманские династии, с. 135-136.

935 թվականների միջև ընկած կարճ ժամանակահատվածում նա հայտնվեց Իրանի արևմտյան շրջաններում¹: Դրանով, փաստորեն, Ջիբալի և հարակից որոշ շրջանների բուրդ քնակչությունը նույնպես ընկավ դալլամիների լծի տակ: Արաբալեզու սկզբնաղբյուրների մյուսերը վկայում են, որ 932թ. քնակչությունը խալիֆայության գորքի հետ միասին ուժեղ դիմադրություն ցույց տվեց Մարդավիջին, որը հարկադրված եղավ նահանջել դեպի Համադան: Այստեղ տեղի ունեցած ճակատամարտում դալլամիները սպարապետի մատնեցին խալիֆայության գորքին և աշխարհագորին: Դրանով Մարդավիջին ենթարկվեց որչ Ջիբալը, և նրա գորքը ասպատակելով՝ հասավ Հուլվան և Իսֆահան²:

Այսպիսով, 932-935թթ. ընթացքում Մարդավիջի՝ Արևմտյան Իրան կատարած հարձակման հետևանքով, այստեղ ևս տապալվեց Աբբասյան խալիֆայության գերիշխանությունը, որով Ջիբալն ամբողջությամբ անցավ նրա ենթակայության տակ³: Աբբասիյն մտա ժառայության անցան դալլամիական ջոկատները և նրա գերիշխանությունը տարածվեց նաև Իսֆահանի, Խուզիստանի և այլ վայրերի վրա: Քրդական շրջաններում, մասնավորապես Հուլվանում⁴, Մարդավիջն սկսեց գերեվարել քնակչության վրա սահմանելով նոր հարկեր: Արաբական արքունիքը հարկադրված եղավ բանակցություններ վարել Մարդավիջի հետ և գնաց որոշ զիջումների: Ջիբալիների առաջնորդին սիրաշահելու նպատակով խալիֆան նրան զանազան նվերներ տվեց և նշանակեց մի քանի մարզերի կառավարիչ⁵: Քնպետև Մարդավիջը համարվեց խալիֆայի կառավարիչը, բայց մտադրություն ուներ հարձակվելու Բաղդադի վրա և վերականգնելու Մասանյան պետությունը⁶: Այդ, անշուշտ, նրան չհաջողվեց, բայց նրա

¹ Իբն ալ-Ասիր, VI, էջ 214, Իբն Խալլան, III, էջ 390, Իբն ալ-Ասրդի, I, էջ 260:

² Իբն ալ-Ասիր, VI, էջ 214, ալ-Հանբալի, Շաքարար, II, էջ 280:

³ К. Э. Босворт, Мусульманские династии, с. 135-136.

⁴ Իբն ալ-Ասիր, VI, էջ 214, ալ-Հանբալի, նշվ. աշխ., էջ 280

⁵ Ալ-Հանբալի, նշվ. աշխ., էջ 283

⁶ Н. В. Пигульенская и другие, История Ирана с древнейших времен до конца 18 века, Л-А, 1958г., с. 129.

գերիշխանությունը տարածվեց մաև Ռեյի, Ղազվինի, Համադանի, Շիրազի և այլ շրջանների վրա:

Արևմտյան Իրանի գրավման ընթացքում այքի ընկան Մարդավիջի քանակում դայլամիական աղքատ գյուղացիական ծագումով երեք եղբայրները՝ Ալի, Հասան և Ահմադ Բուիները՝ կամ Բուվայիները¹: Սկզբնաղբյուրներում հաճախ այս ընտանիքի ծագումը կապվում է Մասանյանների հետ²:

Բուի եղբայրները Մարդավիջի քանակում հասան որոշակի փառքի և նշանակվեցին առանձին շրջանների կառավարիչներ: Եռուով Բուի եղբայրներն սկսեցին դավեր նյութել Մարդավիջի ղեմ, ինչը պատճառ դարձավ, որ վերջինս նրանց հետագնի գրադեցրած պաշտոններից: 933 թ. Ալին գրավեց Ֆարսը, որն էլ խրացրեց հակասությունները Մարդավիջի հետ:

Բացի վարձկաններից Մարդավիջի քանակում ծառայում էին մաև ստրկավաճառական շուկաներից գնված յորս հազար քյուրք ղուլամներ³: Վերջիններս 935 թվականին կազմակերպեցին Մարդավիջի սպանությունը, և պատեհն այդ առիթմ օգտագործեցին Բուի եղբայրները: Մարդավիջի եղբայր Վաշմգիր Իրն Ձիյարը շկարողացավ փոխարինել նրան և շուտով Արևմտյան Իրանում հաստատվեց Բուիների իշխանությունը (935-1055թթ.)⁴: Ալիին անցավ Իսֆահանը, Ֆարսը, Հասանին՝ Ջիրալը, իսկ Ահմադին՝ Քերմանն ու Խուզիստանը⁵:

945 թ. դեկտեմբերին Բուի Ահմադը հարձակվեց Բաղդադի վրա և համարյա առանց դժվարության գրավեց արաբական Իրաքը: Մարսափահար ալ-Մուսաբիի խալիֆան (944-946թթ.), հակառակ իր կամքի, ընդունեց Բուի զորավարին և հրապարակայնորեն նրան շնորհեց «Ամիր ալ-Մումարա» (իշխանաց իշխան) կոչումը, ինչպես մաև «Մուիզզ ալ-Դաուլա» լակարը

¹ Նույն անգամ:

² Ալ-Համրաի, նշվ. աշխ. II, էջ 292.

³ Н. В. Пигульевская и другие, с. 129.

⁴ К. З. Босворт, Мусульманские династии, с. 139.

⁵ И. Петрушевский, Развитое феодальное общество в Иране (X-начало-XIII вв.). - История Ирана, М., 1977 г., с. 136-137, с. 139.

(տխտոյսը)¹: Ինչպես նշում է Իրն ալ-Ասիրը, նման քարձր տխտոյսներ Արրասյան խալիֆան շնորհեց Անժադի մյուս երկու եղբայրներին՝ Ալիին՝ Իմադ ադ-Ղատուս, իսկ Հասանին՝ Ռուքն ադ-Ղատուս²:

Դրանով իշխանությունն Իրաքում անցավ Բուիներին, որի հետևանքով, փաստորեն, շուրջ երկու հարյուր տարի (945-1132թթ.) Արրասյան խալիֆայությունը գրկվեց քաղաքական իշխանությունից և նրա գոյությունը կրում էր ձևական բնույթ: Մահմեդական աշխարհում ճանաչվեց միայն նրա հոգևոր իշխանությունը, և իր գոյությունը պահպանելու համար սկսեց Բուիներին շտայել սլատավոր տխտոյսներ և կոչումներ³: Դա ազդարարեց Արրասյան խալիֆայության քայքայումը և նրա անժայրածիր տարածքները մասնատվեցին անկախ և կիսանկախ իշխանությունների միջև⁴:

Բուիների, որոնք սկսեցին գործել խալիֆաների անունից, տիրապետության տակ անցավ ողջ Արևմտյան և Հարավային Իրանը՝ պարսկական Իրաքի մեծ մասը՝ Համադանը, Իսֆահանը և Ռեյ քաղաքները, Խուզիստանը, Ֆարսը, Քերմանը, արաբական Իրաքը՝ Բաղդադ և Բասրա քաղաքներով: Իրանական մեծ ամապատի արևելյան մահամզները, Խորասանը և միջինասիական տարածքները մտան Մամանյան իշխանության կազմի մեջ⁵: Բուիների պետության հիմնական կենտրոններ դարձան Բաղդադը և, իհարկե, նրանց մայրաքաղաք Շիրազը:

Տեսականորեն թվում էր, թե խալիֆայությունը նախկինի պես գոյություն ուներ և Բուիները, Մամանյանները, Ջիյարիները և այլ դինաստիաների ներկայացուցիչները համարվում էին նրա կառավարիչներ, սակայն իրականում միայն Արրասյանների անունները շարունակվեցին իշխատակվել մզկիթներում՝ խոտրանների ժամանակ և դրոշմվել դրամների վրա⁶:

¹ Կ. Բրաքերան, էջ 245:

² Իրն ալ-Ասիր, VI, էջ 314:

³ Կ. Բրաքերան, էջ 246:

⁴ Ibn Eticchaqa, El-Fochri (arab text), Gotha, 1860, p. 324-329.

⁵ Н. В. Пагульевская и другие, История Ирана, с. 130.

⁶ Н. Петрушевский, նշված աշխատ., էջ 136-137:

Այսպիսով, X դարի առաջին կեսից քրդական ցեղերի հիմնական մասը Ջիբրալում և հարակից շրջաններում ընկավ դելմիկ Բուիների գերիշխանության տակ: Եղած տվյալները ցույց են տալիս, որ քրդերը պիմներով դիմավորեցին արաբական գերիշխանությանը փոխարինելու եկած Բուիներին: Դրա հետ մեկտեղ, առանձին դեպքերում նրանց համարվում էին միմյանց դաշնակիցներ թե՛ Ջիբրալում, թե՛ Ջազիրայում: Բուիների և քրդերի փոխադարձ շփումներն ու ակտիվ ռազմաքաղաքական գործողություններն ավելի են ուրվագծվում X դարի երկրորդ կեսից: Մեր ձեռքի տակ եղած փաստական տվյալները ցույց են տալիս, որ դելմիկ Բուիների գերիշխանությունը քրդական որոշ շրջաններում (Հուլվան, Եահրեզուր, Հաքքարիյա) կրում էր ձևական բնույթ:

Հիջրի 342 (945) թ., երբ ալ-Մուտի՝ խալիֆան (946-974թթ.) մի պատվիրակություն ուղարկեց Խորասան՝ տիրակալ Նուեին և Բուի Ռուքմ ադ-Դաուլային հաշտեցնելու նպատակով, ճանապարհին, Հուլվանում՝ Արու աշ-Շաուքի գլխավորությամբ քրդերը հարձակվեցին քանազմացների վրա և գերեվարեցին նրանց: Բուի Մուիզզ ադ-Դաուլան՝ քրդերին կարգի հրավիրելու և նրանց խժողություններին վերջ տալու համար զորք ուղարկեց Հուլվան, հաշվեհարդար տեսավ նրանց հետ և կարգուկանոն հաստատեց շրջանում¹:

Հիջրի 363 (979) թ. Բուի իշխան Աղուդ ադ-Դաուլան զորք ուղարկեց Եահրեզուր: Իրն ալ-Ասիրը հայտնում է, որ Բուի իշխանը դրանով ցանկություն ուներ Եահրեզուրից վտարել արաբ Շայրամի ցեղին, որը քրդերի հետ խնամիական կապեր էր հաստատել և ասպատակում էր այդ տաջաձքները: Ըստ պատմիչի, Եահրեզուրն անտոկ մի շրջան էր և անմատչելի տիրակալների համար: Աղուդ ադ-Դաուլայի զորքը ներխուժեց Եահրեզուր, գրավեց այն, գերեվարեց շայրանցիներին և գերի վերցրեց 800 մարդ²:

Նույն թվականին (979թ.) Աղուդ ադ-Դաուլան ներխուժեց նաև Հաքքարիյա: Երկար ժամանակ պաշարելով այն՝ քրդերն ստիպված եղան անվտանգություն խնդրել Բուիներին: Հաքքա-

¹ Իրն ալ-Ասիր, VI, էջ 345:

² Նույն տեղում, VII, էջ 99:

րի քրդերը վերջիններիս հանձնեցին իրենց ամբուրյունները և զորքի հետ մեկնեցին Մոսուլ: Այդուհանդերձ, Բուխները հաշվեհարդար տեսան քրդերի հետ և ճամապարհին ոչնչացրեցին նրանց¹:

Ինչպես նշվեց վերևում, քրդերը ծառայության անցան դալլամական ծագում ունեցող թե՛ Ջիյարիների և թե՛ Բուխնների զորքերում: Օրինակ, Իբն Միսբավայիի հաղորդումները ցույց են տալիս, որ Ջիյարի Վաշեզիյը Ատրպատականում Դալլամ ալ-Քուրդիին օգնելու մպատակով ուղարկած 10-հազարանոց զորքը թաղկացած էր հիմնականում քրդերից²:

Քրդերը որպես ռազմիկ տարր հայտնվում են նաև Մամանյան իշխանության վարձկան զորքերում: Մամանյանների՝ 945 թվականին Ռեյի վրա կատարած հարձակման ժամանակ քրդերը ռազմական համդերձանքով անցնում են Բուի Ռուքն աղ-Դաուլայի կողմը³:

Մամանյանների՝ նույն թվականին դեպի Ռեյ և Ջիրալ ձեռնարկած երկրորդ արշավանքը հաջողությամբ պսակվեց: Քուրդ ցեղապետերը Նեհավանդում, Դիմավարում և այլ շրջաններում շտապեցին ճանաչել Մամանյանների գերիշխանությունը⁴: Մակայն, Մամանյաններն այստեղ երկար չմնացին և 946 թվականին Ջիրալը կրկին անցավ Բուխներից⁵:

Այսպեսով, X դարի երկրորդ կեսից քրդերի և Բուխների փոխհարաբերությունները նոր որակ են ստանում, կրթ տարածաշրջանում քրդական ցեղերն սկսում են ռազմաքաղաքական ակտիվ գործողություններ ծավալել:

¹ Նույն տեղում, էջ 102:

² Ibn Miskawaihi, I, p. 400.

³ Իբն ալ-Ասիր, VI, էջ 311:

⁴ Նույն տեղում, էջ 312:

⁵ Նույն տեղում, էջ 324:

2. ԳՍՍԱՆՎԱՅԳԻՆՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ

IX-X դդ. Արքայան խալիֆայության հպատակ երկրներում ավատատիրական հարաբերությունների արագ զարգացումը և կենտրոնական իշխանության աստիճանական քայքայումը մեծապես խթանեցին խոշոր ազնվականության անջատողական տրամադրությունների աճը: Արքայան խալիֆայությունում հատկապես իրանական տարրի ակտիվացումը և ստեղծված քաղաքական բարդ իրավիճակը նոր քափ հաղորդեցին, ինչպես ճշվեց, քրդական ցեղերի ռազմաքաղաքական գործողություններին: Երև մինչ այդ նրանց անկազմակերպ և տարիքային ընդվզումները հիմնականում ներշնչված էին ամտեսական կապանքներից այս կամ այն չափով ազատվելու ձգտումներով, ուղղված էին արքայական գերիշխանության դեմ, ապա X դարից նրանց պայքարն ստանում է նոր որակ: Այլ կերպ ասած, օգտակիով խալիֆայությունում և տարածաշրջանում ստեղծված մպաստավոր պայմաններից, քրդական վերնախավը, ցեղակիցներին իր շուրջը համախմբելով, դուրս եկավ քաղաքական ասպարեզ, փորձեր կատարեց առանձին շրջաններում ինքնուրույնություն ձեռք բերել և ընդլայնել իր ազդեցության ոլորտները¹:

Ձիրալում և հարակից շրջաններում X դարի առաջին կեսից շուրջ հիսուն տարի դրության տեղ էր քրդական Այլանիյա ցեղը: Նրա ազդեցությունը տարածվում էր Դինավարի, Համադանի, Նեհավանդի, Սամաղամի, Ատրպատականի և այլ շրջանների վրա՝ մինչև Շահրեզուրի սահմանները:

Ըստ Իբն ալ-Ասիրի, Այլանիյա ցեղը քրդական Բարզիկան կամ Բարզինիյա ցեղային խոշոր միության մի ճյուղն էր: Նրա առաջնորդ Ահմադը ուներ երկու որդի՝ Ղանիմ և Վինդադ անուններով: Նրանցից յուրաքանչյուրի տրամադրության տակ էր գտնվում քազմահազարանոց գորք, որի շնորհիվ էլ նրանց հաջողվեց իրենց գերիշխանությունը տարածել վերը ճշված վայրերում²:

Այլանիյա ցեղի առաջնորդ Ահմադի մյուս որդին՝ Վինդադը մահացավ հիջրի 349 (960/1) թ., որի տիրույթները ժառանգաբար անցան որդուն՝ Արու-լ-Ղանայիմ Արդ ալ-Ահարին:

¹ А. Поладде, Курды, с. 92-93.

² Իբն ալ-Ասիր, VII, էջ 101:

Հիցքի 350 (961/2) ք. մահացավ Ղանիմը, որին փոխարինեց որդին՝ Արու Մալիմ Ղայսամ իրն Ղանիմը: Մակայն շուտով նրան վերացրեց Արու-1-Յարի իրն ալ-Ամիլը և գրավեց նրա կասան, Ղանիմաբադ և այլ ամրոցները:

Արդ ալ-Լահարի դեմ դավադրություն կազմակերպեց նույն շրջանների քրդական Շադինջան ցեղը: Գերի վերցնելով Արու-1-Ղանայիմ Արդ ալ-Լահարին՝ շադինջանցիները նրան հանձնում են իր վարչազօնով լավ համբավ ձեռք քերած բուրդ մեկ այլ առաջնորդին՝ Հասամվայի (կամ Հասմավայի) իրն Հուսեյն ալ-Քուրդիին: Վերջինս նվաճեց Արու-1-Ղանայիմի բոլոր ամրոցներն ու տիրույթները¹:

Ինչպես դժգուր չէ նկատել, վերը նշված տարածքներում, փաստորեն, քրդական ցեղերին էր պատկանում տեղական իշխանությունը: Քուրդ առաջնորդները, որոնք հանդիսանում էին տվյալ տարածքների տիրակալներ, ունեին ամրոցներ և սեփական տիրույթների պաշտպանելու համար որոշակի քանակությամբ զորամիավորումներ:

Այլամիլյա ցեղի առաջնորդների գործունեությանը զուգահեռաբար, ինչպես նշվեց, Ջիբրալում քաղաքական ասպարեզում ի հայտ եկավ քրդական ավատատիրական մեկ այլ ընտանիք, որն երկար ժամանակ կարողացավ իր գերիշխանությունը տարածել մի շարք շրջանների վրա: Այդ ընտանիքը, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, ալ-Քարզինիյա կամ ալ-Քարզիկան քրդական խոշոր ցեղային միությունից էր: Նրա առաջնորդը, վերը նշված Հասամվայի իրն Հուսեյն ալ-Քուրդիին, Այլամիլյա ցեղի առաջնորդներ Վիմանդի և Ղանիմի ժոռեղբայրն էր:

Հասամվայիների (կամ Հասմավայիների) դիմաստիան, որը հիշյալ տարածքում գոյատևեց ավելի քան կես դար, սերտ ծաղաքորություններ ունեցավ, ամենից առաջ, իրանական դելմիկ Բուխների իշխանության հետ, որը, ինչպես հայտնի է, բավականաչափ ազդեցիկ դեր խաղաց ոչ միայն քրդական այս դիմաստիայի, այլև՝ Արբասյան խալիֆայության քաղաքական կյանքում: Ուտտի և անկարնելի է խոսել Հասամվայիների մասին՝ շրջանցելով նրանց և Բուխների ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, որովհետև ի վերջո մենք գործ ունենք մի տարածքի և ժամանակա-

¹ Նույն տեղում:

հատվածի հետ, որում գործեցին երկու կողմերը:

Նախ մի քանի խոսք Հասանվայիմների դիմաստիայի ձևավորման մասին: Պետք է ասել, որ նրա հիմնադրման որոշակի տարևթիվը հայտնի չէ: Մեզ հասած աղբյուրները Հասանվայի իրն Հուսեյն ալ-Քուրդիիմ առաջին անգամ հիշատակում են հիշքի 359 (969/70) թ. դեպքերը նկարագրելիս¹: Հարաֆ խան Բիդլիսին նշում է, որ իշխանության հիմնադիր Հասանվայիը, պատմիչների մեծամասնության կարծիքով, եղել է Բուի իշխան «Ռուրքն աղ-Ղաուլայի ժամանակակիցը»², այսինքն՝ այն նույն Բուի Հասանի, որը 935 թ. գրավեց Ջիրայը:

Պատմագրությանը հայտնի է, որ Հասանվայի քնոողդիմները՝ մեզ ծանոթ Վիմդաղն ու Ղանիմը, որոնք խոշոր ավատատերեր էին, ինչպես նշվեց վերևում, վախճանվեցին համարյա միևնույն ժամանակահատվածում՝ Վիմդաղը հիշ. 349 (960/1) թ., իսկ Ղանիմը՝ հիշ. 350(961/2) թ.: Վերջինիս մահից հետո քրդական Շադիմջան ցեղի օգնությամբ Հասանվայի իրն Հուսեյն ալ-Քուրդիիմ գրավեց նրանց բոլոր «ամրոցներն ու տիրույթները»³: Դրանով, փաստորեն, քրդական ալ-Այյանիյա ցեղի զբաղեցրած տարածքի վրա երևան եկավ Հասանվայիմների դիմաստիան: Կարգավորելով իշխանության ներքին կյանքը՝ Հասանվայիը, ինչպես երևում է, ամենից առաջ «ներագեղ քարտերով կառուցեց Սարմաջ քերդը»⁴ և Գիմավարում նույն շինարարական ոճով մի մզկիթ»⁵: Այս ամենը հիմք է ծառայում նզրակացնելու, որ Հասանվայիմն-

¹ Iba Miskawih, II, p. 270-271; Իքն ալ-Ասֆ, VII, էջ 37-38, Իքն Խալլան, IV, էջ 445-446:

² Илариф-хан Биллис, Илариф-наме, т. I, с. 90.

³ Իքն ալ-Ասֆ, VII, էջ 101, Իքն Խալլան, IV, էջ 454, 512-513:

⁴ Աշխարհագր. Ցակարք գրան է, որ " Սարմաջը լեռներում Համաքանի և Խոզխոտանի միջև ընկած անբացված քեղ է": (Տես՝ Ցակարք, III, էջ 215) "Սարմախ" ձևով, որը կարծում ենք գրական սխալ է, համընդամենը Արու Դուռնի մոտ նույնպես Այն, զատ աշխարհագրի, մի քրդի կողմից փորագրվել է ժայռի վրա: Նրա շարադրանքից երևան է, որ քերդ կառուցվել է Արու Այյար գյուղի մոտ: (Абу Агъаѳ. Востокъ записка, с. 25): Եվսագրացի հայտնի աքեկազեա Լք Սաքեճը նշում է, որ միմչև օրս Խալլանի չէ այս քերդի զանվելու փայրը: Ամենայն հավանականությամբ այն պետք է զանված լիներ Գիմավարի կապը: Տես (Լք Սարեճ, էջ 224) :

⁵ Իքն ալ-Ասֆ, VII, էջ 101, Իքն Խալլան, IV, էջ 454:

րի իշխանության հիմնադրումը կարելի է համարել հենց 961/2 թ.¹: Իշխանության մայրաքաղաք հռչակվեց Դինավարը:

Նրա իշխանությունը տարածվեց Ջիրայի հիմնական քաղաքների՝ Համադանի, Դինավարի, Նեհավանդի և այլ շրջանների վրա, որի զոյության հետ հաշտվեցին ոչ միայն Քաղդայի արքունիքը², այլև Բուխները: Այնուամենայնիվ, Աբևմուսայն Իրանում և հարակից շրջաններում քիչ քն շատ ինքնուրույնություն ձևառ բերած Հասանվայի քոչվոր սկզբից կեց Երկյուղ էին կրում այդ տարածքները ներխուժած Բուխներից: Օմայյաձ երկու կողմերի զործոնությունն այս կամ այն չափով նաև հակաարարական բնույթ ուներ, սակայն տարածքային հարցերում նրանց շահերը քախվում էին և Ջիրայում ուժերի գերակշռությունը, թերևս, ձևոնտու չէր նրանցից ոչ մեկին: Մակայն, դատելով մեր ձևոքի տակ եղած նյութերից, Ջիրայում Հասանվայիների ստեղծությունը և ակտիվացումը որոշ իմաստով Բուխներին, կարծես քե, այնքան էլ չէր խանգարում: Ընդհակառակը, ռազմական օգնություն ստանալու փոխարեն, ինչպես երևում է, Բուխները երկար ժամանակ սիրաշահում էին Հասանվային և, քավարարվելով Ջիրայի նվաճման ձևական փաստի հետ, խրախուսում էին տվյալ տարածքներում կարգուկանոն հաստատելու նրա կողմից զործարդված միջոցառումները:

Իրն Միսրավայիի, Իրն ալ-Ասիրի, Իրն խաղուճի և այլոց նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Հասանվայի ռազմական մեծ օգնություն էր ցույց տալիս Բուի Ռուրն աղ-Դաուլային (935-977թթ.) Խորասանի Մամանյանների դեմ մղված մարտերում³: Դալյամիական զորքերին ցուցաբերվող զինաջակցու-

¹ Մտեմի Լեմ-Պուղ զինաստիայի հիմնադրումը թվագրել է մուսավաջուսեն 959թ.: Տե՛ս-Степан Леи-Пул, Мусульманские династии, с. 114: Անհեմ է Մ.Ա. Ջաքիի կարծիքը, որ իբր իշխանությունը հիմնադրվել է 941թ. Հասանվայի ձոր՝ Հոսեյնի կողմից (Մ.Ա. Ջաքի, Քարիխ, էջ 69): Նույն սխալմունքը քույլ է տվի պատմաբան առ-Մադալին՝ իշխանությունը կոչելով ալ-Հուսայնիյա (առ-Մաժադի, Դաուլ ալ-խալամ, I, ս.246): Հայտնի աղևելյազեա է. Ցամբաուրն ա իքաքքի պատմաբան Ջալիսա ալ-Հալիմին իշխանության հիմնադրումը թվագրել են իբր. 348 (959/60) թ.: (Ցամբաուր, էջ 321, Ջ. ալ-Հալիմի, էջ 729) :

² Ջ. Ջելդան, Քարիխ ար-քամազդոն ալ-խալամի, IV, ալ-Կահիրա, 1905, ս.178:

³ Իս Միսքաուի, II, p. 270: Իրն ալ-Ասիր, VII, էջ 37, Իրն Ջալլան, IV, էջ 445, 512-513:

քյան համար էլ նա արժանացավ Քոչի իշխանի՝ Ռուքն աղ-Ղաուլայի լիակատար հովանավորությանն ու քարյացակամ վերարեքմունքին¹: Օգտվելով վերջինիս բողոսությունից և վատա-հույությունից՝ Հասանվայից գնալով իրեն ավելի անկախ էր զգում և համարձակ իշխանություն էր գործադրում: Եւ նույնիսկ սկսեց հարկեր գանձել Ջիրալով անցնող քարավաններից և տեղի ավատատերերից²: Այս առիվ Իբն ալ-Ասիբը գրում է, որ այդ մասին լուրերը հաղորդվում էին Ռուքն աղ-Ղաուլային, սակայն նա լուռ էր և չէր միջամտում նրա գործերին, քանի որ ինքը շատ ավելի կարևոր գործերով էր զբաղված³: Այս ամենի շնորհիվ Հասանվային հաջողվում է ոչ միայն լինել Ջիրալի լիիրավ իշխանը, այլև՝ ընդարձակել իր տիրապետության շրջանակները⁴: Օր-օրի, ինչպես նշում է դեսպերի ժամանակակից Իբն Միսթավայից, նրա իշխանությունը հզորանում էր, որից հետոնում էին տեղական կառավարիչները⁵: Այնուամենայնիվ, վրա հասավ պահը վերջապես ընդհարվելու իր հովանավորողի՝ Ռուքն աղ-Ղաուլայի հետ: Հիջրի 359 (969) թ. Հասանվայի և Համադանի կառավարիչ Մահլան իբն Մուսաֆիրի միջև ծագած վեճը սուր ընթացք ունեցավ: Երբ Իբն Մուսաֆիրն անցավ հարձակման, Հասանվայից ջախջախեց նրան: Ապա՝ վախուստի մատնվածներին նա նրկար ժամանակ պաշարեց, այնուհետև, ինչպես գրում են արաբ հեղինակները, զցեց իրդնիի օղակի մեջ: Ամռան շոգն ու կրակը ստիպեցին հակառակորդին անվտանգությամբ խնդրել Հասանվայից⁶: Քուրդ իշխանի այս ոտնձգությունն ու վայրագ վերարեքմունքը դալլամիների նկատմամբ սաստիկ գայրացրեցին և ամհամգաուսցրեցին Ռուքն աղ-Ղաուլային: Եւ այն թվականի մուհառամ ամսին (969թ. նոյեմբեր ամսին) Քոչի իշխանը հրամայեց իր վեզիր՝ Իբն ալ-Ամիրին մեծ

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Իբն ալ-Ասիբ, VII, էջ 37:

⁴ Ibn Miskawahi, II, p. 270.

⁵ Նույն տեղում:

⁶ Ibn Miskawahi, II, p. 270-271; Իբն ալ-Ասիբ, VII, էջ 37, Իբն Խալլան, IV, էջ 445-446:

գործով Ռևյից շարժվել և հակահարձակ ապ Վասանվայիին¹: Համադարանի մոտ հիվանդ վեզիրը վախճանվեց, որին էլ փոխարինեց որդին՝ երիտասարդ Արու-լ-Ֆարիք: Արքային քանակ-ցույթուններ վարեց Հասանվայիի հետ և, առանց ճակատա-մարտ տալու ստիպեց նրան հնազանդվել և հաշտության պայ-ժանագիր կնքել²: Տեսնելով պարտության ամխտափնջիտրյու-նը, ինչպես նշում է Շարաֆ Խան Քիլիխին, Հասանվայիը հար-կալորված Եղավ դիմելու միջնորդների օգնությանը և խաղաղ ճ-կով հետ վերադարձնել Ռուքի աղ-Ղաուլայի գորքը³: Հաշտու-թյան պայմանագրով, Իրն Միսհավայիի խոսքերով, Հասանվայիը Քուիներին վճարեց շուրջ 100 հզ դինար⁴: Եւոյն Իրն Միսրավայ-իի շարադրամքից պարզ երևում է, որ Քուի գորահրամանա-տարն իր հերքին ևս այնքան էլ մտադիր չէր քնդհարվելու Հա-սանվայիի հետ: Այդ քայլին դիմելու դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ նա անհասպաղ պետք է շտապեր Ռեյ և գրադեցներ իր հոր՝ վեզիրի պաշտոնը, քանի դեռ այն քափուր էր⁵:

Այսպիսով, վերջ մշված փաստերը վկայում են, որ հաշտու-թյունը ձեռնառու էր թե՛ Հասանվայիին և թե՛ Արու-լ-Ֆարքին, թեև քուրդ իշխանի վրա դա ավելի ծանր նստեց: Հավանաբար նա նպատակահարձակ գտավ դիմել այդ քայլին, քարիդրացիական հարաբերություններ շարունակելով Ռուքն աղ-Ղաուլայի հետ, որի օրոք էլ նրա իշխանությունը ծաղկում ապրեց⁶: Այս դեպքեր-ից հետո, դատելով աղբյուրներում նյութերի քաջակալությունից, պետք է ներադրել, որ Հասանվայիների և Քուիների փոխհարա-բերությունները շարունակվեցին նախկին հունով: Մի քանի տա-րի անց վիճակը համարյա լիովին փոխվեց. Հասանվայիին հո-

¹ Եւոյն տեղում:

² Iba Miskawahi, II, p. 273-274; Իրն ալ-Ասիր, VII, էջ 37-38, Իրն Խալլան, IV, էջ 446:

³ Մարաֆ-խոն Եւլլուս, Մարաֆ-նաթ, I, M., c. 90.

⁴ Iba Miskawahi, II, p. 274. Իրն ալ-Ասիրն ու Իրն Խալլանց նույնպես խոսում են Արու-լ-Ֆարքին՝ Հասանվայիի վճարած գումարի մասին, քայք չեն կշում սուսայդ չափը: Տե՛ս Իրն ալ-Ասիր, VII, էջ 38, Իրն Խալլան, IV, էջ 446:

⁵ Iba Miskawahi, II, p. 274.

⁶ Մարաֆ-խոն Եւլլուս, Մարաֆ-նաթ, I, M., c. 90.

վանավորող եիվանդ Ռուրն ադ-Ղաուլայի կյանքի վերջին շրջանում զահի համար Քուիմների միջև սուր տարածայնություններ առաջացան: Նրա մահից առաջ պետք է որոշվեր դինաստիայի գերագույն իշխանության հավակնորդի քեկնածությունը: Այդ իրավունքը արվեց Ռուրն ադ-Ղաուլայի տղաներից մեկին՝ Քուիմներից քերև ամննագորեղ Արուդ ադ-Ղաուլային (949-983թթ)¹: Վերջինս էլ լուրջ մտադրություններ ուներ բուական միացյալ և կենտրոնացված իշխանություն ստեղծելու համար²:

Տվյալ ծրագրի իրականացման ճանապարհին Քուի իշխանը հանդիպեց մեծ դժվարությունների: Ամենից առաջ նա պետք է հակահարված տար քչնամական դիրք բռնած իր եղբայրներին, հորեղբոր որդիներին և նրանց հարող ընդդիմադիր տեղաբնիկ ուներին: Անշուշտ, Արուդ ադ-Ղաուլայի տեսադաշտից դուրս չէր կարող մնալ նաև Ջիրայի Հասամվայիների իշխանությունը, մասնավորապես Հասամվայիը, քեկուզ ձևականորեն, դեռևս 975 թ. Ռուրն ադ-Ղաուլայի կենդանության օրոք, հակված էր Իրաքի՝ նրա գլխավոր հակառակորդի, հորեղբոր որդու՝ Քախտիյարի կողմը³:

Առանկելով Արուդ ադ-Ղաուլայի մտադրությունը և տարբեր ճակատներում նրա ռազմական հաջողությունները՝ Հասամվայիը փորձեց կապեր հաստատել Քախտիյարի հետ: Ստեղծված լարված և վտանգավոր իրադրությունն ստիպեց նրան դիմելու նման քայլի, քանի որ սվյալ ժամանակ Քախտիյարը միակ հուսալի ուժն էր ընդդեմ Արուդ ադ-Ղաուլայի: Քախտիյարին խաբելով և Արուդ ադ-Ղաուլայի դեմ նրան շարունակ օժանդակելու խոստումներ տալով, Հասամվայիը⁴ իր դիրքերն ամրապնդելու նպատակով, ինչպես երևում է, միաժամանակ նման գործարքների մեջ էր մտել Քուի մյուս իշխանների հետ: Ակտիվ դիր խաղալով բուն Քուիների միջև ծագած հակասությունները խորացնելու հարցում՝ Հասամվայիը քանում էր ձախտել բուական միացյալ իշխանության ստեղծման ծրագիրը: Իրն Միսրապայիը,

¹ Ibu Miskawaihi, II, p. 361-364.

² Կ. Քրքեղյան, էջ 246:

³ Տես՝ Ibu Miskawaihi, II, p. 364-366, 371, 375-376.

⁴ Նույն տեղում:

դիպուկ նկատելով այդ ամենը գրում է. «Հասանձվայից սիրում էր խախտել միաբանությունը և պատականլի միասնությունը, քանզի նրա իշխանությունը գտնվում էր այս իշխանների (այսինքն՝ րոփների-Ա.Փ.) տիրապետության շրջանակներում»¹:

Բախտիյարին և նրա կողմնակիցներին քախքախելու համար հիջ. 336 (976/7) թ. Աղուղ աղ-Դատույան Ֆարսից շարժվեց Իրաք: Բախտիյարին աջակցելու և նրա հետ լավ հարաբերություններ պահպանելու նպատակով, Հասանձվայից Վասիտ (Իրաք) ուղարկեց մեկ հազարանոց բանակ իր երկու որդիների՝ Արդ առ-Ուազակի և Բադրի գլխավորությամբ²: Չմասնակցելով մարտական գործողություններին՝ նույն թվականին հետ վերադարձավ Արդ առ-Ուազակը: Իսկ 977/8 թվականին, երբ Բախտիյարը մտադրվեց ճանաչել Աղուղ աղ-Դատույայի գերիշխանությունը, Ջիրալ մեկնեց նաև Բադրը³:

Աղաքական Իրաքում և հարակից այլևայլ շրջաններում ակտիվ ռազմական գործողություններ ծավալելուց հետո հիջրի 369 (979/ 80) թ. Աղուղ աղ-Դատույան ծրագրեց հերքական արշավանքը դեպի Ջիրալ: Դրանով, ինչպես ցույց են տալիս նրանց նշուրերը, նա ձգտում էր նվաճել ոչ միայն Հասանձվայի տիրույթները, այլև քախքախել իր նորոցը՝ Ֆախր աղ-Դատույային, որը դաշինք էր կնքել Բախտիյարի հետ⁴: Մինչ նա մախսապատրաստվում էր, նույն թվականին Մարմազ րեդդում մեռավ քուրդ իշխան Հասանձվայից և Ջիրալ ներխուժելու համար տեղծվեց ամենանպատակալից պահը: Հասանձվայի մահը, ինչպես երևում է, քավական ոգևորեց Աղուղ աղ-Դատույային, որը, Իրն Միսքավայի խոսքերով, գտնում էր, թե ասպարեզից «վերացավ այն սատանան, որ թշմամանք էր սերմանել իր և նորայրների միջև»⁵: Պատմիչի ուշագրավ այս հաղորդումը վկայում է Բուխների հետ Հասանձվայի դիվանագիտական խաղերի և իր իշխանությունը պահպանելու ուղղությամբ նրա գործադրած քանքերի մասին:

¹ Նույն տեղում, էջ 365-366:

² Նույն տեղում, էջ 365, 376: Տե՛ս նաև Իրն Խալքում, IV, էջ 452:

³ Նույն տեղում, էջ 377-378:

⁴ Նույն տեղում, էջ 414-415:

⁵ Նույն տեղում, էջ 415:

Հասանվայիի մահից հետո սուր վեճեր առաջացան նրա յոթ որդիների միջև¹: Երանցից ոմանք հակվեցին Աղուղ աղ-Ղատուլայի, իսկ մի քանիսը՝ նրա եղբոր Ֆախր աղ-Ղատուլայի կողմը²: Օգտվելով առիթից՝ Աղուղ աղ-Ղատուլան մեծաքանակ զորքով Բաղդադից շարժվեց Ջիրբալ՝ վիճակը կարգավորելու նպատակով: Համարյա առանց դիմադրության նրան հանձնվեց Համադանը, իսկ Ֆախր աղ-Ղատուլայի շատ զորավարներ և Հասանվայիի կողմնակիցներն անվտանգություն խնդրեցին Աղուղ աղ-Ղատուլայից: Գրավելով Համադանը, Ռևյո և այլ շրջաններ՝ մասնատակեց նաև Նեհավանդը, Դիմավարը և Մարմաջ քերդը, ուր գտնվում էր քուրդ իշխանի որդիներից միայն Բախտիյարը³: Նվաճելով Հասանվայիի մի քանի քերդեր՝ Աղուղ աղ-Ղատուլան քաղաքնց Մարմաջում նրա ունեցած մեծաքանակ հարստությունը և քրդերի իշխան նշանակեց նրա տղաներից ամենազործույա և խելացի Բադր իբն Հասանվայիին⁴: Այս առիթվ իբն ալ-Ջաուզին գրում է, որ Աղուղ աղ-Ղատուլան Բադրին տրամադրեց «Ջիրբալի իշխանությունը՝ Համադանը, Դիմավարը, Բորոջիբը, Նեհավանդը, Ասադարադը և այլ վայրեր»⁵:

Իբն ալ-Ասիբը նշում է, որ «Բադրի տիրապետությանն էին ենթարկվում Մարուրխվաստը, Դիմավարը, Բորոջիբը, Նեհավանդը, Ասադարադը, մի հատված Միվազի շրջանից և դրանց միջև նրանք քերդերն ու տիրույթները»⁶: Նման վկայություն հարողում է նաև Շարաֆ Խամ Բիդլիսին գրելով, որ «Բադրին ենթարկվում էին քուրդ ամրոցները, լեռները և դաշտավայրերը՝ Դիմավարից մինչև Միվազ, Խուզիստան, Բորոջիբը, Ասադարադ և Նեհավանդը»⁷: Այս առիթվ պետք է ասել, որ վերը նշված հեղի-

¹ Նույն տեղում, էջ 415: Տե՛ս նաև իբն ալ-Ասիբ, VII, էջ 101, իբն Խալլոմ, IV, էջ 454, 513:

² Նույն տեղում:

³ Ibn Miskawinihi, II, p. 415-416, Abu Shuja Radrawazi, III, p. 9-10: Տե՛ս նաև իբն ալ-Ասիբ, VII, էջ 102, իբն Խալլոմ, IV, էջ 513-514:

⁴ Նույն տեղում: Տե՛ս Cl. Cahen, Hamaşayih, p. 258.

⁵ Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 271:

⁶ Իբն ալ-Ասիբ, VII, էջ 274:

⁷ Шафарф-хан Багдади, Шафарф-наме, I, с. 91.

նակների նկարագրամ տարածքները Բաղրին ենթարկվեցին ոչ քն սկզբից, այլ ավելի ուշ, երբ մահացավ Աղուղ աղ-Ղաուլյան: Վերջինս, ինչպես վկայում են մեր ձեռքի տակ եղած նյութերը, Բաղրին ինքնավար իշխանություն տվեց միայն քրդական շրջանում և զորք տրամադրեց տվյալ տարածքներում կարգուկանոն հաստատելու, ինչպես նաև քրդական ցեղերի ներքին հակասություններին վերջ տալու համար¹: Վասալական իրավունքով հորը փոխարինում Բաղրի (979-1015թթ.) դեմ հիջրի 370 (980/1) թ., քրդերի օգնությամբ, սկսեցին դավեր նյութել մյուս եղբայրները: Աղուղ աղ-Ղաուլյան ստիպված եղավ զորք ուղարկել Բաղրին օգնելու և դավադիրներին հակահարված տալու համար: Նա ձերբակալեց Հասամվայի տղաներին և մահվան դատարարակեց բոլորին²:

Այսպիսով, Բուի իշխան Աղուղ աղ-Ղաուլյայի աջակցությամբ Բաղրին հաջողվեց առանց դժվարությունների, Դինավար կենտրոնով, տիրել Ջիրալի որոշ շրջաններին և ձևոնամուխ եղավ իր իշխանության ներքին կյանքը կարգավորելու գործին: Այդ ամենի համար էլ Բաղրը մինչև վերջ երախտապարտ մնաց Աղուղ աղ-Ղաուլյային, որը, ինչպես իրավագիտորեն նշում են Իբն Բասիրն ու Իբն ալ-Ջաուզին, հնարավոր դարձրեց նրա՝ իշխանության գլուխ անցնելը³: Ուստիև, պատահական չէ, որ Բաղրն իր մոր և Աղուղ աղ-Ղաուլյայի համար զոհարերություններ էր կատարում՝ ուխտագնացության էր ուղարկում տարեկան քսան մարդ՝ այդ նպատակին տրամադրելով հազար դինար⁴:

983 թվականին Աղուղ աղ-Ղաուլյայի մեռնելուց հետո, Բուիների միջև ծագած խոր հակասությունների հետևանքով, սկիզբ առավ նրանց իշխանության աստիճանական քայքայումը⁵: Այդ ամենը հնարավորություն տվեց նաև Բաղրին որոշ յսպիով ավելի ազատ գործելու Ջիրալում և հարակից շրջաններում: Եթե մինչ

¹ Abu Shuja Rudrawari, p. 9: Տես՝ Իբն ալ-Ասիր, VII, էջ 112:

² Նույն տեղում, էջ 11-12: Տես նաև՝ Իբն ալ-Ասիր, VII, էջ 104, Իբն Խալլուն, IV, էջ 513-514:

³ Իբն Բասիր, XI, Կահիրե, 1932 թ., էջ 354, Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 272:

⁴ Նույն տեղում: Տես՝ Abu Shuja Rudrawari, p. 287-291.

⁵ Կ. Բաքրլեման, էջ 246:

այդ խիստ սահմանափակ էր նրա իշխանությունը, ապա այժմ սահեղձվեցին ռոյոբ պայմաններն ընդարձակելու իր տիրապետության շրջանակները: Դրա հետ միասին նա ի վիճակի չեղավ, և հմարավոր էլ չէր, խզելու իր հարաքերությունները Բուիների հետ: Այդու ադ-Ղատուլայի մահից հետո Բաղրն սկսեց հարել նրա եղբորը՝ Ֆախր ադ-Ղատուլային, որը Մուայիդ ադ-Ղատուլայի մահից հետո խորասամից վերադարձավ Իսֆահան և Ռեյ¹: Երբ հիջրի 373 (983/4) թ. Դուհի Զուրդար շրջանում ապստամբեց թուրդ Բարզիկան ցեղի ներկայացուցիչ Սահմուդ իրն Դանիվ ալ-Բարզիկանին և ամրացավ Հաֆթամ ամրոցում, Ֆախր ադ-Ղատուլան, ամհաջող երկու փորձերից հետո Բաղրին մեղադրեց Բարզիկան քրդերի այդ ոտնձգությունների համար և իրամայեց նրան՝ ճնշելու խտվարարների ելույթը²: Բաղրի միջամտությամբ էլ՝ 984թ. սկզբներին հաշտություն կնքվեց Ֆախր ադ-Ղատուլայի և ապստամբների միջև: Սակայն 985/6թ. Բուի իշխանը կրկին հարձակվեց նրանց վրա և զերի վերջրեց խտվարարների առաջնորդին, որն էլ մտաով ստացած հուժկու հարվածից³:

Բաղրի հակվածությունը Ֆախր ադ-Ղատուլայի կողմը խիստ քշմամարար ընդունեց Այդու ադ-Ղատուլայի որդին՝ Ծարաֆ ադ-Ղատուլան: Վերջինս հարմար առիթ էր որոնում՝ Ջիրալ ներխուժելու և Բաղրին քախջախելու համար⁴: Հիջրի 377 (987/8) թ., երբ նա հաստատվեց Բաղրադում, որոշեց այնուամենայնիվ դիմել այդ քայլին: Կարաբագին ալ-Ջահշիյարիի գլխավորությամբ Ծարաֆ ադ-Ղատուլան մեծաթիվ զորք ուղարկեց Ջիրալ: Դրանով Բուի իշխանը ցանկանում էր ազատվել թե՛ Բաղրից և թե՛ իր զորքերի գլխավոր իրամանատար Կ. ալ-Ջահշիյարիից, որը քավական հանդուզն էր դարձել⁵: Երկու կողմերի զորքերը հանդիպեցին Կարմասինի (Քերմանշահի) շրջանում, ուր շուտով փախուստի դիմեց Բաղրը: Բուական զորքերը, ինչպես վկայում են

¹ Իբն Խուլլուն, IV, էջ 514:

² Իբն ալ-Ասիբ, VII, էջ 119:

³ Նույն տեղում, էջ 120:

⁴ Տե՛ս Abu Shuja Rudawaci, p. 139-140; Իբն ալ-Ասիբ, VII, էջ 132; Իբն Խուլլուն, IV, էջ 514:

⁵ Նույն տեղում:

եղած նյութերը, իջևանեցին նույն տեղում և ընդամենը մեկ ժամ հետո համկարծակի հարձակման անցավ Բաղրը՝ հակառակորդին հնարավորություն չտալով դիմադրելու: Նա շատերին սպանեց և բռնագրավեց դաշխանական զորքի ողջ ունեցվածքը: Խուճապի մատնված Կ. ալ-Ջահշիյարին փոքրաթիվ խմբով հագիվ փրկվեց և շտապեց Բաղդադ: Շատ կարևոր հաղթանակ տարած Բաղրն անցավ իր վաղեմի ծրագրի իրականացմանը. նա գրավեց ամբողջ Ջիրալը և, ինչպես նշում են արաբալեզու՝ աղբյուրները, հզորացավ ու անհնազանդ դարձավ¹:

Այս իրադարձությունից հետո քուրդ իշխանը ձեռք բերեց քաղաքական անկախություն, որը մինչ այդ, ինչպես տեսանք, այսպես թե այնպես, կախման մեջ էր Բուխնեբից: Այնուհանդերձ, հզորանալով, նա գերադասեց հարաբերությունները չվատարացնել իր գլխավոր մրցակիցներից մեկի՝ հատկապես Ֆախր ադ-Ղաուլայի հետ՝ նրան օգնություն ցույց տալով անհրաժեշտության դեպքում²: Վերջինիս մահից հետո Բաղրը նույնիսկ նշանակվեց նրա կնոջ և անչափահաս որդու խնամակալն ու խորհրդատուն³: Ֆախր ադ-Ղաուլայի մահից հետո Բաղրը քաղաքացիական հարաբերություններ հաստատեց այս անգամ Բուի մեկ այլ իշխանի՝ Բահա ադ-Ղաուլայի հետ⁴:

Չմայած Բաղրի և Բահա ադ-Ղաուլայի հարաբերությունները շարունակեցին մնալ բարիդրացիական, քայք վերջինիս վեզիր Ամիդ ալ-Ջուլուշը հիջրի 396 (1006) թ. դեկմիկ մի զորավարի գլխավորությամբ զորք ուղարկեց՝ Բանդանիջիի քրդերին ջարդելու և կարգի հրավիրելու համար: Մակայն ապարդյուն: Զրդական մեծաթիվ զորախմբերը խայտառակ պարտության մատնեցին Բահա ադ-Ղաուլայի զորքին⁵:

X դարի վերջերին և XI դարի սկզբներին, դատելով սկզբնաղբյուրների լուծությունից, Բաղրի և Բուի իշխանների հարաբերություններում, ինչպես նաև նրա իշխանության մերթին կյանքում

¹ Նույն տեղում:

² Իբն ալ-Ասիր, VII, էջ 139:

³ Cf. Cahen, *Hassanwayh*, p. 258

⁴ Abu Sbuja Rudhrawari, p. 310.

⁵ Իբն ալ-Ասիր, IV, էջ 229:

Էական տեղաշարժեր տեղի չունեցան: Քուրդ ամիրան շարունակեց քաբիդըացիական հարաբերություններ պահպանել, մասնավորապես, Բուի Բահա աղ-Դաուլայի հետ: Հաճախ կամա թե՛ ակամա նա մասնակից էր դառնում տարածաշրջանային ռազմաքաղաքական տարրեր իրադարձություններին: Ելնելով իր իշխանության անվտանգությունից և իր դիրքերն ամրապնդելու անհրաժեշտությունից՝ Բաղդը հարկադրված էր հարաբերվել Բուիների թե՛ կողմնակիցների և թե՛ նրանց հակառակորդների հետ:

Հիջրի 397(1006/7) թ. Իրաքի պաշտոնանկ կառավարչի՝ Աբու Ջասաֆար ալ-Հաջաջի խնդրանքով Բաղդը մեծաթիվ զորք ուղարկեց Բաղդադի վրա հարձակում գործելու համար: Ինչպես երևում է սկզբնաղբյուրների հաղորդումներից, Բաղդը նման քայլի դիմեց, որովհետև Բահա աղ-Դաուլայի իրաքյան նոր կառավարիչ Աբու Ալի Ամիդ ալ-Ջուլուշը նույն թվականին Խորասանի ճանապարհների վերակացու էր նշանակել նրա հակառակորդին՝ քուրդ Աննազյան Աբու-լ-Ֆաթիմ: Իր դաշնակից Բուի իշխանի իրաքյան կառավարչի պաշտոնում նման մարդու նշանակումը խիստ զայրացրեց Բաղդին: Այդ էլ պատճառ դարձավ, որ նա րազեխրաց մասնակցի Բաղդադի պաշարմանը, որը տևեց մեկ ամիս: Պաշարմանն, անշուշտ, մասնակցում էր նաև Բուի իշխանի Իրաքի նախկին կառավարիչ Աբու Ջասաֆար ալ-Հաջաջը:

Բաղդի զորքի կազմում Արբասյան մայրաքաղաքի գրավմանը մասնակցում էին նաև ընդդիմադիր քուրդ ամիրաներ Հինդի իբն Սահադին, Աբու Իսա Եադի իբն Մուհամմադը, Վառամ իբն Մուհամմադը և արաբ դժգոհ տարրերը՝ թվով ավելի քան 10 հզ մարդ¹:

Քուրդ Աբու-լ-Ֆաթի իբն Աննազը շտապեց Բաղդադ՝ Աբու Ալի Ամիդ ալ-Ջուլուշի հետ քաղաքից մեկ փարսախ հեռավորության վրա: Գտնվող հակառակորդների միացյալ զորքերին հակահարված տալու նպատակով: Բաղդադի պաշտպանությունը քուրդ Աննազյան ամիրայի հետ միասին, ինչպես նշվեց, մեկ ամիս իրականացրեցին նաև քյուրքական զորաջոկատները: Մակայն, շուտով լուր ստացվեց Բահա աղ-Դաուլայի բանակից Բասրայի ընթոստ տեղ Աբու-լ-Արբաս իբն Վասիիի կրած պարտության և դեպի Բաղդադ շարժվող Բուական զորքերի մասին: Դա էլ խուճապ առաջացրեց Բաղդադը պաշարող զորքերում: Ա-

¹ Իբն ալ-Ասիր, VII, էջ 232-233; Իբն Խալդուն, IV, էջ 514-515:

րու Ջա՛ւֆայր ալ-Հաջաջը քուդդ ամիրա Արու Իսայի հետ մեկ-մեկ Հուլվան և սկսեց քամակցել Բահա ադ-Ղաուլայի հետ՝ հաշտուրյուն կնքելու համար: Այդ ընթացքում Բաղըը հասցրեց Աննազյան Արու-լ-Ֆաթիից խելի Հուլվանն ու Կարմասինը: Աննազյան Արու-լ-Ֆաթիը հեռացավ այնտեղից և հաստատվեց Ուկայիճների իշխան Ռաֆի՛ իբն Մուկ՛անի մոտ:

Վերջինս Բաղըը խնդրեց, որ Արու-լ-Ֆաթիին հեռացնի իր տի-րույրից, քայց սպարդյուն: Թեև Ուկայիճների և Հասանվայիճների միջև առկա էին բարիդրացիական հարաբերություններ, քայց ժխտական պատասխան ստանալով Ռաֆի՛ իբն Մուկ՛անից, Բաղըը գորք ուղարկեց Տիգրիսի արևելյան շրջանները, այրեց նրա բնակարանը Մատիրայում, գրավեց նրա Բարդան քերդն ու զերեվարեց շրջանի ազգաբնակչությանը: Այս իրադարձություններից հետո քուդդ ամիրա Արու-լ-Ֆաթի իբն Աննազը հարկադրված եղավ մեկնել Բաղդադ՝ Ամիդ ալ-Ջույուշի մոտ, որը նրան պատիվների արժանացրեց և խոստացավ աջակցել ընդդեմ Բաղը իբն Հասանվայիի՝ Բասրայի տիրոջ Արու-լ-Արրասիին ցախջախելուց հետո¹:

Այս իրադարձությունները, անշուշտ, քավական սրեցին Բահա ադ-Ղաուլայի և Բաղրի փոխհարաբերությունները: Նույն քվականին (1006/7թ.) քուդդ իշխանը եղեք հազարանոց զորք տրամադրեց Բասրայի ըմբոստ տիրոջը՝ Բուի իշխանից Ահվազը խելու համար: Հայտնի է, որ Բասրայի տերը ռազմական մեծ հաջողությունների էր հասել ընդդեմ Բահա ադ-Ղաուլայի: Վերջինս անհանգստացած Արու-լ-Արրասի նվաճումներով, Ֆարսից մեկնեց Ահվազ՝ Խուզիստանը պաշտպանելու նպատակով: Որոշ ժամանակ անց, ցախջախելով Իրաքի Բուի կառավարիչ Ամիդ ալ-Ջույուշին, Բասրայի տերը հայտնվում է Խուզիստանում: Խուսսահելով վերահաս պարտությունից՝ Բահա ադ-Ղաուլան հեռանում է Ահվազից, ցանկություն ունենալով մեկնել Ֆարս: Մական, նրա կողմնակիցները խորհուրդ չեն տալիս այդ անել՝ փորձելով հակահարված տալ Բասրայի տիրոջը: Այն ժամանակ Բաղըը՝ Բասրայի տիրոջը օգնելու համար 3 հզ. զորք է ուղարկում:

Բուական զորքից պարտություն կրելով՝ Բասրայի տերը դիմում է փախուստի և փորձում ապաստան գտնել Բաղրի մոտ:

¹ Նույն տեղում:

Քուֆայից անցնելով Տիգրիսը՝ նա հասնում է Խանիկին, որի տեղ Ջա'աֆար իրն ալ-Ավանց Քաղրի վասալն էր: Իրն ալ-Ավանցը ընդունում է Արու-լ-Արբաս իրն Վասսիլին, պատվում և զգուշացնում, որ հանկարծ ծուղակ չընկնի: Խանիկիներն իրն Վասսիլին ձերբակալում է քուրդ Աննազյան Արու-լ-Ֆաթիլը, տեղափոխում է Բաղդադ, ապա՝ ճանապարհում Բահա աղ-Ղատուլայի մոտ: Վերջինիս մարդկանցից մեկն էլ ճանապարհին սպանում է Բասրայի տիրոջը և գլուխը տանում Բուի իշխանին¹:

Բասրայի տիրոջն սասպարեզից վերացնելուց հետո Բուի Բահա աղ-Ղատուլան որոշում է հաշիվները մաքրել Քաղրի հետ՝ պատճառած անհամզատության և Իրն Վասսիլին օժանդակելու, ինչպես Քաղրադի վրա կատարած հարձակման և չուրջ մեկ ամիս այն պաշարելու համար: Բահա աղ-Ղատուլան հրամայում է Ամիլ ալ-Ջույուշին՝ զորք մախսապատրաստել Քաղրին հակահարված տալու համար: Ջորջերը վերակազմավորելուց հետո Ամիլ ալ-Ջույուշը շարժվում է Ջիրալ: Ջունդեշարոյում, խուսափելով մարտական ընդհարումներից, Քաղրն սկսում է քանակցել Բուի կատավարիչ Ամիլ ալ-Ջույուշի հետ: Քաղրը փորձում է նրան համոզել, որ պատերազմն անօգուտ է՝ պարտության կամ հաղթանակի դեպքում միևնույն է՝ ինքը չի տուժելու, ունի անառիկ քերդեր, հսկայական հարստություն: Ապա հայտնում է, որ, եթե ինքը դաշնակցի Բուիների հակառակորդ արաբ Ուկայիների հետ, որոնք այնքան տարածքների են տիրել Բաղդադից մեկ փարսախս հեռավորության վրա, ապա շատ ավելի ծանր վիճակի մեջ կարող է հայտնվել Ամիլ ալ-Ջույուշը: Բանակցությունների արդյունքում Քաղրը Բուի կատավարչին առաջարկում է ցանկացած դրամական փոխմատուցում՝ իր տիրոջը Բահա աղ-Ղատուլային գոհացնելու համար: Ամիլ ալ-Ջույուշը Քաղրից վերցնում է այնքան զուճար, որ ծախսել էր զորքը վերակազմավորելու և մախսապատրաստելու վրա: Դրանով էլ երկու կողմերը հաշտություն են կնքում՝ խուսափելով ռազմական ընդհարումներից:

Դրանից հետո, ինչպես վկայում են մեր ձեռքի տակ եղած մյուսերը, Քաղրը սկսում է հարաբերություններ հաստատել Բուի այլ ընտանիքների հետ: Նույն 1006/7 թ. Քաղրը զորք է տրամադրում Բուի Մաջդ աղ-Ղատուլա իրն Ֆախր աղ-Ղատուլայի մո-

¹ Իրն ալ-Ասիք, VII, էջ 233-234:

րը՝ որդու՝ Մաջդ աղ-Ղատուլայի հետ ունեցած վեճի արդյունքում: Բուռի այրին սպաստան է գտնում Քաղրի մոտ, որը նրան օգնում է վերադառնալու Ռեյ: Եամս աղ-Ղատուլայի հետ, որը գլխավորում էր Համադանի զորքերը, Քաղրը նրկաք մարտերից հետո զբաղվում է Ռեյը և ձերբակալում Մաջդ աղ-Ղատուլային, որին մայրը շղթաշակալա քանտարկում է: Այս իրադարձություններից հետո Քաղրը վերադառնում է իր տիրույթը: Եուրջ մեկ տարի Մաջդ աղ-Ղատուլային փոխարինում էր Եամս աղ-Ղատուլան: Վերջինս զայրացավ այն քանից հետո, երբ մայրը ազատ արձակեց Մաջդ աղ-Ղատուլային և եղբորը ցախցախելու համար ինքը ևս դիմեց Քաղրին՝ իրեն ռազմական աջակցություն ցույց տալու խնդրանքով¹:

Հիցրի 400 քվականից (1010թ.) Հասանվայինների իշխանությունում սկիզբ առած մերքին հակասությունները ոչ միայն բուլացրեցին Քաղրի դիրքերը, այլև՝ ի վերջո հանգեցրեցին նրա սպանությանը (1015թ.): Այս խժողությունների պատճառը դարձավ նրա որդին՝ Հիլալը, որը լուրջ հավակնություններ դրսևորեց հոր տիրույթների և հարստության նկատմամբ:

Մեր ձեռքի տակ եղած նյութերը վկայում են, որ Հիլալի մայրը Եադիմջան քրոջից էր, որից Քաղրը քաժամվեց որդու ծնվելուց անմիջապես հետո: Այդ ցեղի ներկայացուցիչն էր մահ Քաղրի հակառակորդը, մեզ ծանոթ Աբու-լ-Ֆաթի իբն Աննազը: Հիլալն սուրեց մոր խնամքի տակ և գրկվեց հոր դաստիարակությունից: Դրա հետևանքով էլ մա քավական հանդուզն էր դարձել և հաշվի չէր նստում հոր հետ:

Ձգալով այդ՝ Քաղրը նրան որպես ավատատիրույթ տվեց Մամադանը: Հիլալը սիրահոժար ընդունեց հոր որդուունը և հնարավորություն ունեցավ ազատ և ինքնուրույն գործելու: Եուտով սրվեցին Հիլալի և հոր հարաբերությունները՝ Եաիրեզուրի նկատմամբ դրսևորած հավակնությունների և նրա տիրոջ՝ իբն ալ-Մադիին վատ վերաբերվելու համար:

Այս շրջանի տերը Քաղրի կուսակալն էր, և, քնակամարաք, մա չէր կարող համոզուծել նրա որդու մեծան արարքը: Քաղրն սպառնաց Հիլալին, փորձելով հասկացնել, որ նրա յուրաքանչյուր քայլն ուղղված է իր դեմ: Մակայն, ապարդյուն. հոր սպառ-

¹ Նույն տեղում, էջ 234, 237-238:

նախորդ հակառակ արդյունք տվեց: Հիլալը գորք հավաքեց, պաշարեց Շահրնգուրը, գրավեց այն և սպանեց Իբն ալ-Մադիին ու զերեկարեց քնակչությամբ: Հիլալը, որի այդ արարքն առաջացրեց հոր զայրույթը, սկսեց սիրաշահել Քաղդի զինակիցներին, կաշառել նրանց, որի հետևանքով շատերն անցան նրա կողմ: Քաղդը միջոցներ ձեռնարկեց համարուզն տղային կարգի հրավիրելու համար: Երկու կողմերը՝ հայրն ու որդին համղիպեցին Դինավարի մտտակայքում: Մարտի դաշտում Քաղդի զորքերից շատերն անցան Հիլալի կողմը, Քաղդը զերի ընկավ:

Չնայած Հիլալին խորհուրդ տրվեց ոչնչացնել հորը, բայց նա այդ քայլին չդիմեց: Հանդիպման ժամանակ Հիլալը հորն առաջարկեց մնալ ամիրայի իր պաշտոնում, պայմանով, որ իրեն վստահի գորքերի հրամանատարությունը: Քաղդը հրաժարվեց, հավանաբար հետագայում որդուց վրեժ լուծելու՝ նրա հանդուժման և պատճառած վնասների համար, խնդրեց իրեն մի ամբողջ տրամադրել իր կյանքի վերջին շրջանը այնտեղ անցկացնելու նպատակով: Հիլալը բավարարեց հոր խնդրանքը՝ տալով որոշակի քանակությամբ մահ հարստություն: Հաստատվելով ամրոցում՝ Քաղդը այն վերանորոգեց և սկսեց դավեր նշուրել որդու դեմ: Նա կապվեց իր գլխավոր հակառակորդներից մեկի՝ քուրդ Աբու-լ-Ֆարի իրն Աննազի և Ասադաբադում գտնվող Աբու Իսա իրն Շադիի հետ, նրանց հրահրելով որդու դեմ: Իրն Աննազը գրավեց Քերմանշահը, իսկ Իբն Շադին՝ Մարուխվաստը, որը քաղանկուց հետո շարժվեց դեպի Նեհավանդ, ուր գտնվում էր Աբու Քաթր իրն Ուալիլը: Հետապնդելով նրան՝ Հիլալը ճակատամարտ տվեց դայլամիներին, սպանեց 400 քուրդ, որոնցից 90-ը բարձրաստիճան իշխաններ էին: Իսա իրն Շադին հանձնվեց Հիլալին, որին էլ ներում շնորհվեց:

Հիլալին քախջախելու նպատակով Քաղդը դիմեց Բուի Քահա ադ-Դաուլային: Վերջինս Ֆախր ալ-Մուլք Աբու Ղալիբ անունով մի զորավարի գլխավորությամբ մեծաքանակ զորք ուղարկեց՝ Քաղդին օգնելու համար: Քուրդ Իսա իրն Շադին, որը Հիլալի մոտ էր, խորհուրդ է տալիս նրան՝ չդիմադրել բուսական զորքին և հնազանդվել, տալով որոշակի քանակությամբ գումար: Հիլալը չի հավատում զերի ընկած քուրդ իշխանին, մտածելով, որ դա խաբկանք է, և գլխատում է նրան: Բուսական զորքի հետ ունեցած առաջին հանդիպումից Հիլալը զգում է պարտության ան-

խուսափելիությունը և զոչում իր արածի համար: Նա սկսում է բանակցել բուսական զորահրամանատարի հետ, հայտնում իր հնազանդության մասին: Տեղի ունեցածի վերաբերյալ Ֆախր ալ-Մուրր Աբու Ղալիբը հայտնում է Բաղդին՝ սպասելով նրա ցուցումներին: Բաղդը՝ որդու կողմից դա զնահատում է որպես խորամանկ քայլ և պնդում է նրա դեմ շարունակել ռազմական գործողությունները:

Բուսական բանակը, կրկին հարձակման անցնելով, գերի է վերցնում Հիլալին, որն էլ խոստանում է, իրեն՝ հորը շահմանելու պայմանով, հայտնել իր ամբողջ ներխուժելու բոլոր զաղտնիքները: Որոշակի դիմադրությունից հետո անձնատուր է լինում նաև Հիլալի մայրը, որը զանվում էր ամբողջում:

Բուսական զորքի հրամանատարը ներխուժում է ամբողջ, բռնազրավում է մեծաքանակ հարստություն՝ 40 հզ. «Բաղրա» դերհեմ, 400 ոսկյա «Բաղրա» և այլ քանկարժեք ադամանդներ, հազուստ և զենք: Այս ամբողջը հանձնվում է Բաղդին¹: Հետաքրքիր է, որ բռնազրավված հարստության մասին լուրերը այնքան տարածում զտան, որ ժամանակի բանաստեղծները դրան կասիղներ ձոնեցին²: Իրն Խալլուրնի նրկում հայտնաբերված հարստության մասին հաղորդվում են այլ տեղեկություններ: Օրինակ, նա գրում է, քե ասում են, որ երբ Բուիները ներխուժեցին Բաղդի ամբողջ, զանազան հարստությունների թվում հայտնաբերեցին քառասուն հազար «Բաղրա» և 400 հզ «Բաղրա» դերհեմ³:

Անկախ աղբյուրներում վերը նշված թվերի հակասությունից խիստ ուշագրավ է, որ Բաղդն իր անունով նաև դրան էր քողարկում⁴: Հանգամանք, որը ևս մեկ անգամ հաստատում է Ջիրալդում նրա եզոբանալու և փաստական անկախության մասին:

Այսպիսով, Բաղդի ու որդու միջև ծագած հակամարտություններին վերջ տրվեց Բուի իշխան Բահա ադ-Ղատուլայի միջա-

¹ Իրն ալ-Մախբ, VII, էջ 247-248, Իրն Նաղդան, IV, էջ 515-516:

² Նույն տեղում:

³ Իրն Խալլուրն, IV, էջ 515-516: Տես նաև՝ Իրն ալ-Չաուդի, VII, էջ 273:

⁴ Բաղդի բազարված դրամներն առաջին անգամ հասպարակվել են եվրոպացի արևելագետ-գրամազետ Գ. Մալլոթի կողմից: Տես՝ Cl. Cahen, Hasnawayh, EI, III, p. 258.

մտությամբ: Գա էլ Բաղրին պարտավորեցրեց Բուի իշխանի հանդեպ ունենալ քարեկամական դիրքորոշում, հաճոյամալ և անել ամեն ինչ՝ նրան զոհացնելու համար: Թերևս դրանով էլ պետք է բացատրել այն, որ մա Շահրեզուրն ուղղակի հանձնեց Ամիդ ալ-Ջույուշին, որն էլ նշանակեց իր կուսակալներին¹: Հիջ. 404թ. (1014թ.) հուլիսին Բաղրի բռնանց՝ Տահիր իրն Հիլալին հաջողվեց Շահրեզուրից դուրս փոնդել Ֆախր ալ-Մուլքի զորքը: Շահրեզուրը չուրջ 2 տարի Տահիր իրն Հիլալի տիրույթը դարձավ, որը 1016 թ. անցավ քուրդ Աննազլաններին²:

Վերջ նշած իրադարձություններից հետո Բաղրի և որդու հարաբերությունները շարունակեցին մնալ խիստ թշնամական: Այդ է վկայում այն փաստը, որ մա այդպես էլ իր որդուն չազատեց Բաղդադի քանտից: 1015թ. Հիլալին հաջողվեց ազատվել քանտարկությունից, հոր սպանությունից հետո՝ Ջիբրայում ստեղծված անկախում և խառը վիճակում³:

Հայտնի է, որ Բաղրի և որդու հակասությունները քաղաքաբար անդրադարձան Հասանվալիների իշխանության ներքին կյանքի և նրա դիրքերի ամրապնդման վրա: Հոր և որդու այդ երկպառակություններն ու միմյանց դեմ ռազմական գործողությունների ծավալումը որոշակի արամադրություններ առաջացրեցին նաև քանակում: Այդ ամենն ի վերջո հանգեցրեց Բաղրի սպանությանը, որը տեղի ունեցավ 1015թ.:

Արաբալեզու սկզբնաղբյուրները հայտնում են, որ նույն թվականին Բաղրը՝ քուրդ Հուսեյն իրն Մասուդի տիրույթը զբաղեցրեց մպատակով, պաշարեց նրա «Քուսհար» ամրոցը: Բաղրի կողմնակիցները զայրույթով ցնդունեցին ձեռանն այդ գործողությունը իրականացնելու միտքը, և որոշեցին վերջնականապես նրան վերացնել ասպարեզից: Թեպետև այդ մասին հայտնվում է Բաղրին, քայց մա չի հավատում և շարունակում է պաշարել ամրոցը: Եռուտով Ջուրկան քրդական ցեղը դավադրաբար սպանում Բաղրին, քալանում զորքը և հեռանում: Քուրդ Հուսեյն իրն Մասուդը հրամայում է Բաղրի դիմ քաղել Ալիի գերեզմանոցում:

¹ Իրն ալ-Ասիք, VII, էջ 271, Իրն Խալդան, IV, էջ 516:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 273:

Բաղրի սպանությունից հետո, ինչպես երևում է, լուծարվում է նրա գործը:

Լսելով պապի սպանության մասին՝ Տահիր իրն Հիլալը Շահրեզուրից շտապում է Դինավար՝ իշխանությանը տիրելու համար: Սակայն, ապարդյուն. Բուի Շամս աղ-Դաուլայի գործի հետ տեղի ունեցած մարտերում Տահիրը գերի է ընկնում և բանտարկվում Համադանում: Շամս աղ-Դաուլան, տիրելով որոշ շրջանների, բռնագրավում է նրա ունեցվածքը, որը նա կուտակել էր՝ փոխարինելով հորը՝ Հիլալին: Այնուհետև, Լուրերը և Շահնցան քրոջեր ճանաչեցին քուրդ Ամնազյան իշխան Աբու աշ-Շաուրի գերիշխանությունը:

Ջիրալում տեղի ունեցող ռազմարդարական անցուղարձերի նկատմամբ անտարբեր չի մնում Իբրաի Բուի տիրակալ Մուլթան աղ-Դաուլան: Նա իսկույն քանոցից ազատում է Բաղրի որդի Հիլալին, գործ արամադրում և հանձնարարում Շամս աղ-Դաուլայից հետ վերցնել գրավված տարածքները: Վերջինիս գործի դեմ 1015թ. ապրիլ ամսին տեղի ունեցած ճակատամարտում Հիլալի կողմնակիցները դիմում են փախուստի: Հիլալին, որի գործը վերադառնում է Բաղդադ, գերի են վերցնում և սպանում մարտի դաշտում¹: Այս հաղթանակից հետո Շամս աղ-Դաուլան նվաճում է Բաղրի բոլոր տարածքները, ընդարձակում իր իշխանությունը և վերադառնում Համադան:

Ինչպես նշվեց վերևում, ըստ արաբ պատմիչների, Բաղրին էին պատկանում Սարուրխվաստը, Դինավարը, Բորոջիդը, Նեհավանդը, Ասադարադը և Անվազից մի մասն ու դրանց միջև ընկած ամրոցներն ու շրջանները²: Բաղրին, ինչպես հայամի է, հաճախ ենթարկվում էր Հուլվանը և Ժամանակ առ Ժամանակ նաև Շահրեզուրը:

Հիշ. 406թ. (1016թ.) Շամս աղ-Դաուլան ազատ է արձակում Բաղրի բռնանը՝ Տահիր իրն Հիլալին, որն էլ ճանաչում է Բուի իշխանի գերիշխանությունը: Որոշ ժամանակ անց Տահիրը, իր շուրջ համախմբելով համապատասխան կողմնակիցների, մարտական գործողությունների է դիմում ընդդեմ իր ընտանիքի վաղեմի հակառակորդների՝ Հուլվանի քուրդ Ամնազյանների: Երկու

¹ Նույն տեղում, 272-274:

² Նույն տեղում:

անգամ պարտության մատնելով Աննազյան իշխան Արու աշ-
Շաուրին՝ Տահիրը նրա հետ հաշտության է կնքում, ապա անուս-
նանում է նրա քրոջ հետ: Այնուհետև, Արու աշ-Շաուրը իր եղ-
բայր Սահիի վրեժը լուծելու համար դավադրաբար սպանում է
Տահիրին¹:

Այսպիսով, Բաղրի սպանությանը Հասանվայիների ընտանի-
քը աստիճանաբար վերացավ քաղաքական բառերարեմից, քնն
նրա հետնորդների ձևորում մնաց միայն Սարմազ ամբոցը:
Նրանց վերջին ժառանգորդը՝ Բաղր իրն Տահիր իրն Հիլալը սել-
ջուկյան Իբրահիմ Յաննալից, որպես կալվածք, ստացավ Գի-
նավարն ու Քերմանշահը²:

3. ՀԱՍԱՆՎԱՅԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Մեզ հասած սկզբնաղբյուրների նյութերը միաբերան վկայում
են, որ հատկապես Բաղր ամիրայի օրոք Հասանվայիների իշխա-
նությունը ծաղկում ապրեց: Ավելի քան 30 տարի (369-405թթ./979-
1015թթ) իշխանության գլուխ մնալով՝ նա աչքի ընկավ իր ճկուն
քաղաքականությամբ, խաղիֆայությունում լայն համրավ վայելեց,
որպես խելացի, արդարադատ և առատաձեռն իշխան³:

Այդ ամենի շնորհիվ էլ նա ճանաչվեց որպես Ջիքրայի լավա-
գույն և օրինակելի ամիրա, որի իշխանությունում տիրում էր
ներքին կայունություն և խաղաղություն⁴: Բաղրը հետևեց բանա-
կում կարգուկանոնին, պայքար մղեց իր այն կուսակալների դեմ,
որոնք իրենց գործունեությամբ խանգարում էին գյուղատնտե-
սության զարգացմանը⁵:

Մեզ հասած փաստական տվյալները միաժամանակ ցույց են
տալիս, որ Բաղրի օրոք Հասանվայիների իշխանությունում

¹ Նույն տեղում, էջ 280: Տես նաև՝ Իբն Խալլան, IV, էջ 516-517:

² Մարաթ-խաթ Բադաուք, Մարաթ-նամե, I, c. 92.

³ Abu Shuja Rudhravari, III, pp. 278-291, 297-299; Իբն ալ-Ասիթ, VII, էջ 104;
Իբն Խալլան, IV, էջ 514; Իբն Թաղիբիբիդի, IV, էջ 169, Իբն Զաուր, XI,
էջ 353-354, Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 271-272:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

գարգացում ապրեցին ինչպես գյուղատնտեսությունը, այնպես էլ ոռոգման համակարգն ու ամասնապահությունը: Օրինակ, ինքն իրրև խոշոր ավառատեր, ունեն ավելի քան քսան հազար գլուխ անասուն:

Իր խնչամիտ քաղաքականությամբ, ինչպես վկայում է Աբու Շուբա՝ առ-Ռուզրավարին, Բաղրը կարգի հրավիրեց Բարզիկան գետին, որն, ըստ պատմիչի, երկրի վրա թերևս ամենավատագույնը ցեղն էր, վերջ տվեց նրա ոռոգմական գործողություններին, որը բնակչությանն ու գյուղատնտեսությանը պատճառել էր մեծ վնասներ¹: Ինչպես նշվեց, հնարավոր բոլոր միջոցներով Բաղրը նպաստեց գյուղատնտեսության, հատկապես հացազգի կուլտուրաների զարգացմանը, որոնք թավազան անկում էին ապրել ավագակային հարծակույմների և պատերազմների հետևանքով²:

Համաձայն մեզ հասած տվյալների, քուրդ իշխանը զգալի ուշադրություն հատկացրեց նաև առևտրի զարգացմանը: Յուրաքանչյուր վայրում նա շուկա էր հիմնում, ուր, ինչպես դարձյալ նշում է Աբու Շուբա՝ առ-Ռուզրավարին, քերվում էին անհրաժեշտ բոլոր տեսակի ապրանքներ, որոնք և պարտադիր կարգով վաճառվում էին մատչելի գներով³: Նա հսկայական գումարներ հատկացրեց ճանապարհաշինարարությանը, վերահսկողությանը, ջրանցքների ու ջրհորների կառուցմանը:

Եղած տվյալները վկայում են, որ Բաղրը տարեկան հարյուր հազար դինար էր տրամադրում Մեքքայի և Մեդինայի ճանապարհների պահպանմանը, ջրերի մաքրմանը և ջրհորներ փորելու շինարարությանը⁴: Յուրաքանչյուր ջրի մոտ նա անպայմանորեն գյուղ էր հիմնում⁵, որը, ինչպես դժվար չէ ենթադրել, հեշտացնում էր ոռոգման գործը:

Մեր ձեռքի տակ եղած արարերեն վիճազիր արձանագրություններն իրենց հերթին ևս վերահաստատում են սկզբնաղբյուրների հաղորդումները՝ քուրդ ամիրայի շինարարական լայն գոր-

¹ Abu Shuja Radhrawazi, III, p. 288

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 290:

⁴ Իբն Քասիր, XI, էջ 354, Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 272:

⁵ Նույն տեղում:

ծումնություն մասին: Մինչև որս արևելագիտական շրջանակներին հայտնի են այդ կարգի քուֆի մի քանի արձանագրություններ, որոնք միաժամանակ վկայում են, որ ինչպես արաբամահմդական ամիրայություններում, այնպես էլ Հասանվայհների իշխանությունում արաբերենը համընթացում էր հաղորդակցության և գործավարության հիմնական լեզուն:

Քուրդ ամիրայի շինարարական վիճակի արձանագրություններից առաջինը հայտնաբերվեց 20-ական թթ. եվրոպացի վիճագրագետ Էռնեստ Հերցֆելդի կողմից¹: Արձանագրությունը, որը վերաբերում է կամրջի շինարարությանը, փորագրված է ժայռի վրա՝ Խոռեմարադից-Անդիմեչգ տանող ճանապարհին:

Համաձայն արձանագրության, տվյալ շինարարությունը իրականացվել է «ամիրա Աբու ա-Նաջմ Բադր իբն Հասանվայհ իբն Հուսեյնի հրամանով» հիջ. 374թ. (984թ.) »²:

Ինչպես դժվար չէ մկատել, քուրդ ամիրան իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո ծավալել է շինարարական ակտիվ գործունեություն՝ սկսելով մասնավորապես ամրոցների և կամուրջների շինարարությունից: Պետք է ենթադրել, որ Բադրի կողմից մեծ գործունեությունը նպատակ է ունեցել մախևառաջ ամրապնդելու Հասանվայհների իշխանությունը Ջիրայում և դուրացնելու հաղորդակցությունը լեռնային այդ զանգվածների միջև:

Այդ է հավաստում մեզ հասած քուրդ ամիրայի շինարարական երկրորդ արձանագրությունը, որը, ինչպես նշվեց, քուֆի գրությամբ խմամբով փորագրված լինելով, գտնվում է Խոռեմարադի դպրոցներից մեկում: Ենթադրում ենք, որ այն ևս վերաբերվել է կամրջի շինարարությանը, որի կառուցումը իրականացվելով Բադր ամիրայի հրամանով, տևել է ուղիղ տասը տարի՝ հիջ. 389-399թթ. (998-1008թթ.)³:

Բադրի մեկ այլ վիճակի արձանագրությունը, որը վերաբերվել է հիջ. 404թ. (1013թ.) շենքերից մեկի շինարարությանը, գտնվում է դարձյալ Խոռեմարադում՝ Ջույդ իբն Ալիի դամբարանում: Նրա-

¹ Այդ մասին տես՝ Masoochehr Sotoodeh, Drei Kufische Inschriften aus Irbil, - Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft, - 125, 2, 1975, s.315.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 335-336:

նում քուրդ իշխանը ներկայացվել է որպես հավատացյալների առաջնորդի (այսինքն՝ Արքայախան խալիֆայի-Ա.Փ.) «մավան» (ապաստվորը, երբվայ ներկայացուցիչը և այլն)¹:

Այսպիսով, ինչպես նշվեց, մեր ճնշքի տակ եղած սակավ, բայց փաստական կարևոր արժեք ունեցող վիճազիր արձանագրությունները վկայում են Բաղրի օրոք Հասանվայիների իշխանությունում շինարարական տարրեր կառույցների մասին:

Բազի վերոհիշյալից, մահմեդական աշխարհում քուրդ ամիրան փառաբանվեց ոչ միայն իր արդարադատությամբ, այլև կրոնական բարեգործությամբ և մահմեդական հաստատությունների կառուցմամբ: Յերես դա է պատճառը, որ արարական պատմագրությունն աչքբան ակնածանքով է խոսում նրա մասին շեշտելով մասնավորապես նրա ծառայություններն իսլամին:

Այդ կապակցությամբ Իբն ալ-Ջաուզին գրում է. «Յուրաքանչյուր տարի Բաղրը 1000 դինար էր հատկացնում, որպեսզի 20 մարդ ուխտագնացության (հաջ) գնար իր մոր և Աղուդ աղ-Նաուրայի փոխարեն, քանի որ նա էր (իմա՝ Աղուդ աղ-Նաուրան-Ա. Փ.) պատճառ դարձել նրա իշխանության գլուխ անցնելուն: Յուրաքանչյուր ուրբաք նա յթավորներին և այրիներին, իրրև սաղակա (բարեգործական նվիրատվություն), տալիս էր 10 հզ. դիրհեմ: Յուրաքանչյուր տարի նա ծախսում էր 3 հզ. դինար, որպեսզի Համադանի և Բաղդադի կոշկակարները կոշիկ պատրաստեն հաջ մեկնողների համար: Ամեն ամիս Բաղրը ծախսում էր 20 հզ. դիրհեմ՝ մեռածներին սավաննելու վրա: Յուրաքանչյուր ամիս նա ծախսում էր 20 հզ. դիրհեմ կամուրջներ կառուցելու վրա: Իր տարածքներում նա կառուցեց 3 հզ. մզկիթ և իջևանատուն՝ օտարներկրացիների համար... Յուրաքանչյուր տարի Բաղրը 100 հզ. դինար էր ուղարկում ալ-Հարամայնի (այսինքն, երկու սրբավայրերի՝ Մեքքայի և Մեդինայի-Ա.Փ.) բնակչության ողորմությունների, ճանապարհների պաշտպանության և այլ կարիքների համար: Նա գումարներ էր նվիրաբերում ավազանների կառուցմանը, ջրերի մաքրմանը, ճամապարհին սենդի հայրալքմանը, բնակչությանը հրահանգելով կատարել այդ ամենը: Նա ալ-Հարամայն (երկու սրբավայրեր), Քուլթա և Բաղդադ գումարներ էր ուղարկում՝ վերակացումներին, ֆակիհներին, գրա-

¹ Նայն տեղում, էջ 316:

կարդացներին, արքատներին և արքայատների քնակչությանը
բաժանելու համար: Երբ նա վախճանվեց, այդ ամենին վերջ
տրվեց, և դա ազդեց նրա ընտանիքի վիճակի վրա, ուխտագնա-
ցությունը դադարեց: Բաղրը շատ էր արդրում և փառաբանում
Աստծուն...»¹:

Բացի այդ, հիջ. 385 բվականից (995 թ.), շուրջ 20 տարի,
Բաղրը կանոնավոր՝ ամեն տարի հակայական գումարներ էր ու-
ղարկում ավագակապետներին՝ ուխտագնացներին շվնասելու և
յթալանելու համար²:

Վերոհիշյալ նյութերը միաժամանակ ցույց են տալիս, որ X-XI
դարերում քրդական վերնախավի զործում մասնակցությամբ իս-
լամի տարածումը քրդերի մեջ ընդունում է զանգվածային բնույթ³:

Հաշվի առնելով Բաղրի հզորացումն ու մահմեդական ահռելի
քարեզործությունները՝ 998 թ. Աբրաայան ալ-Կադիր խալիֆան
ներան շնորհեց «Լ-ասիր ադ-Դին վա ադ-Դ-աուլա» ամենապատ-
վավոր լակարը (տիտղոսը)⁴: Ապա, Բահա ադ-Դ-աուլայի երաշ-
խավորությամբ՝ խալիֆան միաժամանակ նրան զանազան
նվերներ տվեց և նշանակեց Ջիրալի կառավարիչը⁵: Դրանից
հետո Բաղրը հզորացավ և ճանաչում ձեռք բերեց, ինչպես նշվեց
վերևում, որպես սովյալ տարածքի «լավագույն իշխաններից մե-
կը»⁶, իր ազդեցությունը տարածելով հարակից շրջանների վրա:

Այսպիսով, նյութերի ուսումնասիրությունը մեզ բույլ է տալիս
եզրակացնելու, որ Հասանվայիների իշխանությունը, որի հենա-

¹ Abu Shuja' Rudawari, V, III, p. 287; Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 271-272, Իբն
Ջաուհր, XI, էջ 353-354, Իբն Թաղթիբի, IV, էջ 169, 255, ալ-Հանբալի,
Շազարաթ, III, ա. 137:

² Նույն տեղում:

³ Այդ մասին ավելի մամբամամ տես՝ А. ПОЛАДЖИ, Курды, с. 66-73, նույնի՝
Իսլամի տարածումը քրդերի մեջ VII-X դդ. (ըստ արաբական աղբյուրնե-
րի)՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, VIII, Երևան,
1985թ., էջ 156-173:

⁴ Իբն ալ-Սաիր, VII, էջ 193; Իբն Խալլամ, IV, էջ 514; IIIթաթ-խալ ԵՋԱԼԵՍԻ,
IIIթաթ-նաթ, տ. I, с. 91; Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 271, Իբն Ջաուհր, XI, էջ
353, ալ-Հանբալի, Շազարաթ, III, էջ 173:

⁵ Նույն տեղում:

⁶ Իբն Ջաուհր, XI, էջ 353:

քանը հիմնականում քրդական ցեղերն էին, ձևավորվեց բուսական տիրապետության շրջանակներում և նրա ծաղկման ժամանակ: Դա ավատատիրական հասարակարգին բնորոշ, ժամանակավոր մի կազմավորում էր մեկ ուրիշի ներսում, որի գոյատևումը, անշուշտ, պայմանավորված էր երկու կողմերի փոխհարաբերություններով, քաղաքական և տնտեսական շահերով: Չնայած ժամանակակից իրանական Քուրդիստանը և հարակից շրջանները, ուր գործեցին Հասանվայիները ձևակառուցեց համարվեցին բուսական տարածքներ, սակայն տեղական իշխանությունը, ինչպես նշվեց, ամբողջությամբ պատկանում էր քրդերին: Բուիները բավարարվում էին այն ռազմական աջակցությամբ, որ ստանում էին Հասանվայիներից, իսկ դրա փոխարեն Հասանվայիին և Բադրին հնարավորություն էր տրված ազատ գործելու և ընդլայնելու իրենց քաղաքական ազդեցությունը Ջիբալի քրդական շրջաններում: Մտնողված բարենպաստ պայմանները հետզհետև Հասանվայիներին հնարավորություն տվեցին ձևոք ընել սիյ բե շատ քաղաքական անկախություն, թեև նրանք կամա թե՛ ակամա հաշվի էին նստում ավելի գորեղ Բուիների հետ: Եվ վերջապես հարկ է նշել կարևոր մի հանգամանք. Հասանվայիների ամիրայությունը, որը չնայած գոյատևեց ավելի քան կես դար, այնուամենայնիվ նոր լիցք հաղորդեց Արքայան խալիֆայությունում քրդական տարրի Մ. կեսերից սկիզբ առած անջատողական նկրտումներին և որոշակի տարածքներում ինքնուրույնություն ձևոք ընելու համար մղած պայքարին: Հասանվայիների ներքին երկպառակությունների, քրդական ցեղերի հակասությունների և արտաքին հարվածների հետևանքով դիմաստիան վերացավ քաղաքական ասպարեզից իր տեղը զիջելով ուրիշ ուժերի:

Բադրի սպանությունից հետո Հասանվայիների տարածքները հիմնականում անցան Բուիներին, բացառությամբ որոշ շրջանների (Հուլվան, Շահրեզուր), ուր ամրապնդվեցին քուրդ Աննազյանները:

Հասանվայիների իշխանության անկումից հետո, մինչև սելջուկ-բյուրքերի նրևան գալը, Ջիբալի քրդերը հաճախ մասնակից են դառնում տարածաշրջանում ծավալվող այս կամ այն իրադարձություններին: Չնայած նրանք ձևակառուցեց ճամաչեցին Բուիների գերիշխանությունը, բայց օգտվելով նրանց կենտրո-

մակամ իշխանության բացակայությունից, մերքնդները գլուխ էին քարձրացնում տարրեր վայրերում: Արար պատմիչները հաճախ անդրադառնում են քրդական ցեղերի նման էություններին քրտական բանակում և քե՛ նրանց դեմ: Նույն շրջանում Բուի իշխանների միջև ծագած տարածայնությունների տարածքային ուսնձգությունների հեռանկրով բուլացրել էին նրանց դիրքերը Ջիրալում:

Նկարագրելով հիջ. 411(1020) թ. դեպքերը՝ Իբն ալ-Ասիրն իր «Լիակատար պատմություն» երկում անդրադառնում է Համադանում բյուրքերի և քրդերի բախումներին: Թյուրք ղուլանները, որոնք IX դ. առաջին երեսնամյակից հաստատվեցին խալիֆայության գվարդիայում, աստիճանաբար հզորացան և գործուն դեր խաղացին Արբասյան արքունիքում և տարածաշրջանի ռազմաքաղաքական կյանքում:

Համադանում նույն թվականին բյուրքերը ձեռնարկել էին հակաբուական ռազմական բացահայտ գործողություններ: Առանց Շամս աղ-Դաուլայի բուլլտվության նրանք փորձում են տեղահան անել քրդական ալ-Կահվիյա քրդերին: Թյուրքերի նման գործողություններն անհանգստացնում են մակ Բուի իշխան Շամս աղ-Դաուլային:

Իսֆահանի տեղ Աբու Ջա՛աֆար իբն Կակավայիի ռազմական աջակցության շնորհիվ Շամս աղ-Դաուլայի վեզիրին և ալ-Կահվիյա քրդերին հաջողվում է ջախջախել բյուրքերին¹:

Ջիրալում Բուիների դիրքերի բուլացումը նոր թափ հաղորդեց տեղական ավատատերերի կռիվներին և նրանց տեղական տարածքային նվաճողական նկրտումներին: Թերևս դրանով էլ պայմանավորված էր հիջ.414թ. (1023թ.) վերևում հիշատակված Իսֆահանի տիրոջ Ալյա աղ-Դաուլա Աբու Ջա՛աֆար իբն Կակավայիի հարձակումը Բուի Շամս աղ-Դաուլայի տիրույթների վրա:

Իսֆահանի տեղը, որը Երեք տարի ասաջ ռազմական աջակցություն ցույց տվեց Շամս աղ-Դաուլային, այժմ նրան պաշարեց Համադանում: Իսֆահանի տիրոջը ռազմական աջակցություն արամադրեց դելմիկ Մարդավիջի որդին՝ Ֆարեհադը: Սակայն պարենի պակասության պատճառով Ալյա աղ-Դաուլա իբն Կակավայից հրաժարվեց Համադանի պաշարումից և շարժվեց

¹ Իբն ալ-Ասիր, VII, էջ 307-308:

ղեպի Իսֆահան: Դամասպարիին նրա վրա քրդերի հետ միասին հարձակվեց Շամս աղ-Դաուլայի գորքի քուրդ հրամանատար Յաջ ալ-Մուլլը: Այստեղ քրդերն ու Յաջ ալ-Մուլլը ընկան պաշարման մեջ, բայց Իրն Կակավայիը, ծրագրելով գրավել Համադանը, հեռացավ, և քրդերը փրկվեցին անխուսափելի պարտությունից: Համայրելով նոր ուժեր՝ Յաջ ալ-Մուլլը շարժվեց ղեպի Համադան, որտեղ ընդհարվելով Իսֆահանի տիրոջ գորքերի հետ, պարտություն կրեց և ղիմեց փախուստի: Շուտով Յաջ ալ-Մուլլը կրկին հայտնվեց պաշարման մեջ և հարկադրված անվտանգություն խնդրեց Ալա աղ-Դաուլա իրն Կակավայիից: Վերջինս գրավեց Համադանը, ապա՝ Դիմավարը, Սարուխվաստը և հարակից տարածքները¹:

Հից. 415 (1024) թ. Ջիբալում տեղի ունեցած ընդհարումներին ավելի քան 10 հզ քրդեր մասնակցեցին²: Հից. 417 (1026/27) թ. Սարուխվաստի շրջանում Ալա աղ-Դաուլա իրն Կակավայիի և Ջուրկան քրդերի միջև սուր հակասություններ ծագեցին, որոնք հանգեցրին ռազմական ընդհարումների, և³ ավարտվեցին քրդերի հաղթանակով:

Մինչև սելջուկ-քյուրքերի երևան գալը Ջիբալի տարածաշրջանը վերածվել էր, ինչպես նշվեց, միջավատատիրական կոիվների և հակասությունների բառերարքնի: Այստեղ, ինչպես և այլ վայրերում, քրդական միասնական իշխանություն չիմնվեց, որը կարող էր խթանել քրդական ցեղերի միաբանությունը: Ընդհակառակը, ներքին հակասություններն էլ ավելի քույլ տվեցին օտար ուժերին միջամտելու նրանց ներքին կյանքին:

¹ Նույն տեղում, էջ 313-314:

² Նույն տեղում, էջ 318:

³ Նույն տեղում, էջ 325:

4. ԱՆՆԱԶՅԱՆ ԴՆՆԱՍՏԻԱՆ ՉՈՒԿԱՆՈՒՄ ԵՎ ՀԱԳՐԵԶՈՒՐՈՒՄ

Խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդերն ակտիվ դեր են խաղում մահ Հուլվան¹ և Շահրեզուր² մարզերի ռազմաքա-

¹ Հուլվան կենտրոնով լեռնային մարզ, որն արայ միջնադարյան աշխարհագրագիտության մեր օրեր մտնում էին Ջիբրալթ, մեր Կոստի վարչատարածքային բաժանումների մեջ (Տե՛ս ԱI-Ishtakhi, p. 87, 200, al-Jakubi, p. 270, al-Idrisi, f. VI, p. 666, Ibn Khordadbeih, p. 243): Հուլվանը, որը գոյություն ունի Ասորեստանի ժամանակաշրջանից, ըստ աշխարհագիր Յակուբի, Կոստի շին և լավագույն քաղաքներից էր, որի լեռների զազարներին ճշտապես ճշում էր մտնում: Հուլվանը նշանավոր է եղել իր գեղեցիկ և ևսրտառ բնությամբ, աղբյուրներով ու մրգատու այգիներով, գյուղատնտեսական կուլտուրաներով: Միջնադարի շատ քանատուղծներ քաղմաքիով բամառտեղծարյուններ են ձևել Հուլվանին, որը ավել է ճանաչված շատ դեմքեր: Հուլվանն, ըստ Յակուբի, իջարյան ասեմանային մարզ էր (Յակուբ, II, էջ 290-293):

IX դ. հայտնի մասնագիր-աշխարհագիր ալ-Յակուբին նշում է, որ Հուլվանը գեղեցիկ է մեծ քաղաք էր, որն ուներ խառը բնակչություն՝ քաղկեսացու աղբյուրներից, իրանցիներից՝ սլաոնիկներից և քրդերից: Հուլվանը նվաճվեց Օմար խալիֆայի ժամանակ, որի «խառաջը» առաքվում է Ջիբրալթի քրդերին շրջաններից մեկը (անս՝ al-Jakubi, p. 270):

Հուլվանը (քրդերեն՝ Հարվան) ընկնում է Քաղցրաղբի հյասխ-արևելք՝ 190 կմ հեռավորության վրա՝ Մուսուլ-Քեջմանչահ ճանապարհին: Այժմ Հուլվանի սալաթների վրա է գտնվում իրանյան Քաղցրաղբի Յանար մարզի Մարիտոն Ջանար վարչական կենտրոնը (անս՝ H, t. II, p. 1210, t. IV, p. 180):

² Շահրեզուրը մարզ է Ջիբրալթ, Էբրիլի (Աբրիլ) և Համադանի միջև (Յակուբ, III, էջ 375-376): Արևելյան իսլամիկայության վարչատարածքային բաժանումներին քաղաքապետը X դ. ճանապարհորդ-աշխարհագիր Աբու Կոստանցի հայտնում է, որ Շահրեզուրն ուներ երկու քաղաք և գյուղեր: Մարզ-կենտրոնը մեծ քաղաք էր, որը հայտնի էր Նիմ-Ագուայ անունով, որի քանակները անհնագույն էին և չլին ներառվում սուլթանին: (Byrona azarodkha Ady Dyaladha, c. 18): Յակուբի իր ներքին նշում է, որ այս շրջանների բնակչությունը ամբողջությամբ քրդեր էին (Յակուբ, III, էջ 375):

Շահրեզուրը սլաոնիկների մոտ հայտնի էր Նիմասի (կենտրոնաբնակ) անունով, որովհետև այն գտնվում էր Մասունյան մայրաքաղաք Քոնստանտինոպոլի (ալ-Մաքսուբին) Շիզ կենտրոնաբնակին: Հարավային Ասորեստանի Շիզ քաղաքում էր գտնվում գյուղաքաղաքների սրբավայրը, որտեղ այժմ գտնվում են «Միսիսիս Սալիմանու»-ի ավերակները (H. Barthelme, Cov., t. VII, c. 198-199):

Արալյան իսլամիկայության ժամանակաշրջանում Շահրեզուրը ընդգրկվում էր Ջիբրալթ վարչատարածքային բաժանումի մեջ (անս՝ al-Ishtakhi, p. 197, 200, 202, Ibn Haukal, p. 259-260): Այս կապակցությամբ ալ-Քալազուրին գրում է, որ Շահրեզուրն իր շրջանով նվաճումներից հետո ընդգրկվում

դարական կյանքում: Տեղական իշխանությունը, ինչպես ամենուր, պատկանում էր քուրդ առաջնորդներին, որոնք յեին ենթարկվում ոչ խալիֆաներին և ոչ էլ նրանց կառավարիչներին¹:

Շահրեզուրում, ինչպես նշվեց վերևում, քրդական Ջալալիյա, Ֆարսան², Հիքմիյա և Մուվալիյա գեղերը, քվով 60 հզ ընտանիքներ, ունեին ձմեռանոցներ³: Բացի ամասնապահությունից, այստեղ նրանք, Արու Ղուլաֆի տվյալներով, ունեին նաև «եռկայական ցանքատարածություններ»⁴:

Մ. Արքայան խալիֆայությունում ստեղծված բարենպաստ պայմաններն ու իրանական տարրի ակտիվացումը նոր լիցք հաղորդեցին նաև Հուլվանի և Շահրեզուրի քրդական գեղերի ռազմական զործողություններին: Այդ պայքարի արդյունքում քուրդ Աննազյաններին հաջողվեց ժամանակավոր իշխանություն հաստատել և անհաշտ պայքար մղել իրենց դիրքերի ամրապնդման համար:

Արևելագիտական գրականության մեջ քրդական այս դինաստիան հայտնի է մի քանի անվանումներով՝ Աննազյան⁵ (Բանու Ան-Նազ), Այյարյան⁶ (Բանու Այյար) և Աննանյան¹ (Բանու

էր Մուսուլի մարզի կազմում: Ե. Նուլիֆա Հարուն առ-Ռաշիդի գաղափարության վերջին շրջանում, որպես առանձին միավոր, այն անջատվեց Մուսուլի մարզից (տես՝ ալ-Բարսազուրի, էջ 410):

Նվաճումներից նեոտ այստեղ հաստատվեց արաբ Շայրանի գեղը, որը ևս ինտեխական կապեր էր հաստատել քրդերի նեոտ (Իբն ալ-Ասիք, VII, էջ 99):

Այժմ Շահրեզուրը (Շահրիզուր, Շահրազուր) գտնվում է Մուլեմանիյայի կարավ-արևելյան մասում՝ իրանա-իրաքյան սահմանին:

¹ Вторая записка Абу Дулафа, с. 18:

² Շահերի մաս Բարյան է: Տես՝ Շահեր, III, էջ 375:

³ Вторая записка Абу Дулафа, с. 18: Տես նաև՝ Շահեր, նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Տես՝ V. Minorsky, Annazids, E I, V, p. 512-513, Նույնի՝ Kurds and Kurdistan, V, V, p. 453-454, C. Hurst, Les Banou Annaz, Syria, 1921, p. 265-279, Ռ. Շա-սիմի, Ջուր, էջ 191-192, Հուսամ աղ-Ղին ան-Նակաշբանդի, Մուրախազար կառուր «Ջավանե-ալ-Կարբիլա ալ-մուսուլիյա ուս մաշաևիք ալ-ջառանիյին լի-դուկաթր Մուսաֆա Ջառազ», «Մարաջար ալ-մաջմա ալ-լիլի ալ-քուրդի», 2/2, Բաղդադ, 1974, ս. 279-280, Մ.Ա. Ջաքի, Նուրյանաթ, էջ 144, Շամ-բառեթ, էջ 321:

⁶ Մ.Ջ. առ-Ռաշիդյանի, Իմաջար քանի Այյար:

Աճնան), ինչպես նաև «Հանճազ», «Աճնադ», «Արթազ» և այլն²: Այս խառնաշփոթն առաջացել է սկզբնաղբյուրներում իշխանությանը վերաբերող տարբեր նյութերով, որոնք հանգամանորեն չեն համադրվել և չեն վերլուծվել արևելագետների կողմից: Այդ ուղղությանը առաջին անգամ փորձ է կատարել քուրդ հետազոտող Մ. Ջ. Ռոժբայանին³ գտնելով, որ դինաստիայի անվանումը պետք է լինի Այյարյան (Քանու Այյար)՝ հիմք ընդունելով պարսիկ պատմիչ Համդոլլահ Դազվինիի հարդորումները: Ըստ Մ.Ջ. Ռոժբայանիի, պարսիկ պատմիչը միջնադարի մյակ հեղինակն է, որ ծանոթ է եղել քրդական Աճնազյան դինաստիայի պատմությանն ու զբաղեցրած տարածքներին: Այս հանգամանքն էլ քուրդ հետազոտողին քույլ է տվել հանգելու նման սխալ եզրակացության: Բացի այդ, Մ.Ջ. Ռոժբայանին, իր միտքը զարգացնելու համար, հենվում է նաև Շադաֆ Խան Բիլլիսիի հարդորումների վրա, որտեղ Աճնազյանները նույնպես ներկայացված են որպես Այյարյան⁴: Տարօրինակ է, որ XX դ. քուրդ պատմաբան Մ.Ա. Ջաքին, առանց խնդրի մեջ խորամուխ լինելու, իր աշխատություններում օգտագործել է թե՛ «Աճնան» և թե՛ «Աճնազ» ձևերը⁵:

Արաբալեզու սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման արդավարումները հատուկ են միջնադարյան ձեռագրերին: Դա մասնավորապես վերաբերում է կետավոր տառերին, որտեղ նախնական տարբերակում կետը կարող է լինել, իսկ երկրորդում ոչ: Մեր կարծիքով, այդ գործընթացը գրիչների անփութության արդյունք է, որի հետևանքով արաբերենի «զ» տառը փոխակերպվել է «ռ-ը»-ի՝ առաջացնելով քառի նոր տարբերակ:

Քրդական այս իշխանությունը նկրտագի արևելագետների երկերում ոչ անհիմն ընդունվել է «Աճնազյան» անունով⁶: Այս նույն ձևը վկայակոչվում է արաբալեզու մի շարք սկզբնաղբյուր-

¹ Մ.Ա. Ջաքի, Թաքիս, էջ 126-130:

² Տես՝ ալ-Բալխեկի Ջափի ալ-Դիմ, Թաքիս հոսքում ալ-խարմ, Դիմաշկ, 1946, էջ 61 (այստեղ ալ-Բալխեկի):

³ Առ-Ռոժբայանի, Իմաշաք, էջ. 480:

⁴ Шараф-хан БИДЯСИ. Шараф-наме, т. I, с. 92.

⁵ Մ.Ա. Ջաքի, Թաքիս, էջ 126-130, նույնի՝ Խադաաք, էջ 135:

⁶ V. Minorsky, նշված աշխ.:

ներում: Խիստ արժանահավատ են և կասկածի տեղիք չեն տալիս, ճառնավորապես պատմիչ Հիլալ աւ-Սաբիի (969-1056թթ.) տվյալները¹:

Լիճնելով դիմաստիայի ժամանակակիցը՝ ենթադրում ենք, պատմիչը հագիվ թե սխալված լիներ, ճանաչվանդ ծնվելով Բաղդադում, մա քավակահին ծանոթ էր արևելյան խալիֆայության պատմությանը: Առավել ևս մա ծառայության էր անցել դելիի Բուիճների մոտ², որոնք սերտ հարաբերություններ ունեին Աննազյանների հետ և մեծ հետաքրքրություն էին դրսևորում նրանց գրադեցրած տարածքների նկատմամբ:

Բացի այդ, Աննազի ճիշտ անվանումը թերում են այնպիսի պատմիչներ, ինչպիսիք են՝ Իրն ալ-Ասիրը, Ի՛մադ ադ-Ղիմ ալ-Իսխահանին, Իրն ալ-Վարդին, Իրն Քասիրը, ավելի ուշ չրջանում Մուննաչիմ Բաշիմ և այլք: Այդ ամենն էլ հինք է ծառայում պնդելու, որ քրդական դիմաստիայի անվանումը պետք է լինի «Ա՛ննազյան», ոչ թե՝ «Ա՛յարյան» կամ «Ա՛ննանյան»: Վերջիններն ընդամենը գրչական սխալներ լիճնելով՝ շփոթմունք են առաջացրել գիտական գրականության մեք:

Աննազյան քրդերի քաղաքական ասպարեզ դուրս գալն այդգասիրն էր Հուլվանում և Շահրեզուրի հարակից չրջաններում քրդական ցեղերի անդադար ընդվզումների, հակաարարական և տեղական իշխանության համար մղած անհաշտ պայքարի:

Օգտվելով ավատատիրական անջատողական նկրտումների և կենտրոնախույս ուժերի և իրանական տարրի ակտիվացման հետևանքով առաջացած իրավիճակից, ինչպես մակ ցեղակից խմբերի աջակցությունից՝ Աննազյան ավատատիրական վերնախավին հաջողվեց շուրջ 130 տարի քիչ թե շատ ինքնուրույնություն ձեռք թերել հիշյալ տարածաշրջանում:

Աննազյան քրդերի ռազմաքաղաքական գործունեությունն սերտորեն դարձյալ կապված է իրանական Բուիճների և XI դ. 30-ական թվականներից այս տարածքում երևան եկած սելջուկ-

¹ Hilal al-Sabi, *Kitab al-Wuzara and fragment of his history* (389-393 a.h.), ed. by H.F. Amidroz, Leiden, 1904, p. 370: Տես նաև՝ նույն աշխատության էքրիստակությունը, էք 6-7:

² Хилал ас-Сабн, *Установления и обычаи двора халифов, пер. с арабского, пер. и примеч. И.Б.Михайловой*, с. 11-12:

քյուրքերի ռազմաքաղաքական գործողությունների հետ: Չնայած Աճնագյաններին հաջողվեց քաղաքական բեմահարթակ դուրս գալ Բուխների գերիշխանության քուլագման շրջանում, ձեռք բերեցին որոշակի անկախություն, սակայն, այդուհանդերձ, ակամայից կախման մեջ ընկան սկզբում Բուխներից, ապա՝ սելյուկ-քյուրքերից:

Իր գոյության ընթացքում Աճնագիները իշխանության տարածքները մերթ ցմայարձակվում էին, մերթ կծկվում՝ մերթին երկպառակությունների և արտաքին հարձակումների հետևանքով:

Մինչև սելյուկ-քյուրքերի երևան գալը Աճնագիները կամա թե՛ ակամա հարարերություններ էին հաստատում հարևան իշխանությունների՝ Բուի Այոյոյ ադ-Ղատուլայի և Ռուլքն ադ-Ղատուլայի հետնորդների, արաբ Ռուկայիների, Բանու Մազյադի, ինչպես նաև քուրդ Հասանվայիների հետ: XI դ. 30-ական թվականներից նրանց համար որոշակի լարվածություն ստեղծեց սելյուկյան աշխարհակալությունը: Ուստիև, քրդական այս իշխանությունը շարունակաբար մշտական լարվածության մեջ էր և գտնվում էր արտաքին հակառակորդների ճնշման տակ:

Հուլվան կենտրոնով Աճնագիները իշխանությունը հիմնադրեց քրդական կիսաքույվոր աշ-Շադինջան (կամ աշ-Շադանջան) խոշոր ցեղային միության առաջնորդ Աբու-լ-Ֆաթի Մուհամմադ իրն Աճնագը: Ըստ պատմիչների նա Հուլվանում իշխեց ուղիղ 20 տարի և մեռավ հիջ. 401թ. (1010/11թ.)¹: Այսինքն դա նշանակում է, որ նա իշխանության գլուխ անցավ հիջ. 381թ. (991թ.):

Շարաֆի Խան Բիդլիսին գրում է, որ Աբու-լ-Ֆաթիը ծագումով քրդական մեկ այլ ցեղի ներկայացուցիչն էր և Հասանվայիիների հետ որևէ արյունակցական կապ չուներ²:

Հայտնի է, որ Հասանվայիիներն սկզբից ևեթ թշնամական դիրք գրավեցին Աբու-լ-Ֆաթի Մուհամմադ իրն Աճնագի իշխանության նկատմամբ, քեև Բադր իրն Հասանվայիիի կինը, որից նա շուր քաժանվեց³, Շադինջան ցեղից էր:

¹ Шафарф-хан Бидлис, Шафарф-نامه, т.1, с. 92: Իրն ադ-Սաֆր, VII, էջ 255, իրն Խարուն, IV, էջ 516: Աշ-Ղատուլայի Մաֆր քաղա, Միլլատար ադ-Իքր, VIII, ս. 374 —

² Նույն տեղում:

³ Իրն ադ-Սաֆր, VII, էջ 247:

Այս ցեղը Ջիբրալի քրդական ամենախոշոր ցեղերից էր, որը հիշատակվում է նաև ալ-Մասուդիի կողմից¹:

Եղած նյութերը միաբերան վկայում են, որ Աճնազյան Աբու-լ-Ֆաթիհը, ինչպես նշվեց, Հուլվանում իշխեց 20 տարի, «Հզորացավ, դարձավ ավյալ շրջանի և իր ցեղակիցների ամիրան»: Ինչպես երևում է, այդ հասցողությանը նա հասավ իր Եադիմցյան ցեղի աջակցությամբ, որը հանդիսացավ նրա ռազմաքաղաքական գործողությունների հիմնական հենարանը: Այլ խոսքով, Աճնազյան իշխանության երմիկական կազմը ըստկազած էր հիմնականում քրդերից, թեև ավելի ուշ նրա ռազմական գործողություններին մասնակցեցին նաև Լուրերը:

Մինչև Աճնազիների իշխանության գլուխ անցնելը, այս գերդաստանը, Բուիների երևան գալուց հետո, ակտիվ գործողություններ էր ծավալել Հուլվանում, որը հանդիսանում էր Բուի Մուի'զ ադ-Դաուլայի տիրույթը: Վերջինիս և Խորասանի տիրոջ՝ Նուիի միջև ծագած ռազմական հակամարտությունը նկարագրելիս, Իբն ալ-Ասիրը 950/1 և 953/4 թթ. հիշատակում է նաև Հուլվանի քրդերի առաջնորդ Աբու աշ-Շաուրին²:

Աբու աշ-Շաուր անունով հայտնի էր Աճնազյան երկրորդ ամենազոր իշխանը: Պետք է ենթադրել, որ Իբն ալ-Ասիրի հիշատակած Աբու աշ-Շաուրը Աբու-լ-Ֆաթի Մուեամմադ իբն Աճնազի հայրն էր, քանի որ այդ անունը տարածված էր հիմնականում Աճնազիների գերդաստանում:

Ինչ վերաբերում է Աբու-լ-Ֆաթի իբն Աճնազին, ապա նույն Իբն ալ-Ասիրը նրան առաջին անգամ հիշատակում է 387թ. (997թ.) դեպքերի նկարագրության ժամանակ: Ինչպես երևում է, քուրդ ամիրան X դ. 90-ական թթ. սկսել էր ռազմական ակտիվ գործողություններ իր տիրույթի սահմաններից դուրս: Օրինակ, 997 թ. ժամանակավորապես նա խլում է Դակուկան³, որն էլ հետո անցնում է մի քանի իշխանների: Դակուկան գրավելու ամհաջող փորձ կատարեց նաև քուրդ մեկ այլ ամիրա՝ Մուսեկ իբն Ջաքվիան⁴:

¹ Al-Masudi, Kitab at-Tanbih, p. 88-89, նույնի՝ Մուքուզ ազ-Չանաթ, II, էջ 124:

² Իբն ալ-Ասիր, VII, էջ 335, 345: Տես նաև՝ Բ. Յապին, Զուրդ, էջ 191-192:

³ Ջալալաթ Էբրիի և Քադրադի միջև (Յակուբ, II, էջ 459):

⁴ Իբն ալ-Ասիր, VII, էջ 187-188:

Պատմիչ Հիլալ աւ-Մարիի վկայութեամբ Արու-լ-Ֆարսի իրն Աննազը հիջ. 389թ. (999թ. նոյեմբեր) սպանեց Խանիկիմի¹ տիրոջ Ջուհման իրն Հինդիիկն և նրա տղաներին²: Մինչ այդ, նույն թվականին, Իրն Աննազը Բուի Բահա աղ-Ղատուլայի իրաքսան կառավարիչ Արու-լ-Ջա'աֆար ալ-Հաջջաջի հետ մասնակցում է Մոսուլում արաբ Ուկայլիմների դեմ ձեռնարկված կռիվներին: Հավանաբար ռազմական այդ աջակցութեամբ համար էլ ալ-Հաջջաջը նրան տվեց աղ-Ղասքարայի³ վերահսկողությունը⁴: Ինչպես դժվար չէ մկատել, այս իրադարձությունից հետո լարվում են Ջուհման իրն Հինդիի և Իրն Աննազի հարաբերությունները: Նրանց միջև առաջացած հակամարտությունում հաղթում է քուրդ ամիրան, և շուտով նրանք հաշտություն են կնքում, քայքայ Իրն Աննազը դավադրաբար, ինչպես նշվեց, սպանում է Իրն Հինդիի և նրա երեք որդիներին՝ գրավելով նրանց տարածքները⁵: Հիջ. 390 (1000) թ. Ղակուկան խլում է Ուկայլի իշխան ալ-Մուկկալադ իրն Մասյարը⁶: Նույն թվականին էլ արաբ Բանու սայ-յարցիներն սպանում են Իրն Աննազի կառավարիչ Քիսթուն իրն Ղազիբին⁷, որը նրա զինակիցն էր արաբ Շայքանի ցեղից:

Հիջ. 392թ. (1002թ. նոյեմբեր) Բուի Բահա աղ-Ղատուլան պաշտոնաձև կարեց Իրաքի կառավարիչ Արու Ջա'աֆար ալ-Հաջջաջին, որի փոխարեն նշանակեց մեզ ծանոթ Արու Ալի Ամիդ ալ-Ջույուշին: Արու Ջա'աֆար ալ-Հաջջաջին պաշտոնից հեռացնելն առաջացրեց որոշակի խռոնաշփոթ տարրեր խմբավորումների և արաբական ամիրայական տների շրջանում:

Նույն թվականին արաբ Ուկայլիներին ու Բանու Մազրադներին հակահարված տալու մպատակով՝ ալ-Հաջջաջի զորքի կազմում ռազմական գործողություններին մասնակցեց Իրն Ան-

¹ Ավան աս-Մավաղամ՝ Բաղդադից Համադան ճամապարհին (Յակուբ, II, էջ 340):

² Hikal al-Sabi, p. 370-371.

³ Մեծ գյուղ Բաղդադի արևմտյան մասում (Յակուբ, II, էջ 455):

⁴ Hikal al-Sabi, p. 370.

⁵ Նույն տեղում, էջ 371.

⁶ Նույն տեղում, էջ 401:

⁷ Նույն տեղում, էջ 429:

նագր: Նրա գործածումը ընդգրկված էին ինչպես քրդական Շա-
դիցքան, ալ-Ջավանիյա, այնպես էլ արաբ Շայրանի ցեղի ներ-
կայացուցիչները¹:

Հաղթանակ տանելով ընդդեմ արաբ ամիրայական տների՝
քրդերը, ինչպես գրում է Հիլալ աւ-Մարին, ձեռք բերեցին մեծա-
քանակ հարստություն²: Այդ իրադարձություններից հետո ալ-
Հաջջաջը մտավ Քուֆա, իսկ Իբն Աննագը՝ «մեկնեց դեպի Խո-
րասանի»³ երրորդի⁴: Այս փաստը բույլ է տալիս ենթադրելու, որ
Խորասանի ճանապարհի հսկողությունը հանձնարարված էր
Իբն Աննագին, որի մասին լուր էն սկզբնադրյալները: Նույն
տարվա վերջում քուրդ ամիրան ճանաչեց Իրաքում նշանակված
Քուի նոր կառավարչի՝ Ամիդ ալ-Ջույուշի գերիշխանությունը⁵:

Վերջ բերված փաստական նյութերից կարելի է եզրակացնել,
որ Աբու-լ-Ֆարի իբն Աննագը որոշակի հակասություններ ուներ
արաբական ամիրայական տների հետ: Ի հակակշիռ դրան նա
ջանում էր բարեփոխական հարաբերություններ պահպանել
համեմատաբար ավելի գորեղ Քուիների հետ:

Աբու-լ-Ֆարիի գլխավորությամբ Աննագյան քրդերի ռազմա-
քաղաքական ակտիվ գործողություններ վարելու իրական հիմ-
քեր ստեղծվեցին XI դ. սկզբներին, մասնավորապես հիջ. 397ր-
ից (1006 /7ր.): Այդ րվականին Իրաքի կառավարիչ Ամիդ ալ-
Ջույուշի դեմ վերստին պայքարը շարունակեց Աբու Ջա'աֆար
ալ-Հաջջաջը, որին, ինչպես նշվեց վերևում, որոշակի աջակցու-
յուն ցուցաբերեց քուրդ իշխան Բադր իբն Հասանվալիդ:

Նրկուստեք հակասությունները սրվեցին այն րանից հետո,
երբ մեռավ Խորասանի երրորդու պահպանության վերակացու
Կըլիջը, և նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց Աբու-լ-

¹ Նույն տեղում, էջ 447-449:

² Նույն տեղում, էջ 449:

³ Խոջասանը որևէ կսպ չունի իրանական Խոջասան պատմական նահանգի
հետ: Խոջասանն այժմ կոչվում է Խարխուս, որի սաջաձեյի վրա է գտնվում
մեքոյյա Բակուրան: "Խոջասան երրորդի" ստեղծվածը է ի նկատի առնելու
Բազդադից դեպի Բակուրան, Խանիկին, Հուզվան և Զեյրան, մինչև Ուեյ
ձգվող ճանապարհը (տես՝ Ա.Ջ. առ-Ուժժրասնի, Իժմարաթ, էջ 483):

⁴ Hilsel al-Sabi, p. 450.

⁵ V. Mizersky, Annazids, p. 512.

Ֆարի իրն Աննազը: Բուիճնրի այդ քայլը խիստ զայրացրեց Բաղը իրն Հասանվայիին: Այդ էր պատճառը, որ Բաղըը իր տաս հազարանոց զորքով միացավ Բուիճնրի իրաքյան կառավարիչ Ամիդ ալ-Ջուլուշի դեմ ձեռնարկած ալ-Հաջջաջի ռազմական գործողություններին և Բաղդադի մեկամսյա պաշարմանը: Այդ ընթացքում Իրն Աննազը քյուրքերի հետ ամուր դիմադրություն ցույց տվեց՝ Բաղդադը անառիկ պահելու համար:

1006/7թ. Բասրայի տիրոջ Իրն Վասսիլի պարտությունից հետո րուական զորքը՝ Ամիդ ալ-Ջուլուշի գլխավորությամբ շարժվեց դեպի Բաղդադ: Արու Ջա'աֆար ալ-Հաջջաջը, Բաղըը և նրանց միացած այլ քուրդ ամիրաների զորամիավորումները վերջ դրեցին Բաղդադի պաշարմանը: Ալ-Հաջջաջը շտապեց հաշտություն կնքել Բահա ադ-Դաուլայի հետ: Մինչ այդ ալ-Հաջջաջը և քուրդ ամիրա Արու Բ'սա իրն Եադի իրն Մուհամմադը ներխուժեցին Հուլվան¹: Իրն Աննազն անկարող գտնվեց հետ մղել հակառակորդների զրոհը և հետագավ Հուլվանից: Դրանից հետո Բաղը իրն Հասանվայից նրանից խլեց նաև Քերմանշահը (Կարմասիճը):

Այդ պարտությունից հետո Իրն Աննազը ապաստան է գտնում Ուկայիճների մոտ, ապա մեկնում Բաղդադ: Իրաքի կառավարիչ Ամիդ ալ-Ջուլուշը քուրդ ամիրային ընդունում է, պատվում՝ խոստանալով վերականգնել նրա իշխանությունը Բասրայի տիրոջ սպասամբությունը ճնշելուց հետո:

1006/7թ. Խանիկիճի մոտ Իրն Աննազին հաջողվում է ձերբակալել Բասրայի տիրոջը և հանձնում է Բահա ադ-Դաուլայի մարդկանց, որոնք էլ սպանում են նրան²:

Իր տիրույթները հետ վերցնելու ակնկալությամբ Իրն Աննազը ծառայության է անցնում Բուի Բահա ադ-Դաուլայի մոտ՝ շարունակելով պայքարն Արու Ջա'աֆար ալ-Հաջջաջի, Բաղըի և նրա քուրդ զինակիցների դեմ: Բասրայի տիրոջը ձերբակալելու գործում ունեցած ծառայության համար Բահա ադ-Դաուլան Իրն Աննազին նշանակում է պահպանության վերակացուի պաշտոնում³:

¹ Իրն ալ-Մսիբ, VII, էջ 232-233, Իրն Խաղամ, IV, էջ 514-515:

² Նույն տեղում:

³ Իրն ալ-Ջաուզի, VII, էջ 263:

Այսպիսով, Իրն Աննազից ժամանակավորապես խլվում է Լուլվանն ու Քերմանշահը: Վերջինս, ինչպես երևում է, Իրն Աննազը գրավեց հիշ. 400(1009/10) թ.՝ Բաղրի և նրա որդի Հիլալի միջև ծագած հակամարտության ընթացքում¹: Ակզրնադը յուրենը լուծ են Լուլվանը հետ գրավելու մասին, ուր հիշ. 401 (1010) թ. մետով Իրն Աննազը: Իսկ դա նշանակում է, որ քուրդ ամիրան Լուլվանը գրավեց Քերմանշահից հետո:

Այսպիսով, Լասանվայիների, մասնավորապես Բաղրի հետ Աննազյանների հարաբերություններն սկզբից ենթ մնացին խիստ լարված: Դրա առիթը, ինչպես դժվար չէ նկատել, շատ հաճախ տալիս էին Բուիները, որոնք ցանում էին Ջիրալում քուրդ ավատական վերնախավին իրար դեմ լարելով, ամրապնդել իրենց դիրքերը նշված տարածքում, քեև քրդական այս իշխանությունները, քեևուզ ձևական, քարիդրացիական հարաբերություններ էին պահպանում նրանց հետ:

Հիշ. 401(1010/11) թ., ինչպես նշվեց, Լուլվանում վախճանվեց Արու-Դ-Ֆարի Մուհամմադ իրն Աննազը: Այստեղ Արու-Դ-Ֆարի իրն Աննազին փոխարինեց նրա տղան՝ Լուսամ աղ-Դաուլա Ֆարես իրն Մուհամմադ Արու աշ-Շաուրը²:

Իրն Աննազի մեռնելուց հետո առանձին շրջաններում ինքնավար դարձան նրա տղաները Արու աշ-Շաուրը՝ Լուլվանում, Մուհալիլը՝ Շահրեզուրում, Սուրխաքը՝ Բանդանիջինում³ (Մանդալի): Այս բաժանումը, անշուշտ, որոշակի առումով առաջացրեց մի շարք բարդություններ և ազդեց Աննազյան իշխանության, ներքին հարաբերությունների և միասնության վրա⁴: Ինչպես երևում է, Արու աշ-Շաուրի իշխանությունը տարածվում էր Լուլվանի, Քերմանշահի, Շահրեզուրի, Բանդանիջինի և դրանց միջև ընկած տարածքների վրա:

Բուիները փորձ կատարեցին ասպարեզից վերացնել Արու աշ-Շաուրին և գրավել Աննազյան տիրույթը: Բուի տիրակալ

¹ Իրն ալ-Ասիք, VII, էջ 247; Իրն հադդում, IV, էջ 515:

² Նայն տեղում, էջ 255:

³ Շուս Յակուբի, Բանդանիջինը իսլամի քաղաք էր Ջիրալում, քայք ենթակա էր Բաղդադին (Յակուբ, I, էջ 499) :

⁴ V. Misonky, *Annals*, p. 512.

Քահա ադ-Դաուլայի իրաքյան մոր կառավարիչ Ֆախր ալ-Մուլք Աբու Ղա-լիբը փորձեց խել չուլվանը: Մարտի դաշտում Աբու աշ-Շաուքը փախուստի դիմեց և ամրացավ չուլվանում: Բանակցությունների արդյունքում կողմերը հաշտություն կնքեցին, որից հետո բուսական գորքերը մեկնեցին Իրաք¹:

Եղած նյութերը վկայում են, որ նման մի փորձ՝ Աննազիների տիրույթը գրավելու, հիջ. 404(1013/14) թ. կատարեց Մազյադի ամիրա Աբու-լ-Հասան Ալի իբն Մազյադը (961-1018): Առանց կռիվ կողմերը դարձյալ հաշտություն կնքեցին, ապա՝ խմամիական կապ հաստատեցին (Իբն Մազյադի որդին ամուսնացավ Աբու աշ-Շաուքի քրոջ հետ)²:

Աբու աշ-Շաուքին ռազմաքաղաքական ակտիվ գործողություններ ծավալելու հնարավորություններ ընձեռեցին, ինչպես մշվեց վերևում, Հասանվայիիների՝ Բադրի և նրա որդի Հիլալի միջև ծագած հակառակություններն ու ռազմական ընդհարումները: Դեռք է ենթարթել, որ հոր և որդու հակամարտությունը խորացնելու խնդրում շահագրգռված էին թե՛ Աննազիները և թե՛ Բուհեները: Այդ ընթացքում, Աննազյան Աբու աշ-Շաուքը գրավեց Էբրամանշահը: Իսկ հիջ. 405 (1014/15) թ. Բադրի սպանությունից հետո Շամս ադ-Դաուլան տիրեց Հասանվայիիների որոշ տարածքներին: Աբու աշ-Շաուքին հակառակված տալու համար, հիջ. 406(1015/16) թ. Բուի իշխանն ազատ արձակեց Բադրադում բանտարկված Բադրի թռռանը՝ Տահիրին:

Աբու աշ-Շաուքի դիմ ձեռնարկած երկու ճակատամարտերում էլ հաղթեց Տահիրը՝ սպանելով իր հակառակորդի եղբորը՝ Մադիրին: Դիմելով փախուստի՝ Աբու աշ-Շաուքը կրկին ամրացավ չուլվանում: Չնայած նրա արաք խմամի Աբու-լ-Հասան իբն Մազյադը նրան ռազմական աջակցություն ցուցաբերեց, քայց Աբու աշ-Շաուքը հնարավոր չհամարեց սլաքաքոչ շարունակել չուլվանը պաշարած Տահիրի դիմ: Կողմերը, ինչպես գրում են արաբալիզու մատենագիրները, հաշտություն կնքեցին, առանց մշելու, թե Աբու աշ-Շաուքը, որպես պարտվող կողմ, ինչ զիջումների գնաց: Հայտնի է միայն, որ Տահիրը ևս ամուսնացավ Աբու աշ-Շաուքի քրոջ հետ: Այնուհետև, Աննազյան ամի-

¹ Իբն ալ-Ասիր, VII, էջ 255; Իբն Խալլուն, IV, էջ 516:

² Նույն տեղում, էջ 271:

րան իր եղբոր վրեժը լուծելու համար դավադրաբար սպանում է Տահիրին¹: Գրամից հետո, ինչպես երևում է Իրն Խալդունի հարորդումներից, Արու աշ-Շաուրը գրավեց մի շարք տարածքներ և մտավ Դինավար²:

Նույն թվականին Բուի Շամս աղ-Դաուլան փորձեց հակահարված տալ Աննազյան Արու աշ-Շաուրին: Քերմանշահի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Բուի իշխանի զորքերը պարտություն կրեցին քրդերից և հետ մահամջեցին³: Ապա, դատելով Իրն ալ-Ասիրի տվյալներից, Աննազյան ամիրան գրավում է նաև Շահրեզուրը և այն համձնում իր եղբայր Մուհայիիին: Դեռ իր կենդանության օրոք Բաղրն այս շրջանը տվել էր իրաքյան կառավարիչ Ամիր ալ-Ջուլուշին, որը Տահիրի կողմից հետ նվաճվեց հիջ. 404(1013/14) թ.⁴:

Այսպիսով, Տահիր իրն Հիլալի սպանությամբ Հասանվայիների տարածքների մի մասն անցավ քուրդ Աննազյաններին, մի մասն էլ՝ Բուիներին: Պիտի ենթադրել, որ Արու աշ-Շաուրի ռազմաքաղաքական գործողությունները որոշ չափով խրախուսվում էին Բուիների կողմից և նրանց քողարկությամբ: Կարծում ենք, որ Հասանվայիների ռազմաքաղաքական քառերարեմից վերանալուց հետո Աննազյան Արու աշ-Շաուրը պետք է կատարեր Բաղր իրն Հասանվայիի ֆունկցիաները՝ քուրդ ընթրատ տարրերին ենթակամեցնելու և Ջիրալում կարգուկանոն հաստատելու համար: Այդ իմաստով էլ Արու աշ-Շաուրը, քերևս, այն հարմար անձնավորությունն էր, որի վրա կարող էին հենվել Բուիները: Դա է հաստատում, օրինակ, այն փաստը, որ նրք հիջ. 414 (1023/24) թ. կենտրոնական և Արևմտյան Իրանում հաստատված դայլամական Կակավայիների իշխան Ալա աղ-Դաուլան, գրավելով Համադանը, Արու աշ-Շաուրից խեց Դինավարը և շարժվեց դեպի Մարութխվաստ: Այն ժամանակ Իրաքի Բուի իշխան Մուշառիֆ աղ-Դաուլան խմղոքեց նրան՝ խնայել Արու աշ-Շաուրին: Ընդառաջելով Իրաքի Բուի իշխանի խնդրանքին՝

¹ Նույն տեղում, էջ 280; Իրն Խալդուն, IV, էջ 517:

² Իրն Խալդուն, նույն տեղում:

³ V. Minorsky, *Anusida*, p. 512

⁴ Իրն ալ-Ասիր, VII, էջ 271:

Այս աղ-Դատւան, հարթանակի հասնելու ակնհայտ առավել-
ությունը, հետագավ Աննազյան Արու աշ-Շաուքի տիրույթից¹:
Այս փաստը, կարծում ենք, լիովին հաստատում է վերևում
նշված մեր ենթադրությունը՝ առ այն, որ Բուխներն իսկապես ու-
րուշակի ազատություններ տալով Արու աշ-Շաուքին, նրան
խնայում էին քրդական ռազմատեմչ ցեղերի վրա ազդելու կամ
ճնշում գործադրելու նպատակով:

Իր հերթին, Արու աշ-Շաուքը ցանում էր հարաբերությունները
չարել Բուխների հետ՝ հակվելով այս կամ այն իշխանի կողմը²:
Այդուհանդերձ, դատելով Շարաֆ Խան Բիսլիսիի հաղորդումնե-
րից, Աննազյան իշխանությունում, հատկապես Արու աշ-Շաու-
քի օրոք, մշտապես են եղել ներքին երկպառակությունները եղ-
բայրների միջև³:

Այսպիսով, մինչ սելջուկ-թյուրքերի արշավանքները, դառն-
ելով սկզբնաղբյուրների լուրյունից, Աննազյան ամիրայությունում
իշխում էր ժամանակավոր խարուսիկ անդորր, որն երկար
չտևեց օրուզական ասպատակությունների հետևանքով:

¹ Նոյն տեղում, էջ 314: Տես նաև՝ Իջն Խաղամ, IV, էջ 517:

² Նոյն տեղում, էջ 336-337:

³ [[Шароф-хан Бислиск, Шароф-наме, т. I, с. 92.

**ԶՐԴԵՐԸ ՄՈՍՈՒԼԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՎ ՎԵՐԻՆ
ՄԻԶԱԳԵՏՔՈՒՄ**

(X դարի երկրորդ կես-XI դարի առաջին կես)

**1. ՄԱՐՎԱՆՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՆ
(980-ական-1085թթ.)**

Արարական խալիֆայությունում, ինչպես նշվեց, ստեղծված նպաստավոր պայմանների հետևանքով և իրանական տարրի աշխուժացման ընդհանուր հոսանքի հետ X դարից առաջարեզ իջան քրդական ամիրայական տներ, որոնց հաջողվեց ժամանակավորապես իրենց ազդեցությունը տարածել որոշակի տարածքների վրա: Դրանք ավատատիրական ժամանակավոր միավորումներ էին, որոնք ներքին հակասությունների, նրկպատակությունների և արտաքին հարձակումների հետևանքով աստիճանաբար հարկադրված եղան լուծարվել և անկում ապրել:

X-XI դդ. քրդական դինաստիաների համակարգում իր դիրքով, հարևան իշխանությունների ու պետությունների հետ ունեցած փոխհարաբերություններով այդի ընկավ Մարվանյան կամ Մարվանյան իշխանությունը: Մայրաքաղաքի կին (պատմական Նփրկերտ) կենտրոնով այս իշխանությունը հիմնադրվեց Դիյար Բաքրում՝ Մեծ Հայքի հարավարևմտյան որոշ գավառներում, որոնք արաբական տիրապետության և մրանից հետո ընկած ժամանակաշրջանում վեր էին անվել ռազմաքաղաքական գործողությունների խոշոր քառերաքնմի: Այստեղ շուրջ մեկ դար գոյատևած Մարվանյան իշխանությունը /980-ական-1085 թթ./ ապրեց մերթիմ կյանքի որոշակի ժողովում, քայք դրան զուգընթաց

ստիպված նդավ պայքար մղել մի կողմից՝ արաբ Համդանիներին, Բյուզանդական կայսրության, Բուիների և մյուս կողմից՝ Վասպուրականի Արծրունիների և վայրագ քյուրք-սելջուկների դեմ:

Դիյաթ Բաքրում՝ այդ թվում Մեծ Հայքի հարավ-արևմտյան գավառներում X-XI դդ. Մարվանյան իշխանության հիմնադրումն ու ռազմաքաղաքական ակտիվ գործողությունները պայմանավորված էին հարավից դեպի հյուսիս քրդական ցեղերի տեղաշարժերով և հիշյալ ժամանակաշրջանում ստեղծված նպաստավոր պայմաններով: Ամենակարևորն այն էր, որ տվյալ ժամանակաշրջանում հայ Բագրատունիները բավական թուլացել էին, արաբ Համդանիները քայքայվել, Կասիկները ոչնչացվել, իսկ Բյուզանդիան խիստ զբաղված էր¹: Այսպիսի իրադրության պայմաններում մոտավորապես 980-ական թթ. հիմնադրվեց քրդական Մարվանյան իշխանությունը, որը գոյատևեց մինչև 1096 թվականը:

Չնայած իշխանության ավելի քան մեկդարյա պատմության մասին աղբյուրներում ասկա են տարաբնույթ նյութեր, սակայն առնվազն զարմանալ կարելի է, որ նրա հիմնադրի՝ Բադի անունն անգամ չի հիշատակվել քուրդ պատմիչ Շ.Խ.Քիլիսիի կողմից: Վերջինս պարզապես գտնում է, որ իշխանության հիմնադիրն Սիմադ իրն Մարվանն է²: Անշուշտ, այդ քյուրքմագությանը էլ պիտի բացատրել, որ ամբողջ իշխանությունը կոչվեց Մարվանյան, ոչ թե Դոստուկյան՝ Բադի մականվամբ, որովհետև մինչև 990թ., այսինքն՝ մինչև Բադի ալամվիլն ու Իբն Մարվանի իշխանության զբոխ անցնելը կատարվել էին խոշոր նվաճումներ՝ Ապահոռնյաց գավառը, Վանա լճի հյուսիս-արևմտյան ավազանը, Խլաթը, Արճնչը, Մամազկերտը, Ամիդը, իշխանության մայրաքաղաք Մայաֆարիկիմը (Կփրկերտը) և այլ շրջաններ: Բադի մեռնելուց հետո, փաստորեն, Մարվանյանները տիրեցին այս բոլորին:

Արաբական աղբյուրներում Բատ անունը հանդիպում է երկու ձևով՝ Բազ- և Բադ-: Իբն ալ-Ասիրը³, Իբն Խալլունը¹ և այլ օգ-

¹ Ա. Տեք-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 195:

² Шараф-хан Бидлис, Шараф-наме, т. I, с. 89.

³ Իբն ալ-Ասիր, VII, էջ 121:

տագործել են Քազ- ձևը, իսկ Իրն ալ-Ազրակը², առ-Ռուզրավա-
րին³, Իրն ալ-Իրրին⁴, Արու-լ-Ֆիդան⁵, Իրն Քաղդիքերդին⁶ և ու-
րիշներ Քաղ- ձևը: Դրա արդյունքում էլ, մամավանդ արևելյան
պատմաբանների մի մասն, առանց խորը քննության, օգտագոր-
ծել է Քազ-, մի մասն էլ՝ Քաղ- ձևերը:

Հայկական աղբյուրների ուսումնասիրությունը բույլ է տալիս
ճշտելու արաբական աղբյուրների մեան արավադուսը: Այս կա-
պակցությամբ արժե հիշատակել Աստղիկի վկայությունը, ըստ ու-
րի «Քառն Ապահունյանց և Նփրկերտի ամիրան» էր⁷: Հայա-
զեաննը Մ. Արևդյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը այն կարծիքն
են հայտնում, որ նույն Քաղը «Մասունցի Դավիթ» էպոսում քա-
ցասական կերպարով համդես եկող Կոզ Քաղին, Քաղինն է՞:
Այս առիթվ արևելագետ-սլավոմարան Ա. Տեր-Ղևոնդյանը գրում
է, որ «Մասունցի Դավիթ» էպոսի «Կոզ Քաղին, Քաղին անձնա-
վորությունն իր մեջ միավորում է բոլոր հարկահաններին և ավե-
րադներին»⁸:

Քաղի գործունեության և մասնավորապես «Մասունցի Դա-
վիթ» էպոսի ակունքների ժամանակաշրջանի ու աշխարհագրա-
կան տարածքի նույնությունը մեզ ևս հիմք է տալիս կիսելու այդ
տեսակետը:

Այսպիսով, վերոհիշյալն իր հերթին բույլ է տալիս եզրակազ-
մելու, որ ընդունելի է Քաղ տարբերակը, իսկ Քազը- և նրանից
բխող Քազզը արդյունք են, ինչպես նշվեց, արաբ գրիչների և արա-
բերենի «դ-զ» տառերի շփոթության սովորական երևույթների:

Արաբալեզու աղբյուրները Քաղի (7-990) զլխավորությամբ
Դ-իյար Քաբրում քրդերի ռազմաքաղաքական գործունեությունը

¹ Իրն հրազան, III, էջ 433:

² Իրն ալ-Ազրակ, էջ 50:

³ Abu Shuja Rudhrawani, v. III, p. 84.

⁴ Արու-լ-Ֆադայ իրն ալ-Իրրի, էջ 321:

⁵ Արու-լ-Ֆիդա, II, էջ 568:

⁶ Իրն Քաղդիքերդի, IV, էջ 145:

⁷ Աստղիկ, էջ 248:

⁸ Մասնա ծեփ, Հ.Ա., Երևան, 1936, էջ ՀԴ (մեքսածություն):

⁹ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 259:

հիշատակում են X դարի 80-ական թթ. սկսած՝ ընդհանուր ղեկավարի շարադրման ընթացքում: Այսինքն, այն ժամանակ, երբ հիշյալ տարածքում քրդերը դարձան Համդանիների և Քուիների գլխավոր հակատակորդները: Բաղի և նրա նվաճողական գործողությունների սկզբնավորման ու ծավալման վերաբերյալ արարելիքու պատմիչները հայտնում են երկու տարբերակներ: Այդ հեղինակների մի մասը հավանում է այն կարծիքին, որ քուրդ առաջնորդի գործողություններն սկիզբ առան Խիզանի¹ լեռներում, որտեղ նա գրադվեց ավազակությամբ, զնալով նրա շուրջ հոծ քաղաքային կուտակվեց, ապա՝ ասպատակեց Դիյար Բաքրը²:

Հեղինակների մի այլ խումբ, թեև մույնը կրկնելով, գրում է, թե Բադր քրդական ալ-Համիդիյա ցեղից էր, և նրա ռազմական գործողություններն սկսվեցին ոչ թե Խիզանի լեռներում, այլ՝ Դիյար Բաքրի սահմանային գոտիներում³: Այսինքն, դա նշանակում է, որ Բաղի գործունեությունը սկսվեց ավելի հարավից՝ Մոսուլի մարզի հյուսիսային շրջաններում՝ Կորճայքի լեռներում:

Ի դեպ, հարկ է նշել, որ ալ-Համիդիյա քրդական ցեղը, որը միջնադարի հայտնի և խոշոր ցեղային միավորումներից էր, մինչև X դարի երկրորդ կեսը տարածված էր Մոսուլի մարզի հյուսիս-արևելյան շրջաններում, որի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում X դարի աշխարհագիր Իբն Հասուլայը⁴: Այս կապակցությամբ մատենագիր Իբն Խալլունը ուղղակիորեն գրում է, որ «Բադր Մոսուլի մարզում բնակվող ալ-Համիդիյա քրդերի առաջնորդներից էր», որը հսկա և խիզախ մարդ էր, սարսափ էր տարածում տվյալ տարածքներում և ձեռք բերված ավարը հավասարապես քաշխում էր իր մարդկանց միջև: Գնալով քաղմասպտակվեցին նրա կողմնակիցները և նա ներխուժեց Հայաստան⁵:

Նույնն է հաղորդում Իբն ալ-Ասիրը, ավելացնելով, որ հիջ.

¹ Անուպ. Հայզանց՝ Մոնք Գառնուկի Մյուս Իշթաք գազաուսս է, Քաղկեցից 35 կմ հարավ-արևելք: ՀՄՀ, V, Երևան, 1979, էջ 51:

² Իբն ալ-Ազրակ, էջ 49-51, Իբն Թադրիքիքոյ, IV, էջ 145:

³ Abu Shuja Rudhrwari, V, III, p. 84; Իբն ալ-Ասիր, VII, էջ 120:

⁴ Ibn Haukal, p. 265.

⁵ Իբն Խալլուն, III, էջ 433, IV, էջ 251:

373 (983/4) ք. հզորացավ ալ-Համիդիյա քրդերից Քաղ ալ-Քուրդին, որի անունն էր Աբու Արդ Ալլահ ալ-Հուսեյն իբն Դուսթաքը¹: Սկզբնական շրջանում նա ասպատակում էր Դիյար Բաքրի սահմանային գոտի (Մուրտը): Այլա փակվելով Քուի Ադուդ ալ-Դաուլայից՝ նա հաստատվեց Դիյար Բաքրում, զնալով աննմազանդ դարձավ և գրավեց Մալլաֆարիկինը, իսկ Ադուդ ալ-Դաուլայի մեռնելուց հետո Դիյար Բաքրի զգալի մասը, Մծրինը և այլն²: Իրն ալ-Ասիբի՝ ալ-Համիդիյա քուրդ քանապաններից զրի առած մեկ այլ տեղեկության համաձայն, Քաղը սկզբնական շրջանում անասնապահությամբ էր զբաղվում, հյուրասեր էր և առատաձեռն, մորթում էր իր ոչխարները և կերակրում մարդկանց: Առատաձեռնի համբավ վաստակելով՝ նրա շուրջ հոծ քաղմություն հավաքվեց: Նա սկսեց կտրել ժամապարհները և ձեռք բերածը քաժամել իր մարդկանց: Նրա կողմնակիցները քաղմասթատկվեցին և նա սկսեց արշավել: Այս, Քաղը ներխուժեց Հայաստան և գրավեց Արճնշը, որը նրա գրաված առաջին քաղաքն էր: Այնտեղ էլ նա հզորացավ և հարձակվեց Դիյար Բաքրի վրա, գրավեց Ամիդը, ապա՝ Մալլաֆարիկին քաղաքները և Դիյար Բաքրի այլ վայրեր: Դրանից հետո Քաղը հարձակվեց Մոսուլի վրա և գրավեց այն³:

¹ Իրն ալ-Ազրակը գրած է, որ Քաղը քուրդ առաջնորդի լակաթն էր (տխազաթ), իսկ անունը՝ Աբու Արզալլահ ալ-Հուսեյն իբն Դուսթաք (Իրն ալ-Ազրակ, էջ 49-50): Աբու Շուբա՝ առ-Ռուզբալարին ևս գտնում է, որ Քաղը նրա քակաթն էր, իսկ անունը՝ Աբու Արզալլահ իբն Դուշանը (տալիմաթաթ Դուշանըր զլլակահ սիսալ է՝ Համիդիյա քրդերից (Abu Shuja Rudzawari, V, III, p. 84): Քջրական միջափայրից Իրն ալ-Ասիբի գրառած մեկ այլ տեղեկության համաձայն, քուրդ առաջնորդի անունն, իբրք, Քաղ է եղել, մականունը՝ Աբու Շուբա՝, իսկ Աբու Արզալլահ ալ-Հուսեյն իբն Դուսթաքը նրա եղբայր անունն է (Իրն ալ-Ասիբ, VII, էջ 120): Միևիդե Իրն ալ-Ազրակը նայտնում է, որ Քաղի եղբայր անունը Աբու-լ-Չառաթիս ալ-Հուսեյն իբն Դուստաք է (տե՛ս Իրն ալ-Ազրակ, էջ 52): Մեկ այլ տեղում պարզապես Աբու-լ-Չառաթիս իբն Դուստաք (նույն տեղում, էջ 57):

XI դ. քրիստոնյա պատմիչ Յոհաննա (Հակոբնեյ) իբն Մա՛աղ Անտիոքացին նայտնում է, որ Դիյար Բաքրի տիրոջ՝ Քաղի եղբայր անունը Աբու Ալի էր: (տե՛ս՝ Ռ-Գ-Գ-Ա արևելագիտության ինստիտուտի Մանկա-Պետերբուրգի քաժամնոմքի արարական ճեռագրաֆոնը, ձև. 1708, լիստ 68-ա):

² Իրն ալ-Ասիբ, VII, էջ 121:

³ Նույն տեղում, էջ 121-122:

Անդրադարձնալով Քաղի գործունեությանը՝ Իրն ալ-Ազրակն իր հերքին գրում է, որ նա դուրս եկավ Նիզամի և Մա'դան գավառի Բահասմա լեռներից, նրա շուրջ հոծ բազմություն հավաքվեց, սկսեց ճանապարհ կտրել և արշավանքներ ձեռնարկեց Դի-յար Քաքրի վրա: Բուի Ադուլ աղ-Դաուլայի մեռնելուց հետո նա հզորացավ, և շատացան նրա կողմնակիցները: Երբ Քաղը գտնվում էր Նիզամի և Մա'դամի արվարձաններում, բազումըր հռչակվեց, տարածքներ գրավեց, արշավեց Մայյաֆարիկինի վրա և Համդանիներից այն խլեց հիջ. 374թ. ուրի՛ ալ-ախեր ամսին (984թ. սեպտեմբեր ամսին): Ապա կարճ ժամանակահատվածում նա գրավեց ողջ Դի-յար Քաքրը, Մծրինը, Ջազիրան¹: Քրդերից նա առաջինն էր, որ իշխանություն ձեռք բերեց: Իր նորոքը՝ Աբու-լ-Ֆաուարես ալ-Հուսեյն իրն Դուսթաքին Մայյաֆարիկինի կառավարիչ նշանակեց, քանզի ինքը զբաղված էր նվաճումներով ու զորք հավաքագրելով²:

Խոսելով Քաղի ռազմական գործողությունների մասին՝ Աբու Շուբա՛ առ-Ռուզրավարին ևս գրում է, որ նա ալ-Համիդիյա քրդերից էր, շատ էր զբաղվում ավազակությամբ, հարձակվում էր սահմանային գոտիների (ի նկատի ունի Դի-յար Քաքրը-Ա.Փ.) վրա և նշտասպես այն սասչառակում: Քաղը ասրափելի տեսք ուներ և հսկա մարդ էր: Երբ Մասուլում ներկայացավ Բուի Ադուլ աղ-Դաուլային, ամմիջապես դիմեց փախուստի՝ հավանաբար կռահելով իշխանի մտադրությունը:

Բուի իշխանը, ըստ Աբու Շուբա՛յի, փախուստից հետո փորձել է ձերբակալել Քաղին, գտնելով, որ նա ջլապինդ, ուժեղ, ոխակալ, չար ու արկածախնդիր մարդ է, ուստիև նրան չպետք է խնայել և կենդանի թողնել: Այս միջադեպից հետո, որին անդրադարձել է նաև Իրն ալ-Ասիքը, Քաղը հաստատվում է Դի-յար Քաքրի սահմանային գոտիներում, որտեղ էլ հզորանալով՝ նվաճումներ է ձեռնարկում³: Սկզբնաղբյուրների ավյալներից երևում է, որ Քաղի ավազակային գործողություններն սկսվեցին Մասուլի հյուսիսային շրջաններում, ապա՝ Կորդվագ լեռներում, այնու-

¹ Պետք է ենթադրել, որ պատմիչն է նկատի ունի Ջազիրա իրն Օմարը, ոչ թե՛ ողջ Միջագետքը:

² Իրն ալ-Ազրակ, էջ 49-50:

³ Abu Shuja Rudhrawari, V. III, p. 84; Իրն ալ-Ասիք, VII, էջ 121:

հետև Վահա լծի ավագանի հայկական գավառներում:

Մինչ 978թ. մատենագիրները որևէ տեղեկություն չեն հաղորդում Բաղի գործողությունների մասին: Նրան, ինչպես նշվեց, սկսեցին իշխատակել հիշ. 373թ. (983/4թ.), այն ժամանակ, երբ նա ռազմական որոշակի հաջողությունների էր հասել, որոնք հիմնականում սկիզբ առան 978թ-ից՝ Բուխների կողմից Մոսուլի նվաճումից հետո: Նույն թվականին էլ Բաղը մի պատվիրակության կազմում մեկնում է Մոսուլ և ներկայացնում Բուխ իշխան Ադուլ աղ-Ղատուլային, որտեղից էլ, ինչպես տեսանք, խոստովելով ծուղակ ընկնելուց, դիմում է փախուստի ու հաստատվում Դիյար Բաքրում: Մեր ձեռքի տակ եղած մյուսերը քույր են տալիս եզրակացնել, որ հիշյալ տարածքներում Բաղի համար խիստ նպաստավոր պահ տեղիվեց հատկապես 983թ. մարտ ամսից, Բուխ իշխան Ադուլ աղ-Ղատուլայի մեռնելուց հետո¹: Գրավելով Մայաֆարիկինը՝ Բաղն այն հռչակեց որպես իր իշխանության մայրաքաղաքը: Վերջինս, փաստորեն, միակ վայրն էր, որ պատմիչները վկայակոչում են գրավման թվականը (984թ. սեպտեմբեր ամիս)²: Այլա, նա գրավում է Ամիրը, Հիսն Քեյֆան և Դիյար Բաքրի այլ շրջաններ: Դատելով Ասողիկի տվյալներից՝ միևնույն ժամանակ Բաղը գրավում է նաև Խլաթն ու Նփրկերտը (Մայաֆարիկին), ինչպես նաև՝ Մամազկերտը³: Վերջինիս գրավումը տեղի ունեցավ Վասիլ կայսեր և Վարդ Մկրտչոսի միջև սկիզբ առած կռիվի ժամանակ⁴: Բաղը, որին Ասողիկը մերթ «Խլաթայ և Նփրկերտայ ամիրայ», մերթ «Ապահունյաց և Նփրկերտայ ամիրայ»⁵ է անվանում, վերստին շեմացրեց Մամազկերտը, սպա ասպատակեց բյուզանդացիների ձեռքում գտնվող Տարոնը, սրի քաշեց ամբողջ գավառը և ավարի առավ Մուշ քաղաքը: Քահանաներին սրախողխող արեց Սր. Փրկիչ եկեղեցում, որտեղ, ըստ Ասողիկի, դեռ մինչև իր ժամանակ մնա-

¹ Իրն ալ-Մաֆթ, VII, էջ 113:

² Իրն ալ-Ազդակ, էջ 51:

³ Ասողիկ, էջ 192:

⁴ Ա.Տեր-Ղևաճյան, Աբար. ամիրայությունները, էջ 193:

⁵ Ասողիկ, էջ 247:

ցել էին արյան հեռքերը¹:

Այսպիսով, Մայրաֆարիկին կենտրոնով Քաղի իշխանության կազմի մեջ մտան Աղձնիքը, Վանա լճի հյուսիսային և արևմտյան կողմի գավառները²: Նրա ռազմաքաղաքական ակտիվ գործողությունները, մասնավորապես Մծրինի գրավումը, հակասում էին Բուիների շահերին, խանգարելով նրանց առաջխաղացմանը դեպի հյուսիս՝ Վերին Միջագետք: Մինչ այդ Մոսուլի մարզում ամուր դիրքեր գրաված Բուիները՝ Ադուդ ադ-Ղատուլայի (949-983թթ.) գլխավորությամբ ակտիվ պայքար էին մղում արաբ Համդանիների³ դեմ՝ նրանցից խլելով որոշ տիրույթներ: Ինքը՝ Քատը, ինչպես նշվեց, սկզբնական շրջանում խուսափում էր Բուիների հետ առնակատուցից: Մակայն, Ադուդ ադ-Ղատուլայի մտանչուց հետո սկսեց քացահայտ գործողություններ ծավալել Դիյար Քարթում: Այդ ամենն իր հերթին մաս վասանցի տակ էր դնում թուն Իրաքը և առաջին հերթին Մոսուլը:

Քաղրին հակահարված տալու և նրա առաջխաղացումը կանխելու համար Բուիները դիմեցին գործնական քայլերի: 983/4թ. Ադուդ ադ-Ղատուլայի որդին՝ Մամսամ ադ-Ղատուլան փորձեց գրավել Մծրինը (Նխիքինը): Արու Մա'դ Քահրամ իրն Արդաշիրի գլխավորած դալամիական զորքը Մծրինի մոտակայքում պարտություն կրեց նրա զորքերից և հարկադրված եղավ հետ նահանջել՝ դեպի Մոսուլ: Նույն թվականին Մամսամ ադ-Ղատուլան քուրդ առաջնորդին ջախջախելու նպատակով, քարճ ուժերով համալրված մեծաքանակ զորք ուղարկեց՝ Արու-լ-Վասիմ Մա'դ իրն Մուհամմադ ալ-Հաջիրի գլխավորությամբ: Խարուրի ափին զտնվող Քաջլայա գյուղի մոտ երկու կողմերի միջև տեղի ունեցած բեժ ճակատամարտում դալամիական զորքը կրկին խայտառակ պարտության մատնվեց, տալով մեծ թվով գերիներ, որոնցից շատերին Քաղը սրի քաշեց⁴: Ասլա խուճապահար դալամիական զորքին կրճկակոխ հետապնդելով՝ ներխուժում է Մոսուլի մարզ:

¹ Նույն տեղում, էջ 192:

² Ա.Տեք-Վանդյան, Արար. անիրաւոյթյունները, էջ 192:

³ К. Э. Восворт, Мусульманские династии, с. 139.

⁴ Abu Shuja Rudakwadi, V. III, p. 85; իրն ալ-Ասիք, VII, էջ 122:

Քուսկան գերիշխանությունից դժգոհ Մուսուլի ազգաբնակչությունն ապստամբեց ընդդեմ Սա'դ իբն Մուհամմադի, որը հետագավ քարաքից և հաստատվեց Քիբրիսում: Բաադը գրեթե առանց դժվարության գրավեց Մուսուլը, սկսեց փոխել պաշտոնյաներին, գանձել հարկերն ու տուրքերը:

Ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի, Բաադը հզորացավ, դուրս եկավ, «ժայռամասայինների շարքից և դասվեց մեծամեծների շարքը»: Նա ահուսարսափ տարածեց և, ինչպես գրում են արաբալեզու մատենագիրները, ամրապնդելով իր դիրքերը Մուսուլում ու նրա մարզում, ձգտեց քաղափորական գահին և մախապատրաստվեց հարձակվելու Բադղադի վրա՝ այն ազատագրելու քուսկան լծից¹:

Ինչպես նշում է Աբու Հուջա առ-Ռուզբավարին, քուրդ առաջնորդի նման վարքագիծը և տարածքային զավթումների ծրագիրը խիստ անհանգստացրեցին Բուի Սամսամ ադ-Դաուլային և նրա վեզիր Իբն Սա'դանին, որոնք հետաձգելով քուրդ զործերը՝ սկսեցին զբաղվել նրան հակահարված տալու խնդրով: Այդ գործողությունն իրականացնելու նպատակով, քուսկան նոր զորքերը՝ զորահրամանատար Ջիյար իբն Շահրաբուվայիի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվեցին քյուրք դուլամները, Աբու-լ-Կասիմ ալ-Հաջիբի զորամիավորումը, շարժվեց դեպի Մուսուլ: Հիջ. 374թ. սաֆաբ ամսին (984թ. հուլիս) տեղի ունեցած ճակատամարտում քուրդ առաջնորդը պարտություն կրեց քուսկան միացյալ զորքերից՝ տալով մեծ քանակությամբ ռազմագերիներ, որոնք տեղափոխվեցին Բադղադ: Դալլամիները վերանվաճեցին Մուսուլը: Բաադը հետագավ Մուսուլի մարզից և մեկնեց Դիյար Բաքր: Սամսամ ադ-Դաուլայի զորքերը՝ Ջազիրա իբն Օմարի և Նիսիբիմի ուղղություններով սկսեցին հետապնդել Բադին: Սակայն, քուսկան զորքերի հրամանատարների դեմ առաջացած խռովության հետևանքով, հետապնդումը դադարեցվեց²:

Օգտվելով այն համզամանքից, որ Համդանիները խիստ չափազորված էին իրենց մախսկին տիրույթները հետ ստանալու

¹ Abu Shuja Rudhrwazi, V, III, p. 85-86; Իբն ալ-Ասիբ, նույն տեղում; Իբն Խալլան, III, էջ 434, IV, էջ 252; Աբու-լ-Ֆարաբ իբն ալ-Բքի, էջ 72:

² Abu Shuja Rudhrwazi, V, III, p. 87; Իբն ալ-Ասիբ, VII, էջ 123; Իբն Խալլան, III, էջ 434, IV, էջ 252:

խնդրով Մամսամ աղ-Դատուլայի վեզիր Իբն Մադիսանն սկսեց քանակցություններ վարել Համդանյան իշխան Մադ աղ-Դատուլայ իբն Մելի աղ-Դատուլայի հետ՝ խոստամալով հարթամակի դեպքում նրան համձնել Դիյար Քաքրը: Համդանյան իշխանը, համաձայնելով Բուի Մամսամ աղ-Դատուլայի առաջարկած պայմանի հետ, Հալեպից գորք է ուղարկում Դիյար Քաքր՝ քուրդ առաջնորդին քախջախելու համար: Չնայած Համդանյան գորքը պաշարեց Մայյաֆարիկինը, բայց անկարող զտնվեց այն նվաճել և, ուժեղ դիմադրության հանդիպելով, նահանջեց Հալեպ, Քադի դեմ կազմակերպած անհաջող մահափորձից հետո¹:

Հավանաբար, կոստանով Բուիների մտադրությունները՝ Քադը գորահրամանատարներ Ջիյար իբն Շահրաքուվայիին և Մադ իբն Մուհամմադին առաջարկեց հաշտություն կնքել: 985թ. Նիսիքինի հաշտության պայմանագրով Դիյար Քաքրն ու Տուր Արդինի կեսը անցան Բատին², իսկ Նիսիքինն ու Ջազիրա իբն Օմարը՝ Մամսամ աղ-Դատուլային³:

Հաշտության պայմանագրից հետո, ինչպես երևում է, Քադի և Բուիների հարաբերությունները որոշ չափով բարելավվեցին: Այս կապակցությամբ Իբն ալ-Ազրակը գրում է, որ Քադը մույնիսկ սկսեց Բուիներին ռազմական աջակցություն ցույց տալ Հաքքարի քրդերի դեմ⁴, որոնք հաճախ էին ասպատակում Մոսուլի մարզը: Մակայն, այդ ամենը երկար չտևեց: Նրանց փոխհարաբերությունները կրկին սրվեցին 987/8թ. Մոսուլի կառավարիչ Մադի մեռնելուց հետո: Քադը փորձեց հերքական անգամ իրականացնել իր վաղեմի իղճը՝ Մոսուլի նվաճումը⁵: Նա զրավեց թուր Արդինը, սպառնալով Մոսուլին և Բուիների մյուս տիրույթներին: Երկու կողմերի միջև Նիսիքինի մոտ տեղի ունեցած ճակատամարտում քրդերը պարտության մատնվեցին, ուր և զոհվեց Քադի եղբայրը՝ Աբու-լ-Ֆաուարեաը, որի դին քաղվեց Մայ-

¹ Նայն տեղում:

² Նայն տեղում:

³ Արդ առ-Ուաքիթ Յումա, աղ-Դատուլա, I, էջ 101:

⁴ Իբն ալ-Ազրակ, էջ 55-56:

⁵ Իբն ալ-Ասիթ, VII, էջ 133:

յաֆարիկիմի արվարձանում¹:

Լեռներում ամրացած արարական Նուժար և Ուկայը ցեղերի ամուր պատմելը խոնգարնց քուրդ առաջնորդին շարժվելու դեպի Մոսուլ²: Այնուամենայնիվ, պատեհ առիթն առեղծվեց. հիջ. 379 (989/90) թ. Բաղդադում Բուիների մոտ ծառայության անցան Նասր ալ-Կաուպա իրն Համդանի երկու որդիներ Աբու Տահիր Իբրահիմը և Աբու Արդալլահ ալ-Հուսեյնը: Մոսուլում առաջացավ քաղաքի քնակչության հակադաշնամական խռովությունը³: Նույն թվականին (990թ.) խռովարարների աջակցությամբ Համդանի երկու եղբայրներին հաջողվեց տիրել Մոսուլին և վճեղել Բուի կառավարիչ Աբու Նասր Խավաշադային:

Մոսուլում տեղի ունեցող անցուդարձերի նկատմամբ անտարբեր չմնաց քուրդ ամիրան⁴, որն իր հերթին փորձեց օգտվել այդ խառնաշփոթ իրավիճակից: Ընձեռված հնարավորությունը չկորցնելու համար նա հիջ. 380թ. (990թ.), ինչպես նշում են արար հեղինակները, հավաքագրեց քրդերից քաղկացած մեծ բազմություն, այդ թվում՝ Ֆամակ ամրոցի տեր Բաչնավի քրդերին⁵: Աբու Շուբա՝ առ-Ռուզրավարին գրում է, որ Բադի գործը քաղկացած էր վեց հազար քրդերից⁶: Նա շարժվեց և հաստատվեց Մոսուլի արևելյան հատվածներում: Զգալով, որ Մոսուլի քնակչության մեծ մասի համակրանքը քուրդ առաջնորդի կողմն է, Համդանի եղբայրներն ստիպված եղան օգնություն խնդրել Ուկայիների առաջնորդ Մուհամմադ իրն ալ-Մասիբից: Նրանք խոստացան, որ Բադի դեմ հարթանակ տանելու դեպքում նրան, որպես փոխհատուցում, կտրվի Նիսիբիցը, Ջազիրա իրն Օմարը, Բալադը և այլ վայրեր: Համաձայնության գալով՝ Համդանյան և Ուկայիների միացյալ զորքերը մարտական գործողություններ

¹ Նույն տեղում, էջ 134: Տես նաև՝ Իբն ալ-Ազրակ, էջ 57:

² Նույն տեղում, էջ 134: Տես նաև՝ Abu Shuja Rudhrawari, V, III, p. 144-145, Իբն Խալլան, III, էջ 434, IV, էջ 252:

³ Նույն տեղում, էջ 140:

⁴ Աբու-լ-Ջաբար Իբն ալ-Իբրի, էջ 173, Իբն ալ-Ազրակ, I, էջ 309, Աբու-լ-Յիդու, III, էջ 122:

⁵ Նույն տեղում: Տես Իբն ալ-Ասիբ, VII, էջ 142:

⁶ Abu Shuja Rudhrawari, V, III, p. 186-187.

ձևոճարկեցին քրդերի դեմ:

Մուսուլի մոտակայքում տեղի ունեցան բնժ մարտեր: Համդանիմների զորքը, որը պաշտպանում էր քաղաքը, գլխավորում էր Աբու Տահիր ալ-Համդադանին: Մինչ վերջինս հազիվ պաշտպանում էր քաղաքը քիկունքից, Բաղի զորքին շրջապատեցին Ռեկայի ցեղի մարտիկները: Քուրդ առաջնորդը չհասցրեց նահանջել մոտակա լեռները: Ամելամելի և խառնաշփոթ այդ վիճակում նա վայր ընկավ ձիուց: Բաղի քեռորդին՝ Աբու Ալի իբն Մարվանը չկարողացավ նրան ձի մտնեցնել և կենդանի բողոց մարտի դաշտում:

Իրն ալ-Ասիբը գրում է, որ մի արաբ ռազմիկ ճանաչում է Բաղին, սպանում է նրան, գլուխը հանձնում Համդանիմներին, որի համար էլ մեծ պարգև է ստանում, իսկ նրա մարմինը խաչվում է կատակարչի տան վրա: Քուրդ առաջնորդի ճկատմամբ վայրագ այդ վարժունքը, լրատ Իրն ալ-Ասիբի, ժողովրդական հուզումների¹ տեղիք է տալիս:

Այսպիսով, քուրդ ամիրա Բաղն սպանվեց հիջ. 380թ. (մուհառան 14-ին) (990թ. մարտի 14-ին), իսկ նրա զորքը մահաճեցեց Մայյաֆարիկին²: Քրդական ցեղերի ռազմական գործուն մարտկուցի շնորհիվ մի քանի տարի նրան հաջողվեց իր ազդեցությունը տարածել Աբրին Միջագետքի, այդ թվում՝ Հարավարևմտյան Հայաստանի մի շարք գավառների վրա:

Բաղի վարած ռազմաքաղաքական արդյունավետ գործողությունների շնորհիվ քրդերին հաջողվեց ամրապնդվել հիշյալ վայրերում և հետագա ժամանակաշրջաններում տարածվել նաև Մեծ Հայքի կենտրոնական շրջաններում:

Իր դիրքերն ամրապնդելու համար քուրդ առաջնորդը համատարաբար մղեց հարևան մահմեդական դինաստիաների դեմ, շփումներ հաստատելով նաև Բյուզանդական կայսրության հետ (այդ մասին տե՛ս՝ ստորև):

Բաղի սպանությունից հետո իշխամությունն իր ձեռքն է վերցնում նրա քեռորդին՝ Աբու Ալի Հասան իբն Մարվանը (990-

¹ Իրն ալ-Ասիբ, VII, էջ 143: Տե՛ս նաև՝ Abu Shuja Rudhrwazi, V, III, p. 177-178.

² Abu Shuja Rudhrwazi, V, III, p. 177, Իրն ալ-Ասիբ, VII, էջ 143; Իրն Խուրդան, IV, էջ 253:

997թթ.)¹: Մեզ հասած սկզբնաղբյուրների հաղորդումները վկայում են, որ նա Քաղի զորքի հրամանատարներից էր: Մասուլի մտապայքում կրած պարսույթությունից հետո, Աբու Ալին մեկնում է Հիսն Քեյխա, ուր գտնվում էր Քաաի դալամգի կինը: Աբու Ալին² խարեությամբ քարծրանում է ամբողջ, քնու կնոջը պատմում է տեղի ունեցածի մասին, ապա՝ ամուսնանում նրա հետ: Այնուհետև, Աբու Ալին մեկնում է Մայյաֆարիկին և կարճ ժամանակահատվածում իրեն է ենթարկում Քաղի տիրույթները³:

Ինչպես երևում է Ասողիկի հաղորդումներից, «ամիրայն Ապահունեաց և Նփրկերտոյ» Քաղի մեռնելուց հետո նրա տիրույթներից խլվեց Մամազկերտը: Այդ առիվ նա գրում է, որ Դավիթ Կյուրապաղատը պաշարեց Մամազկերտը և քոնությամբ քաղաքից վտարեց մահմեդականների⁴: Ապա այն քնակեցրեց հայերով և վրացիներով, որը առաջացրեց պարսիկների և տաճիկների գայրույթը⁵:

Քացի այդ, ցանկանալով վերականգնել Համդանիների իշ-

¹ Ասողիկ, էջ 266: Մարվանյան քուրդ սարապլեզու քանաստեղծ ալ-Հուսեյն ալ-Քաշմալին զոչորիկ մի քանաստեղծարան է ձևակ Քաղի խիզախամեհրին՝ վեջին ճակատամարտում Քաշնալի քրդերի զինակցությանն ու իշխանության կողմնակիցներին, քե՛ Աքճեյում և քե՛ Մաաուրում (տես՝ Իքն ալ-Ասիք, VII, էջ 143):

² Մեզ հասած սկզբնաղբյուրների վկայությունները ցույց են տալիս, որ Քաղը մի քուրդ ամեք, որի հետ ամուսնացած էր Մարվան իրն Լարսք ալ-Հարուսիին: Նա ունեցավ յոթս աղա՝ Աբու Ալի ալ-Հասան, Մաֆիդ, Ահմադ և Կակ անուններով: Նրանք ապրում էին Սզնջի և Մասադանի միջև գտնվող Կուքմաս (Կարմաշ) մարզաշառ գյուղում: Քաղի փնամ՝ Մարվանը ցրտուց ուներ, իսկ նրա տղաները Կարմասի առաջնորդներից էին, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր զորախումբը: Երբ Քաղն սկսեց զրուզել ավազակությամբ, տարածքներ նվաճեց, նրա քնուրդիները յրաժանվեցին նրանից՝ մասնակցելով ռազմական քաջ գործառնություններին (Իքն ալ-Ազրակ, էջ 59-60, Իքն Քաղքիթիթի, IV, էջ 145-146: Տես նաև՝ H.F. Amedroz, *The Marwanid Dynasty*, p. 124):

³ Abu Shuja, V, III, p. 178-179; Իքն ալ-Ասիք, VII, էջ 143; Իքն ալ-Ազրակ, էջ 60, Աբու-լ-Ֆարսք իքն ալ-Իքրի, էջ 173, Իքն ալ-Վարդի, I, էջ 309:

⁴ Ասողիկ, էջ 266:

⁵ Հույն տեղում: Abu Shuja, v, III, p. 178-179; Իքն ալ-Ասիք, VII, էջ 143; Իքն ալ-Ազրակ, էջ 60, Աբու-լ-Ֆարսք իքն ալ-Իքրի, էջ 173, Իքն ալ-Վարդի, I, էջ 309:

խանությունը Դիյար Քաքրոմ Համդանի եղբայրներ Աբու Տահիր Իբրահիմը և Աբու Արդալլահ Հուսեյնը, Մոսուլի հարթամակից հետո շարունակեցին հետապնդել մահանջող քրդերին: Մայրաքարիկինի արվարձաններում քուրդ նոր իշխանը ջախջախիչ հարված հասցրեց Համդանյան զորքերին, որոնց շարքերում հիմնականում մարտնչում էին արաբ Ուկայլ և Նումայր ցեղերի մարտիկները: Մարտադաշտում զեջի ընկավ Աբու Արդալլահ իրն Համդանը, որին Մարվանյան նոր ամիրան արժանացրեց պատիվների և ազատ արձակեց¹: Աբու Արդալլահ իրն Համդանն ուղևորվեց դեպի Ամիդ, ուր գտնվում էր նրա եղբայր Աբու Տահիրը: Վերջինին Աբու Արդալլահը խնդրեց հաչատություն կնքել Իրն Մարվանի հետ և թողնել Դիյար Քաքրը²: Սակայն ապարդյուն. Աբու Տահիրը մերժեց եղբոր խնդրանքը և շարունակեց կռվել քրդերի դեմ: Աբու Տահիրը հարկադրված միացավ Արդալլահ իրն Համդանին: Ըոտով Համդանյան զորքը երկրորդ պարտությունը կրեց Մարվանյաններից, իսկ Արդալլահը դարձյալ զեբի ընկավ³: Աբու Տահիրը փախուստի դիմեց, որին, տղայի հետ միասին, Նիսիբիմում սպանեց Ուկայլիների առաջնորդ Մուհամմադը:

Վերջ նշած իրադարձություններից և Աբու Տահիր իրն Համդանի սպանությունից հետո Մոսուլի մարզն անցավ Ուկայլիներին⁴:

Ինչ վերաբերում է Համդանյան Աբու Արդալլահին, ապա երկար ժամանակ նա մնաց Մայրաքարիկինում՝ գերության մեջ: Նա ազատ արձակվեց Ֆատիմյան խալիֆայության խնդրանքով: Աբու Արդալլահը մեկնեց Եգիպտոս և Ֆատիմյան ալ-Ազիզ (975-996) խալիֆայից, որպես կալվածք, ստացավ Հալեպը⁵:

Անդրադառնալով վերոնիշյալ իրադարձություններին՝ Աբու-լ-Ֆիրդան, Իրն ալ-Վարդին սխալմամբ հայտնում են, որ իբր Իրն Մարվանը մեկնեց Եգիպտոս և Ֆատիմյան տիրակալից ստա-

¹ Abu Shuja', V, III, p. 178-179; Իրն ալ-Ասք, VII, էջ 143; Իրն ալ-Ազնակ, էջ 60, Աբու-լ-Ֆադայեց իրն ալ-Իբրի, էջ 173, Իրն ալ-Վարդի, I, էջ 309:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

ցավ Հալեայի նահանգն ու այլ վայրեր¹:

Այսպիսով, Մարվանյանների և հարևան մահմեդական ամիրայությունների փոխհարաբերություններն սկզբից ենթարկված թարդ էին և պայմանավորված էին տարածաշրջանում ազդեցության ոլորտների ընդլայնմամբ:

Համդանիներին հակահարված տալուց հետո Մարվանյան ամիրան՝ Արու Ալի Հասանը հիշ. 382թ. (992/3թ.) կարողացավ հաջողությամբ դիմադրել ըյուզանդական զորքերին, որոնք հարձակում էին ձեռնարկել Խլարի, Մանազկերտի, Արճնչի և Բերկրիի վրա: Փայտուտի մատնելով հոռոմներին՝ Արու Ալին տասը տարի ժամկետով հաշտության պայմանագիր կնքեց Ռյուզանդական կայսրության հետ²:

Այս իրադարձություններից հետո քուրդ ամիրան ձեռնամուխ եղավ իշխանության ներսում կարգուկանոն հաստատելու գործին, որովհետև բնակչության մի զանգվածը հակված էր Համդանիների կողմը³: Չնայած քուրդ ամիրային աջակցում էին նրա նղրայրները, թայց, ինչպես դժվար չէ նկատել, իշխանությունում, մասնավորապես Մայյաֆարիկիում, գոյություն ունեին հակամարվանյան ուժեղ տրամադրություններ: Իշխանության գործերում Արու Ալիին օգնում էր Մայյաֆարիկիին փորձառու կառավարիչ Մամը⁴:

Հակամարվանյան տրամադրությունները թավալան ուժեղ էին հատկապես Մայյաֆարիկիում: Նման տրամադրությունների կենտրոնը հանդիսանում էր ալ-Քազ շուկան, որտեղ հավաքվում էին բնակչության զանազան խավեր:

Իրն ալ-Ազրակը գրում է, որ այդ շուկան որևէ մեկը՝ ձին հեծած չէր կարող մուտք գործել: Այնպես պատահեց, որ օրերից մի օր ամիրայի ազգականներից մեկը ձին հեծած մտավ շուկա: Նա բացահայտորեն ենթարկվեց դաժան ծեծի, որն էլ առիթ դարձավ, որ իշխան Արու Ալին հաշվեհարդար տեսներ ընդդիմության հետ:

¹ Արու-ի-Ֆիլա, II, էջ 126, Իբն ալ-Ասքալ, I, էջ 309:

² Իբն ալ-Ազրակ, էջ 61:

³ H. Amidon, նշված աշխ., էջ 124: Տե՛ս նաև՝ Իբն ալ-Ազրակ, էջ 66:

⁴ Իբն ալ-Ազրակ, էջ 61:

Հից. 384բ. (994/5բ.) Աղեա տունին, Մամի խորհրդով, Մարվանյան ամիրան փակեց քաղաքի դարպասները, դաժանորեն ցարդեց շուկայի ընդդիմությամը, իսկ նրանց, ովքեր բացակայում էին, այլևս չբողեց մտնել քաղաք և արտոնեց հեռավոր ծայրամասեր¹:

Ատողիկի վկայությունները ցույց են տալիս, որ Մարվանյան ամիրայի, որին Ասուրմար է անվանում, հիմնական հակառակորդներն էին մահմեդական բնակիչները:

Ըստ Ատողիկի՝ քուրդ ամիրային հաջողվեց ջախջախել և արտոնել մահմեդական ընդդիմադիր այդ խմբավորումներին՝ Մայյաֆարիկիում քողնելով գլխավորապես հայերին և ասորիներին²: Մայյաֆարիկիին բնակչությունը ցրվեց տարրեր վայրերում, այդ թվում նաև՝ Ամիդում³:

Այդ քայլումից հետո, ինչպես երևում է, Արու Ալի Հասան իրն Մարվանն ամրապնդեց դիրքերը ամիրայության մայրաքաղաքում, վերջ տալով իր հակառակորդներին: Աստիճանաբար, գրում է Իբն ալ-Ազրակը, նրան հնազանդվեց ողջ բնակչությունը՝ Դիյար Բաքրում, ուր և մա հզորացավ⁴: Այդ անհնը, ինչպես երևում է, տեևց շուրջ 2 տարի: Իբն ալ-Ազրակի մեզ հասած սովյալներին կարելի է ենթադրել, որ իշխանությունում Արու Ալիի դեմ ծածուկ դավեր էին մյուսվում, որոնց մեղսակից էր նրա նշաբայրը՝ Արու Մամսուր Մաի'դ իրն Մարվանը:

997թ-ի վերջերին քուրդ ամիրան հայտարարեց իր անուսուրյան մասին՝ Հալեպի Համդանյան Մա'դ աղ-Դաուլա Եարիֆ իրն Մայֆ աղ-Դաուլայի դստեր՝ Սիթ ան-Նասի հետ: Հարսանիքը կայանալու էր Ամիդում: Իբն Համդանին 200 հզ դիրհեմ վճարելուց հետո հարսանեկան շքախումբը, որի կազմում էին Մայյաֆարիկիին մեծամեծների կամայք, Հալեպից հարսի հետ միասին շարժվեց դեպի Ամիդ: Իր հերքին Արու Ալի Հասան իրն Մարվանն իր զորաջոկատով Մայյաֆարիկիինց մեկնեց Ամիդ: Նրան ուղեկցում էր Եարվան՝ Մամի որդին, որը հսկված էր ա-

¹ Նույն տեղում, էջ 66-69:

² Ատողիկ, էջ 267-268:

³ Նույն տեղում:

⁴ Իբն ալ-Ազրակ, էջ 69-71:

միրայի նորայր Արու Մանսուր Սաիդ իրն Մարվանի կողմը:

Ամիդի կառավարիչ Շելխ Արդ ալ-Տառի պալատը դարձրեց ընդ-դիմությունը որոշեց սպանել իրն Մարվանին: Համաձայն նախորոք մշակված ծրագրի, Ամիդի դարպասների մոտ պահակախումբն առաջ անցավ, իսկ ամիրան մեկ-մեկակ մնաց դավադիրների շրջապատում: Այդ պահին էլ նրան սպանեց Իրն Դիմնա անունով մի մարդ, որին այդ ծառայության ղեկավարը տրվեց Ամիդի կառավարչությունում: Ծրագիրը հաջողությամբ իրագործելուց հետո Շարվան մտավ Ամիդ՝ իրեն ենթարկելով Իրն Մարվանի գորապոկատը և Սաիդ իրն Մարվանի հետ շտապեցին Մայաֆարիկին¹:

Այս կապակցությամբ Ասողիկի մեզ հասած կցկտոր հաղորդումներից կարելի է ենթադրել, որ Ամիդի բնակիչներն իրենց հերքին ևս քավակամին բշմամարտը էին տրամադրված Մարվանյան ամիրայի հանդեպ, ինչն էլ ավելի թորթոքեց Մայաֆարիկիների մտմեղական բնակչության հետ նրա տեսած դաժան հաշվհարդարը: Ասողիկը գրում է, որ Ամիդ քաղաքի քննախնդիր բնակիչները խարկանքով Արու Ալիին միզակով սպանեցին քաղաքի դարպասի մոտ²:

Այսպիսով, շուրջ 7 տարի տևեց Արու Ալի Հասան իրն Մարվանի իշխանությունը: Ըստ Իրն ալ-Ազրակի, նրա սպանությունից երեք օր անց Մայաֆարիկիներն հանդիսավորությամբ ամիրայի պաշտոնն ստանձնեց նորայրը՝ Արու Մանսուր Սաիդ իրն Մարվանը, որին շնորհվեց Մուսմահիդ ադ-Դաուլա տիտղոսը (997-1010թթ.): Իշխանության ողջ գործերն սկսեցին վարել Շարվան և նրա հայրը՝ Մամը³:

Բնակչությունը շուտով ճանաչեց Մուսմահիդ ադ-Դաուլայի գերիշխանությունը՝ քացի Ամիդից, որտեղ իշխեց Շելխ Արդ ալ-Բառը՝ ողջ գործավարությունը հանձնելով Իրն Դիմնային⁴: Վերջինս Շարվանի միջոցով ամիրային խոստացավ 200 հզ դիրհեմի չափով հարկ վճարել, նրա պատվին խուտրա տալ և անու-

¹ Նույն տեղում, էջ 72-79: Տես նաև՝ Իրն ալ-Անիթ, VII, էջ 144:

² Ասողիկ, էջ 268:

³ Իրն ալ-Ազրակ, էջ 77:

⁴ Նույն տեղում:

նը դրոշմել դրամի վրա: Այդ պայմանով էլ Իրն Գիժման ձևոյ յերեց Մումմահիդ ադ-Դաուլայի համաձայնությունը, մեկուսացրեց Շեյխ Արդ ալ-Բադիմ, ապա և սպանեց նրան¹: Գրանով, փաստորեն, Ամիրը Իրն Գիժմայի ղեկավարութեամբ շարունակեց պահպանել իր ինքնավարութիւնը: Նա նվերներ ուղարկեց Արբասյան ալ-Կադիի Բիլլահ խալիֆային, Եզիպտոսի Յատիմյան տիրակալներին, քյուզանդական կայսերը և այլոց: Իրն Գիժման հռչակ ձևոյ յերեց, նրա մտտ օրևանեցին տարբեր մարդիկ, քանաստեղծներ և այլն: Մարզանյաններն սկսեցին ապստիմել նրան, որի իշխանությունն Ամիրում տևեց մինչև հիջ. 415(1024/5) թ.²:

Այսպիսով, վերը ընդամ տվյալները վկայում են, որ շնայած Ամիրը ձևակերպեց մտնում էր Մարզանյանների իշխանության կազմի մեջ, թայց իրականում ինքնավար մի շրջան դարձավ, իր վարչական թոյր մարմիններով՝ Մարզանյաններին վճարելով համապատասխան հարկեր և տուրքեր:

Համաձայն Իրն ալ-Ազրակի մեզ հասած տվյալների, հիջ. 388թ. (998թ.) նույն պայմանով Մումմահիդ ադ-Դաուլան ամուսնացավ (200եզ դիրհեմ) իր նորոր հարսնացուի՝ Համդանյան Մա'դ ադ-Դաուլա Շարիֆ իրն Մաշֆ ադ-Դաուլայի դստեր՝ Սիթ ան-Նասի հետ³: Հանգամանք, որը որոշակի դրական դեր խաղաց Մարզանյանների և Հալբայի Համդանյանների հետագա հարաբերություններում:

Մարզանյան ամիրայությունը Մումմահիդ ադ-Դաուլայի օրոք ապրեց ներքին որոշակի կայունություն: Իշխանությունում սկսեցին գործել վարչական մի շարք մարմիններ՝ դատարանը, քաղաքապետարանը, գանձարանը, քանակը, ոստիկանությունը և այլ գերատեսչություններ: Շարվան շարունակեց գործել որպես ամիրայից հետո երկրորդ դեմք՝ համդիսանալով նրա գլխավոր խորհրդատուն: Նա այնքան մեծ արտոնություններ ուներ, որ նրան նույնիսկ թույլատրվեց մտնել ամիրայի հարեմը⁴:

¹ Նույն տեղում, էջ 80:

² Նույն տեղում, էջ 80-83:

³ Նույն տեղում, էջ 80:

⁴ Նույն տեղում, էջ 87:

Իրն ալ-Ազրակը միակ ճեղիմակն է, քերև, որը քիչ քև շատ անդրադասնում է իշխանության ներքին կյանքին և վարչական մարմինների ու ստանձին գործիչների գործունեությանը: Նրա շարադրանքից երևում է, որ Շարվան, որը բավականաչափ վա-
յելում էր Մարվանյան ամիրայի վատահուրյունը, աստիճանա-
բար դարձավ նրա հիմնական հակառակորդը: Դա տեղի ունե-
ցավ հետևյալ կերպ. Իրն Ֆալյուս անունով իր դուլամյին Շար-
վան վատահվեց շուրքան ստիկանությունը: Սկզբնաղբյուրների
ավյալները վկայում են, որ Մուսմահիդ աղ-Դաուլան ատում էր
Իրն Ֆալյուսին և բազմիցս փորձեց նրան շարքից հանել, բայց
հանուն Շարվայի՝ խնայում էր: Այդ մասին գիտեք մակ ինքը՝
Իրն Ֆալյուսը, որը Շարվային զգուշացնում էր, որ շատ չվատա-
հի իր տիրոջը և խորհուրդ տվեց սպանել նրան¹:

Մուսմահիդ աղ-Դաուլան Շարվային տվել էր ալ-Հեբախ սմ-
րոցը, որ գարնանն ամիրան հաճախ էր լինում: Հիջ. 401 (1010
/11) թ. այստեղ, հերթական խնջույքից հետո Շարվան՝ Իրն Ֆալ-
յուսի խորհրդով գիշերը ննջատեմնյակում դավադրաբար սպանեց
Մուսմահիդ աղ-Դաուլային²:

Այդ նենգ չարագործությունից հետո երկու մարդասպանները
չտապեցին Մալլաֆարիկին: Գիշերով նրանք խաբեությանը
բացել տվեցին քաղաքի դարպասները և հայտնվեցին ամիրա-
յության սպախտում: Շարվան գրավեց զանձատունը, իրեն են-
թարկեց բանակը և քաղաքի ընկալությունը: Ապա մարդ ուղար-
կեց Սղերդ, ուր Մուսմահիդ աղ-Դաուլայի իշխանության 4 տա-
րիների ընթացքում արստրված էր նրա եղբայրը՝ Աբու Նասր Ահ-
մադ իրն Մարվանը: Սկզբնական շրջանում որոշ ժամանակ մա
ապրեց Մալլաֆարիկիներում, բայց ամխտինե մի արարքի համար
Մուսմահիդ աղ-Դաուլայի կողմից արստրվեց Սղերդ՝ երբեք
չտեսնվելով եղբոր հետ³: Օգտագործելով ամիրայի կնիքը, ինչ-
պես գրում է Իրն ալ-Ազրակը, Շարվային հանձնվեցին ամիրա-
յության բոլոր ամրոցներն ու շրջանները, բացի Արզնից, ուր Ա-
բու Ալի և Մուսմահիդ աղ-Դաուլա ամիրաների օրոք գտնվում էր

¹ Նույն տեղում, Իրն ալ-Ասիք, VII, էջ 144:

² Նույն տեղում, էջ 87-91, Իրն ալ-Ասիք, Նույն տեղում:

³ Նույն տեղում:

նրանց իսթահանցի կատարիչ Խազաբա Արու-լ-Կասիմը: Ան-
ջինիս օգնությամբ էլ ձախողվեց Շարվայի՝ Մարվանյան Արու
Նասր Ահմադին Արզնում ձերբակալելու և վերացնելու փորձը:

Իշխանության գլուխ անցնելով՝ Մարվանյան Արու Նասր Ահ-
մադը կարողացավ կարգուկանոն հաստատել ամիրայություն-
նում: Որոշակի կոիվներից հետո նա վերացրեց Իրն Ֆալյուսին,
իսկ Շարվային խեղդամահ ամելով, նրա մարմինը, ի տես բոլո-
րի, խաչեց ալ-Հեթախում¹ դրանով վերջ դնելով Շարվայի դա-
վադրությանը: Անջինս մինչ այդ Իրն Ֆալյուսի խորհրդով
փորձ կատարեց քանակցել Բյուզանդական կայսրության հետ՝
Մարվանյան տարածքները նրան համձնելու համար: Մարվա-
նյան նոր ամիրան ժամանակին կարողացավ անհրաժեշտ քայ-
լեր ձեռնարկել և ասպարեզից հեռացնել դավադիրներին: Ապա
քաղաքից վտարվեցին Շարվայի կողմնակիցները, որից հետո
Մուսմահիդ աղ-Դաուլայի մարմինը հողին հանձնվեց Արզնում²:

Հաստատվելով ամիրայության մայրաքաղաք Մայյաֆարի-
կինում՝ Արու Նասր Ահմադ իրն Մարվանը վեզիրի պաշտոնում
նշանակեց իր հովանավորյալին՝ Խազաբա Արու-լ-Կասիմին, ո-
րին հանձնվեց ամիրայության ողջ գործավարությունը: Խազա-
բա Արու-լ-Կասիմը այնքան վստահություն էր ներշնչել, որ նո-
ղնաիր ամիրան առանց նրա հետ խորհրդակցելու որևէ վճիռ չէր
կայացնում³:

Այսպիսով, վեզիրի ինստիտուտը Մարվանյան ամիրայությու-
նում հիմնվեց Արու Նասր իշխանի կողմից: Այդ պաշտոնը Մար-
վանյանների օրոք հիմնականում վարեցին օտար, ուսյալ և քա-
նիմաճ մարդիկ: Վեզիրն իշխանությունում, փաստորեն, երկրորդ
դեմքն էր, որը հսկում էր բոլոր գերատեսչությունները և իր հեր-
քին վճիռներ էր կայացնում ամիրայի հետ խորհրդակցություն-
ներ անցկացնելուց հետո:

Արու Նասր Ահմադ իրն Մարվանի իշխանությունը տարած-
վեց ողջ Դիյար Բաքրի վրա, բացառությամբ Ամիդի, որը նախ-
կին կարգավիճակով շարունակեց գոյատևել որպես ինքնավար

¹ Նույն տեղում, էջ 93-103:

² Նույն տեղում, էջ 96-97:

³ Նույն տեղում, էջ 102:

չբջան՝ վճարելով սահմանված հարկերն ու տուրքերը: Նա կապ հաստատեց, ինչպես գրում է Իրն ալ-Ազրակը, քազավորների, խալիֆաների, Բուի իշխան Բահա աղ-Ղատուլայի հետ¹:

Կարգավորելով իշխանության ներքին վիճակը և սասարեզից հեռացնելով իր բոլոր հակառակորդներին՝ հիջ. 403թ. սկզբին (1012 /13թ) Աբու Նասրը ձեռնամուխ եղավ նոր պալատի շինարարությանը, որովհետև մինչ այդ, որպես մատավայր, Մարվանյաններն օգտագործում էին Համդանիների պալատը²: Ըստ Իրն ալ-Ազրակի, եռահարկ պալատի շինարարությունը, որի վրա Մարվանյան իշխանը հսկայական զուտարներ ծախսեց, ավարտվեց կարճ ժամանակահատվածում³: Պետք է ենթադրել, որ պալատի շինարարությունը, որը կառուցվեց արտակարգ գեղեցիկ և ճաշակով՝ իր բոլոր հարմարություններով, տևեց չորս 11 ամիս:

Իրն ալ-Ազրակի հարորդումներից կարելի է եզրակացնել, որ պալատի պաշտոնական րացման մասին մախասպես տեղյակ էին պսիվել հարևան պետությունները: Այդ կապակցությամբ, ինչպես գրում է պատմիչը, Ադիայի տոնակատարությունից երեք օր առաջ Մայյաֆարիկին ժամանեցին տվյալ ժամանակաշրջանի մեծ տերությունների՝ Արբասյան և Եզիպտոսի Ֆատիմյան խալիֆայությունների, Բյուզանդիայի և Իրաքի Բուի Մուլթան աղ-Ղատուլայի և այլ պատվիրակություններ:

Նորակառույց և շքեղ պալատում անցկացվեցին հանդիսավոր արարողություններ, որտեղ օտարերկրյա պատվիրակները քուրդ ամիրային հանձնեցին իրենց երկրների միապետների քանկարժեք նվերները: Ներկայացնելով այդ արարողությունները՝ Իրն ալ-Ազ-րակն ավելացնում է նաև, որ քուրդ ամիրային հանձնվեցին Արբասան ալ-Կադիր Բիլլահ խալիֆայի և Բուի Մուլթան աղ-Ղատուլայի հրովարտակները, որոնցով ճանաչվում էր նրա գերիշխանությունը «որդ Ղիյար Բաքրի, նրա քերդերի ու ամրոցների վրա»: Այդ և այլ հրովարտակներ, ըստ պատմիչի, ըմբերցվեցին քաղաքի քնակչության, վկաների, մեծամեծների,

¹ Նույն տեղում, էջ 103:

² Նույն տեղում, էջ 107:

³ Նույն տեղում, էջ 108:

բանաստեղծների, ասմունցողների, կալիլի և այլոց ներկայությամբ¹: Արքայան խալիֆան Աբու Նասրին շնորհեց մահ «Նասր աղ-Ղատուլա» լակարը (տխտոսը)²:

Հայկական աղբյուրներում քուրդ իշխանը հայտնի է որպես «մեծ ամիրա Նարտուղ»³: Իսկ Բյուզանդական աղբյուրներում մահերը հիշատակվում է «Մայրաֆարիկինի ամիրա Աբու Մրվան», մերթ էլ՝ «ամիրա Ապունասը» անուններով⁴:

Հարևան պետությունների կողմից պաշտոնական ճանաչում ստանալն ամրապնդեց 22 տարեկան հասակում իշխանության գլուխ անցած Նասր աղ-Ղատուլայի դիրքերը ողջ Դիյար Բարում⁵:

Իշխելով ավելի քան 50 տարի՝ Նասր աղ-Ղատուլան աչքի ընկավ իր ներքին և արտաքին խոնհեմ քաղաքականությամբ: Նա քեթևացրեց բնակչությունից զանձվող հարկերը, ծավալեց շինարարական ակտիվ գործունեություն, իրականացրեց քարեգործական և կրոնական ձեռնարկներ: Նասր աղ-Ղատուլայի օրոք զգալի չափով զարգացում ապրեցին գյուղատնտեսությունը, մշակութային կյանքը և այլն⁶:

Հիշ. 415(1024/25) ք. մա յուրջ մտադրությունները դրսևորեց Ամիրը գրավելու և Իքն Դիմնային վերջ տալու համար: Այդ խնդրում որոշակի դեր խաղաց նրա վեզիր Խրավաջա Աբու-լ-Կասիմը: Նույն քվականի սկզբին քուրդ ամիրան գրեթե ստանց կովի՝ կատավարիչ Իքն Դիմնայի փեսայի՝ Մուրթաջի դավադրության շնորհիվ գրավեց Ամիրը և վերջ տվեց նրա ինքնավարությանը⁷: Նասր աղ-Ղատուլան բռնազրավեց Իքն Դիմնայի ունեցվածքը, որի ինքնավարությունը տևեց շուրջ 28 տարի:

Նասր աղ-Ղատուլան Ամիրի կատավարիչ նշանակեց իր մեծ

¹ Նույն տեղում, էջ 107-110:

² Նույն տեղում, էջ 107: Տես նաև՝ Իքն ալ-Ասիթ, VII, էջ 270; Իքն Ջասիթ, XI, էջ 348, Իքն ալ-Ջառազի, VIII, էջ 222:

³ Մատթեոս Ուտայեցի, էջ 145:

⁴ Հռիփսիմես Սկիլիցես, էջ 109, 187:

⁵ Իքն ալ-Ջառազի, VIII, էջ 222:

⁶ Իքն ալ-Ասիթ, VII, էջ 144:

⁷ Իքն ալ-Ազրակ, էջ 124-126: Տես նաև՝ Ասադիկ, էջ 269:

որում՝ Արու-լ-Հասանի՝ շնորհելով «Մանդ աղ-Դաուլաս» լակարը, իսկ քարիքը (գրագիր, քարտուղար) Իրն աղ-Խամմարին: Համատեղությամբ կարգով, Ամիտի կադի (դատավոր) նշանակվեց Մայյաֆարիկիմի կադի Արու Արդալլահ ալ-Հուսեյն իրն Մաւմա ալ-Մալիքին¹: Վերջինս իր ստանձնած պաշտոնավարության ընթացքում մեկ ամիսն անցկացնում էր Մայյաֆարիկիմում, մեկ ամիս էլ՝ Ամիդում²:

Ամիդի, որը տազնավարական կարևոր նշանակություն ունեցող վայր էր Գիյար Բարբում, միացումը Մարվանյան իշխանությանը զգալի չափով ազդեց Նասր աղ-Դաուլայի հեղինակության բարձրացման և դիրքերի ամրապնդման վրա:

Հիջ. 415 շարան ամսին (1024, հոկտեմբեր) ք. վեզիր Խափաջա Արու-լ-Կասիմի մեղհելուց հետո այդ պաշտոնում նշանակվեց աշխատանքային բազմամյա փորձ ունեցող քանաստեղծ, Արու-լ-Հասան իրն ալ-Հուսեյն ալ-Մադրիքին³: Վերջինս երկար տարիներ վեզիրի պաշտոնն էր զբաղեցրել Ֆատիմյանների և Բուիհների պալատներում⁴:

Պատմիչներն ալ-Մադրիքիի մասին գովեստով և նարահայտվում՝ քարծր զննհատելով նրան որպես բանիմաց, փորձառու և հավասարակշռված անձնավորություն: Մարվանյան իշխանությունում ստանալով վեզիրի պաշտոնը՝ նա լավագույնս վարեց բոլոր գործերը, այլևս ընկալ չէր խնայմիտ գործունեությանը և բնակչության նկատմամբ ունեցած լավ վերաբերմունքով⁵: Նասր աղ-Դաուլան նրան այնքան վստահեց, որ մեծ լիազորություններ ու արտոնություններ տվեց: Նրա օրոք պալատի դիվանապետ նշանակվեց Իրն Բարաքան, իսկ արձանագրությունների և գրագրությունների դիվանն ստանձնեց ժամանակի քանաստեղծ և ճանաչված մշակութային գործիչ, մանազկերտցի Արու Նասր ալ-Մամազիմ, որի ցանքերով տարբեր վայրերից, այդ թվում և Կոստանդնուպոլսից ձեռք բերվեցին մեծ թվով

¹ Նույն տեղում, էջ 126-127:

² Նույն տեղում, էջ 127:

³ Իրն աղ-Սեյի, VII, էջ 329-330; ալ-Համբալի, Շաքարաս, III, էջ 290:

⁴ Իրն աղ-Ազրակ, էջ 128:

⁵ Նույն տեղում, էջ 130; Iba al-Qalanisi, p. 64.

գրքեր: Նրա ցամքերով հիմնվեցին Ամիդի ու Մայրաֆարիկի մի գրադարանները: Ըստ Իրն ալ-Ազրակի, մինչև իր ժամանակները, այդ գրապահոցները կրում էին նրա անունը¹:

Արաբարկզու որոշ հեղինակներ նշում են, որ ալ-Մանազին քուրդ ամիրայի վեզիրն էր, որն, անշուշտ, չի համապատասխանում իրականությանը²: Նա, ինչպես նշվեց, դիվանապետն էր և գրադված էր մշակութային գործունեությանը:

Վեզիր ալ-Մադրիքին նվիրվածությամբ ծառայեց Նասր ադ-Ղատուլային, որի մասին խոսելիս ժամանակակիցները նշում էին, որ նա վեզիրի պաշտոնը վարում է այնպես, «ինչպես Եզիպտոսում և Իրանում»: Այդ պաշտոնն ալ-Մադրիքին վարեց մինչև հիջ. 428թ. ռամադան ամիսը (1036թ. հունիս): Այդ թվականին նրա առողջական վիճակը վատթարացավ և նա շուտով մահացավ: Նրա խնդրանքով մարմինը տեղափոխվեց Իրաք և քաղվեց Ալիի դամբարանում³: Անդրադառնալով վեզիրի գործունեությանը՝ որոշ հեղինակներ սխալմամբ պնդում են, որ նա մեռավ հիջ. 418 (1027/8)թ.⁴, որը ենթադրում ենք զրչական սխալ է: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ առանձին հեղինակներ գրում են, որ իբր Աբու-լ-Կասիմ ալ-Մադրիքին՝ Նասր ադ-Ղատուլայի մոտ վեզիրի պաշտոնը վարեց 2 անգամ⁵ առանց նշելու կոնկրետ տարեթվերը: Հանգամանք, որի մասին, մեզ անհայտ պատճառներով, լուր է Իրն ալ-Ազրակը:

Մարվանյան իշխանությունում որոշ ժամանակ վեզիրի տեղը քափուր մնաց: Նասր ադ-Ղատուլան ավելի ակտիվ շարունակեց շինարարական գործունեությունը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ամիրայության ներքին կյանքին: Վեզիրի մեռնելուց հետո շուրջ 2 տարի ամիրայական պալատի դիվանապետի պարտականությունն էր կատարում Իրն Բարաջան⁶:

¹ Նույն տեղում, էջ 131: Իրն Քասիք, XII, էջ 54:

² Իրն Խալիքքան, I, էջ 65, Իրն Քասիք, XII, էջ 54, Իրն ալ-Վարդի, I, էջ 349:

³ Իրն ալ-Ազրակ, էջ 138-140:

⁴ Իրն ալ-Մսիք, VII, էջ 329:

⁵ Իրն ալ-Ջաուզի, VIII, էջ 222, Իրն Քասիք, XII, էջ 87, Իրն Խալիքքան, I, էջ 84, ալ-Հանթալի, Շազարաթ, III, էջ 390:

⁶ Իրն ալ-Ազրակ, էջ 147:

Հիջ. 424(1032/3) թ. Բաղդադում մտավ Մալլաֆարիկինի և Ամիդի կադի Աբու Աբդալլահ Մուհամմադ ալ-Բաղդադին: Նույն թվականին Մալլաֆարիկինի կադի նշանակվեց Աբու-լ-Մաքսա Մադա իրն ալ-Հուսեյն իրն Բաքրը, իսկ Ամիդում այդ պաշտոնն ստանձնեց ամիրդի Աբու Ալի ալ-Հասան իրն Ալի ալ-Ամադին, որը հայտնի էր Իբն ալ-Բադլ անունով¹: Հիջ. 430(1038/9) թ. Նասր աղ-Գաուլան վեզիրի պաշտոնում նշանակեց մուսուլցի փորձառու և քանիճաց Աբու Նասր Մուհամմադ իրն Մուհամմադ իրն Ջահիրին, որին, ընդունված կարգի համաձայն, ենթարկվեց որջ գործավարությունը²:

Համաձայն արարական աղբյուրների, հիջ. 416 (1025/6) թ. Նասր աղ-Գաուլան իր իշխանությանը միացրեց Եղևսիան (առ-Ռիհա): Ինչպես երևում է, դա կատարվեց գրեթե յաղաղ պայմաններում: Եղած նյութերը ցույց են տալիս, որ Եղևսիան պատկանում էր Նուժայր ցեղից Ուտայր անունով մի մարդու, որից խիստ դժգոհում էր քնակչությունը: Վերջինիս կողմից քաղաքի ռայիսը (պետը) Աիմադ իրն Մուհամմադի սպանությունից հետո քնակչությանը հանեց նրա դեմ և դիմեց քուրդ ամիրային քաղաքը Մարվանյաններին հանձնելու խնդրանքով: Նասր աղ-Գաուլան Ամիրդից Ջանգ իրն Ավան անունով մի մարդու ուղարկեց Եղևսիա՝ այն ընդունելու մպատակով: Ուտայրը, որն անկարող էր հակադրվելու Մարվանյան ամիրային, րեց Եղևսիան և հաստատվեց Սալեհ իրն Միրդասի մոտ³: Վերջինիս միջամտությամբ Նասր աղ-Գաուլան նրան տվեց քաղաքի կեսը: Դրանով, փաստորեն, քաղաքի կեսը ենթարկվեց Նասր աղ-Գաուլային, իսկ մյուս կեսը՝ Ուտայրին: Դրանից հետո Ուտայրը մեկնեց Մալլաֆարիկին՝ Նասր աղ-Գաուլայի մոտ: Եղևսիայի նախկին պետ Աիմադ իրն Մուհամմադի որդու խնդրանքով հիջ. 418 (1027/8) թ. քուրդ ամիրան կազմակերպեց Ուտայի սպանությունը, որով որջ քաղաքն անցավ Մարվանյան իշխանին: Այս իրադարձությունից հետո դարձյալ Միրդասյան Սալեհի միջամտությամբ

¹ Նայն տեղում, էջ 145-146:

² Նայն տեղում, էջ 147-152:

³ Հարկում և կյանքային Ասրիքում (սիրիա) արարական Ջալը ցեղի Միրդասյան զինաստիպի հիմնադիրը (1023-1079թթ.): Տես՝ К. Э. Воспорт, Мусульманские династии, с. 92.

յամբ և խնդրանքով Եղեսիան վերադարձվեց Ուտայրի որդուն և նույն Նուճայր ցեղից Իրն Շիրիիմ¹: Եղեսիայի, ըստ պատմիչների, երկու աշտարակներից մեկն անցավ Իրն Ուտայրին, իսկ մյուսը՝ Իրն Շիրիիմ:

Հից. 422(1030/1) ք. Իրն Ուտայրն իր մասնաբաժինը 20հզ դիմարով վաճառեց Բյուզանդական կայսրությանը: Երբ նույն քվակամին հոռոմները հայտնվեցին Եղեսիայում փախուստի դիմեց նաև Իրն Շիրը: Հոռոմները ներխուժեցին քաղաք և գրավեցին այն: Ըստ արաբ հեղինակների, բյուզանդական զորքերը հսկայական ավերածություններ կատարեցին՝ քանդելով մզկիթներ և ոչնչացնելով մահմեդական քնակչությանը²:

Չհանդուրժելով տեղի ունեցածն ու մահմեդական քնակչության նկատմամբ հոռոմների այդ վարժույթը՝ քուրդ ամիրան զորք ուղարկեց Եղեսիա, և պաշարելով այն, կարողացավ ներխուժել քաղաք: Ըստ Իրն ալ-Ասիրի, հոռոմները պաշտպանվեցին երկու բերդերում, իսկ քրիստոնյա քնակչությունը՝ եկեղեցում, որը համարվում էր լավագույն եկեղեցիներից մեկը³: Մահմեդականների շրջապատեցին նրանց, շատերին սպանեցին և բախլեցին քաղաքը: Օգնության հասած հոռոմական տաս հազարանոց կամոնավոր զորքը փախուստի մատնեց Նասր ադ-Դաուլային և գրավեց քաղաքն ու հարակից վայրերը⁴:

Եղեսիայի շուրջ ծավալվող ռազմաքաղաքական այս իրադարձություններին անդրադարձել են նաև հայկական և բյուզանդական աղբյուրները:

Այդ մասին առավել ընդարձակ և հետաքրքրական տեղեկություններ են արտացոլվել հատկապես Մ. Ուռհայեզու «Ժամանակագրություն» երկում: Նրա տվյալների համաձայն, Եղեսիան բաժանված էր արաբ երկու ամիրանների՝ Շեպի (Շիրի) և Ուտայրի միջև: Քաղաքն ունի երեք բերդ (աշտարակ), որոնցից երկուսը և քաղաքի երկու կորորդ մասը պատկանում էր Շեպին,

¹ Իրն ալ-Ասիր, VII, էջ 322-323; Այու-լ-Ֆարաջ իքն ալ-Իքքի, էջ 314, Իրն ալ-Վարդի, I, էջ 339, Այու-լ-Ֆիյուս, III, էջ 76-77:

² Նայն տեղում: Տե՛ս նաև՝ Իրն ալ-Ասիր, VII, էջ 353:

³ Նայն տեղում, էջ 353:

⁴ Նայն տեղում: Տես նաև՝ Իրն Ֆրադիքիթի, IV, էջ 275, Yahia Ibn Said, p. 263-265.

խկ մնացած մասը՝ Ուտայրին:

Դատելով Մ.Ուտեայեցու հաղորդումներից՝ արար այդ ամիրանները շքնամարտը էին տրամադրված միմյանց նկատմամբ, ինչը հայոց 408 թ. (14 մարտի 1031 թ.-12 մարտի 1032թ.) սկզբին հանգեցրեց Շեպի սպանությանը: Աստ՝ Ուտայրը փորձեց գրավել Շեպին սպանվածող բերդերն ու քաղաքի երկու երրորդ մասը: Մակայն, մա ամուր դիմադրության հանդիպեց քերդաբահ Մալմանի կողմից¹: Վերջինս, ինչպես գրում է Մ. Ուտեայեցին, մարդ ուղարկեց Մայյաֆարիկին (Մուփարիդին)՝ «տաճկաց մեծ ամիրայ Նարտուլի մոտ» նրան հանձնելով Եղեսիայի բերդը²: Քաղաքի բերդն ընդունելու համար քուրդ ամիրան հազար ձիավորով այնտեղ ուղարկեց Պայել ամուռով ռայխին և Մալմանին ընտանիքով բերել տվեց Մայյաֆարիկին՝ արժանացնելով պատիվների: Եուտով Նասր աղ-Դաուլայի կատավարիչ Պայելն սպանեց Ուտայրին: Վերջինիս կինը, ըստ Ուտեայեցու, դիմեց արարներին՝ Պայելին ջախջախելու խնդրանքով: Իմանալով այդ մասին՝ Նասր աղ-Դաուլան իր հերթին մեծարիվ գորքով շարժվեց դեպի Եղեսիա՝ արարներին հակահարված տալու նպատակով: Երկու կողմերի միջև տեղի ունեցած ճակատամարտում քուրդ ամիրան պարտության մատնվեց: Ծանր դրության մեջ հայտնվեց մահ Պայելը, որն ստիպված դիմեց Նասր աղ-Դաուլային, հայտնելով, որ ինքը և «համայն Քրդիստանը դժվարին կացության մեջ» են³:

Նասր աղ-Դաուլան նրան ևս փոխադրեց Մայյաֆարիկին, փոխարենը Եղեսիա ուղարկելով Մալմանին, որի դեմ անդադար պայքար մղեց Ուտայրի կինը: Այլընտրանք չունենալով՝ Մալմանը որոշակի պայմաններով Եղեսիան հանձնեց Մամուսատի՝ Բյուզանդական կայսրության իշխան Մանիակին⁴:

Լսելով հոռոմների կողմից քաղաքը գրավելու մասին՝ սահմանամերձ մահմանդական ամիրանները շարժվեցին դեպի Եղեսիա:

¹ Մաաբես Ուտեայեցի, էջ 67: Տես նաև Աբխառակես Լաստիվերցի, էջ 21:

² Նույն տեղում, էջ 69:

³ Մ. Ուտեայեցի, էջ 69:

⁴ Գեորգիոս Մանիակեսը կայսրության «Մեծնեխադան քաղաքների զոլովարն էր և հատուտված էջ Մամուսատ քաղաքում»: Տես՝ Հովհաննես Սկիլիցես, էջ 69-71:

Կատարի մարտերից հետո, այնուամենայնիվ, Մանիակին հաջողվեց ամրամալ քաղաքում և հակահարված տալ մահմեդական զորքերին, որոնք ի վերջո հարկադրված եղան մահանջել և քողմնի Եղեսիայի պաշարումը¹:

Համաձայն Մ.Ռոտհայնցու հաղորդումների, կատարած ծառայության և ըստ մախօրոք ձեռք բերված պայմանավորվածության, կայսրը «Մալմանին իր որդիներով տարավ [հռոմոց երկիրը], նրանց դարձրեց մեծապատիվ իշխաններ և զավաճներ տվեց, իսկ նրանք քրիստոնեություն ընդունեցին»²: Այսպիսով, Եղեսիան մինչև Տուրքիլ բեկի ժամանակաշրջանը իսկևս մահմեդական ամիրաներից և ենթարկվեց քյուզանդական կայսրության գերիշխանությանը³: Ուշագրավ են Եղեսիայի գրավման մասին Հովհաննես Մկիլիցեսի հաղորդումները: Նա գրում է, որ քաղաքը զանվում էր Մալմանի ձեռքում, որին կառավարիչ էր նշանակել «Մարտիրոսպոլսի, այն է՝ Մայյաֆարիկիների ամիրան»⁴: Ըստ Հ.Մկիլիցեսի, Գեորգիոս Մանիակեսը նվերներով, խոստումներով և պատիվներով կաշառեց Նասր աղ-Դաուլայի կառավարիչ Մալմանին: Ներխուժելով Եղեսիա՝ Մանիակեսը աիրեց երեք շատ ամուր պատարակներ, և իրեն «օղակի մեջ առնողների դեմ քաջարար պաշտպանվում էր և դրսից օգնություն աղերսում: Մայյաֆարիկիների ամիրա Աբու Մրվանը⁵, իմանալով քաղաքի առման մասին, մեծ զորքով շտապ տեղ հասավ և ձեռնարկեց պատարակները պաշարելու զործին: Գեորգիոսը քաջարար նրան հետ մղեց և [Աբու Մրվանը], չգիտեմալով ինչ անել, ավիրեց ամենագեղեցիկ սպարանքները, ոչնչացրեց քաղաքի զարդերը, այդ թվում և՝ Մեծ եկեղեցու (Մր.Սոֆիայի), իսկ լավագույն [իրերն էլ] ուղտերի վրա քարծելով, քաղաքի մնացած մասն էլ կրակի տալով, վերադարձավ Մարտիրոսպոլս: Մանիակեսը հարմար առիթ ձեռք գցելով, գրավեց քաղաքի մեջտե-

¹ Մ. Ռոտհայնցի էջ 69-71:

² Նույն տեղում, էջ 73:

³ Նույն տեղում: Տես նաև՝ Աբիստակես Լատոնիզոսի, էջ 21:

⁴ Հովհաննես Մկիլիցես, էջ 109:

⁵ Քյուզանդական աղբյուրներում Նասր աղ-Դաուլային կոչում են նաև Ապոմեքանես (Աբու Մրվան) : Տես՝ Մ.Ռոտհայնցի, էջ 402:

դում, ժայռոտ բլրի վրա գանձուղ բերդը, դրսից օգնությամբ աղերսելով, ապահով կերպով տիրացավ քաղաքին¹:

Այսպիսով, արարալեզու, հայկական և բյուզանդական աղբյուրներն իրենց հաղոցությունների որոշակի տարբերությամբ լրացնում են միմյանց՝ ավելի հստակ ներկայացնելով Եղեւսիայի շուրջ ծավալվող ռազմաքաղաքական իրադարձություններն ու Մարվանյան ամիրայի և Բյուզանդիայի հակասությունները: Եղեւսիայի գրավումը Բյուզանդիայի կողմից առաջացրեց մահմեդականների գալույթը, որոնք հետագա տարիներին, հատկապես 1036թ., փորձեր կատարեցին այն հետ խլել հռոմեաներից²:

Այս միջադեպը որոշակի լարվածություն հաղորդեց իհարկե Բյուզանդիայի և Մարվանյանների փոխհարաբերություններին:

Հիջ. 419թ. ցամառ ալ-ուփալ (1028թ. մայիս) Ուկայի առաջնորդ Բադրան Իբն ալ-Մուկկալադը փորձեց նվաճել Նիսիբիսը, որը հանդիսանում էր Մարվանյան իշխանության տարածքի մի մասը: Իբն ալ-Մուկկալադը պաշարեց Նիսիբիսը, որին հակահարված տալու համար այստեղ ժամանեց Մարվանյան զորքը: Մի քանի ընդհարումներից և անհաջող փորձերից հետո, այնուամենայնիվ, Իբն ալ-Մուկկալադին հաջողվեց մասնել Նիսիբիս, բայց անմիջապես հետացավ այն քանից հետո, երբ նրան տեղեկացրեցին, որ իր ներաչրը՝ Կիրվաչը, որի հետ հարաբերությունները բշնամական էին, հաստատվել է Մոսուլում³:

Հիջ. 421(1030) թ. Ուկայի առաջնորդները Նիսիբիսը գրավելու ևս մեկ փորձ կատարեցին: Բադրան իբն ալ-Մուկկալադը հաշտվել էր նորոք՝ Կիրվաչի հետ: Այդ թվականին հատկապես լարվեցին խնամիներ Նասր աղ-Նաուլայի և Կիրվաչի փոխհարաբերությունները՝ ընտանեկան խնդիրների հետևանքով: Բանը նրանում էր, որ Կիրվաչի դստեր՝ սու-Սայեդայի հետ ամուսնացել էր քուրդ ամիրան⁴, որը աներոջն երբեմն ռազմական աջակցություն էր ցույց տալիս ընդդեմ Բադրանի⁵:

¹ Հավանենե Սկիչեցես, էջ 109-110:

² Նույն տեղում, էջ 119:

³ Իբն ալ-Ասիր, VII, էջ 331:

⁴ Իբն Խալլուս, IV, էջ 261; Իբն ալ-Ազնակ, էջ 122:

⁵ Իբն ալ-Ասիր, VII, էջ 326:

Խամոյի հողի վրա և այլ կանանց հետ մերձեցաւու պատճառով, ինչպես հայտնում են պատմիչները, աս-Մայեղան խոսվում է և բողոքում իր հորը՝ Կիրվաշին, որն էլ մարդ է ուղարկում Մայյաֆարիկին և հիջ. 420թ. (1029թ.) նրան բերել տալիս Մոսուլ¹: Այնուհետև, Կիրվաշը քուրդ ամիրայից պահանջում է աղջկա՝ աս-Մայեղայի օժիտը, որն, ըստ արաբ հեղինակների, կազմում էր քսան հազար դիմար: Բացի այդ, նա պահանջում է աս-Մայեղային տալ Ջազիրան, իսկ նորորդ՝ Բաղրանին՝ Նիսիրինը: Ինչպես երևում է, Նասր աղ-Դաուլան չի համաձայնում այդ պայմաններին, և քանակցություններն, ըստ էության, արդյունք չեն տալիս: Երկու կողմերի միջև հակասությունները զնալով այնքան են սրվում, որ ավարտվում են Նիսիրիմի և Ջազիրայի վրա Ուկայլի երկու եղբայրների՝ Բաղրանի և Կիրվաշի հարձակմամբ²: Երկու եղբայրների միացյալ զորքերը պաշարում են Նիսիրիմը: Չկարողանալով գրավել այն՝ զորքը ցրվում է և անցնում Նասր աղ-Դաուլայի կողմը:

Տեսնելով այդ՝ Բաղրանը ժամանում է Մայյաֆարիկին և քուրդ ամիրայից խնդրում է իրեն տալ Նիսիրիմը: Նասր աղ-Դաուլան այդպես էլ վարվում է. նա Բաղրանին հանձնում է Նիսիրիմը, իսկ Կիրվաշին ուղարկում է տասնհինգ հազար դիմար՝ որպես աղջկա օժիտ: Դրանով էլ երկու կողմերը հաշտություն են կնքում³:

Այսպիսով, մինչ սելջուկ-թյուրքական ցեղերի արշավանքները, Մարվանյան ամիրայի փոխհարաբերությունները որոշ չափով սրվեցին մահմեդական Ուկայլիների և մասամբ Բյուզանդիայի հետ:

¹ Իբն ալ-Ասիր, VII, էջ 346, Իբն Խուլլան, IV, էջ 261: Իբն Թադրիթիթընն սխալմամբ հայտնում է, որ, իբր, Կիրվաշն էր անտանացի Նասր աղ-Դաուլայի դստեր հետ: Տես՝ Իբն Թադրիթիթի, IV, էջ 271:

² Նայն տեղում:

³ Նայն տեղում:

2. ՄԱՐՎԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՈՐՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարվանյանների և Բյուզանդական կայսրության միջև փոխհարաբերությունները հանդիսանում են, թերևս, քրդերի միջնադարյան պատմության ամենահետաքրքրական հիմնախնդիրներից մեկը: Ծավոք, այս խնդիրը ցայսօր, փաստորեն, չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Եվ դա բացատրվում է ամենից առաջ նրանով, որ, առաջին հերթին սկզբնադրյուրները չափազանց ժլատ են, և երկրորդ՝ գոյություն ունեցող տեղեկությունները պատշաճ մակարդակով և բազմակողմանիորեն դեռևս չեն ուսումնասիրվել և չեն դրվել գիտական շրջանառության մեջ:

Մինչ րուն քեմային անցնելը պետք է նշել, որ սկզբնադրյուրների տեղեկությունների վերլուծությունը, ինչպես նաև Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի պատմության ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ մինչ Մարվանյան իշխանության ձևավորումը քրդերն, անկասկած, ունեցել են ինչ-որ փոխհարաբերություններ կայսրության հետ: Արաբա-բյուզանդական երկաթամյա անդադար հակամարտությունները, ինչպես նաև վերևում հիշատակված այլ հանգամանքներ, քրդերի աստիճանական տարածման պատճառ դարձան դեպի Վերին Միջագետք և արաբա-բյուզանդական սահմանային գոտիներ: Հիմնավորվելով այստեղ՝ նրանք կամա թե ակամա մասնակցում էին ռազմաքաղաքական տարբեր իրադարձությունների, հաճախ պայքար մղում ընդդեմ Բյուզանդիայի՝ դաշնակցած ոչ միայն արաբների, այլև՝ պավլիկյան հերետիկոսների հետ:

Այդ կապակցությամբ հարկ է ընդգծել, որ IX դարում արաբա-բյուզանդական սահմանային գոտիներում պակաս վտանգավոր չէին պավլիկյանների գործողությունները Կարբեսաի, այնուհետև՝ Խրիստիսիի գլխավորությամբ: Բյուզանդացիների համար հերետիկոսների դեմ պատերազմը բավական բարդացավ, երբ կայսրության տարածքից սկսեցին վտարել պավլիկյաններին, որոնք ստիպված եղան անցնել սահմանը և հանգրվանել արաբների մոտ: Այս առթիվ հայ պատմաբան Հրայ Բարթիկյանը նշում է, որ հերետիկոսների առաջնորդ Մերգիի գլխա-

վորած պավլիկյանների անցումն արաբների կողմը տեղի ունեցավ, ըստ երևույթին, IX դ. 30-ական թթ. սկզբներին: Նրանց ընդունեց Մելիտինն քաղաքի ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակ-տաե: Վերջինս փախստականներին հատկացրեց Արզաուս (Արզովա) քաղաքը, սակայն հետո պավլիկյանները կառուցեցին ևս մի շարք ամրոցներ և քաղաքներ, որոնցից ամենախաշորը նրանց մայրաքաղաք Տեվրիկեն էր¹: Այնուհետև, հակիրճ անդրադառնալով պավլիկյանների գործողություններին, Հ. Քարրիկյանն այն միտքն է արտահայտում, որ «եռոտմների դեմ պավլիկյանների և արաբների կռիվներին ամենայն հավանականությամբ մասնակցել են մահ քրդերը»²: Այդ կապակցությամբ նա վկայակոչում է X դարի պատմիչ Թեոփանեսին, որը, մկաթագրելով 873 թ. իրադարձությունները, գրում է, որ «Այնտեղից նա (այսինքն՝ Վասիլ I), անցնելով Արզեոս (այժմ՝ Էրջիսս դաղ) լեռը և հասնելով Կեսարիա, ստացավ Կոլոմիայի և Լուլոնի դեմ տարած հաղթանակների պետիսները: Ավետիսներին հաջորդեցին Տարսուսի ամրոցներից և մամիքեական քաղաքներից ձեռք բերված [հաղթանակի] իրեղեն ապացույցները՝ հսկայական քանակությամբ ավար և ռազմագերիներ: Այնտեղ քերվեց մահ քրդերի մի մեծ ամբոխ. [կայսրը] հրամայեց [քրդերին] կոտորել, քանզի նրանք գրեթե ոչ մի բանի պիտանի չէին, քացի այդ, զորքը այնքան էր ծամրաբեռնված, որ չէր ուզում մի ավելորդ գլխացավանք»³:

Այդուհանդերձ, մեր կարծիքով, Հ. Քարրիկյանն արդարացի է, երբ գրում է, որ քրդերի գերումը վկայում է, որ նրանք դիմադրել են կայսրությանը և կարող էին «Բյուզանդիայի դեմ ելնել միայն պավլիկյանների և արաբների հետ դաշնակցած: Հետևաբար, քրդերը կապելո են ունեցել Կարրեասի և Խրիստիքի գլխավորած պավլիկյանների, ինչպես նաև Օմար իբն Աբդալլա

¹ P.M. Бартикян, Дигеностика в курдском эпосе о золоторуком хане? ՀՅԱՀ Գ-Ա «Լեռերի» հասարակական գիտությունների, N 1, 1967, էջ 47:

² Նույն տեղում, էջ, 48.

³ Նույն տեղում: Տես նաև՝ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, ջյազանդական աղբյուրներ, Թ, Կոստանտին Սիրանուծյան, քարզ. քննադիմ., առաջաբան և ծանոթ. Հրաչ Քարրիկյանի, Երևան, 1970, էջ 78:

ալ-Ալկտա՛յի գլխավորած արարների հետ»¹։ Այս առթիվ Հ. Բարթիկյանը պնդում է նաև, որ Գիտզիմնա Ալքիտացու մասին պավլիկյանների էությունը քրդերի համար «օտար և ամժանոք լի», և նրա ընդհանուր մտածվներն արտացոլվել են Ոսկեձեռ խանի մասին քրդական էպոսում։ Գրա հետ մեկտեղ նա եզրակացնում է, որ քրդերը «կարող են որևէ ընդհանրություն ունենալ պավլիկյանների հետ զաղափարական առումով²։ Նժան հնարավորություն, իհարկե, չի բացառվում, և մեր հետազոտությունների արդյունքները նույնպես ցույց են տալիս, որ միջմարդարում քրդերը հաճախ հարում էին հակաավատատիրական և կրոնաքաղաքական նմանատիպ շարժումներին։ Այդ մասին, օրինակ, վկայում է արարական խալիֆայությունում խարիջիների շարժումներին քրդերի մասնակցությունը և այլն³։

Քրդական ցեղերի և հերետիկոս-պավլիկյանների մերձեցումը և այլ հանգամանքներ բավական կարևոր դեր խաղացին կայսրության հետ նրանց փոխհարաբերություններում, ինչը քրդերին հնարավորություն ընձեռեց ավելի սերտորեն շփվել հոռոմների հետ և որոշ դեպքերում հրաժարվել իսլամից։ Այդ առթիվ ուշագրավ է, օրինակ, Իբն ալ-Ասիրի հետևյալ հաղորդումը, ուր նկարագրելով արարների և Բյուզանդիայի ռազմական բախումը՝ նա գրում է, որ 927 թ. Տարսուսում (Տարս) արարները ջախջախեցին բյուզանդացիներին և գերեվարեցին նրանց։ Այնուհետև, արարական զորքը նույն տեղում հանդիպեց «Իբն ազ-Ջուհակ անունով քուրդ ռայխաներից (առաջնորդ, պետ) մեկին, որն ուներ ալ-Ջաֆարա անունով մի ամրոց։ Նա հրաժարվեց իսլամից և անցավ բյուզանդական կայսեր կողմը, որը շատ քարի գտնվեց նրա նկատմամբ և բույլատրեց նրան վերադառնալ իր ամրոցը։ Հանդիպելով ազ-Ջուհակին՝ մահմեդականները կոպեցին նրա դեմ, գերի վերցրեցին և սպանեցին նրա քուրդ

¹ Հ. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 48։

² Նույն տեղում, էջ 53։

³ Այդ մասին տես՝ Ա. Փարսլյան, Քրդերի մասնակցությունը IX-X դդ. խարիջիների շարժմանը (բառ արարական աղբյուրների)։ Երկստուսյալ արևելագետների համադաստակալ X գիտական նստաշրջան, գեկ. քննադատական, 1984 թ., էջ 25-26։

կողմնակիցներին»¹:

Իրն ալ-Ասիրի այս արժեքավոր տեղեկությունը վկայում է սահմանային գոտիների քնակչության որոշ մասի կողմից քչ միայն իսլամից հրաժարվելու, այլ՝ քրիստոնեություն ընդունելու մասին: Դավանափոխությունը, ամենայն հավանականությամբ, քելադրված էր արաբական խալիֆայության նկատմամբ քրդական ավատական վերնախավի դժգոհությամբ և քրիստոնյա աշխարհի հետ շփումներ հաստատելու ցանկությամբ, ինչն, ըստ երևույթին, նրանց երաշխիքներ էր տալիս իրենց դասային աջտոնությունները և ունեցվածքը պահպանելու համար: Եվ վերջապես Իրն ալ-Ասիրի տեղեկությունը ցույց է տալիս, որ կայսրությունը շահագրգռված էր արաբա-քուրդանդական սահմանային գոտիներում հաստատված քրդերի հետ դաշինք ստեղծելու խնդրում:

IX դ. II կեսին և X դ. կեսերին Բյուզանդիային հաջողվեց ամբարազնիլ իր սահմանները: Հատկապես նկատելի էին հաջողությունները կայսրության արևելյան սահմաններում և, չնայած առանձին անհաջողությունների, իրավիճակն ընդհանուր առմամբ բարելավվեց:

Սահմանային գոտիների որոշ ամիրաներ ճանաչում էին Բյուզանդիայի գերիշխանությունը, տուրք էին վճարում և ծառայում նրա քանակում, երբեմն էլ, ինչպես ցույց է տալիս վերոհիշյալ օրինակը, քրիստոնեություն էին ընդունում²: Ռժանք իրենք էին տուրք ստանում և կայսրության հետ պահպանում բարեկամական կամ էլ դաշնակցային հարաբերություններ, իսկ ռժանք էլ չէին դադարեցնում թշնամական գործողությունները Բյուզանդիայի դեմ: Այդ ժամանակաշրջանում կայսրության գլխավոր թշնամիները շարունակում էին մնալ Համդանիները, որոնք իրենց էին ենթարկել րաջի Մոսուլից, նաև՝ Հալեպը³: Մակայն, X դ. II կեսին կայսրության արևելյան սահմաններում ակտիվ ռազմական գործողություններ էին ծավալել նաև իրանական Բուիները:

¹ Իրն ալ-Ասիր, VI, էջ 19:

² История Византии, т. 2, М., 1967, с. 208.

³ Նայն տեղում:

Այսպիսով, հիշյալ ժամանակաշրջանում Վերին Միջագետ-
քում, այդ թվում և Հայաստանի հարավ-արևմտյան շրջաննե-
րում, փաստորեն, Բյուզանդիայի հարևանությամբ պատմական
ասպարեզ եկավ քուրդ Մարվանյանների դինաստիան:

Որքան էլ տարօրինակ լինի, դիտարկվող ժամանակաշրջա-
նում Մարվանյանների և Բյուզանդիայի փոխհարաբերությու-
ններում սրման սեմանատիպ երևույթներ չէին նկատվում: Ըստ մեր
տրամադրության տակ եղած նյութերի, Բաղը Բյուզանդիայի
հետ բարեկամական հարաբերություններ ուներ և սիրալիք վե-
րաբերվեց կայսր Վասիլ II (976-1025)¹: Դա հիմք է տալիս են-
քաղյրելու, որ նա գործել է ոչ այնքան ինքնուրույն, և Բյուզան-
դիան հատուկ հետաքրքրություն դրսևորեց Բուխների և Համդա-
նիների դեմ նրա գործողությունների հանդեպ:

Այլ կերպ ասած, կարելի է ենթադրել, որ Դիյար Բաքրում և
նրան հարող շրջաններում Մարվանյանների երևան գալը և մա-
նավանդ Բատ ալ-Ջուրդիի գործողություններն ինչ-որ չափով
համաձայնեցված էին կայսրության հետ: Հանգամանք, որը մեր
կարծիքով նրան հնարավորություն տվեց մահմադական ամիրա-
յությունների դեմ դիմելու լայնածավալ, միաժամանակյա ռազ-
մական գործողությունների: Հետևաբար, արանց կայսրության
դրևկ աջակցության նա հազիվ թե կարողանար հասնել հաջո-
ղությունների:

Ինչո՞վ կարելի է բացատրել այս ամենը: Կարծում ենք, որ
հարցը պարզ է, և հատուկ մեկնաբանությունների կարիքը չկա:
Մակայն, պետք է ասել, որ Բյուզանդիան չի ցանկացել, իհարկե,
խառնվել Բաղի գործերին, քանզի վերջինիս գործողություններն
ընդդեմ մահմադական ամիրայությունների, հատկապես Բուխնե-
րի, լրիվ համընկնում էին նրա շահերին: Բաղը, փաստորեն,
հանդիսանում էր Մոսուլի ռազմատեսնչ Բուխների միակ մրցակի-
ցը, որոնք գրավելով ամուր դիրքեր, պայքար էին մղում Ջազիր-
այի Հանդանիների դեմ: Այլ կերպ ասած, միայն Բաղի օժան-
դակությամբ կարելի էր հակահարված հասցնել Բուխներին և
կասեցնել նրանց առաջխաղացումը դեպի հյուսիս: Անա թե ին-
չու, Բյուզանդիան չէր փորձում Բաղի գործողություններն սահ-

¹ Աբու Հուրա՝ սու-Նուրջաստրի, Ջալլ յաջալիք սլ-ուում, սլ-Կաշիրա,
1916, ս. 36 (այստեևեև՝ Աբու Հուր, Ջալլ):

մանափակել և որոշ դեպքերում, ամենայն հավանականությամբ, ցուցաբերում էր նրան ռազմական օգնություն¹:

Նշվածի օգտին է խոսում Արու Շուրա՝ առ-Ռուզրավարիի՝ Բուի իշխան Արուտ աղ-Դաուլայի, ապա նրա որդի Սամսամ աղ-Դաուլայի (983-987թթ.) և քյուզանդական կայսր Վասիլ II միջև տեղի ունեցած բանակցությունների մասին խիստ ուշագրավ և արժևազոր տեղեկությունը: Ըստ Արու Շուրայի մյուսերի, բանակցությունները երկու կողմերի միջև սկսվեցին մտաավորապես 980-ական թթ. Կ.Պոլսում, ուր և ուղարկվեց Արուտ աղ-Դաուլայի սուրհանդակ Իբն Շահրամը: 982թ. Բուխնեթի և Բյուզանդիայի միջև կնքվեց տասնամյա զինադադար: Բանակցությունների ընթացքում Բյուզանդիան պարտավորվեց Բուխնեթին փրադարձնել Դիյար Բաքրի որոշ ամրոցներ, չմիջամտել Հալեպի Համդանիների ներքին գործերին և ճանաչել նրանց տարածքը, որպես Բուխնեթի իշխանության բաղկացուցիչ մասը, Բուխնեթին միացնել Բադի տիրույթները: Բուխնեթը Բյուզանդիայի առջև հարց բարձրացրին, որ մա հրաժարվի Բադին օգնել և հարաբերությունները խզի նրա հետ: Այլ պայմանների բժում, Բուխնեթը պարտավորվում էին կայսրին հանձնել ապստամբ Վարդ Սկլեբոսին², որը գտնվում էր Բադդադում՝ 979թ-ի պարտությունից հետո³: Այս համաձայնագիրը սակայն չստորագրվեց Արուտ աղ-Դաուլայի կողմից, որովհետև նա մահացավ 983թ-ին: Արուտ աղ-Դաուլայի որդի Սամսամ աղ-Դաուլամ վերանայեց համաձայնագիրը Իբն Շահրամի՝ Բյուզանդական սուրհանդակ Նիկիփորի հետ Մոսուլ վերադառնալուց հետո՝ կատարելով որոշ ուղղումներ: Սամսամ աղ-Դաուլան հրաժարվեց Բադ ալ-Քուրդիի տիրույթները Բուխնեթին միավորելուց, այն պայմանով, որ Բյուզանդիան նրան օգնություն չի ցուցաբերի և ապաստան չի հասկանացնի՝ Բո-

¹ Նույն տեղում, էջ 36, 39:

² 976թ. ամռանը Վարդ Սկլեբոսը ապստամբության բարձրացրեց, որին հարում էին զինվորական ազնվականության ներկայացուցիչները: Նրան օժանդակում էին նալ ափսոսանքերը և Բյուզանդիայի ասիմանային գոտիների մահմեդականները: 979թ. մայրս ամսին կրած պարտությունից հետո Վարդ Սկլեբոսը փախուստի դիմեց և հայտնվեց Բադդադում: *Տես՝ Историк Византии, т. II, с. 218.*

³ Այս Շուրա, Ձայլ, էջ 36:

իմնելից պարտվելու պարագայում¹: Համաձայնագրի այս կետերը, ինչպես նշում է Աբու Շուբան, ստորագրվեցին Կ.Պոլսում²:

Այսպիսով, վերը շարադրված փաստերը հիմք են տալիս ավելորդ անգամ հաստատել, որ Բաղը, այսպես թե այնպես, գործել է Բյուզանդիայի հովանավորության ներքո, և պատահական չէ, որ Բուխները ձգտում էին ինչ-որ կերպ ընդհանուր լծու գտնել կայսրության հետ: Իսկ ինչ վերաբերում է համաձայնագրի առաջին տարբերակին, որով Բաղի տիրույթները միացվում էին Բուխներին, ապա դա, մեր կարծիքով, նրել է Բյուզանդիայի կողմից լուկ հերքական դիվանագիտական խաղ: Կասկածի տեղիք չի տալիս այն հանգամանքը, որ Բուխները հազիվ թե կարողանային Բաղին ենթարկել իրենց, ինչում համոզված էր նաև Բյուզանդիան:

Դիմելով ճակատ գիջումների՝ կայսրությունը ցանկություն ուներ ձերբակալել այստամբ Վարդ Մկլերտսին, ինչը կկանխեր Բյուզանդիային սպառնացող մեծ վտանգն արևելյան սահմաններում: Արժե ավելացնել, որ երևի թե այս աննոյ լավ հասկացում էր նաև ինքը՝ Մամսամ աղ-Դաուլան, որն էլ համաձայնագրի տեքստում որոշ փոփոխություններ կատարեց: Ինչպես հայտնի է դառնում մեզ հասած աղբյուրներից, համաձայնագրի կետերը լիովին չկիրարկվեցին և ամբողջությամբ կյանքի չկոչվեցին: Այդ մասին, օրինակ, վկայում է այն փաստը, որ Բուխները այդպես էլ Բյուզանդիային չհանձնեցին Վարդ Մկլերտսին: Համաձայնագիրը գործնականորեն ոչ մի ճեղով չազդեց քրդերի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների վրա: Ընդհակառակը, համաձայնագրից հետո Բաղն էլ ավելի աշխուժացավ և ռազմական լուրջ հաջողությունների հասավ Բուխների և Համդանիների նկատմամբ:

986թ. օգոստոսի 17-ին բյուզանդական զորքերը կայսր Վասիլ II գլխավորությամբ քախքախվեցին բուղարների կողմից: Զանոորդ դար կայսրությունն աշղախի պարսություն չէր կրել³: Կայսրը իրաչքով փրկվեց մահից՝ հայկական հեծելազորի օգ-

¹ Նոյն տեղում, էջ 39.

² Նոյն տեղում.

³ История Византии, т. II, с. 218.

Նուրյամբ¹: Բյուզանդիայի պարտության մասին լուրերը հասան Բաղդադ, և Վարդ Սկլերոսն օգնության խնդրանքով դիմեց ժամանակի ազդեցիկ դեմքերին: Երբ 987թ-ի սկզբներին նա նորից հայտնվեց կայսրության սահմաններին և զանի նկատմամբ նորից նկրտումներ դրսևորեց, ինչպես ընդգծում է քրիստոնյա արարալեզու Յահյա իբն Մահդը, նրան օգնեցին արաբ Ուկայիները, Նումայրիները, հայերը և ուրիշներ: Վարդ Սկլերոսի խնդրանքով, Դիյար Բաքրի տիրակալ Բադ ալ-Զուրդին նրա տրամադրության տակ ուղարկեց եզոբ զորամիավորումներ՝ իր եղբայր Աբու Ալիի գլխավորությամբ²: Միլիտինե քաղաքից ապաստամբը պատրաստվում էր հարձակման³: Մակայն, նա նման քայլի չդիմեց՝ Փոկասի ապստամբության հետևանքով և կայսեր հետ խաղաղության պայմանագիր կնքելուց հետո զենքը վայր դրեց:

Ասվածի կապակցությամբ պետք է ընդգծել, որ ընդունելով այսպիսի որոշում, Բադը, հավանաբար, ցանկանում էր Վարդ Սկլերոսին դարձնել իր նոր դաշնակիցը հաղթանակի դեպքում, քանի որ բուլղարների կողմից Բյուզանդիայի պարտությունից հետո և Փոկասի ապստամբության (987-989թ.) պատճառով ստեղծվել էին մպաստավոր պայմանները: Բադի նման որոշումն ըստ էության քաջասակն ազդեցություն չթողեց Բյուզանդիայի և Մարվանյանների փոխհարաբերությունների վրա: Համեմայնդեպս, սկզբնադրյուրները լսում են այդ մասին:

Աբու Ալի իբն Մարվանի օրոք, ինչպես նշվեց, բյուզանդական կայսր Վասիլ II հիջ.382(992) թ. առաջին փորձը կատարեց գրավելու Մամազկերտը, Արճեշը, Բարքարի (Բերկրի) և այլ շրջաններ: Իբն ալ-Ազրակը գրում է, որ Աբու Ալին հանկարծակի հարձակվեց բյուզանդական զորքի վրա և քախջախեց այն: Ապա երկու կողմերի միջև տեղի ունեցած բանակցություններից հետո կնքվեց խաղաղության դաշնագիր՝ 10 տարի ժամկետով⁴:

¹ Լևո, Հայոց պատմության, II, Երևան, 1967թ., էջ 602:

² Yahia Ibn Said Antiochenais, *Aecedant.-Corpus Scriptorum Christianorum Orientalium Curantibus-Scriptores Arabici-*, ser. III, t. VII, Paris, 1909, p. 167. Այս առթիվ նմանատիպ տեղեկություն հայտնում է նաև Ասադիկը: *Shu'* նքս նշվ. աշխ., էջ 247:

³ Լևո, Հայոց պատմության, II, Երևան, 1967թ., էջ 602:

⁴ Իբն ալ-Ազրակ, էջ 61:

Յավոք, աղբյուրները լուծման համաձայնագրի մասնամասնությունների մասին, ինչն, իհարկե, բույլ չի տալիս մեզ այն մեկնաբանել: Կարելի է միայն մշել, որ այն, անկասկած, Աբու Ալի իրն Մարվանի համար ուներ հսկայական ռազմաքաղաքական նշանակություն և նրան բույլ էր տալիս պահպանելու իր դիրքերը:

Մարվանյանների և Բյուզանդիայի միջև փոխհարաբերությունները մտան պատմական նոր փուլ Մուսմահիդ աղ-Դաուլայի օրոք: Կայունացմանը ամրապայմաններին կյանքը՝ նոր Մարվանյանը, ի տարբերություն նախորդների, իր գործունեությանն հենց սկզբից դիվանագիտական կապեր հաստատեց Արբասյան խալիֆայության, Բուխների, Եգիպտոսի Ֆատիմյանների և այլոց հետ:

Այսպիսով, Մարվանյան դինաստիան Դիյար Բաքրում, Մուսմահիդ աղ-Դաուլայի օրոք, որոշ չափով ձևոք է քերում համաձայնեցողական ճանաչում և, քնակամարաբ, նրա համդեպ վերաբերմունքը պետք է փոխեր մաս քրիստոնեական Բյուզանդիան: Այժմ, ինչպես նրբե, կայսրությունը լիովին կարող էր հենվել ձայնեցողական աշխարհում Մուսմահիդ աղ-Դաուլայի ունեցած հեղինակության վրա և նրա օգնությամբ լուծել շատ խնդիրներ, որոնք վերաբերում էին մահմեդական Արևելքին և արաբա-բյուզանդական սահմանամերձ գոտիներում գոյություն ունեցող տարածքային վեճերին:

990-ական թվականներից սկսած, Հալեպի ամիրա Մայֆ աղ-Դաուլա աղ-Համդանիի մեռնելուց հետո կայսրության գլխավոր քշմամին դարձան Եգիպտոսի Ֆատիմյանների, որոնք մշտապես առչավում էին Միդիա և պատերազմում ոչ միայն Բյուզանդիայի, այլև՝ Հալեպի Համդանիների՝ կայսրության դաշնակիցների և հարկատուների դեմ¹: Այս ամենը, և իհարկե նաև այլ խնդիրներ, դարձան կայսր Վասիլ II և Մուսմահիդ աղ-Դաուլայի համդիպման և նրանց միջև համաձայնագրի կնքման մի նոր առիթ: Այս կապակցությամբ Իբն ալ-Ազրակը գրում է, որ «Հիջ. 390թ. (1000թ.) բյուզանդական կայսր Վասիլը ժամանեց Ամիդի և Մայաֆարիկի մի շրջաններ, որտեղ հանդիպեց Մուսմահիդ աղ-Դաուլային: Նրանք դաշինք կնքեցին, և նա (այսինքն՝ կայս-

¹ История Византии, т. II, с. 224.

քր-Ա. Փ.) անվճառ վերադարձավ»¹:

Այս առթիվ որոշ մանրամասնություններ է հայտնում Յահյա իրն Մախիչը: Նկարագրելով կայսրի նոր արչավանդը դեպի Սիրիա՝ նա նշում է, որ Վասիլ II զորքերի հետ մուտավորապես վեց ամիս զանվում էր Տարսուսի մարզում՝ «մահմեդականների երկիր» վերադառնալու համար: Երբ կայսրը լուր ստացավ Ղազիթ սպ-կոյորապադառի մահվան մասին², նա զմաց այնտեղ և զրավեց նրա ողջ տիրույթը: «Նրա մոտ եկավ քրդերի ամիրան՝ Մուսմահիդ աղ-Ղատուլա Աբու Մահի իրն Մարվանը՝ Դիյար Բաքրի տիրակալը, որին կայսրն ընդունեց և շնորհեց մագիստրոսի /տիտղոս/ և [նշանակեց] Արևելքի Դուքսը, լավ վերաբերվեց, բարեգութ գտնվեց նրա հանդեպ և հետ ճանապարհեց իր երկիրը»³:

Խոսելով Վասիլ II և Մուսմահիդ աղ-Ղատուլայի հանդիպման մասին՝ Ասողիկը նշում է, որ այն տեղի է ունեցել Երզնկայում, որտեղ կայսրը Մարվանյան ամիրային շնորհեց մագիստրոսի կոչում: Այնուհետև, Վասիլ II-ը երամայեց Չորրորդ Հայաստանում և Տարոնում գտնվող իր զորքերին, որ, երբ ամիրան ցանկանա՝ նրան օգնեն զենքով⁴:

Անկասկած, կայսեր և քուրդ ամիրայի հանդիպման վայրի ճշգրիտ տեղը այնքան էլ կարևոր չէ, քանզի ինքնին հետաքրքրական և ուշադրության արժանի նրանց հանդիպման փաստն է:

Ըստ եղած տեղեկությունների՝ այն տեղի ունեցավ 1000 թվականին: Չնայած հանդիպման և մանրամասների մասին սկզբնաղբյուրները չափազանց ժլատ են, բայց առկա հաղորդումները լիովին թույլ են տալիս մեզ նշելու, որ այդ ժամանակվանից ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխության հետևանքով Մարվանյանների և Բյուզանդիայի փոխհարաբերությունները նոր հարթության վրա դրվեցին: Եթե անցյալում նրանց հարաբե-

¹ Իրն սպ-Ազգակ, էջ 84; տես նաև՝ Իրն սպ-Ասիք, VII, էջ 144; Աբու-լ-Ֆարաջ Իրն սպ-Իրքի, էջ 173:

² Խոսքը վերաբերում է Ղազիթ կոյորապադառին (960-1000թթ.) Տայքի իշխանին: Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, III, Երևան, 1976, էջ 111:

³ Yachia Ibn Said, նշվ. աշխ., էջ 184: Տես նույնի ձեռագիրը՝ ՌԳՊ արևելագիտության ինստիտուտի Սամկա Պետրոբուրգի յուսմանուցիի արքեպիսկոպոսի ձեռագրափոնդ, քիվ 1708, I, 83բ:

⁴ Ասողիկ, էջ 276: Տես նաև՝ I, եռ, Հայաց պատմություն, II, էջ 610:

րությունները հիմնականում բերեցանական ընդոյր էին կրում, ապա այժմ, ձեռք բերելով այլ նշանակություն, առաջ եկան նոր պայմաններ՝ միասնաբար համդես գալու համար, ինչպես ամբողջ տարածաշրջանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Մագիստրոսի պատվավոր կոչումը և Արևելյի Դքսի պաշտոնը, անկասկած, շատ դեպքերում մաս պարտադրող էին: Մումհահիդ ադ-Ղաուլյան լիովին վերանայեց իր դիրքորոշումը կայսրության նկատմամբ: Որպես հզոր երկրի դաշնակից, մա կարող էր և պարտավոր էր խառնվել Բյուզանդիայի հարկատուների և նրան ենթակա շրջանների արարա-քյուզանդական սահմանամերձ գոտիների գործերին¹:

Այսպիսով, Մումհահիդ ադ-Ղաուլյանի օրոք Մարվանյանների և Բյուզանդիայի փոխհարաբերությունները հասան իրենց գագաթնակետին: Գեփսոյ չէ նկատել, որ դրանով կայսր Վասիլ II վարում էր խորամանկ քաղաքականություն և իր արևելյան սահմանների անվտանգությունն աստիճանաբար համար աշխատում էր ամեն կերպ սիրաշահել մաս Մարվանյաններին: Այլ խոսքով, դա, մեր կարծիքով, ինչ-որ չափով մաս նշանակում էր Բյուզանդիայի ոչ պաշտոնական ազդեցությունը նշված տարածաշրջանի քրդերի վրա:

Մեզ հասած տեղեկությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանատիպ երևույթներ չնշմարվեցին Մարվանյան ամիրա Նասր ադ-Ղաուլյանի օրոք: Անշուշտ, մա մույնպես շարունակում էր ավանդական քարեկամական փոխհարաբերությունները Բյուզանդիայի հետ, քայք տարբերվում էր իր խաղաղ քաղաքականությամբ և, ավելի քան կես դար իշխանության գլուխ կանգնած լինելով, հիմնական ուշադրությունն սևեռեց իշխանության ներքին կյանքին:

Ըստ արար հեղինակների տվյալների, Վասիլ II-ի մեռնելուց հետո (1025թ.) Մարվանյանների և Բյուզանդիայի միջև առաջ եկան որոշ տարածայնություններ: Տեղին է նշել, որ կայսրն իր 40-ամյա տիրակալության շրջանում քրդերի հետ հիմնականում ունեցավ քարեկամական հարաբերություններ: Ընդդիմ նրա խնչացի քաղաքականության չափազանց քարճրացավ կայսրության հեղինակությունը, որից հետո Բյուզանդիան նրբնք չունե-

¹ Այդ մասին տես՝ Yabla Inb Said, էջ 210:

ցավ այդպիսի հզորություն, և նրա սահմաններն այդչափ հսկայածավալ տարածքներ չբնդգրկեցին¹:

Այսպիսով, Վասիլ II հաջորդների՝ Կոստանդին VIII (1025-1028), Ռոմանոս III (1028-1034), Միքայել IV (1034-1041), Կոնստանդին IX (1024-1055) որոշ, ինչ-որ չափով փոխվեցին Բյուզանդիայի և Սարգանյանների փոխհարաբերությունները:

Վասիլ II-ից անմիջապես հետո սկսվեցին որոշ հակամարտություններ առ-Ռիիա (Եղեսիա) քաղաքի համար, որի մասին խոսվեց վերևում:

1035թ. Եղեսիա քաղաքի արար Նումայրիներն ու բյուզանդական զորքերը նախապատրաստվեցին հարձակվելու Մարվանյան իշխանության վրա: Նասր աղ-Դաուլայի կոչով հավաքվեց մեծաքանակ ամբոխ: Նրան օգնության շտապեցին, ինչպես նշում է Իբն ալ-Ասիրը, հարևան մահմեդական ամիրաները՝ Եղեսիայի վրա հարձակվելու նպատակով²: Մինչ այդ, ըստ պատմիչի, Նասր աղ-Դաուլան Նումայրիների և բյուզանդացիների մտադրության մասին տեղյակ պահեց կայսերը՝ մեղադրելով նրան զինադադարի մասին համաձայնագիրը խախտելու մեջ: Երբ կայսրը իմացավ, որ մահմեդականները պատրաստվում են հարձակվել Եղեսիայի վրա, սուրհանդակ ուղարկեց Նասր աղ-Դաուլայի մոտ, ներողություն խնդրեց կատարվածի համար, հայտնեց, որ իբր ինքը ոչինչ չի իմացել այդ մասին, և հրամայեց իր քանակին դադարեցնել հարձակումը: Այնուհետև, Իբն ալ-Ասիրն ավերացնում է, որ կայսրը Նասր աղ-Դաուլային քանկարժեք նվեր ուղարկեց, և նա հրաժարվեց իր մտադրությունից³:

Այս կատարվածությամբ Յահյա իբն Մախրը գրում է, որ մահմեդականների՝ Եղեսիա քաղաքի վրա հարձակման առթիվ, իբր Նասր աղ-Դաուլան մամակ է գրել բյուզանդական կայսերը, ներողություն խնդրել, պատճառաբանելով քե իբր վախից նա իր քանակն ուղարկել է Եղեսիա՝ մահմեդականներին օժանդակելու համար⁴:

¹ История Византики, т. II, с. 225.

² Իբն ալ-Ասիր, VIII, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 9: Տես նաև՝ Իբն ալ-Ասրը, I, էջ 427:

⁴ Yahia Ibn Said, p. 270.

Օճայած այս դեպքերից հետո Նասր աղ-Դաուլան փորձեց գրավել Եդեսիա քաղաքը, սակայն դա նրան այդպես էլ չհաջողվեց¹: Մի քանի տարի անց, 1048թ-ին, որոշ չափով սրվեցին Մարվանյանների և Բյուզանդիայի փոխհարաբերությունները: Կոնստանդին IX Նասր աղ-Դաուլային մեղադրեց այն քանի համար, որ սահմանամերձ գոտիներում ոմն Ասֆար ար-Յաղլիբին Ռաս ալ-Այնից ավազակային հարձակումներ էր կատարում, և որ նա կանխարգելիչ որևէ քայլ չէր ձեռնարկում: Ուղերձում կայսրն, ըստ Իբն ալ-Ասիրի, ուղղակի գրում էր. «Ղու գիտես, որ մեր միջև բարեկամություն է հաստատվել, իսկ այդ մարդը (այսինքն՝ Ասֆար ար-Յաղլիբին-Ա.Փ.) այդպիսի սանձարձակ է դարձել: Եթե դու հրաժարվում ես համաձայնագրից, ուրեմն հայտնիք մեզ, որ մենք նրա դեմ միջոցներ ձեռք առնենք...»²: Ինչպես հայտնի է դառնում Իբն ալ-Ասիրի այս հարցրությունից, Նասր աղ-Դաուլան ձեռքարկելով է Ասֆար ար-Յաղլիբիին՝ Բյուզանդիայի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով՝ կատարելով կայսեր պահանջները³:

Այսպիսով, ինչպես և նշվեց, Վասիլ II-ի մահից հետո Մարվանյանների և Բյուզանդիայի փոխհարաբերությունները, տարբեր պատճառներով, որոշ չափով բարդացան, սակայն մեջբերվող տեղեկությունները ցույց են տալիս, որ նրանց միջև հիմնականում պահպանվում էր խաղաղության և դաշնակցային համաձայնագիրը: Բացի վերոհիշյալից, աղբյուրներում այլ տեղեկություններ չեն արձանագրվել Մարվանյանների և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին: Հանգամանք, որը հիմք է տալիս ենթադրելու, որ, ամենայն հավանականությամբ, հետագա տարիներին նրանց հարաբերություններում կտրուկ փոփոխություններ տեղի չունեցան: Դա միանգամայն հասկանալի է, որովհետև 1040-ական թվականներից սկզբնաղբյուրների ուշաղբյուրները հիմնականում սևեռված էր սելջուկների արշավանքներին և նրանց ռազմաքաղաքական գործողություններին:

Ամփոփելով վերոշարադրվածը, հարկ է նշել, որ Մարվա-

¹ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 11:

² Նույն տեղում, էջ 46:

³ Նույն տեղում:

մյանների և Բյուզանդիայի միջև փոխհարաբերությունները, ինչպես ցույց տվեցին մեր կողմից օգտագործված մյուսերը, հիմնականում կրում էին քարեկամական բնույթ: Իհարկե, երկու կողմերի ձգտումը՝ նման հարաբերությունների հաստատմանը պատահական բնույթ չէր կրում, այլ լիովին համընկնում էր նրանց ռազմաքաղաքական և տնտեսական շահերին:

Իր գերիշխանությունը պահպանելու նպատակով կայսրությունը դիվանագիտական խաղեր էր տանում Մարվանյանների հետ՝ փորձելով պաշտպանել ոչ միայն իր սահմանամերձ շրջանները մահմեդական ամիրայությունների հարձակումներից, այլև՝ ընդարձակել իր ազդեցության ոլորտը և առավելության հասնել տարածաշրջանում:

Բարեկամական հարաբերությունների պահպանումը հսկա տերության հետ ի վերջո որոշեց Մարվանյան դինաստիայի ճակատագիրը: Այլ խոսքով, իրենց գոյությունը պահպանելու համար Մարվանյանները որոշ իմաստով պարտական էին Բյուզանդիայի նմամատիպ դիրքորոշմանը, որը թույլ տվեց նրանց մեկ դարից ավելի հիմնավորվել Գիյար Բաքրում:

ՔՐԴԵՐԸ ՄԵՇ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ

1. ԹՅՈՒՐԵՆՐԻ ՏԱՐԱՃՈՒՄԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Պատմության քառերարժեքում սելյուկ-քյուրքների երևան գալը պատմական րախտորոշ փուլ համդիսացավ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների կյանքում: Ազագակային ասպատակությունների և ռազմական ակտիվ գործողությունների հետևանքով X-XI դդ. սելյուկ-քյուրքական ցեղերին աստիճանաբար հաջողվեց իրենց տիրապետությունը հաստատել լայնարձակ տարածքների վրա՝ սկսած Միջին Ասիայից մինչև Իրան, Փոքր Ասիա, Անդրկովկաս և այլն, որով տեղեցիցի թաղաքական մի նոր և բարդ իրադրություն, որից կախված էր Արևելքի թագմաթիվ ժողովուրդների րախտը¹:

Հնոսավոր Միջին Ասիայի քյուրքական վայկատուն ցեղերի խոշոր տեղաշարժերն ու արտագաղթերը մասամբ կապված էին Մերձավոր և Միջին Արևելքում արարների վարած թաղաքականության, իսլամի տարածման և դրանց հետևանքով տեղեծված նպաստավոր պայմանների հետ: Մինչ արարական նվաճումները, քյուրքական ցեղերը, որոնց նախնիները վաղ ժամանակներից ապրում էին Չինաստանի հյուսիսային շրջաններում, սկսել էին արդեն տեղաշարժվել և IV-VI դդ. հետզհետե տարածվել դեպի Արևմուտք՝ հասնելով Կասպից ծովի, ապա՝ Դանուբի ափերը:

Նախաիսլամական ժամանակաշրջանում քյուրքական ռազմատենչ այդ ցեղերի խոշոր տեղաշարժերն ունեին մի շարք դրդապատճառներ: Այդ տեղաշարժերը, որոնց հիմնական

¹ Ավելի մանրամասն տես՝ M. T. Houtsma, *Seldjuka.-EI, V, IV*, B.H.Заходер, *Хорасан и образование государства сельджуков.- Вопросы истории.*-N 5-6, М., 1945, с. 119-145...

պատճառներից մեկը նոր արտազայրերի հայթայթումը, սովորաբար ուղեկցվում էին տեղաբնիկ ժողովուրդների հետ արյունահեղ ընդհարումներով: Հարավից քյուրքերին (հեփթաղներին) այդպես էլ չհաջողվեց կուտրել Մասանյանների ամուր դիմադրությունը, քեպետն այս հատվածում նրանք քավական աշխույժ գործողություններ էին վարում: Այնուամենայնիվ, նման տեղաշարժերից մեկի ընթացքում քյուրքական մի ցեղ X դարում դուս եկավ Արևմտյան Թյուրքեստանից և Խորասանում հիմնեց Ղազնավիների իշխանությունը (X-XII դդ)¹: Մրևնույն ժամանակ, X դ. երկրորդ կեսին, Թյուրքեստանում սկսվեց մի նոր շարժում, որից հետագայում ծնվեց սելջուկյան աշխարհակալությունը:

Թյուրքերի (արաբ.- աք-թուրք) հետ արաբների ծանոթությունը կատարվել է հիմնականում պարսկական աղբյուրների միջոցով: Երկու կողմերի փոխշփումները տեղի են ունեցել, ինչպես կտեսնենք, ավելի ուշ, Օմայյան խալիֆայության ժամանակներից: Հայտնի է, որ արաբները Խորասանից մուտք գործեցին Խորեզմ (VIII դ. սկիզբ) և հետզհետե գրավեցին Մավարանմահրը (արաբ.- Մավարանմահր նշ. է «զետից այն կողմ, ամրոզետյան մարզ»՝ Անու-Ղարիա գետից այն կողմ գտնվող միջինասիական մահանգները) և խորացան իրանական ժողովուրդներով բնակեցված այս երկրամասում (Մոզդը՝ իր Բուխարա և Մամարկանդ քաղաքներով, Խորեզմը և այլն): Մինչ այդ, այստեղ ներխուժած քյուրքական օղուզ (թուրքման) ցեղերը համարյա լրիվ կերպարանափոխել էին իրանական այս քաղաքակիրթ մահանգները, որոնք հետագայում ամուր հենարան դարձան հիշյալ ցեղերի՝ դեպի Իրան և Առաջավոր Ասիա կատարած ավերիչ ասպատակությունների համար: Մոզդի (Մոզդիանա) և Խորեզմի իրանական քնիկ ժողովուրդներն անկախող գտնվեցին հակահարված տալու վայրագ այդ ցեղերին և Մավարանմահրի զգալի հատվածը ժամանակի ընթացքում բրբացավ: Այստեղ, այդ բվում նաև խալիֆայության հյուսիս-արևելյան սահմանային գտախներում (մասնավորապես Գորգանում, Ղիփխտանում, Կասպից ծովից դեպի հարավ-արևելք ընկած չրջաններ) քյուրքերի ներթափանցումը կատարվեց ամաղմուկ և ընթացավ քավական սահուն ձևով:

¹ К. Босworth, Мус. дьял., с. 237-239.

Իրանական այս մահաճգնորում բնակություն հաստատած ցեղերը, ինչպես նաև Ղազմավիները, ընդունելով իսլամը և շփվելով արաբամահմեդական աշխարհի հետ, ընկան արաբական մշակույթի ազդեցության տակ: Իսկ նրանց մյուս ցեղակիցները, որոնք բնակվում էին Կենտրոնական Ասիայի արևելյան տարածքներում, բնականաբար, գտնվում էին շինական մշակույթի ազդեցության ներքո: IX դ. արաբամահմեդական աշխարհում արդեն գոյություն ունեին որոշակի գիտելիքներ բյուրքերի մասին: Միջնադարի արաբալեզու պատմողական գրքեր թուր արքյուրներում վկայված են րազմաթիվ տեղեկություններ բյուրքական տարրեր ցեղերի մասին: Բավական է նշել, որ IX դարից սկսած, արաբ աշխարհագիրներն իրենց երկերում հիշատակում են բյուրքական մի շարք ցեղերի անուններ, ամդրադառնում դրանց կենցաղին և հավատալիքներին: Այնուամենայնիվ, խալիֆայության կենտրոնական շրջաններում բյուրքերի մասին հիմնական պատկերացումները ճևալորվեցին բյուրք ռազմագերիների ու ստրուկների միջոցով: Ուշագրավ է նշել, որ, օրինակ, Աբրահայան հարստության սկզբնական շրջանում Խորասանի և Արևելքի կառավարիչները որպես հարկ Քաղդայ էին ուղարկում միմիայն բյուրք ռազմագերիներ և ստրուկներ: X դ. աշխարհագիր ակ-Մուկարդասին այս առթիվ նշում է, որ Խորասանի տարեկան հարկը կազմում էր տասներկու հազար բյուրք ստրուկ¹:

Անձայրածիր արաբական խալիֆայությունում IX դարից սկիզբ առած ժողովրդական շարժումներն ու հակաարքասյան եռուզումները, ինչպես նաև բուն արքունիքում զգվտողները և իրանական Բարձաքիների դավադրությունները խալիֆաներին քերեցին այն եզրակացության, որ անհրաժեշտ է ստեղծել ուժեղ ռազմական մի սուլթանատ՝ կազմված ոչ-արաբ և ոչ-իրանցի տարրերից: Ահա այդ էր պատճառը, որ սկսվեց մեծ տեղ առնել բյուրք ռազմագերիներին և ստրուկներին, որոնք քերվում էին Մավարան-նահրից և խազարների երկրից: Այսպիսով, սկիզբ դրվեց բյուրք գերիների՝ դուլամների (դլաման, մամալիք) առաջխաղացմանը խալիֆայության զինվորական նվիրապետության մեջ:

Թյուրք ռազմիկների առավելությունը նախ և առաջ կախված էր այն քանից, որ նրանք որևէ կապ չունեին նոր միջավայրի

¹ Al-Mukaddasi, p. 34.

հետ և նրանց համար խորք էին տեղաբնիկ ժողովուրդների շահերը: Քյուրքական գվարդիան սկսեց օգտագործվել ամենից առաջ խտովահույզ մայրաքաղաքում՝ Բաղդադում տարբեր խժոճություններ և հուզումներ ճնշելու համար: Այն դարձավ հուսալի հենարան՝ խալիֆայությունը պաշտպանելու և ժողովրդական շարժումները ճնշելու գործում: Թեև IX դ. սկզբներին քյուրքական գվարդիան իրենից ռազմական մեծ ուժ էր ներկայացնում, այդուհանդերձ չէին դադարում հակաարքայան կելոյքները: Ռազմական լավ պատրաստվածություն ստացած քյուրք գվարդիականներն ուղարկվում էին հակաարքական և հակաֆեոդալական հուզումների ամենաքեժ կետերը: Օրինակ, քյուրք գինվորականները զգալի տեղ էին զբաղեցնում շուրջ քսան տարի տևած իրանցի Բարեկի գլխավորած խուտամիների շարժման դեմ մարտնչող արքայական բանակի հրամանատարական կազմում: Նրանց ջանքերի շնորհիվ էր, որ ի վերջո ձերբակալվեց Բարեկը և 838թ. մահապատժի ենթարկվեց Մամարայում:

Քյուրքական ռազմիկ տարրի դերը այնքան քարճրացավ խալիֆայությունում, որ Արբասյան խալիֆաները հետզհետե խաղալիք դարձան նրանց ձեռքին: Եվ դա հատկապես ակնհայտ էր ալ-Մուսափմի օրոք: Քյուրքական ծագմամբ քարճրաստիճան հրամանատարությունն սկսեց խստնվել արքունիքի գործերին՝ զանրակերպ անելով անցանկալիներին և առաջադրելով առավել ձեռնառու խալիֆաներին: Փաստորեն իրանական Բարմաքիների փոխարինելու եկավ քյուրքական տարրը, որն իր ձեռքը վերցնելով արքունիքի հիմնական գործերը, սկսեց մեծապես ազդել Արբասյանների թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության վրա:

Միջնադարյան արաբ պատմիչների խալիֆայությունում առաջացած քառասային վիճակը և աստիճանական քայքայման ողջ մեղքը հաճախ քարդում են քյուրքական տարրի վրա, իրավագիտրեն ընդգծում նրա ունեցած քացասական մեծ դերը Արբասյանների իշխանության կյանքում:

Գրավելով ռազմական քարճր աստիճաններ, պաշտոններ՝ քյուրքական գվարդիան իսկապես քուլացրեց Արբասյան խալիֆայության քաղաքական և տնտեսական համակարգը: Ավելին, Միջին Ասիայից բերված այդ գինվորականությանը IX դարից հետո իկուս՝ իրավունքով շնորհվեցին հողակտորներ Իրանում,

ինչպես նաև Հայաստանում և այլուր: Հոգային այդ հատկացումներն աստիճանաբար սահմանափակեցին արքունիքի գերիշխանությունը, որը հետզհետե տարածվեց միայն Իրաքի վրա: Եգիպտոսում և Սիրիայում բյուրք ռազմաիրաժանատարներից Արբասյան զվարդիականներ Ահմադ իբն Տուլունը և Իշխիդյան Մուհամմադ իբն Տուդջը¹ զնաղով անկախացան, և նրանց գործունեությունը հող նախապատրաստեց այդ երկրներում Ֆատիմյան խալիֆայության (909-1171թթ.) հաստատման համար²:

IX-X դդ. Արբասյան խալիֆայության աստիճանական քայքայման ընթացքում երևան եկած իրանական և արաբական անկախ ու կիսանկախ իշխանություններում ևս առաջացավ բյուրք վարձկան գործերի պահանջը: Իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով այդ իշխանություններն սկսեցին միջինասիական շուկաներից բյուրք ստրուկներ ձևոք բերել և նրանց ներգրավել ռազմական գործի մեջ, որոնք, ֆրանսիացի հայանի արևելագետ Լեոն Կահուրի խոսքերով ասած, «պատերազմից Լին ծնվել և նվաճումների համար Լին կազմակերպված միայն»³:

Այսպիսով, մինչև XI դ. բյուրքերը Մերձավոր Արևելքում հայտնվեցին որպես ռազմիկ տարր: Իրանի վրայով դեպի արաբամահմեդական կենտրոնական մարզեր կատարվող այդ տեղաշարժերը երբեք զանգվածային բնույթ չլրեցին: Վարձկան այդ զինվորները, կարվելով բնօրրանից և, ինչպես նշվեց, բնկնելով մահմեդական մշակույթի ազդեցության տակ, աստիճանաբար ձուլվեցին: Ինչ խոսք, նրանց քանակը արաբական խալիֆայությունում աննշան քիվ էր կազմում: Թեև ինչ-որ չափով նրանք որոշակի դեր խաղացին արքունիքի ռազմաքաղաքական կյանքում, սակայն ոչ մի փոփոխություն չմտցրեցին Մերձավոր Արևելքի էթնիկական կազմում: Այնուամենայնիվ, այդ ամենը և Ղազնավիների իշխանության հիմնումն ու ծավալած գործունեությունը խալիֆայության սահմանային գոտիներում հող նախապատրաստեցին սելջուկյան ավերիչ արշավանքների համար, որոնց ընթացքում էլ տեղի ունեցան բյուրքական ցեղերի խոշոր տեղաշարժեր դեպի Մերձավոր Արևելք:

¹ К. Воспорт, Мус. дин., с. 237-239.

² Նայմ տեղում, էջ 78-81:

³ Մ. Բանասզյան, Հարասանք և սելջուկները X-XII դդ., Երևան, 1980թ., էջ 27:

2. ՍԵԼՋՈՒԿ-ԹՅՈՒՐԵՐԻ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆՆԱԶՅԱՆ ԶՐԴԵՐԸ

Սելջուկների նախնիներն եղել են քյուրք-օղուզական ընկերք ցեղային միավորման առաջնորդներ, որոնք ծառայում էին թուրքեստանի խաքանի պալատում: Սելջուկյան ցեղերի հայրենիքն եղել է Սիր-Դարիայի միջին հոսանքը՝ Կարատաուի նախալեռնային շրջանը և Սիղմախի մարզը: X դ. 60-ական թթ.-ից թուրքեստանի խաքանի հետ հարաբերությունների սահմանափակումով սելջուկյան ցեղերն սկսում են տարածվել մահմեդական աշխարհի տարածքներում՝ իրանախզու բնակչությունումնեղող Սամարկանդի, Բուխարայի, Նուրիայի և այլ շրջաններում: X դ. վերջերից էլ սելջուկյան ցեղերն ընդունում են իսլամը (սուննի ուղղությունը): XI դ. առաջին քառորդում Ձենդի գրավումից և թուրքեստանի խաքանին պարտության մատնելուց հետո Սելջուկի որդիները՝ Աբսլամը, Իսրայիլը և ուրիշները հաստատվում են Մավարանմահերում՝ Կարախանյան քյուրքական պետության տարածքում: Ապա՝ նրանք շարունակում են պայքարը Կազմավիների դեմ: Մի քանի անհաջող փորձերից հետո Սելջուկի որդի Սիրայելի տղաները՝ Տուրքիլ և Չակիլը 1040թ. մայիսի 23-ին Դանդականի ճակատամարտում (այժմյան Տաջիկստանի Հանրապետության տարածքում) պարտության են մատնում Կազմավի Մասուդին, զոսվում հորստանը և հարկադրում են Կազմավիներին սահմանափակվել իրենց պետության հնդկական մասով: Դակատամարտի նույն օրը Տուրքիլ և Չակիլը քեկերը հանդիսավորությամբ հռչակում են սելջուկյան պետության եիմնադրումը: Այս խոշոր իրադարձությունից հետո սելջուկ-քյուրքերը ձեռնարկում են լայնածավալ արշավանքներ¹:

Դատելով մեր ձեռքի տակ եղած նյութերից՝ օղուզական քա-

¹ Տե՛ս՝ Ս.Գ. Агаджалов, очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв., Анкхабад, 1960, с. 163-210, К.Э. Босворт, Мусульманские династии, с. 161-165, С. Лен-Пуль, Мусульманские династии, с. 123, М. Т. Нoutsma, Sel-djuka.-E I, V. IV; Ս.Վ. Բանազյան, Հայաստանը և սելջուկները, էջ 23-29: Հայ ժողովրդի պատմություն, III, Երևան, 1976թ., էջ 441-442; և. Բրաքելման, Թարիխ, էջ 271-272, Ա.Ս. Սալկյան, Թարիխ ալ-Դուալ ալ-Իսլամիյա, I, էջ 313-318, Ջ. Ջիլյան, Թղթիկ, IV, Բայքոթ, 1967, ս. 448-454, 470-473:

փառող ցեղերի ինտենսիվ տեղաշարժերը դեպի Իրան, Ատրպատական և այլ վայրեր սկսվեցին դեռևս հիշ. 420թ. (1029թ.): Բուխարայում հաստատված սելջուկ-թյուրքական խմբավորումը և օղուզ-թյուրքենական միացյալ զորքերը պարտություն կրեցին Ղազնավյան սուլթան Մուհամմադից¹: Ղազնավի Յամին ադ-Ղաուլան մտավ Բուխարա և ձերբակալեց Սելջուկի որդի Արսլանին և քանտարկեց նրան: Փախուստի մատնված նրա զորակոնցները մտան Խորասան²: Այստեղից էլ նրանք աստիճանաբար քափանցում են Իսֆահան, որտեղից էլ շարժվում են դեպի Արևմտյան Իրան՝ տարածվելով Ջիրբալում և Ատրպատականում:

Խորասանից՝ Իրանի վրայով դեպի Անդրկովկաս և Հայաստանի հարավային գավառներ մերխուժած թյուրքենն հրոսակների համար Ատրպատականը դարձավ գլխավոր հանգրվան³: Ատրպատականում քափառող օղուզները հաստատվեցին քուրդ ամիրա Վահսուդան իրն Մամլանի մոտ, որը քանակցություններ վարեց նրանց հետ⁴: Դեպի այս ցահանգն սկսվեց Արսլան իրն Սելջուկի մարդկանց նոր շարժումը: Ռավադյան ամիրա Վահսուդանը (1025-1059թթ.) նույնիսկ խնամիական կապ հաստատեց նրանց հետ՝ հույս ունենալով, որ դրանով կկանխի այդ երոսակների ավազակային գործողությունները: Մակայն ապարդյուն: Օղուզների հրամանատարներ Բուկան, Քուրթաշը, Մամսուրն ու Դամամ իսկույն անցան շարագործության՝ ասպատակելով և կոտորելով քնակչությանը:

Հիշ. 429թ. (1038 թ.) օղուզները մտան Մարաղան: Այրելով մզկիթը՝ նրանք անխնա ջարդեցին քնակչությանը, այդ թվում նաև՝ Հադրամի քրդերին: Նահանգում տեղի ունեցող իրադարձությունները հանգեցրեցին քրդերի համախմբմանն ու միացյալ ուժերով օղուզների դեմ ոտքի կանգնելուն: Ատրպատականի քուրդ ամիրա Վահսուդան իրն Մամլանն իր քնեղդի՝ Ուրմիայի շրջանի ամիրա Աբու-լ-Հայթա իրն Ռափիթ ադ-Ղաուլայի հետ սկսեց համատեղ պայքարը օղուզների դեմ: Բնակչության հետ

¹ Տես՝ Իրն ալ-Ասիթ, VII, էջ 338-340:

² Նույն տեղում, էջ 337:

³ Մ. Բամազյան, ճշգ. աշխ., էջ 46:

⁴ Իրն ալ-Ասիթ, VII, էջ 337:

համաձայնության գալով՝ նրանք հարձակվեցին օղուգների վրա և նրանց հարկադրեցին հեռանալ Ասորպատականից: Քափառող օղուգների մի մասը մեկնեց Ռեյ, իսկ մյուս մասը՝ Համադան: Օղուգների մի խմբավորում էլ մտավ Հայաստան, գերեզարեց և դիմեց սարսափելի հրեշագործությունների: Ապա, վերադառնալով Ուրմիա՝ նրանք հաստատվեցին քուրդ ամիրա Աբու-Հայթա ալ-Հադրանիի տիրույթում: Նրանք կրկին կողոպտեցին շրջանը և քրդերից շատերին սպանեցին¹:

Հիջ. 438 (1040/41) թ. Քավրիզում Վահսուդան իրն Մամլանը օղուգներից շատ մարդ սպանեց: Դաշկերույթի հրավիրելով՝ Իբն Մամլանը կազմակերպեց օղուգների ջարդը՝ ձերբակալելով նրանց առաջնորդներից 30-ին: Ուրմիայում հաստատված օղուգներն այդ միջադեպից հետո շարժվեցին դեպի Մոսուլի մարզ: Հարցարիայում նրանց հետ մարտի քոմվեցին քրդերը, որոնք չլիմանալով՝ դիմեցին փախուստի:

Հետապնդելով քրդերին՝ լեռներում և լեռնանցքներում օղուգները 1500 զոհ տվեցին և հարկադրված եղան մահանջել դեպի Ջիրալ²: Ապա՝ Ուրմիայում հերթական անգամ փորձ կատարվեց փոհել օղուգներին: Այդ ժամանակ Ռեյում մեռավ օղուգների առաջնորդ Կիզիլը: Օգտվելով այդ համզամանքից՝ դեպի Ռեյ շարժվեց Տուրքիլ բեկի եղբայրը՝ Իքրահիմ Յաննալը: Սարսափահար օղուգները հիջ. 433 (1042) թ. Ջիրալից շարժվեցին դեպի Մոսուլ և Դիյար Բարը:

Դեռևս հիջ. 420թ. (1029թ.) գրավելով Համադանը՝ օղուգները հայտնվեցին Ասորպատայում և Դինավարի գյուղերում: Նրանց առաջխաղացումը կանխելու մպատակով Ամնազյան ամիրա Աբու աշ-Շաուրը անցավ հակահարձակման, ջարդից օղուգներին և շատերին գերի վերցրեց: Քափառող այդ հրոսակախմբերի առաջնորդները դիմեցին քուրդ ամիրային՝ գերիներին ազատ արձակելու խնդրանքով: Աբու աշ-Շաուրը համաձայնեց, առաջարկելով հաշտություն կնքել՝ չհարձակման երաշխիքներով: Օղուգները համաձայնեցին, և Աբու աշ-Շաուրը նրանց ազատ արձա-

¹ Նույն տեղում, էջ 338-340:

² Նույն տեղում, էջ 340-341: Տես նաև՝ Իբն Խալլոմ, III, էջ 451-452, IV, էջ 259-261:

կեց¹: Դրանով քուրդ ամիրային հաջողվեց կանխել օղուզների կողմից սպառնացող վտանգը, որոնք միաժամանակ սասպատակություններ էին ձեռնարկել հարավից, քերևս, քուրդ շրջաններում²: Օգտվելով օղուզների հետ կնքած հաշտության պայմանագրից, ինչպես նաև Բուխների բուլուբուլների և ստեղծված իրավիճակից՝ Արու աշ-Շաուրը հիջ. 421(1030) թ. հարձակվեց Դակուկայի վրա³: Սրկաց պաշարումից հետո քուրդ ամիրան պարտության մատնեց արաբ Ռկայիներին, գրավեց այն և ապահովեց նրանց իշխան Մալիք իբն Բադրանի անվտանգությունը⁴:

Ըստ Ե.Կ. Բիդլիսիի, Արու աշ-Շաուրը նույն թվականին գրավեց Ռեյի հարավում գտնվող Դում վայրը, որը, կարծում ենք պատմիչը պարզապես շփոթել է Դակուկայի հետ⁵:

Ինչպես երևում է, Աճնազյանների, օգտվելով ռազմաքաղաքական իրավիճակից, սկսում են գործուն դեր խաղալ տարածաշրջանում: Հիջ. 424(1034/5) թ. քերևս աշղ հաշվի առնելով Արու աշ-Շաուրի մոտ սպաստան գտնվող Ջալալ աղ-Դաուլայի վեզիր Արու Մա՛ղ Արղ առ-Ռահիմը⁶:

Ինչպես քուրդ այլ ավատատերեր, այնպես էլ Արու աշ-Շաուրը ջանում էր բարիդրացիական հարաբերությունները շարունակել Բուի այս կամ այն իշխանի հետ: Օրինակ, հիջ. 428(1037) թ. նա անցավ Արու Կալիֆարի կողմը՝ ընդդեմ Ջալալ աղ-Դաուլայի, թեև 1029թ-ին հակվել էր վերջինիս կողմը: Այդ ամենը քելադրվում էր ռազմաքաղաքական իրավիճակով և տարածաշրջանում Բուի այս կամ այն իշխանի դիրքերով⁷:

Հիջ. 430(1038/9) թ., ինչպես երևում է, Արու աշ-Շաուրը վերանվաճեց Քերմանշահը, որի քրդերն ալ-Կառուխյա ցեղի զլխավորությամբ հանդիսանում էին Հասանվայիների կողմնակիցները: Բացի այդ, Աճնազյան ամիրան գրավեց նաև Շահրեզուրի

¹ Նույն տեղում, էջ 340, Իբն Խալլան, IV, էջ 517:

² Նույն տեղում, էջ 339-343:

³ Դակուկան գտնվում է Էրզրոմ և Բազադձ միջև: Տե՛ս՝ Յակուբ, II, էջ 459:

⁴ Իբն ալ-Ասիբ, VII, էջ 346:

⁵ III. X. БИДЛИСИ, Ислаф-Наме, т. I, с.92.

⁶ Իբն ալ-Ասիբ, VIII, էջ 9:

⁷ Նույն տեղում, էջ 14:

չրջակայքում գտնվող Արմարու ամրոցը:

Յրկար պաշարումից հետո Արու աշ-Շաուքը գրավեց մակ Նուլանցան քաղաքը՝ ձերբակալելով ալ-Կաուիխյա ցեղի առաջնորդին¹: Օճայած քուրդ ամիրայի ազդեցությունն աստիճանաբար տարածվում էր մի քանի այլ շրջանների վրա, քայք դա երկար չի տևում իշխանությունում սկիզբ առած ներքին երկպառակությունների և իշխող դինաստիայի անդամների անջատողական նկրտումների պատճառով: Դա էլ, քնակամարար, զգալի շարժում ազդեց Աննազյան իշխանության ներքին կյանքի և նրա կայունության վրա: Իշխանության համար սուր վեճեր առաջացան Արու աշ-Շաուքի որդու՝ Արու-լ-Ֆաթիի և նորոք Մուհալիի Արու-լ-Մաջիդի միջև: Համաձայն մեր ձեռքի տակ եղած նյութերի, Արու-լ-Ֆաթից հոր կողմից նշանակված էր Գիմավարի կառավարիչ, որն ամրապնդելով իր դիրքերը, տիրեց մի շարք բերդերի և դիմակայեց օղուզական զորախմբերի հարձակումները: Նա այնքան հանդուգն ու ինքնավստահ դարձավ, որ սկսեց շնորհարկվել նույնիսկ հորը՝ Արու աշ-Շաուքին:

Հիջ. 431թ. շաբան ամսին (1040թ. ապրիլ) Արու-լ-Ֆաթից հարձակվեց Քելվար բերդի վրա, որի տիրոջ կինը դիմեց Արու աշ-Շաուքի նորոք՝ Մուհալիի Արու-լ-Մաջիդին՝ Արու-լ-Ֆաթիին հակահարված տալու համար: Ընդառաջելով նրա խնդրանքին՝ երկու կողմերը համոզվեցին Քելվար բերդի պաշարման ընթացքում: Մարտի դաշտում պարտություն կրեց Արու-լ-Ֆաթից, որը գերի ընկավ և շրթայակապ քանտարկվեց հորեղբոր կողմից: Դա էլ առիթ դարձավ երկու եղբայրների հակամարտության: Որդուն ազատելու համար Արու աշ-Շաուքը պաշարեց Շահրեզուրը՝ ասպատակելով Մուհալիիի տիրույթը: Վերջինս հարկադրված եղավ աջակցություն խնդրելու դեմիկ Կակավայիյան Ալա ադ-Դաուլայից: Հիջ. 432 (1040) թ. Ալա ադ-Դաուլան ներխուժեց Գիմավար և Քերճանշահ: Գրավելով այդ երկու շրջանները՝ Ալա ադ-Դաուլան քավական շատ վատ վերաբերվեց բնակչությանը²:

Ինչպես տեսնում ենք, Աննազիների միջև ծագած ներքին հակասություններն առիթ դարձան արտաքին միջամտության, որի

¹ Նույն տեղում, էջ 17-18: Տե՛ս մակ՝ Իյն Նադլում, IV, էջ 517:

² Նույն տեղում, էջ 20-21: Իյն Նադլում, էջվ. աշխ., նույն տեղում:

հետևանքով նրանք կորցրեցին ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող երկու կետեր: Այդ հանգամանքն էլ գնալով խիստ սրեց իշխող դինաստիայի անդամների հարաբերությունները: Ամհաշտ կռիվները շարունակվեցին ողջ 1041թ. ընթացքում: Մոտհալիլին հակահարված տալու համար՝ Արու աշ-Շաուրն իր մյուս որդու՝ Մաղիի գլխավորությամբ զորք ուղարկեց Դակուկա՝ եղբորից այն խելիտ նարաակով: Մաղին պաշարեց Դակուկան¹, ուր և ժամանեց մահ ինքը՝ Արու աշ-Շաուրը:

Ուժեղացնելով պաշարումը՝ Արու աշ-Շաուրը փորեց պարիսպը, ներխուժեց քաղաք և քանազրավեց «բրդերի զեմքն ու հանդերձամբը»: Հաջորդ օրը նա շտապեց Բանդամիջիմի² և Հուլվանի շրջանները, քանզի նրա մյուս եղբայրը՝ Սուրխար իրն Մուհամմադ իրն Ամնազը օգտվելով, հավանաբար, խառը իրավիճակից, հարձակվել էր եղբոր՝ Արու աշ-Շաուրի տիրույթների վրա՝ դաշնակցելով քրդական ալ-Ջավանիյա³ ցեղի առաջնորդ Արու-լ-Ֆաթի իրն Վառամի (Վահրամի) հետ:

Հանդիպելով ուժեղ դիմադրության՝ Արու աշ-Շաուրը հետ վերադարձավ և օգնություն խնդրեց Բաղդադի Բուի իշխան Ջալալ ադ-Դաուլա Եիրզիլից: Ընդատաყելով նրա խնդրանքին՝ Բուի իշխանը զորք տրամադրեց ընդդեմ Մոտհալիլի⁴: Վերջինս, անհանգստանալով եղբոր և Ջալալ ադ-Դաուլայի ռազմական համագործակցությունից, հերթական անգամ դիմեց Կալաթայիյան իշխան Ալա ադ-Դաուլային՝ աջակցություն ցուցաբերելու խնդրանքով: Ալա ադ-Դաուլան անձամբ շարժվեց դեպի Ամնազյան տիրույթը և մտավ Քերժամշահ: Արու աշ-Շաուրը հետ վերադարձավ Հուլվան, որին սկսեց հետապնդել Դեմիկ իշխանը: Քուրդ ամիրան ամբացավ Հուլվանի շրջանի Սիբավան⁵ քերդում: Այստեղ էլ նա քանակցություններ վարեց Ալա ադ-Դաու-

¹ Դակուկայի և Եահրեզուրի շրջաններն ընդգրկում են ներկայիս Մուլիժանիայի և Քերթակի մարզերը: Տես՝ Մ.Ջ. առ-Ուսթրայանի, իմասթ, էջ 493:

² Այժմյան Մքնդլիմ:

³ Ըստ Վ. Միևոսկու, ալ-Ջավանիյան այժմյան Ջաֆ ցեղն է: Տես՝ նրա՝ *Annales*, p. 512.

⁴ Իրն ալ-Մաիթ, VIII, էջ 28-29; Իրն հուլդոմ, IV, էջ 518:

⁵ Պեոթ է ի նկատի ունենալ, հավանաբար, Սիբուլան գյուղը՝ այժմյան Դիսլանը:

լայի հետ և հաշտության պայմանագրով դիմիկ իշխանին ան-
ցավ Դիմավարը¹: Այսպիսով, մերքին հակամարտությունների
հետևանքով թուրացան Ամնագիների դիրքերը: Կորցնելով Դի-
մավերը՝ աստիճանաբար խորացան նրանց հակամարտությունը:
Դա էլ իր հերթին ժամանակավորապես մպաստեց իրանական
մոր դիմաստիայի՝ Կակավայիների Ջիրայում դիրքերի ամ-
րապնդմանը²: Այստեղ, ինչպես հայտնի է, վաղուց ասպարեզից
վերացել էին Հասանվայիները, իսկ քրդական բնակչությունը,
մերքին երկպառակությունների և մշտական կռիվների պատճա-
ռով չկարողացավ միացյալ ճակատ կազմել ընդդեմ իրանական
դիմաստիաների, մասնավորապես Կակավայիների, որոնք, քե-
պես ռազմական ակտիվ գործողություններ էին ծավալել, քայց
հաստատապես չամրապնդվեցին՝ վրա հասած սելջուկ-թյուրքե-
րի ավերիչ արշավանքների հետևանքով:

Ինչպես նշվեց, 1040թ. Դանդականի ճակատամարտում տա-
րած հաղթանակից և պետության հույսկունից հետո³, Տուրիլ
րեկը սելջուկյան հետագա արշավանքների նվաճողական բնույ-
թը բողբոկելու համար իր ամնագլխավոր խնդիրը համարեց
ուղղափառ սուննիզմի պաշտպանությունը և Աքրայան խալի-
ֆայությունը իրանական Բուիներից ազատագրելը: Նման խո-
րամանկ քաղաքականությունը բավական ժամանակին էր, որը
և նրա նկատմամբ հետագայում առաջացրեց սուննի մահմեդա-
կանության համակրանքը⁴:

Կազմավիներին ջախջախելուց հետո սելջուկները լայնամասշ-
տաբ արշավանքներ սկսեցին դեպի Իրան, Իրաք, Անդրկովկաս և
Փոքր Ասիա: Այդ երկրների նվաճումն սկզբնական շրջանում իրա-
կանացվեց հիմնականում օրուզ և թյուրքմնական աշխարհագր-
րի միջոցով⁵: Արշավանքները կատարվում էին սուլթանի, նրա
զլխավոր հրամանատարների կամ նրա ընտանիքի անդամների և
թյուրքմն գեղապետների մախաձեռնությամբ:

¹ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 29; Իբն Խալլան, IV, էջ 518:

² Նույն տեղում, էջ 30:

³ Նույն տեղում, էջ 24-25:

⁴ К. Босworth, *Мус. Дж.*, с. 163.

⁵ С. Г. Агаджанов, *укз. соч.*, с. 212.

1041/2թ. Տուրքիլ քեկը մեծաքանակ զորք ուղարկեց Գորգան և Քարաբիստան: 1042թ. Գրղվմուչի գլխավորությամբ սելջուկյան աշխարհագորքը գրավեց Ռեյլ, որը ամուր հեմարան դարձավ պարսկական Իրաքում (Ջիրբայում) և Անդրկովկասում մարտեր մղելու համար: Նույն թվականին սուլթանը մտավ Ռեյ և այն հայտարարեց իր մայրաքաղաքը¹:

Ջիրբայի առանձին շրջանների նվաճումը Տուրքիլի հրամանով իրականացրեց նրա եղբայրը՝ Իբրահիմ Յամնալը (Տուրքիլ քեկի եղբայրը մորական կողմից): Այս նահանգի որոշ շրջաններ, հատկապես Համադանը, Իբրահիմը գրավեց հիջ. 434թ. (1042/3թ.): Այստեղ ժամանեց ինքը՝ Տուրքիլը, քայք, ինչպես երևում է սելջուկներն սկզբնական շրջանում Ջիրբայում հիմնավոր կերպով չհաստատվեցին²: Նահանգի և հարակից շրջանների ամբողջական նվաճումը տեղի ունեցավ մի փոքր ավելի ուշ՝ հիջ. 437թ. (1045/6թ.) թվականից:

Օգտվելով նահանգում բյուրջական տարրի երևան գալուց և դրա հետևանքով ստեղծված խառնաշփոթ վիճակից՝ Ամնազյան Աբու աշ-Շաուրը, որդում՝ Աբու-լ-Ֆարսիին քանտարկությունից ազատելու համար, հիջ. 434(1042/3) թ. հարձակում ձեռնարկեց Շահրեզուրի վրա: Պաշարելով քաղաքը՝ նա այն կորցուտեց, ապա՝ այրեց և ավերեց շրջանի քնակավայրերն ու ամրությունները: Միմյ այդ Մուհամիլը հետագեւ էր Շահրեզուրից՝ իմանալով եղբոր մտադրության մասին: Սա էլ իր հերքին ներխուժեց Աբու աշ-Շաուրի տիրույթը և, հետևելով եղբոր օրինակին, ասպատակեց Մամդան³ ու այրեց: Երկու եղբայրների հակամարտություններից, ինչպես վկայում են մեզ հասած աղբյուրների հաղորդումները, զգալի չափով տուժեց քնակությունը:

Շահրեզուրն ասպատակելուց և այրելուց հետո Աբու աշ-Շաուրը պաշարեց մաս Տիրանչահի քերդը⁴: Այն ավերածությունից փրկելու նպատակով, միջամտեց տեղի ավատատեր ոմն

¹ Նույն տեղում, էջ 215; և. Բրքեղման, Քարաբիս, էջ 272:

² Իզն ալ-Ասք, VIII, էջ 34-35:

³ Ըստ Յակուբի, Մամդան Ջիրբայի ամուր քերդերից է՝ Համադանի լեռներում (Յակուբ, III, էջ 268):

⁴ Յակուբի հաղորդումների նաժառանգ, Տիրանչահե Շահրեզուրի քաղաքներից էր (Յակուբ, III, էջ 268):

(ամենայն հավանականությանը ազգությանը քուրդ) Արու-լ-Կասիմ իրն Այյա-դը և փորձնց քուրդ ամիրային համոզել՝ չդիմել ոճրագործությունների և թողնել քերդի պաշարումը: Ապա, Արու-լ-ասիմ իրն Այյադը միջնորդեց Մուհալիի մոտ՝ Արու աշ-Շաուքի որդուն ազատելու համար, սակայն ապարդյուն:

Եղբոր մման վարքագիծը և անհոգի վերաբերմունքը խիստ զայրացրեց Արու աշ-Շաուքին, և մա կատաղի պայքար ձեռնարկեց Մուհալիի դեմ: Հուլվամից շարժվելով Սամադամ՝ Արու աշ-Շաուքը ասպատակեց եղբոր ողջ տիրույթը՝ դիմելով դաժանությունների: Մուհալիիը հրաշքով փրկվեց և դիմեց փախուստի: Դրանից հետո երկու եղբայրներն սկսեցին քանակցել, հաշտություն կնքեցին և Արու աշ-Շաուքը մահամոցեց¹:

Այսպիսով, սուր վեճերից և ռազմական ընդհարումներից հետո Աննազյան եղբայրները հաշտվեցին, որի մասնաժամանակը մեզ հայտնի չեն: Սակայն, ինչպես դժվար չէ մկատել, թեև նրանք միմյանց դեմ քացահայտ պայքար այլևս չմղեցին, քայքայեց միջև շարունակվեց լարվածությունը, առավել ևս որ Արու աշ-Շաուքի որդին՝ Արու-լ-Ֆաթիհ մետավ քանտարկության մեջ՝ հորեղբոր մոտ²: Այնուհանդերձ, արտաքին վտանգը՝ սեյդուկ-քյուրքերի երևան գալը ու սպաավող արշավանքները կամա թե՛ ակամա նրանց հարկադրում էին միաբանվել:

Նույն մտահոգությանը էր պայմանավորված, օրինակ, Արու աշ-Շաուքի դաշնակցությունը Բադրադի Բուիների հետ: Ջալալ ադ-Դաուլայի մեռնելուց հետո, հիջ. 435(1043/4) թ. Բադրադում նրան փոխարինեց եղբոր որդին՝ Արու Կալիֆարը, որի պատվին, այլ իշխանների թվում, հիջ. 436 (1044/5) թ. խուտրա տվեց Աննազյան իշխանը³:

Հիջ. 437(1045/6) թ. սուլթան Տուրքիլ քեկի հրամանով Իբրահիմ Յաննալը Քերմանից շարժվեց Ջիրալ: Նա մտավ Համադան, որտեղից հեռացավ դիմիկ Գարշասալ իրն Կակավայիը՝ հաստատվելով Հուլվամի սահմաններում՝ քուրդ ալ-Ջուզկան (կամ ալ-Ջուրկան) քրդերի մոտ:

¹ Իրն ալ-Ասիք, VIII, էջ 36; Իրն Նալչամ, IV, էջ 518:

² Նույն տեղում, էջ 42: Տես նաև՝ Իրն Նալչամ, մույն տեղում, էջ 518:

³ Նույն տեղում, էջ 40: Տես նաև՝ Իրն ալ-Վարդի, Թարիխ, I, Բայրուք, 1970, ս. 226 (այստեղից՝ Իրն ալ-Վարդի, Թարիխ):

Մարտավելով Իբրահիմ Յաննալից¹ Դիմավարից Քերման-
շահ մեկնեց Այու աշ-Շաուր իրն Աննազը: Սելջուկյան զորքերը
խորանալով Ջիբալում՝ գրավեցին Դիմավարը և մախապատ-
րաստվեցին հարձակվելու Քերմանշահի վրա: Լսելով այդ մա-
սին՝ Արու աշ-Շաուրը հեռացավ մահ Քերմանշահից և մեկնեց
Հուլվան՝ քաղաքի պաշտպանությունը դնելով հիմնականում
Շադիեզան քրդական ցեղի և դայլամիների վրա:

Քերմանշահի վրա առաջին հարձակման ժամանակ քրդերը
հետ մղեցին սելջուկների զրոհը: Թարմ ուժերով համարելով իր
զորքերը՝ Իբրահիմ Յաննալին մեծ դժվարությամբ 1046թ. հա-
ջողվեց գրավել Քերմանշահը:

Սելջուկյան առաջնորդը, ըստ եղած վկայությունների, շատ
մարդ գլխատեց, կողոպտեց շրջանը և քնակչությանը վտա-
րեց Քերմանշահից, որը հաստատվեց Հուլվանում՝ Արու աշ-
Շաուրի մոտ:

Ջգալով, որ սելջուկյան առաջնորդ Իբրահիմ Յաննալը հա-
մառորեն հետապնդում է իրեն և ահավոր դաժանությունների է
դիմել՝ Աննազյան Արու աշ-Շաուրը իր ընտանիքը, ունեցվածքը
և զենքը Հուլվանից փոխադրեց Սիբավան քերդ: Նույն թվակա-
նի փետրվարին սելջուկները տիրեցին Մայմարային¹, քալանե-
ցին այն և փախուստի մատնեցին մտտակա ալ-Ջուրկան քրդի-
րին, որոնց մոտ ապաստան էր գտել, ինչպես նշվեց, Արու Կալի-
ջար Գարչասալը: Այնուհետև, մարտ արմսին Իբրահիմ Յաննալը
մտռեցավ Հուլվանին, որտեղից արդեն հեռացել էր քնակչությու-
նը: Նա այրեց անմարդաբնակ քաղաքը, այդ թվում մահ՝ Արու
աշ-Շաուրի տունը, ավարառության ենթարկելով ողջ շրջանը: Օ-
ղուզական մի խմբավորում մտռեցավ Խանիկինին՝ Հուլվանի
քնակչության հետքերով: Ճամապարհին ջարդելով քնակչությա-
նը՝ օղուզական զորամիավորումները հնոզհետե ասրածվեցին
Աննազյան ամիրայության տիրույթում: Նրանք ներխուժեցին
մահ Մայդաշտ² ու հարակից վայրերը:

¹ Մայմարան, ըստ արար աշխարհագրների, Խուզեստանի սանմանն Ջի-
բալի քաղաքներից էր՝ Համադան-Քաղդաղ ճամապարհի ծախ կողմում:
Նրա շրջանը հայտնի էր իր գյուղատնտեսական մթերքներով: Յակուբ, III,
էջ 439, *Geographie D'Aboulfeda*, Paris, 1830, p. 412-413.

² Քեղ և քաղաք Խանիկինի շրջանում (Յակուբ, V, էջ 50):

Իբրահիմի գերեվարումներն ու ավերածությունները խիստ անհասկացողացնեցին հուդիստանում գտնվող Բուի իշխան Աբու Կալիպարին: Հակահարձակման անցնելու նպատակով, Բուի իշխանն սկսեց նախապատրաստական աշխատանքներ:

Հավանաբար զգալով, որ ի վիճակի չի լինելու դիմադրել Բուիներին և տեղի աշխարհագրին՝ Իբրահիմ Յաննայը նահանջեց Ֆարս նահանգը, հետ քաշելով օդուզական զորախմբերը¹:

Սելջուկ-թյուրքերի ավերածությունները և սարսափը, ինչպես գրում է Իբն ալ-Ասիրը, ստիպեցին Աննազյան եղբայրներին՝ Աբու աշ-Շաուրին և Մուհալիիին միաբանվելու և վերջ տալու թշնամական հարաբերություններին: Հիշ. 437(1046) ք. Մուհալիիը նույնիսկ իր որդուն՝ Աբու-լ-Դանայիմին հոծաբարկան ուղարկեց Աբու աշ-Շաուրի մոտ՝ աղայի վրեժը լուծելու: Աբու աշ-Շաուրը մեծահոգի գտնվեց, սիրալիք ընդունեց եղբոր որդուն՝ արժանացնելով քարձր պատիվների:

Այս միջադեպից հետո երկու եղբայրները փորձեցին համախմբվել և միասնական պայքար մղել ընդդեմ սելջուկյան վայրագությունների²: Թվում է, թե Աննազյանները լեզու էին գտնում միմյանց հետ, սակայն նույն թվականի մարտ ամսին այս անգամ սրվեցին Աբու աշ-Շաուրի որդու և մյուս եղբոր՝ Մուրխաթի հարաբերությունները: Մինչ այդ Աբու աշ-Շաուրը Մուրխաթից խլել էր նրա տիրույթը, քացի Գիզի Դելոյանից:

Օգտվելով հարմար պահից՝ Մուրխաթը հարձակվեց Բանդանիջիմի վրա, ուր գտնվում էր Մա'դին: Վերջինս հեռացավ այնտեղից և զնաց հոր մոտ: Այդ ընթացքում Մուրխաթը կողոպտեց Մա'դի տիրույթի մի մասը:

Նույն 1046թ. սպրիլին Սիրավանում, Հուլվանից հեռանալուց հետո, ծանր հիվանդությունից մահացավ Աննազյան ամիրա Աբու աշ-Շաուր Ֆարես իբն Մուհամմադը³: Նրա մահը խառնաշփոթ առաջացրեց և քրոջը, ինչպես հաղորդում են արաբ հեղինակները, լրեցին նրա որդուն՝ Մա'դին ու համախմբվեցին Մու-

¹ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 41-43; Իբն Խալլան, IV, էջ 518:

² Նույն տեղում: Տես նաև՝ Աբու-լ-Ֆիդա, II, էջ 168, Իբն ալ-Ասպր, I, Քիյուտ, էջ 527, իբն ալ-Ջաուդի, VIII, էջ 128, Իբն Ջաուդի, XII, էջ 54, es-Safahani, p. 9.

³ Նույն տեղում:

հալիլի շուրջը¹: Մուհալիլ իր Աննազո, օգտվելով նպաստավոր պայմաններից, ծրագրեց իշխանության վերամիավորումը: 1046թ. ապրիլ-մայիսին նա շարժվեց Մայղաշտ, ապա ուղևորվեց Քերմանշահ, որտեղից հետագավ Իբրահիմ Յաննալի կասովարիչը՝ քուրդ Հասանվայիհների շատավիղցներից մեկը՝ Քաղը իրն Տահիր իրն Հիլալը: Գրավելով Քերմանշահը՝ Մուհալիլ իրն Աննազն իր որդուն՝ Մուհամմադին ուղարկեց Դինավար: Այստեղ գտնվող Իբրահիմ Յաննալի գործերի և քրդերի միջև տեղի ունեցած ճակատամարտում սելջուկները պարտության մատնվեցին և դիմեցին փախուստի:

Գրավելով Դինավարը՝ Մուհալիլին հաջողվեց միավորել Աննազյան ամիրայության գրաված շրջանները՝ ստանալով քնակչության աջակցությունը:

1046թ. սեպտեմբերին, միայնակ մնալով, Աբու աշ-Շաուրի որդի Մա՛դը հաստատվեց Իբրահիմ Յաննալի մոտ: Ըստ մեր ձեռքի տակ նշած նյութերի, դա տեղի ունեցավ այն րանից հետո, երբ հորեղբայրը՝ Մուհալիլը, հոր մեռնելուց հետո, ամուսնացավ նրա մոր հետ (այսինքն՝ Աբու աշ-Շաուրի կնոջ հետ) և վատ վերաբերվեց Շադինջան քրդերի հետ²:

Սելջուկյան առաջնորդը խոստացավ աջակցել Աննազյան Աբու աշ-Շաուրի որդուն՝ ընդդեմ Մուհալիլի: Դատվելով Մա՛դին՝ Իբրահիմ Յաննալը օրուգական մի զորամիավորում տրամադրեց նրան և ճանապարհեց Հուլվան: Նույն թվականի սեպտեմբեր ամսին Մա՛դը գրավեց Հուլվանը և խուտրա տվեց սելջուկ առաջնորդի պատվին: Մի քանի օր անց նա մեկնեց Մայղաշտ: Օգտվելով նրա քացակայությունից՝ Մուհալիլը մտավ Հուլվան և դադարեցրեց Իբրահիմ Յաննալի պատվին տրվող խուտրան: Ապա, Մա՛դը վերադարձավ Հուլվան, որտեղից կրկին հետագավ Մուհալիլը: Դրանից հետո Մա՛դը սելջուկյան զորքով հարձակվեց իր հորեղբոր՝ Մուրխարի տիրույթի վրա և քալանեց այն: Ապա գրավեց Քանդանիջինը և ձերբակալեց Մուրխարին, մտավ Դիզ-ի Դիլոյա քերդը: Տիրելով նշված շրջաններին՝ Մա՛դը վերադարձավ Քերմանշահ, որի ընթացքում Մուհալիլն իր որդուն՝ Քաղըին դարձյալ ուղարկեց Հուլվան և կրկին գրավեց այն:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

Ինչպես տեսնում ենք, Հուլվանը՝ Ամնազյան մայրաքաղաքը, կովախճճոր դարձավ րուն իսկ Ամնազյան դնտանիքի անդամների միջև՝ անցնելով այս կամ այն իշխանին:

Բաղը իրն Մուհալիիին ջարդելու համար՝ Մաղին շարժից դեպի Հուլվան և հերթական անգամ այն վերագրավեց: Այնուհետև, մա օղուզական մեծ գործով փորձ կատարեց հորեղբորը՝ Մուհալիիին հակահարձած տալու համար, Հուլվանում այս անգամ բողոնելով ամիրածեշտ պաշտպանական գոջախմբեր: Մուհալիին անբացավ Շահիզուրի շրջանի Տիրանշահ քերտում: Օղուզական գորքերը գերեվարեցին շրջանը և մեծ քանակությամբ ավար ձեռք քերեցին, այդ թվում՝ անասուններ: Մաղին պաշարեց Տիրանշահ քերտը: Օղուզները, ինչպես նշում է Իքն ալ-Ասիրը, անավոր բալանի ենթարկեցին Հուլվանը, թոնարքեցին կույսերին, հրկիզեցին տմեղը: Բնակչությունը ստիպված կրկին անգամ հեռացավ, և օղուզները դիմեցին ամենաստոր արարքների¹: Այդ ամենը լուրջ անհանգստացրեց Թուի իշխան Աբու Կալիբարին և մրա վեզիրին, որոնք փորձեցին աջակցել Մուհալիիին՝ երբոր որդու դեմ պայքարում: Մակայն ապարդյուն: Դա անել չկարողացան: Մաղին ալ-Ջավանիյա քրդերի առաջնորդ Աբու-լ-Ֆաթի իրն Վառամին հատկացրեց Բանդամաջինը և մրա հետ պայքար ձեռնարկեցին այս անգամ Մուր-խասր հորեղբոր դեմ՝ պաշարելով Դիզ-ի Դիլոյա քերտը: Ամառիկ լեռնանցքներում Մաղին և Աբու-լ-Ֆաթին անսպասելի հարձակմամ ենթարկվեցին և չկարողանալով մահանջել, պարտության մատնվեցին և գերի ընկան այլ առաջնորդների հետ միասին: Օղուզական և քրդական գորքերը խուճապահար դիմեցին փախուստի և ցրվեցին²:

Ինչպես նշվեց, Իքրահիմ Յաննալի ռազմական աջակցությունը Մաղիին, ինչպես նաև օղուզական ցեղերի անմարդկային դաժանությունները տարածաշրջանում և միջամտությունն Ամնազյան իշխանների մերքին գործերին սկսեցին լցոթեն մտահոգել Թուի Աբու Կալիբարին: Այլընտրանք չունենալով՝ մա ստիպված եղավ քանակություններ վարել ոչ թե՛ Իքրահիմի,

¹ Իքն ալ-Ասիր, VIII, էջ 43:

² Կոյն տեղում, էջ 43-44: Տես նաև՝ Իքն Խալլան, IV, էջ 519; Իքն ալ-Ջառաօլ, VIII, էջ 130:

այլ՝ Տուրիկ րեկի հետ: Հիշ. 439(1047/8) ք. վերջինիս հետ կնքած հաշտության պայմանագրով Արու Կալիջարին հաջող-վեց կասեցնել Իբրահիմի առաջխաղացումն ու քավարարվել գրավված տարածքներով: Նույն թվականին Արու Կալիջարի և Տուրիկ րեկի միջև հաստատվեցին խնամիական կապեր: Տուրիկ րեկը ամուսնացավ Արու Կալիջարի դստեր, իսկ՝ Բուի իշխանը՝ Տուրիկի եղբայր Դաուդի դստեր հետ¹: Անշուշտ, սա ղեկամագի-տական մուրք թայլ էր, որը թխում էր նրկու կողմերի շահերից:

Նույն թվականին Սուրխարի ղեմ ապստամբեցին նրա գեր-իշխանությանն ենթակա լուրական ցեղերը: Նրանք ձերբակալե-ցին Սուրխարին և հանձնեցին սելջուկյան առաջնորդ Իբրահիմ Յաննալին: Վերջինս դաժանաբար կուրացրեց նրան և պահան-ջեց ազատ արձակել իր վասալին՝ Մաղիին²:

Սուրխարին փրկելու նպատակով նրա որդին՝ Արու-լ-Ասաքե-րը ազատ արձակեց Մաղիին և նրա հետ միասին մեկնեց սել-ջուկ առաջնորդի մոտ՝ հորը ազատելու խնդրանքով: Սուրխա-րին ազատ արձակելու մերժումն ստանալով՝ այս անգամ Մաղին խոսվությանն ղեկնեց իր հովանավորյալի ղեմ և մտավ ադ-Դասքարա³: Ապա իր հնազանդությունը հայտնեց Բաղդադի խալիֆային և Բուի Արու Կալիջարի կառավարիչներին⁴:

Նույն 1047թ. սելջուկյան զորքն Իբրահիմի հրամանով գրա-վեց Քինքիվարի (Քինգավար⁵) քերդը, որտեղից հեռացվեց Ալյա ադ-Դաուլյա իրն Կակավայի կառավարիչ Ալքրա իրն Ֆարեսը, որն էլ հաստատվեց Հասանվայիների հայտնի Մարմաջ քեր-դում: Ապա Իբրահիմ Յաննալը ձեռնարկեց Աննազյան Սուր-խարի տիրույթը գրավելու գործը:

Օրուգական զորքը, որը գլխավորում էր Իբրահիմի ազգա-

¹ Նույն տեղում: Տես նաև՝ Իրն Քասիր, XII, էջ 56:

² Նույն տեղում: Տես նաև՝ III, X. БИЛАККА, Ислаф-Иамо, с. 93.

³ Ադ-Դասքարա՝ քերդ Շահբաբանի (ալ-Միկրադիյա) և Բարսազուզի (Բարքու-զի) միջև: Աշխաթեհադի Յակաբը գյում է, որ ադ-Դասքարան գյուղ էր, այդ գտնվում էր Շահբաբանի մոտ՝ Նաբասանի ճանապարհին (Յակուբ, II, էջ 455):

⁴ Իրն ալ-Ասիր, VIII, էջ 44; Իրն Նադդում, IV, էջ 519:

⁵ Քինքիվարը, ըստ Յակուբի, Համազասնի և Քերմանշահի միջև գտնվող փոք-րիկ քաղաք էր, որի դրչակն անվանում էին "Կասր ալ- Լուսուս" ("Անազուկ-ների դրչակ"): Այժմ այն ավերված է (Յակուբ, IV, էջ 484):

կաններից Անժաղ անունով մի մարդ, իր հետ վերցրեց Սուրխա-
րին՝ նրա տիրույթների նվաճումը դյուրացնելու նպատակով:
Սելջուկյան զորքը պաշարեց Քալթամը (Գալգամը¹), որի քնակ-
յությունն ուժեղ դիմադրության շնորհիվ չհանձնվեց: Ապա սել-
ջուկները պաշարեցին Դիզ-ի Դիլոյա քերդը: Ջորքի մի մասը
1047թ. նոյեմբերին մտավ Բանդիմիջին՝ դիմելով սարսափելի
հրեշագործությունների: Սելջուկյան մի այլ զորամիավորում
հարձակվեց ալ-Ջավամիյա քրդերի վրա, որի առաջնորդ Իքն
Վառամը դիմեց փախուստի: Նրան սկսեցին հետապնդել, և նա
հարկադրված եղավ ճակատամարտ տալու: Մարտի դաշտում
քուրդ ցեղապետը հաղթեց օղուզական զորքին: Ապա Իքն Վա-
ռամը դիմեց Արբասյան արքունիքին՝ ռազմական աջակցության
խնդրանքով՝ սելջուկների առաջխաղացումը կասեցնելու և հետ
չպրտելու համար: Բաղդադից օգնություն չառանալով՝ Իքն Վա-
ռամն անցավ Տիգրիսի արևմտյան ափը՝ խուսափելով սելջուկ-
յան վայրագ զորքերի հետ նոր ընդհարումներից:

1047թ. դեկտեմբերին Իքրահիմ Յամնալը փորձեց հակահայր-
ված տալ Ամնազյան Մադհիմ՝ Արբասյան խալիֆայի և Բուհի
տիրակալի գերիշխանությունը ճանաչելու համար: Մադհիմ այդ
ժամանակ գտնվում էր Բաջիսարայից² երկու փարսախս հեռա-
վորության վրա: Սելջուկյան զորամիավորումների հայտնվելուն
պես նա դիմեց փախուստի: Ինչպես միշտ, սելջուկ-քյուրդերը
քալանեցին շրջանը, այդ թվում նաև՝ աղ-Դասարամ, ալ-Հարու-
նիյան³ և քազմաթիվ այլ վայրեր՝ ահռելի վնասներ պատճառե-
լով քնակյությանը: Մադհիմ խուճապահար անցավ Դալայի⁴ գե-
րի շրջանը, ապա ապաստան գտավ Բանու Մազյաղ արարների

¹ Մեզ չհասողվեց ճշտել այս վայրը:

² Բաջիսարամ փոքր քաղաք է Բաղդադի և Հալվամի միջև: Այն գտնվում էր
Բաղդադի արևելյան մասում՝ առաջ փարսախս հեռավորության վրա (Ցա-
կար, I, էջ 313):

³ Ալ-Հարունիյան Բաղդադի շրջանի գյուղերից էր՝ Օսեդարանի մոտ՝ դեպի
Խաթանան առնող ճանապարհին (Ցակար, V, էջ 388):

⁴ Դալային Տիգրիսի հիմնական փոսկմեջից է, որից սկիզբ են առնում այլ գե-
տեր: Դալայիի երկաշտայունը 386կմ է, գտնվում է Բաղդադի մոտակա-
քում: Այն նույն թամբա գետն է: Տես՝ Ջամալ Թարսու, Ուսուլ սամա ալ-
մադուն սուլ-մառակի՝ ալ-Իբակիյա, I, Բաղդադ, 1976, ս. 179:

մտ: Իբրահիմը գրավեց Աննազյան Սիրավան ամրոցը և զերե-
վաքելով հասավ մինչև Թիքրիտ: Սիրավանի կառավարիչ նշա-
նակվեց Իբրահիմի զորահրամանատարներից մեկը՝ Մախսեմա-
նը: Դրանից հետո սելջուկյան առաջնորդը մեկնեց Հուլվան,
այնտեղից և՛ Համադան:

Ինչպես տեսնում ենք, աստիճանաբար սելջուկները մերթա-
փանցում են Իրաք՝ Աննազյան տիրույթները քայլ առ քայլ յու-
րացնելուց հետո: Այդ ամենն սկսեց խիստ անհանգստացնել
Քաղդադի արքունիքին, Բուի և արաբ ամիրաներին, թեև սել-
ջուկների կողմից Աբրասյանների նկատմամբ քաջահայտ
ռոնճեզույթուններ չէին ձեռնարկվում:

Ինչևիցե, Համադան վերադառնալիս, Իբրահիմ Յամնայն իր
հետ տարավ Աննազյան Մուհալիիլի երկու որդիներին՝ Քաղրին
և Մալքին, որոնց համոզեց նա լավ վերաբերմունք ցուցաբերեց:
Ապա, գրավելով Հասանվայիիների Մարմաջ ամրոցը, նա փոր-
ձեց գրավել Եահրեզուրը, որտեղից փախուստի դիմեց Մուհալ-
իլի իրն Աննազը:

Եահրեզուրը գրավելուց հետո, սելջուկյան առաջնորդի ազ-
գակացներից մեկը, վերևում նշված Ահմադը, պաշարեց Տիրան-
շահ ամրոցը և փորելով՝ այն քանդեց մի քանի տեղից: Այդ ժա-
մանակ Մուհալիիլի իրն Աննազի կոչին արձագանքած շահրե-
զուրցիներն ուժեղ հակահարված հասցրեցին օղուզական զորա-
խմբերին: Սելջուկյան հրամանատար Ահմադը լսելով այդ մա-
սին, վերադարձավ Եահրեզուր և դաժան հաշվեհարդար տեսավ
քնակչության հետ, շատերին սպանեց և ավարառության ենթար-
կեց ողջ շրջանը: Բանդամիջինում հաստատված օղուզները
չարժվեցին դեսի Քարազուզ (Քալլուզի), հասան Մալիլ գետը,
որտեղ մարտի բռնվեցին ալ-Ջավանիյա ցեղի առաջնորդ Աբու
Դուլաֆ Կասիմ իրն Մուհամմադ ալ-Ջավանիի հետ: Մարտի դաշ-
տում օղուզները պարտություն կրեցին և դիմեցին փախուստի:

Հիջ. 440թ. (1048թ.) մայիսին օղուզները հերքական պարառու-
յունը կրեցին քուրդ մեկ այլ ցեղապետից՝ Ալի իրն ալ-Կասի-
մից¹: Եահրեզուրի նվաճումից հետո, 1049թ., Իբրահիմի ազգա-
կան Ահմադ իրն Տահիրի գլխավորությամբ սելջուկյան զորքերի
կողմից շարունակվեց Տիրանշահ քերդի պաշարումը: Այստեղ

¹ Իրն ալ-Ասիբ, VIII, էջ 44-46; Իրն Խալլամ, IV, էջ 519-520:

Էին կենտրոնացել շրջամի քրդական հիմնական ուժերը: Այդ ընթացքում Տիրանշահի արվարձաններում համաճարակ տարածվեց, որի զոհը դարձան սելջուկյան զորքերի շատ մարտիկներ: Այդ մասին Ահմադ իբն Տահիրը հայտնեց Իբրահիմ Յաննալին՝ խնդրելով զորքի նոր համալրում: Մելջուկ ատաջնորդը կարգադրեց թողնել Տիրանշահի պաշարումը և հետ նահանջել: Մելջուկյան զորքերը հետացան Տիրանշահից և մեկնեցին Մալդաշտ:

Օգտվելով հարձար պահից՝ Մուհալիլ իբն Աննազը գրավեց Շահրեզուրը, որը խուճապ ատաջացրեց Սիրավանի օղուզական զորքերի շարքերում: Նույն թվականին Բաղդադից այստեղ ժամանեցին խոստացված զոչամիավորումները, որոնք պաշարեցին Հուլվանը: Չնայած Բաղդադի զորքը չհաղթեց, բայց զգալի վնասներ հասցրեց թե՛ շրջանին և թե՛ օղուզներին:

Ըստ Իբն ալ-Ասիրի, ռազմական գործողությունների հետևանքով լիովին ավերածության ենթարկվեցին ավյալ շրջանները: Աննազյան ամիրա Մուհալիլը իր ընտանիքն ու ունեցվածքը փոխադրեց Բաղդադ: Ապա՝ Բանդանիջիմի շրջանում գտնվող օղուզներին ջախջախելու մպատակով, Բաղդադից ևս մեկ անհաջող հարձակում ձեռնարկվեց¹:

Այսպիսով, Համադանում հաստատված Իբրահիմ Յաննալի իրար հետևից մի շարք հարձակումներ ձեռնարկեց Աննազյանների իշխանության վրա՝ ավերելով զանազան վայրեր: Թեև օղուզներն ուժեղ դիմադրության հանդիպեցին, սակայն նրանց ուղեկցեց հաջողությունը, որն արդյունքն էր Աննազյանների միջև ծագած հակամարտության և ռազմական ընդհարումների: Աննազիներն սկսեցին հաշտվել սելջուկ-թյուրքերի ուժային առավելության հետ, և փորձեցին քանակցել նրանց ատաջնորդների հետ: 1049թ. վերջերին Մադին պայմանագիր կնքեց արաբ Դաբիս իբն Մազադի հետ, որով նա ճանաչվեց որպես տերն այն ցուր վայրերի, որոնք չէին ենթարկվում սելջուկներին:

Իբրահիմ Յաննալին իր հերթին մտավ ադ-Դասթարան և մի քանի պարտության մատնելով Արբասյան արքունիքի և Բուի տիրակալի զորքերին, ռազմավարական դիրքեր գրավեց Բախուրայի մոտ: Դարձյալ ավերածության ենթարկելով այդ տարածքները՝ Իբրահիմ Յաննալի կողմնակիցները խուտրա

¹ Նույն տեղում, էջ 47; Իբն Խալլուն, IV, էջ 520:

տվեցին նրա պատվին¹: Ինչպես դժվար չէ նկատել, Սաղին այլ-ընտրանք չունեք, քան ճանաչելու սելջուկ առաջնորդի գերիշխանությունը:

Հիշ. 441(1049/50) ք. սելջուկյան եղբայրների՝ Տուրքի բեկի և Իբրահիմի միջև սուր վեճեր ծագեցին Ջիրախն, այդ քվում՝ քրդական շրջաններին տիրելու համար: Սելջուկյան առաջնորդների միջև վեճը համազեցրեց ռազմական ընդհարումների: Իբրահիմը, որը հաստատվել էր Համադանում և հարակից մի շարք շրջաններում, առարկեց Տուրքի բեկի՝ Ջիրալլ և նրա ամրոցներն իրեն հանձնելու ցանկությունը: Ավելի հզոր Տուրքիլը քախջախեց նրան և դուրս վճռեց Հասանվայիհների երեմնի Սարմաջ բերդից, որն, Իրն ալ-Ասիրի խոսքերով, ամենաամուրն ու ամենաամառոյիկն էր: Որոշ ժամանակ անց երկու եղբայրները հաշտվեցին: Տուրքիլ բեկը Իբրահիմին վերադարձրեց նրանից խլված տարածքների մեծ մասը²:

Պետք է ենթադրել, որ նույն ժամանակահատվածում, 1049թ. ղեկավարներին, Աբրասյան զորքը՝ զորահրամանատար ալ-Բասասիրի գլխավորությամբ Սաղիից խլեց Դեզդարի շրջանը: Ըստ Իրն ալ-Ասիրի, Սաղին կառուցել էր Դեզդարիի պարիսպը՝ ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ունեցվածքը պահպանելու նպատակով³:

Այսպիսով, Աննազյանները ստիպված էին հաշտվելու նոր իրողությունների և տարածաշրջանում օղուզների ռազմական գերակշռության հետ: Ուստիև, իրենց գերիշխանությունը պահպանելու և օղուզական վտանգը չեզոքացնելու համար նրանք սկսեցին էլ ավելի հաճախ հանդիպել և քանակցություններ վարել սելջուկյան առաջնորդների հետ:

Հաշվի առնելով քրդական ցեղերի ռազմատենչ և ամենագանդ առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ շրջաններում Աննազյանների դիրքն ու հեղինակությունը՝ սելջուկյան իրողների առաջնորդներն ևս փորձեցին նրանց միջոցով իրենց ազդեցությունը տարածել տվյալ շրջաններում:

¹ Իրն ալ-Ասիր, VIII, էջ 49-50:

² Նույն տեղում, էջ 51-52:

³ Նույն տեղում, էջ 53: Տես նաև՝ Իրն Քասիր, XII, էջ 59:

Հից. 442(1050/1) ք. Տուրքիլ քեկի և Մուհալիլի իրն Ամնագի համդիպումը որոշակի դրական տեղաշարժեր առաջացրեց երկուստեք հարարերություններում:

Մեր ձեռքի տակ եղած նյութերը վկայում են, որ սելջուկյան առաջնորդը ոչ միայն պատիվների արժանացրեց թուրք ամիրային, այլև՝ նրան արամարդրեց Սիրավանը, Դակուկան, Շահիբզուրը և Մամադանը: Մուհալիլի խնդրանքով սուլթանն ազատ արձակեց մի քանի տարի առաջ բանտարկված եղբորը՝ Մուրխար իրն Ամնագիմ, որն իսկույն հաստատվեց Մահքի քերդում¹: Ապա՝ Մահի իրն Աբու աշ-Շաուքին Տուրքիլ քեկը հասեցրեց Նեհավանդի մոտ զամվող Ռավանդանը²:

Խոսելով վերը նշված իրադարձությունների մասին՝ Ե. Ն. Բիդլիսին գրում է, որ այդ թվականին Մուհալիլի Աբու-լ-Մաջիդը ծառայության անցավ Տուրքիլ քեկի մոտ³, առանց մանրամասնություններ հաղորդելու: Պատմիչը, կարծես քե ճիշտ է նկատել, որ Մուհալիլը վասալական իրավունքով դարձավ սուլթանի կառավարիչը Ամնագյաններին պատկանող մի քանի շրջաններում: Դա, իհարկե, երկար չտևեց, և Ամնագյանների տիրույթները ենթարկվեցին օղուզական նոր հարձակումների:

1053թ. սկզբներին Մահին ծառայության անցավ Տուրքիլ քեկի պալատում: Նույն թվականի մարտ ամսին օղուզական զորաջոկատներով նա մտավ արաբական Իրաք: Կանգ առնելով Մալդաշտում՝ նրա զորքը, ռազմական զործողություններ վարելով, հասավ ան-Նու՛մանիա⁴: Օղուզները դարձյալ դիմեցին սարսափելի դաժանությունների՝ կողոպտելով շրջանն ու բռնաբարելով կույսերին: Մեկնելով Հուլվան՝ օղուզական զորքերը

¹ Հավանաբար պետք է ի նկատի ունենալ Մահքի քրդական ցեղին պատկանող քեյան ա տիրույթը՝ Լուրխասանի կյուսիս-արևելքում: Տես՝ V. Minorsky, *Annezida*, p. 513.

² Իրն ալ-Ասիք, VIII, էջ 57; Իրն Խաղան, IV, էջ 520: Նույն իրադարձության մասին խոսելիս՝ Աբու-լ-Ֆիթան այն թվագրել է 439(1047/8) ք., որը, կարծում ենք, չի համապատասխանում իրականությանը (Աբու-լ-Ֆիթա, II, էջ 171, Իրն ալ-Ասիք, I, էջ 532):

³ III. X. Бекланиц, III араб.-Номе, т. 1, с. 92.

⁴ Ան-Նումանիա՝ փոքրիկ քաղաք Վասիտի և Բաղդադի միջև՝ Տիգրիսի ափին: Այն վերին Չաքի շրջաններից է: Տես՝ Յակոբ, V, էջ 294:

մտան Բանդանիջի մի շրջան: Ապա Սա'ղին պարտության մատնեց իր հորեղբորը՝ Մուհալիիին, գերի վերցնելով նրան և որդուն՝ Մալիքին: Շրջանում օղուզական զորքով Սա'ղիի ռազմական նոր զործողություններն սկսեցին անհանգստացնել Բաղդադին: Բուի իշխան ալ-Մալիք առ-Ռահիմը ցանկություն հայտնեց հակահարված տալ Սա'ղիին, սակայն մեզ անհայտ պատճառով զործնական քայլերի չդիմեց¹:

Իր հորը՝ Մուհալիիին ազատ արձակելու խնդրանքով Բաղդդ հիջ. 445(1053) թ. Բաղդդ դիմեց Տուրքիլ բեկին, որը համաձայնեց պատանդների փոխանակում կատարել: Սա էլ հանդիսացավ Սա'ղիի և սուլթանի հարաբերությունների սրման դրդապատճառը: Սա'ղին դիմեց խտվության, շարժվեց Հուլվան և, չկարողանալով գրավել այն, ճանաչեց Բուի իշխան ալ-Մալիք առ-Ռահիմի գերիշխանությունը: Սելջուկ երկու հրամանատարների գլխավորած զորքով Բաղդ իրն Մուհալիի չհամադանից հարձակվեց Սա'ղիի վրա: Վերջինս դիմեց փախուստի, ամրացավ Դիյալայի աջ ափին գտնվող Ռաուշան-Կուրադ բերդում²: Օրուզները կրկին մտան Հուլվան, իսկ Բաղդդ շարժվեց դեպի Շահրեզուր:

Այս իրադարձությունների ընթացքում, ինչպես նաև հետագայում, սկզբնաղբյուրները լուծմ են Մուհալիիի մասին, որը հիմք է ծառայում ենթադրելու, որ նա վերացավ ռազմաքաղաքական ասպարեզից:

Հիջ. 446(1055) թ. հունվարին սելջուկյան զորքն Իբրահիմ իբն Իսահակի գլխավորությամբ Հուլվանից մտավ աղ-Դասքարա: Ապա սելջուկները փորձեցին վերցնել Սա'ղիի Ռաուշան-Կուրադ բերդը, սակայն ապարդյուն: Ավերածություններ կատարելով շրջանում՝ օղուզների մի մասը մեկնեց Ահվազ³:

Հիջ. 447(1055/6) թ. սուլթան Տուրքիլ բեկը մտավ Բաղդադ, որով, փաստորեն, սելջուկյան իշխանությունը ճանաչվեց Աբրայան արքունիքի և Բուի վերջին իշխան ալ-Մալիք առ-Ռահիմի

¹ Իբն ալ-Ասիբ, VIII, էջ 64; Իբն Խալլան, IV, էջ 520; III. X. Бидляси, Ислаф-Наме, т. 1, с. 93.

² Իբն ալ-Ասիբ, VIII, էջ 65; Իբն Խալլան, IV, էջ 521:

³ Կույն տեղում, էջ 68: Իբն Խալլան, IV, նույն տեղում:

կողմից: Մինչ այդ, սուլթանը ճանապարհին մտավ Հուլվան¹: Մելքուկների տիրապետությունը վերջնականապես հաստատվեց մահ Աննազյան շրջաններում՝ Դիմալարում, Քերմանշահում, Հուլվանում և այլուր²:

Այսպիսով, Քաղդայի մվանմամբ, ինչպես իրավացիորեն գրում է Իբն Խալլուդը, քրդերն ևս զրկվեցին իշխանությունից և ենթարկվեցին սուլթան Տուղրիլ քեկի գերիշխանությանը³:

Այս շրջանից սկսած՝ սկզբնաղբյուրներն Աննազյանների ռազմաքաղաքական գործողությունների մասին հաղորդում են կեցկառու տեղեկություններ, մի քան, որը բայլ է տալիս ենթադրելու, որ տարածքում նրանք առանձին վայրերում ուղղակի հանդիսանում էին սելջուկյան կառավարիչներ: Ինչպես երևում է, ռազմական երկարատև ընդհարումներն ու քախումները թե՛ միմյանց և թե՛ արտաքին թշնամիների դեմ զգալիորեն ազդեց Աննազյանների միաբանության և մարտունակության վրա:

Նույն րվականին սուլթանը Բուիներին, իբրև իկաա՝, տվեց Քերմանշահին իր շրջանով⁴: Աստիճամաբար քուրդ ցեղապետերը ծառայության անցան Տուղրիլ քեկի գերատեսչություններում: Օրինակ, դրանցից էր Հազարասպ իբն Քամիքը (Իբն ալ-Ջաուզիի մոտ Իբն Բաքիր է) Այյադը, որն ստանձնեց Քասրայի, Շիրազի, Արջանի կառավարչի պաշտոնը⁵: Վերջինս, ըստ Իբն ալ-Ասիրի, իիք. 448 (1056/7) թ. Աննազյան Աբու աշ-Շաուքի որդու և քուրք այլ հրամանատարների հետ միասին մասնակցեց Քաղդայում ալ-Կալիմ Բիամրի ալ-Լահ խալիֆայի և Տուղրիլ քեկի եղբայր Գաուդի դստեր՝ Աբսլան Խաթունի հարսանյաց արարողություններին⁶:

Այս փաստը ևս մեկ անգամ խոսում է Աննազյանների և առհասարակ քրդերի ու սելջուկ-քյուրքերի միջև ճևակորվող նոր հարաբերությունների մասին: Օրինակ, քուրդ Հազարասպը

¹ Նույն տեղում, էջ 71; Իբն ալ-Վադի, I, էջ 536:

² Նույն տեղում:

³ Իբն Խալլուդ, IV, էջ 521:

⁴ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 72:

⁵ Նույն տեղում, էջ 72, 80, 98: Տե՛ս Իբն ալ-Ջաուզի, VIII, էջ 168:

⁶ Նույն տեղում, էջ 74:

մույն քվականին Տուղրիլ քեկի հետ միասին մասնակցեց նաև Մոսուլի մարզում և Մինջարում ծավալված մարտերին¹: Այդ ծառայությունների համար էլ, հավանաբար, նա սուլթանից, որպես իկտա՝, ստացավ Բալադը:

Այսպիսով, Աննազլյանների իշխանությունը, որը, ինչպես նշվեց, գոյատևեց շուրջ 130 տարի, վերջին շրջանում ենթարկվեց Մեծ սելջուկների աշխարհակալությանը: Առանձին վայրերում նրանց շատավիղները շարունակեցին գոյատևել XII դարում, սակայն նրեք փորձ չկատարեցին իրենց շուրջ համալսմբել քրդական ցեղերին:

3. ՄԱՐՎԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿ-ԹՅՈՒՐԵՆԸ

Օգտվելով Արքայան խալիֆայության բուլությունից՝ սելջուկ-թյուրքերն իրենց ռազմական գործողությունների սլաքն ուղղեցին դեպի հյուսիս²:

Մեր ձևերի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ Դիյար Բաքր՝ Վերին Միջագետք և այդ յվում հարավ-արևմտյան Հայաստանի գավառներ, քափառող օղուզները մուտք գործեցին Ատրպատականից: Իրն ալ-Ասիրն ու Իրն Խալդունը նշում են, որ հիջ. 433թ. (1041/2թ.) քափառող թյուրք-օղուզները շարժվելով Ատրպատականից՝ մտան Դիյար Բաքր, որոնք մինչ այդ սարսափելով Իբրահիմ Յաննալից, հետացել էին Ջիրալից և հաստատվել Ատրպատականում: Այստեղ անհնազանդ այս ցեղերն ևս նրկար չմնացին: Նրանց, ինչպես գրում են վերը նշված հեղինակները, հետապնդում էր Իբրահիմ Յաննալը, որոնք հանդիսանում էին նրա ներառյունների՝ Տուղրիլի և Դաուդի ռայան (ուպատակներ): Օղուզները հարկադրված իրենց հետ վերցրեցին մի խումբ քրդերի, որոնք, ճանապարհ ցույց տալով, դուրս բերեցին ազ-Ջալազամ (Անձևացիք), ապա՝ Ջազիրա իրն Օմար: Օղուզների նրամանատարներից Բուկան, Նասսուլին և այլք³ մտան

¹ Նույն տեղում, էջ 77-78:

² Անանուն եղևացի, Ժամանակագրություն, էջ 29:

³ Տես՝ Մ.Ուոհայեցի, էջ 109:

Դիյար Բաքր, կողոպտեցին Կարդան, Բազարդան, ալ-Հուսայ-նիյան և Ֆիշարուրը: Ջազիրայի արևելյան մասում մնաց օղուզ հրամանատար Մանսուր իրն Դիզօղլին, որի հետ կապեր ծա-տատեց Ջազիրա իրն Օմարի կառավարիչ՝ Մարվանյան Նասր աղ-Դաուլայի որդի Մուլեյմանը: Վերջինս Մանսուրին առաջար-կեց դաշնագիր կնքել, սպասել, որ ձմեռն անցնի և օղուզական մյուս խմբերի հետ միասին հարձակվել Ասրիքի (Շամի) վրա:

Համաձայնության գալով՝ քուրդ ամիրան ճաշկերույթ կազ-մակերպեց օղուզ հրամանատարի պատվին, հրավիրեց Ջազի-րա իրն Օմար և ձերբակալեց նրան: Օղուզները ցրվեցին տար-բեր ուղղություններով: Իմանալով Մարվանյան Մուլեյմանի դա-վադրության մասին՝ Մոսուլի արաբ Ուկայլիների ամիրա Կիր-վաշը մեծ զորք ուղարկեց օղուզներին ջախջախելու համար¹: Մոսուլից եկած արաբական զորախմբերին միացան Ֆանակ (Փինիկ) ամրոցի տեր քուրդ Բաշմավիներն ու Մարվանյան ամ-իրա Նասր աղ-Դաուլայի զորքերը:

Ինչպես գրում են Իրն ալ-Ասիրն ու Իրն Խալդունը, արաբա-քրդական միացյալ զորախմբերը հետապնդեցին օղուզներին և սաստիկ կռվեցին նրանց դեմ: Պարտության մատնված օղուզ-ներն իրենց անվտանգությունն ապահովելու համար առաջար-կեցին տալ ձեռք քերած ողջ ավարը: Արաբա-քրդական միաց-յալ զորքը մերժեց այդ, և վերսկսվեցին ընդհարումները: Այդ ըն-թացքում արաբներից շատերը վիրավորվեցին և հետ մահանջե-ցին: Օղուզական որոշ խմբեր մեկնեցին Սինջար և Նիսիքին (Մծրին)՝ ասպատակություններ կատարելու նպատակով: Այս՝ նրանք վերադարձան Ջազիրա և այն պաշարեցին: Արաբները հետացան Իրաք, և օղուզներն ավերածություններ կատարեցին Դիյար Բաքրում և ավարի մատնեցին այն: Մարվանյան ամիրա Նասր աղ-Դաուլան հարկադրված եղավ ազատ արձակել իր աղայի՝ Մուլեյմանի կողմից ձերբակալված օղուզ հրամանատա-րին՝ Մանսուր իրն Դիզօղլին: Մինչ այդ Նասր աղ-Դաուլան քանակեց օղուզների հետ, խոստացավ դրամ տալ և ազատել Մանսուրին միայն այն պայմանով, որ նրանք հետանան Դիյար Բաքրի իր տիրույթներից:

¹ Նույն տեղում: Մ. Ուռեսյեցին այս իրադարձությունները բնագրել է 1045/6թթ:

Չնայած նա այդպես էլ վարվեց, քայց օղուզները խաբեցին նրան և, ինչպես ցույց են տալիս մեր ձեռքի տակ եղած նյութերը, դիմեցին ահավոր շարագործությունների: Նրանց մի մասը կողոպտեց Սիմջարը, Նիսիրիներ, Խարուրը և կրկին հետ վերադարձավ: Մի մասն էլ զնաց Ջուհանյա և ալ-Ֆարջի կողմերը և գերեվարեց այդ շրջանները: Մարտափահաք Ուկայիների ամիրա Կիրվաշը մտավ Մոսուլ¹:

Նույն քվականին (1041/2թ.) օղուզական զորախմբերը ներխուժեցին Մոսուլի մարզ, գրավեցին Մոսուլ քաղաքը, որտեղից փախուստի դիմեց Կիրվաշը: Օղուզներն ավարտության են բարկեցին մարզը և բռնագրավեցին արաբ ամիրայի մեծաքանակ հարստությունը: Կիրվաշը դիմեց քուրդ և արաբ իշխաններին՝ օղուզներին հսկահարված հասցնելու խնդրանքով²: Չնայած Մոսուլի բնակչությունը ոտքի կանգնեց և քախքախեց օղուզներին, սակայն այնուհանդերձ նրանց հաջողվեց հաստատվել մարզում:

Լսելով այդ մասին՝ Տուղրիլ բեկը մամակ գրեց Բուի իշխան Ջալալ աղ-Դիմին և Մարվանյան ամիրա Նասր աղ-Դաուլային: Վերջինիս գրած մամակում սելջուկյան սուլթանը նշում էր հետևյալը. «Մեծ հայտնի դարձավ, որ մեր արիղներն (ստրուկները) եկել են ձեր երկիր և դու նրանց կաշառել ես դրամով... Դու սահմանային զուտտ տիրակալն ես և պետք է հնարավորին չափ օժանդակություն ցուցաբերես՝ բաֆիրների (այսինքն՝ քրիստոնյաների-Մ.Փ.) դեմ պայքարում»: Ապա Տուղրիլը միաժամանակ խոստանում էր, որ Նասր աղ-Դաուլային գորքով կօժանդակի Դիյար Բաքրից օղուզներին դուրս վտարելու համար³:

Ուշագրավ է այս առիթվ նշել, որ գրեթե նույն խորամանկ բովանդակությամբ նա մամակ գրեց Ջալալ աղ-Դիմին: Ներողություն խնդրելով Բուի իշխանից՝ սելջուկյան առաջնորդն ընդգծում էր, թե այդ քյուրքմենները⁴, իբր, եղել են «ստրուկները, ծա-

¹ Իբն ալ-Ասիթ, VIII, էջ 340-341; Իբն Խրաղամ, III, էջ 451-452, IV, էջ 259-261:

² Նույն տեղում, էջ 342-343:

³ Նույն տեղում, էջ 342: Տես նաև՝ Իբն Խրաղամ, IV, էջ 260:

⁴ Մահմեդականությունն քննադատած քյուրքական գեղերն, այդ բովանդակությամբ, սկսեցին կռիվ քյուրքմեն անունը: Այս անունը Մերձավոր և Միջին

ռաները, հպատակները և հետևորդները»: Բայց, երբ սելջուկներն սկսեցին Մահմուդ իբն Մերյուքթաթինի (Դազմալի) զեդրաստանի զործերով զբաղվել նրանք ներխուժեցին Ռեյ և ապականեցին այն: «Նորասանից, -նշում է Տուրքիլ քեկը, մենք շարժվեցինք, որպեսզի հնազանդեցնենք նրանց¹»:

Տուրքիլ քեկի վերտիչչյալ տողերը վկայում են այն իրադրյան մասին, որ սելջուկյան արշավանքներին նախորդել էր բյուրքական տաքրի մի հզոր ալիք դեսի Դիյար Բաքր՝ Մարվանյան տիրույթներն ու հարակից շրջանները, որն ունեց քաջատալես ավարատական, քալանչիական բնույթ: Այդ արշավանքներն, անկասկած, մեծապես նպաստեցին սելջուկյան արշավանքների հաջող ընթացքին: Բացի այդ, Տուրքիլ քեկն իր արշավանքների նվաճողական բնույթը քողարկելու համար Բուի իշխանին գրում էր, որ իբր հենց այդ շարժումն ուղղված է անհնազանդ օղուզների դեմ:

Ինչ վերաբերում է քուրդ ամիրային, նրա խոստացած ռազմական օժանդակությանը, ապա պետք է ասել, որ այդպես էլ նա այդ յուրարկեց: Թյուրք առաջնորդի կողմից՝ Նասր ադ-Դաուլային սիրաշահելու և նրա համակրումը վայելելու մի նուրբ ծեստ էր ընդամենը:

Նույն՝ 1041/2թ. արաբ Ուկայլիների ամիրա Կիրվաշը ջախջախեց օղուզներին: Նրա դեմ մարտնչելու համար Մոսուլ ժամանեցին Դիյար Բաքրում հաստատված քափառող օղուզների երամամաստարներ Բուկան և Նասուղլին²: Փախուստի մատնվելուց հետո, օղուզները կրկին մեկնեցին Դիյար Բաքր դարձյալ կողոպտելու Մարվանյան տիրույթները: Այնուհետև, ինչպես նշում են արաբալեզու աղբյուրները, նրանք կողոպտեցին հայերին, հոռոմներին և մեկնեցին Ատրպատական³:

Մ.Ուռնայեցին գրում է, որ բյուրքերը փախչելով հասան Պահն, ընդհուպ մինչև Արճնշ՝ քազում վայրերում քրիստոնյաների

Արևելքի երկրները զարթոյ և նվաճող օղուզներին էլ արվում: Տե՛ս՝ Մ. Քոնազյան, նշվ. աշխ., էջ 32:

¹ Իբն ալ-Ասիր, VII, էջ 342; Իբն Նուայթ, IV, էջ 260:

² Մ. Ուռնայեցու մաս՝ «Պակի և Անազուդի»: Տե՛ս՝ Մ.Ուռնայեցի, էջ 109:

³ Նույն տեղում, էջ 342-343; Իբն Նուայթ, IV, էջ 261:

կոտորածներ կազմակերպելով¹:

Դիյար Բաքրում և հարակից շրջաններում տեղի ունեցած վերոհիշյալ իրադարձությունների մասին Իրն ալ-Ազրակը հաղորդում է մեկ այլ տարբերակ: Նրա տվյալների համաձայն, հիշ. 434(1042/3) ք. Տուրքիլ քեկը քյուրքերի մեծամեծներից Բուկաս և Նասողլի իրամամատարների գլխավորությամբ տաս հազարանոց զորք ուղարկեց Դիյար Բաքրը նվաճելու համար՝ այն որպես **իկտա**² նրանց շնորհելու պայմանով:

Հասնելով Դիյար Բաքր՝ նրանք կողոպտեցին Մարվանյան ամիրայության մայրաքաղաք Մայյաֆարիկինը: Մի քանի օր փակվեցին քաղաքի դարպասները, և երկու կողմերի միջև բանակցություններ տեղի ունեցան: Մարվանյաններն օղուզներին աստիճանաբար հանձնեցին ապահովելու համար՝ Դիյար Բաքրից հեռանալու պայմանով, որը մերժվեց նրանց կողմից:

Ապա՝ Իրն ալ-Ազրակը ավելացնում է, նշելով, որ այնպես պատահեց, որ մի գիշեր օղուզ հրամանատարները ոգելից խմիչք օգտագործեցին և հարբեցին, սկսեցին վիճել, միմյանց դամակահարել, ինչի հետևանքով երկուսն էլ սպանվեցին: Խուճապի մատնված օղուզների վրա հարձակվեց Մարվանյան Նասր աղ-Դաուլան, կողոպտեց նրանց, շատ մարդ սպանեց և գերեց շատերին³:

Այսպիսով, ըստ Իրն ալ-Ազրակի, Մայյաֆարիկինի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օղուզները պարտություն կրեցին քրդերից: Չնայած դրան, այդուհանդերձ, օղուզների կատարած հիշյալ ասպատակության արդյունքում այդ թվականից քյուրքական տարրը առաջին անգամ հայտնվեց Դիյար Բաքրում³:

Արաբ պատմիչի որոշ տեղեկություններ՝ կապված Բուկասի և Նասողլիի ասպատակության հետ, որոշ չափով մտորումների առիթ են տալիս: Նախ պետք է ասել, որ Դիյար Բաքր օղուզ քյուրքերի մուտք գործելու վերաբերյալ արաբալեզու մատենագիրները տարեր թվականներ են հաղորդում (1041/2թ. - 1042/3թ.): Ենթադրում ենք, որ Իրն ալ-Ասիրի և Իրն Խալդունի

¹ Նույն տեղում:

² Իրն ալ-Ազրակ, էջ 160-161:

³ Նույն տեղում, էջ 161:

տվյալներն ավելի մոտ են ճշմարտությանը: Օրինակ, կարծում ենք, որ շի կարելի համաձայնել էրն ալ-Ազրակի հետ այն հարցում, որ իբր Մարվամյան իշխանության վրա Բուկայի և Նասուրլիի կատարած ասպատակությունը տեղի ունեցավ Տուրքիլ քեկի հրամանով: Եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ շրջանում, օգտվելով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից, սելջուկներին բռնամարտ տրամադրված օղուզներն սկսեցին ձևոճարկել, այսպես կոչված, մասնավոր ասպատակություններ՝ քնակության նոր վայրեր և հարստություն ձեռք բերելու համար: Դրանով էլ պայմանավորված էին Ասորպատկանում հաստատված օղուզների ասպատակությունները դեպի Հայաստան և հարակից շրջաններ:

1048թ. աշմանը Իբրահիմ Յաննալի գլխավորությամբ սելջուկ-քյուրքերը մեծ արշավանք ձեռնարկեցին դեպի Հայաստան և Բյուզանդական կայսրություն¹: Անդրադառնալով արշավանքի ղրղապատճառներին՝ Իրն ալ-Ասիքը գրում է, որ Մավարանմահ-քից մեծ թվով ցեղեր ժամանեցին Իրան՝ Իբրահիմ Յաննալի մոտ: Վերջինս, իբր, նրանց ուղարկեց հոռոմների երկիրը՝ քնակության վայրեր և ավար ձեռք բերելու նպատակով:

Գերեվարելով՝ սելջուկները հասան Մանազկերտ, Արծն (Արզան), Կարնո քաղաքը (Կալիկալա) և այլուր: Հարքելով կայսրության միացյալ զորքերին՝ սելջուկներն այլևայլ սրատրիկների քվում զերի վերցրեցին մաև իշխան Լիսյարիտին²: Իբրահիմ Յաննալը հսկայական ավարով վերադարձավ Ռեյ և ներկայացավ սուլթանին: Լիսյարիտին ազատելու համար, ինչպես հարորդում է Իրն ալ-Ասիքը, սելջուկներին առաջարկվեց 300 հազար դինար և 100 հազար արծուրությամբ նվերներ, որը մերժվեց

¹ Այդ մասին մանրամասն տես՝ Մ. Բոննազյան, նշվ. աշխ., էջ 46-56:

² Իրն ալ-Ասիքի երկուս Լիսյարիտը սխալմամբ ներկայացված է ռապես Կարնո տրիտոզ իշխան (Իրն ալ-Ասիք, VIII, էջ 48): Կասյուտառու ճակատամարտից հետո տեղի ունեցած իրադարձությանների՝ իշխան Լիսյարիտին գերաթյունից ազատելու և բյուզանդական կայսր Մանասիսի ա Տուրքիլ քեկի միջև տեղի ունեցած բանակցությունների և կնքված զինադադարի մասին խիստ նակասող անդեկություններ կան հույկական, վրացական, բյուզանդական, ասորական և այսարական աղբյուրներում: Տես՝ Մ. Բոննազյան, նշվ. աշխ., էջ 55:

Տուրքիլ րեկի կողմից¹:

Այս կապակցությամբ հակառակ կարծիք է հայտնում Հ. Ալի-լիցեալը: Նա գրում է, որ կայսրը ժողովրդին քանկազին ընծաներ ու փրկազին ուղարկեց, խնդրելով Լիպարիտին ազատ արձակել և հաշտություն կնքել²: Համաձայն Հ. Ալիլիցեաի, իբր սուլթանը վերցրեց փրկազինը, քայց ամբողջությամբ հանձնեց Լիպարիտին³:

1049թ. սելջուկների և կայսրության միջև զինադադար կնքվեց, և Տուրքիլը շուրջ 4 տարի դադարեցրեց արշավանքներն ընդդեմ կայսրության, մասնավաճող որ մի կողմից նա գրառված էր բյուրքմենների ապստամբությունների ճնշմամբ, մյուս կողմից նրա ամենագլխավոր նպատակն էր գրավել Բաղդադը՝ Աբրահայան մայրաքաղաքը⁴:

Մեզ հասած նյութերը վկայում են, որ զինադադարից հետո սելջուկյան սուլթանի պատվերով՝ նրա պատվին խուտրա տրվեց Դիլար Բաքրում⁵, և Նասր աղ-Դաուլյան նրան հայտնեց իր հնազանդության մասին: Թեև այս առիվ սկզբնաղբյուրներն մամբրամասն տեղեկություններ չեն հաղորդում, քայց եղածներից կարելի է ենթադրել, որ երկու կողմերի միջև տեղի ունեցավ փոխհամաձայնություն: Դա հաստատում է այն փաստը, որ մույն Լիպարիտին գերությունից ազատելու համար ղյուզանդական կայսրը դիմեց Նասր աղ-Դաուլային՝ միջամտելու Տուրքիլ րեկի մոտ: Ընդառաջելով կայսեր խնդրանքին՝ Նասր աղ-Դաուլյան իսկույն Շեյխ-ուլ-Իսլամ Աբու Աբդալլահ իբն Մարվանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Ռեյ:

Ըստ մեր ձեռքի տակ եղած ավյալների, Տուրքիլ րեկը առանց փրկազնի ազատ արձակեց Լիպարիտին, և քուրդ ամիրան ու բյուզանդական կայսրը բարձր գնահատեցին սուլթանի այդ վարժումը՝ փոխարենը նրան ուղարկելով հսկայական քանա-

¹ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 48: Իշխան Լիպարիտի գերության մասին տես՝ Ա. Լասախվերցի, էջ 52-53: Մ. Ուտայեցի, էջ 107:

² Հ. Ալիլիցեա, էջ 162:

³ Նայն տեղում:

⁴ Մ. Բոտմազյան, Ձշվ. աշխ., էջ 57:

⁵ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 52, 95: Իբն Թասիբ, XII, էջ 59:

կուրթամբ մվերներ: Բացի այդ, կայսեր հրամանով վերջանորոգ-վեց Կ. Պոլսի մզկիթը և խուտրա տրվեց սելջուկ առաջնորդի պատվին¹:

Հաշտության պայմանագրով, ինչպես նշվեց, Տուրքիլը ժամանակավորապես դադարեցրեց արշավանքներ ձեռնարկել Բյուզանդիայի դեմ: Դա, իհարկե, սովյալ շրջանում ձեռնուտ էր երկու կողմերին էլ: Բյուզանդիան ի վիճակի չէր ճակատ քացելու կայսրության սրևելյան սահմաններում, քանի որ պեչենեգների դեմ զորք էր դուրս բերում Բալկանյան խերակղզի, որոնք արշավելով համարյա հասել էին մինչև կայսրության մայրաքաղաքը²: Իսկ սելջուկները շարունակում էին իրենց դիքքերն ամրապնդել Իրանում, Իրաքում և այլուր: Այս տարածքների նվաճումն սելջուկների կողմից ուղեկցվում էր օղուգական և քյուրքմենական արխատոկրատիայի ասպտամբություններով:

XI դ. կեսերին նման մի հզոր ասպտամբություն դեկավարեց նույն Իրրահիմ Յամնալը՝ պարսկական Իրաքում: Նա մտադրվեց նույնիսկ ինքնուրույն իշխելու՝ հեմվելով տեղի ճատակյացների, այդ թվում նաև քուրդ առաջնորդների վրա՝ Հուլվանում, ուր նրա պատվին խուտրա էր տրվում³:

Այնուհանդերձ, 1054/5(ոից. 446) թ. Տուրքիլ քեկը արշավեց Ատրպատական, մտավ Քավրիզ, որին հնագանդվեց Ռավվադյան Վահսուդանը: Ապա՝ սուլթանին ենթարկվեց Գամձակի Շադադյան Աբու-լ-Ասվարը: Քե՛ն՝ մեկը և թե՛ մյուսը խուտրա տվեցին սելջուկ սուլթանի պատվին: Այնուհետև, նվաճելով, նա հասավ Մանազկերտ և պաշարեց քաղաքը ու կողոպտեց ողջ զավատը: Այդ ժամանակ, նշում է Իթմ ալ-Ասիթը, սուլթանին մեծ քանակությամբ մվերներ ուղարկեց Մարվանյան ամիրա Նասր ադ-Դաուլան, որը, ինչպես նշվեց, խուտրա էր տալիս նրա պատվին⁴: Ինչպես երևում է ամիրան այդ ճամապարհով՝ մվերներ տալով, կաշառելով և հպատակությունը հայտնելով փոր-

¹ Նույն տեղում: Այդ մասին առիտաբոսի լուծմ են հայկական և քյուրքմենական աղբյուրները:

² История Византии, т. II, М., с. 274.

³ С.Г. Агаджанов, МЗП, աշխ., էջ 216:

⁴ Իթմ ալ-Ասիթ, VIII, էջ 67: Տես նաև Իթմ ալ-Ասիթի, I, էջ 354:

ծում էր խաղալ, առանց ընդհարումների հետ մղել սելջուկներին, նույնիսկ խոտտահարով զենքով ու զորքով մասնակցել Տուրքիլի հետագա արշավանքներին¹: Մամազկերտի ամուր պաշտպանությունն ու քնակչության ուժեղ դիմադրությունը հարկադրեց սելջուկյան սուլթանին հետ մահանջելու²: Մամազկերտի գրավման անհաջող փորձից հետո սուլթանը մեկնեց Ատրպատական՝ մտադրվելով այնտեղ ձմեռն անցկացնել և նոր արշավանքի մախապատրաստվել: Մակայն չուտով մա մեկնեց Ռեյ և 1055/6թ. ներխուժեց Արրասյան խալիֆայության մայրաքաղաք³:

Քաղաքը գրավելուց հետո Արրասյանները շարունակեցին ձևակառուցել գոյատևել՝ մախկեցի պես պահպանելով հոգևոր իշխանությունը: Քեպետև Արրասյանների մտավաչրը Քաղդադն էր, սակայն մահմեդական աշխարհում սելջուկյան սուլթանը համղես էր գալիս որպես աշխարհիկ առաջնորդ և երկրորդ դեմքը խալիֆայից հետո⁴:

Քաղաքը նվաճելուց հետո Տուրքիլ քեկի զորքը մտավ Մոսուլի մարզն ու այն, ինչպես մաև Դիյար Մուղդարի շրջանը խլեց արար Ուկայիներից⁵: Այս շարժվելով դեպի հյուսիս՝ սելջուկյան զորքը 1056/7թ. մտավ Դիյար Բաքր և պաշարեց Մարվանյան տիրույթներից մեկը՝ Ջազիրա իբն Օմարը: Կողպտելով շրջանի հայկական և ասորական մի շարք վանքեր՝ սելջուկները սրախողխող արեցին քազմաքիվ քահանաների: Մարվանյան ամիրան՝ Նասր աղ-Դաուլան, որն, Իբն ալ-Ասիրի խոսքերով, մինչ այդ սուլթանին շարունակ նվերներ էր ուղարկում, ստիպված եղավ կրկին դրան տալ՝ իր իշխանությունը պահպանելու համար: Դիմելով Տուրքիլ քեկին՝ Նասր աղ-Դաուլան սկսեց համոզել նրան, թե Դիյար Բաքրում մա որքան կարևոր դիրք է գրավում, և

¹ Մ. Քոնիալյան, էջ 71:

² К. Н. Юзбашян, Армянское государство эпохи Багратидов и Византия, М., 1986, с. 225-226. Մանրամասն տես՝ Մ. Քոնիալյանի, էջ 131-135, 4. Սկիզբես, էջ 167-170:

³ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 67:

⁴ Սեանան Եղևազի, Փամահակագրության, էջ 32-33:

⁵ Садр ад-Дин Али ад-Хусейни, Ахбар ад-Доулат ас-селджукийяна, издание текста, пер. введение, прим. и прилож. З.М. Буниятова, М., 1980, с.36.

որ ինքը պաշտպանում է մահմեդականների սահմանային գոտիները, պայքար մղում ընդդեմ քրիստոնյաների (քաֆիրների)¹:

Ի դեպ տեղին է նշել, որ մի շարք մատենագիրներ, ամոլադատնալով քուրդ ամիրայի գործունեությանը, խոսում են սուլթանին նրա տված կաշառքների՝ նվերների, քանկարժեք իրերի և խոշոր գունդերների մասին: Այդ մատենագիրներից մի քանիսը գրում են, որ երբ Տուրքիլ քնկը նվաճեց Իրաքը, Նասր աղ-Դաուլան նրան ուղարկեց ժամանակին Բուխնեթից գնած հայտնի հակինթի քանկարժեք շղթան (ալ-հարլ ալ-յակուրի)²: Այս կապակցությամբ Իրն ալ-Ազրակը հայտնում է, որ իբր պատմական այդ շղթան կողոպտեց Մարվանյան վեզիր Իրն Ջահիրն ամիրայության անկումից հետո³:

Խոսելով Մարվանյան ամիրա Նասր աղ-Դաուլայի գործունեության և դիվանագիտության մասին՝ Իրն ալ-Ջաուզին, Իրն Քասիրը և այլք ընդգծում են, որ նա ընդհանրապես քանում էր և կողմնակից էր, որ անվնաս հետ մղեր իր հակառակորդին՝ կաշառելով ամիրաժեշտ դրամով և ունեցվածքով⁴:

Այսպիսով, վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ իշխանությունը պահպանելու համար Նասր աղ-Դաուլան դիմում էր դիվանագիտական զանազան քայլերի: Նա սելջուկներին ոչ միայն քանկարժեք նվերներ և ունեցվածք էր տալիս⁵, այլև՝ փորձում էր համոզել նրանց, թե Դիյար Բաքրում իր իշխանությունը շատ կարևոր ռազմավարական դիրք է գրավում քրիստոնեական աշխարհի դեմ հանդիման: Դրանով էլ՝ ընդունելով սելջուկների գերիշխանությունը, նրան հաջողվեց կամխել նրանց արշավանքները և ժամանակավորապես իշխանությունը փրկել կործանումից: Ուստի, պատահական չէ, որ մինչև Նասր աղ-Դաուլայի մեռնելը՝ 1061 (հիջ. 453) թ., սուլթանը համարյա լուրջ փորձեր չկատարեց միջամտելու Մարվանյանների գործերին:

¹ Իրն ալ-Ասիր, VIII, էջ 78: Տես նաև՝ Աբու-լ-Ֆիդա, II, էջ 175, Իրն ալ-Ասրի, I, էջ 356:

² Իրն ալ-Ջաուզի, VIII, էջ 223, Աբու-լ-Ֆիդա, II, էջ 175:

³ Իրն ալ-Ազրակ, էջ 217:

⁴ Իրն ալ-Ջաուզի, VIII, էջ 223, Իրն Քասիր, XII, էջ 87:

⁵ Իրն ալ-Ասիր, VII, էջ 92:

Նասր աղ-Ղատուլայի մեռնելուց հետո ամիրայությունն սկսեց հետզհետե կազմալուծվել, որի ծաղկման ավելի քան 50 տարիներն անշուշտ կապված էին նրա անվան հետ:

Արաբալեզու պատմագրությունն ըստ արժամվույն գնահատում է քուրդ այս ամիրայի գործունեությունը թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառներում: Նրա օրոք Մարվանյան իշխանությունը ծաղկում ապրեց կյանքի բոլոր ասպարեզներում: Նա առավել այքի ընկալվ քնակչության նկատմամբ քարյացակամ և արդարադատ վերաբերմունքով, մահմեդական բարեգործական ձեռնարկներով և այլն:

Նասր աղ-Ղատուլան, ապրելով ավելի քան 80 տարի, մահմեդական աշխարհով փառաբանվեց որպես իսլամի ջատագով, հռչակվեց հարևանների հետ իր հավասարակշռված քաղաքականությամբ: Մայրաքաղաքի կենտրոնում նա օրևան տվեց ժամանակի մտավորականներին՝ բանաստեղծներին, գիտնականներին և մշակութային այլ գործիչներին:

Ըստ մեզ հասած հաղորդումների, Նասր աղ-Ղատուլան չափազանց մեծ ուշադրություն դարձրեց պալատական կյանքին և կադրերի ընտրությանն ու պատրաստմանը, առանձնահատուկ կարևորություն տալով զվարճանքներին և հաճելի ժամանցներին: Նա ուներ իշխանական ծագում ունեցող չորս կին: Բացի այդ, շուրջ 500 հարճ (որոշ հեղինակների մոտ 360) և այդքան էլ ծառա, նրզյուհիներ, սպասուհիներ և այլն: Նրանցից շատերին Նասր աղ-Ղատուլան ուղղակի գնել էր՝ հինգ և ավելի հազար դինարով:

Իշխանության պալատը խոհարարներով ապահովելու նպատակով նա իր գումարներով մարդկանց ուղարկում էր Եգիպտոս՝ խոհարարական դասընթացներ անցնելու համար¹:

Նասր աղ-Ղատուլայի մեռնելուց հետո, փաստորեն, ամիրայությունը քաժանվեց նրա երկու որդիների՝ Նիզամ աղ-Ղինի և Մախդի միջև: Իշխանության գլուխ անցնելու համար սուր վեճեր ծագեցին երկու եղբայրների միջև: Ամիրայության վեզիր Ֆախր աղ-Ղատուլա իրն Ջահիթի աջակցությամբ այդ պայքարում հաղ-

¹ Նայն տեղում, էջ 91-92: Տես նաև՝ Իբն ալ-Ազբակ, էջ 169-172, Իբն ալ-Ջաուզի, VIII, էջ 222-223, Իբն Ջահիթ, XII, էջ 87, Աբու-լ-Ֆիթա, III, էջ 186, Իբն ալ-Վարդի, I, էջ 367:

քեց Նիզամ աղ-Դիմը, որին հայրը կտակել էր իշխանությունը: Մայրաֆարիկինն իր հարակից շրջաններով անցավ իշխան Նիզամ աղ-Դիմին, իսկ Ամիրը՝ Սաի'դին¹: Դրանով, իհարկե, չավարտվեցին երկու եղբայրների հակասությունները: Նիզամ աղ-Դիմին, որի դիրքը քավական ուժեղ էր Մայրաֆարիկիում, զահեղմեց անելու համար Սաի'դը դիմեց սուլթան Տուրքիլ քելին, որն էլ, ընդառաջելով նրա խնդրանքին, մեծ զորքով ուղարկեց Մայրաֆարիկին: 1068թ. սելջուկյան զորքը հասավ Մարվանյան մայրաքաղաք և սկսեց ասպատակությունները: Երկուստեք միջև տեղի ունեցած քամակցություններից հետո, Նիզամ աղ-Դիմին հաջողվեց 50 հազար դիմար կաշառքով հետ ուղարկել սելջուկյան զորքին²:

Չնայած Նիզամ աղ-Դիմը ինչ-որ յափով շարունակեց իր քաղաքականությունը, քայք քայ քայ սելջուկներն ավելի հաճախակի փորձեր կատարեցին նվաճելու Դիյար Բաքրը: Օրինակ, Նասր աղ-Դաուլայի մեռնելուց հետո նման մի փորձ ձեռնարկեց սելջուկյան հրամանատար Մալար Խորասանը («Խորասանի Մալարը»-տիտղոս է-Ա.Փ.): Ըստ Մ. Ուոհայեցու, այս զորապետը դեպի Հայաստանի հարավային գավառներ և Եդեսիայի շրջան կատարեց մի քանի արշավանքներ: 1062թ. երկու այլ հրամանատարների հետ Մալար Խորասանը հերքական արշավանքի ժամանակ ներխուժեց Դիյար Բաքրին սահմանակից Չորրոյ Հայքի՝ Պաղինի և Հայաստանի Միջագետքի Թլմուխի շրջանները: Մեծ ավերածություններ կատարելով՝ նրանք զգալի քանակությամբ զերիներ վերցրին և «Երբ, -զրում է Ուոհայեցին, -Ամիդ քաղաքում մատող ամիրան՝ Նսրտուլի որդին, (Նասր աղ-Դաուլայի որդի Սաի'դը-Ա.Փ.) լսեց սոսկալի դժբախտության մասին, նամակ գրեց Մալար Խորասանին, նրա հետ քարեկամություն հաստատեց և հրամայեց իր զավառում վաճառել բոլոր զերիներին. նա քարի մարդ էր և քրիստոնյաներին գրացող, ամբողջ երկրով մեկ հրովարտակ հրապարակեց՝ կոչ անելով զմեկ բոլոր զերիներին: Այդպես էլ եղավ: Երբ զերիներին քերեցին Ամիթ (Ամիդ)՝ վաճառքի, շատերը քաղաքի դռների

¹ Իբն ալ-Ասիր, VII, էջ 92: Տես նաև՝ Իբն ալ-Ասրի, I, էջ 367, Արմ-Գ-Ֆիլոս, II, էջ 181:

² Իբն ալ-Ազնակ, էջ 181:

առջև մահատակվեցին: Կարելի էր տեսնել իրենդեմ լույսը, որ երկմքից իջել էր նրանց վրա»¹: Ամիդի ամիրան, ըստ Մ. Ուոհայեցու, այդ ժամանակ Մախլմ էր², որին, ինչպես նշվեց, տրվեց այդ քաղաքն իր շրջանով ու ամրոցներով:

Լսելով Մալաթ խորասանի անավոր վայրագությունների մասին՝ Բյուզանդական կայսր Դուկասը Ֆրանկոսլոյի (Հնրվն) գլխավորությամբ զորք ուղարկեց սելջուկներին հակահարված հասցնելու համար: Իր զորքով Ֆրանկոսլոյին միացավ Նդեսիայի Տավտանոս զորավարը, և հետապնդելով դեպի Առաջատական մահանջող սելջուկներին, նրանք պաշարեցին Ամիդը: Քաղաքի բնակիչները, կաշառելով Ֆրանկոսլոյին, կարողացան վերացնել պաշարումը, բեև թավական զոհեր տվեցին Տավտանոսի հետ մարտի բռնվելու ընթացքում³:

1064թ. Անիի գրավումից հետո, սելջուկներն սկսեցին հաճախ արշավել դեպի Հայկական լեռնաշխարհ ու Փոքր Ասիայի խորքերը: 1066թ. Մալաթ խորասանը մի քանի հարձակումներ ձեռնարկելուց հետո ավարտության մատնեց Նդեսիայի շրջակայքը⁴: Նահանջի ճանապարհին նա Դիյար Բաքրում ընկավ ծուղակի մեջ և սպանվեց Մարվանյանների կողմից:

Իրն ալ-Ազրակը սխալմամբ գրում է, որ, իբր, այդ արշավանքը դեպի Դիյար Բաքր Մալաթ խորասանը կատարեց սուլթան Տուրքիլ բեկի հրամանով, մինչդեռ այդ ժամանակ սուլթանը մահացել էր (1063թ.), որին փոխարինել էր Ալի-Արսլանը (1063-1072թթ.): Եվ այսպես, Իրն ալ-Ազրակը գրում է, որ հիշ. 458թ. ռարի ալ-ավալ ամսին (1066թ. փետրվարին) հինգ հազարանոց զորքի գլուխն անցած Մալաթ խորասանը մտավ Դիյար Բաքր և պաշարեց Մայյաֆարիկինը: Մարվանյան ամիրայության վեզիր Աբու-լ-Ֆադլ Իբրահիմ իրն ալ-Ամրարին քանակություններ վարեց Մալաթի հետ և խոստացավ նրան վճարել 300 հազար դինար: Միմյև ամիգամեշտ գումարի համձնումը, Մարվանյան վեզիրը դավադրաբար, որպես պատանդ, Մալաթի մոտ ուղար-

¹ Մ. Ուոհայեցի, էջ 153:

² Նույն տեղում, էջ 155:

³ Նույն տեղում, էջ 155-157:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 169-173:

կեց Նիզամ աղ-Դինին թշնամաբար տրամադրված նրա երեք եղբայրներին՝ Հասանին, Ֆարդուսին և Մամեկին: Ապա, վեզիրը խաբելով Մալարին՝ մի քանի զորականների հետ նրան երավիրեց պալատ և ձերբակալեց քոլորին: Այնուհետև, Մարվանյան գործը հարձակվեց Մայաֆարիկինը պաշարած սելջուկների վրա: Այդ ընթացքում սելջուկներն սպանեցին Նիզամ աղ-Դինի երկու եղբայրներին՝ տանջամահ անելով երրորդին: Երկուստեք միջև տեղի ունեցած ճակատամարտում սելջուկները պարտություն կրեցին, տալով շատ զերիներ: Մի քանի օր անց Նիզամ աղ-Դինը գլխատեց Մալար Խորասանին և պալատում նրա հետ ձերբակալված զորականներին¹:

1070/1թ. սուլթան Ալի-Արսլանը Դիյար Բաքրի վրայով արշավեց Հալեպ: Իմամաբով այդ մասին, ինչպես գրում են արաբալեզու մի քանի հեղինակներ, Մարվանյան ամիրան գնաց և դիմավորեց նրան: Իր հնազանդությունը հայտնելով սուլթանին՝ Նիզամ աղ-Դինը նրան տվեց նաև 100 հզ դինար: Ալի-Արսլանը մտավ Ամիդ և հիանալով նրա հիասքանչ զանառով, մեկնեց Եդեսիա: Չկարողանալով նվաճել քաղաքը՝ նա քողեց այն և իր ճանապարհը շարունակեց դեպի Հալեպ²:

Այապիտով, Մարվանյան ամիրան՝ Նիզամ աղ-Դինը ևս ընդունեց սելջուկ Ալի-Արսլանի զերիչխանությունը: Սեզ այլ մանրամասներ հայտնի չեն երկու կողմերի քանակցությունների և հանդիպման մասին: Սակայն եղած կցկտուր տվյալներից կարելի է ենթադրել, որ Նիզամ աղ-Դինը պարտավորվեց նաև ռազմական օժանդակություն ցույց տալ սելջուկներին:

Նույն ժամանակաշրջանում սելջուկները ռազմական ակտիվ գործողություններ էին ծավալում կայսրության հարավ-արևելյան հատվածներում: 1070/1թ. Արի-Արսլանը մեծ զորքով գրեթե առանց դժվարության գրավեց Մանազկերտը: Կայսրոջ քաջակայության պատճառով մեկ օրում նա ներխուժեց Մանազկերտ քաղաքը: Նա դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ, որը, ինչպես նշվեց վերևում, պարտության էր մատնել

¹ Իբն ալ-Ազբակ, էջ 182-184:

² *Imad ad-Din al-Isfahani, Histoire Des Seldjoucides de l'Iraq*, p. 37, Իբն ալ-Ասիր, VIII, էջ 109; Իբն ալ-Ասրի, I, էջ 373, Ալթա-լ-Յիլդա, II, էջ 186-187:

ճրս հորեղորո՞ր՝ Տուրիլ քեկին¹: Անդրադառնալով Մանազկեր-տի գրավմանը Մ. Ռոտայեցին մշում է, որ, իբր, Տուրիլ քեկը մահվան ժամին Ալփ-Արսլանին կտակել էր վրեժխնդիր լինել²: Այնուհետև, ըստ Մ. Ռոտայեցու, Արփ-Արսլանը անբիվ զորքով մեկնեց Ամիդ և քանակ դրեց քաղաքի դարսլասի դիմաց:

Հետևանքով այնտեղից՝ սուլթանը մի քանի օր պաշարման են-քարկեց Թլմուխի բերդաքաղաքը, գրավեց այն, ապա մեկնեց Ե-դեսիա, այնտեղից շարժվեց դեպի Հալեպ³:

Կայսրությունը կանգնած էր սարսափելի վտանգի առջև: Ի-հարկե դժվար է ասել, թե այդ ժամանակ սուլթանը մտադիր էր հարձակում գործել Բյուզանդիայի վրա, թե՛ ոչ: Այդ կասպակցու-քյամբ կարելի է միայն ենթադրել, որ մա շարունակում էր դեռևս հաշվի մտել կայսրության հզորության հետ: Ուստի, պատահա-կան չէ, որ մինչև Եգիպտոսի վրա հարձակվելը Ալփ-Արսլանը մտահոգված էր սուլթանության հյուսիս-արևմտյան սահմաննե-րի ամրապնդման խնդիրներով: Այդ ընթացքում հակառակ վճիռ կայացրեց կայսր Ռոմանոսը. մա գտավ, որ կարելի է ռազմա-կան զործողություններ սկսել սելջուկների դեմ: Նրա մերձավոր-ների մեջ գտնվեցին շատ մարդիկ, որոնք մտածում էին, թե մեկ հարվածով հմարավոր է վերջ տալ քյուրքական վտանգին: Նրանք կայսրին խորհուրդ տվեցին չսպասել և անցնել հակա-հարձակման⁴:

Ըստ արարալեզու հեղինակների, 1071թ. բյուզանդական կայսր Ռոմանոս Գիոզենեսը տարրեր ազգերից կազմած 200-300 հազարանոց զորքով հասավ Մանազկերտ: Այդ յուրը լսեց Արփ-Արսլանը, որը Հալեպից վերադարձել էր Աթրպատական և գտնվում էր Խոյ քաղաքում: Նա շտապեց դեպի Մանազկերտ: Խղաքի մոտ երկուստեք միջև տեղի ունեցան թե՛ մադտեր: Սուլ-թանը շուտով Ռոմանոսին առաջարկեց հաշտություն կնքել: Մերժում ստանալով՝ 1071թ. օգոստոսի 19-ին սելջուկները կրկին անզամ անցան հարձակման: Գավաճանության հետևանքով

¹ Մ. Ռոտայեցի, էջ 128:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 211-215:

⁴ Историк Византии, т. II, с. 285-286.

րյուզանդական քանակը խայտառակ պարտություն կրեց, և ինքը՝ կայսրը գերի ընկավ¹: Մելչուկները կոռուպտեցին այդ շրջանները և ավերածություններ կատարելով՝ շատ մարդ սպանեցին:

Ալփ-Արսլանը վերադարձավ Ասորպատական, կառավարիչ նշանակելով Խլաբուն ու Մամազկերտում, որով, ինչպես գրում է Իբն ալ-Ազրակը, այդ երկու շրջանները խլվեցին Մարվանյաններից²: Հակված ենք կարծելու, որ Մարվանյան գորքը սելջուկյան քանակի կազմում նույնպես մասնակցում էր սելջուկ-րյուզանդական հակամարտությանը: Այնուհանդերձ Խլաբն ու Մամազկերտը, որոնք ժամանակ առ ժամանակ ենթարկվում էին Մարվանյաններին, խլվեցին նրանցից: Դա Ալփ-Արսլանի կողմից տվյալ տարածքում Մարվանյան ամիրաների գերիշխանությունն սահմանափակելու ուղղությամբ առաջին լուրջ միջոցառումն էր: Սակայն, հաշվի առնելով Մարվանյանների հավատարմությունը սելջուկյան դիվանին, Ալփ-Արսլանը նրանց վերադարձրեց Խլաբը³:

Մելչուկ-րյուզանդական ռազմական ընդհարումների վերաբերյալ Իբն ալ-Ազրակը հարողորդում է ընդարձակ մեկ այլ տարբերակ: Նրա կարծիքով, Ալփ-Արսլանը ոչ թե Ասորպատականից, այլ Իրաքից մեկնեց Դիյար Բաքր հոռոմներին ճակատամարտ տալու նպատակով: Սուլթանի հետ էր Մարվանյան Նիզամ ադ-Դիմի եղբայրը՝ Ամլոյի տեր Մախլը⁴: Վերջինս հիջ. 460(1067/8) թ. եղբոր հետ ունեցած հերթական վեճի պատճառով կրկին քողոքել էր սուլթանին և զտնվում էր նրա պալատում: Արաք պատմիչի շարադրանքից երևում է, որ Նիզամ ադ-Դիմը, խուսափելով

¹ Իբն ալ-Ասիր, VIII, էջ 67; տես նաև՝ Садр ад-Дин Али ад-Хусейни, Акбар ад-даулат ас-саладжукитѣна, с. 57-62.

² Իբն ալ-Ազրակ, էջ 190:

³ Ս. Քանազյան, նշվ. աշխ., էջ 209:

⁴ Իբն ալ-Ազրակ, էջ 186: Պիտի ենթադրել, որ Մ. Ռոնեսյեցին սխալմամբ գրում է, թե Ամլոյի բնակիչներն Մախլին բռնազրկեցին 1063թ.: Տես՝ Մ. Ռոնեսյեցի, էջ 155: Արաք մատենագիտները ևս նշում են, որ Մախլը մեռավ հիջ. 455թ. (1063թ.): Տես՝ Իբն ալ-Վաթի, I, էջ 370, Իբն Քուսայր, XII, էջ 90, Արաք-Է-Ֆիդա, II, էջ 184, Իբն ալ-Ջաուզի, VIII, էջ 232... Սրանց հետևելով՝ Ամին Ջաքին իր հեքթին գրում է, որ Մախլը մահացել է 1063թ. (հիջ. 455թ.): Տես՝ Մ.Ա. Ջաքի, Քաթիխ, էջ 123:

սելջուկների կողմից սպառնացող վտանգից՝ մեծ քանակությամբ դրամ և քանկարժեք իրեր մվիրեց Մայյաֆարիկին ժամանած սելջուկյան հայտնի վեզիր Խավաջա Նիզամ ալ-Մուլքին:

Ըստ Իբն ալ-Ազրակի, Մայյաֆարիկինում Մարվանյան զերդաստանն իր կանանցով սելջուկյան վեզիրին խնդրեց միջնորդելու սուլթանի մոտ՝ Նիզամ աղ-Դինին շվեասելու համար: Ընդատաջելով նրանց խնդրանքին՝ վեզիրը բուրդ ամիրային տարավ Ալի-Արսլանի՝ Տիգրիսի ափին գտնվող ճամբար: Նիզամ ալ-Մուլքի միջամտությամբ սուլթանն քնդունեց Նիզամ աղ-Դինին և նրան հանձնեց եղբոր՝ Մալիկին, որով, փաստորեն, նա փոխեց իր որոշումը՝ հարձակվելու Մայյաֆարիկինի վրա¹:

Սույն փաստերը, որոնք թեև չեն արձանագրվել այլ սկզբնաղբյուրներում, վկայում են, որ սելջուկների յուրաքանչյուր քայլ լարված իրադրություն էր ստեղծում Դիյար Բագրում, որն էլ հարկադրում էր Մարվանյաններին ինչ-որ ձևով միջոցներ ձեռնարկել՝ զերծ մնալու ավերածություններից:

Այսպիսով, 1071թ. Մանազկերտի ճակատամարտից հետո գնալով մկատնի դարձավ սելջուկյան աշխարհակալության առավելությունը Բյուզանդիայի մկատմամբ: Սկզբնաղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում ճակատամարտի, նրա հետ կապված իրադարձությունների մասին, ցույց տալով, որ բյուզանդական կայսրությունը կամա թե՛ ակամա ստիպված եղավ հաշվի առնել իր մոր հակատակորդի ռազմական ներուժը և կարողությունները²:

Մանազկերտի ճակատամարտից հետո Մարվանյանները մի քանի տարի կարողացան պահպանել իրենց գոյությունը: Մակայն, սուլթան Մելիք շահի օրոք (1072-1092) սելջուկները որոշեցին վերջ տալ Մարվանյան իշխանությանը³: Սկզբնաղբյուրնե-

¹ Իբն ալ-Ազրակ, էջ 186-188:

² Այդ մասին ավելի մանրամասն տես՝ 37. İsmail ad-Din al-İsfahani, İrsaq ve Horasan Selcukleri tarihi, İstanbul, 1943, p. 37, Մ. Ուսեայեցի, էջ 211-215, Ա. Լաստիվնցի, էջ 101-105, Հովհաննես Մկիթցեսի շարունակազ՝ Իսահակ Կոմնենոս, Ջույն տեղում, էջ 241-242:

³ Իբն ալ-Ազրակը գրում է, որ իբր. 466(1073/4) թ. Ամիդի մոտ տեղի ունեցավ մի ճակատամարտ Դիյար Բագրայի, Դիյար Բագրի գոթեթի և սելջուկյան Արսուխի (Աջաոքի) զլխավորած քանակի միջև: Այս ճակատա-

բուն եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ գործում չափազանց մեծ դեր խաղաց Մարվանյան իշխանության երկարամյա նախկին վեզիր, արարազգի Ֆախր աղ-Դաուլա իրն Ջահիրը¹: Դա տեղի ունեցավ Նիզամ աղ-Դինի որդու՝ Նասիր աղ-Դաուլա Մանսուրի (1080-1085թթ.) տիրապետության ժամանակաշրջանում, որը հոր և հորեղորո՝ Սաիրի վախճանվելուց հետո միացրել էր իշխանության գլխավոր կենտրոնները: Նրան ենթարկվեցին հիմնական քաղաքները՝ Ամիդյն ու Մայյաֆարիկները:

Նասիր աղ-Դաուլա Մանսուրից քավական դժգոհ էր սուլթան Մելիքշահի դիվանը, որը դրա համար լուրջ պատճառներ ուներ: Նախ պետք է նշել, որ թեև քուրդ իշխանն իր նախնիների մեծ շարունակեց ճանաչել սելջուկների գերիշխանությունը, սակայն դիրքերն ամրապնդելու համար քարեկամական կապեր հաստատեց Մուսուլի հարևան Ուկայիների ամիրա Եարաֆ աղ-Դաուլայի հետ: Վերջինս 1082-1083 թթ. նվաճելով Միջագետքի և Ջազիրայի որոշ քաղաքներ, հասել էր Հալեպ և այդ տարածքները միացրել իր տիրույթին: Այդ հողի վրա Եարաֆ աղ-Դաուլան ընդհարվեց Դամասկոսի տեր սուլթան Մելիքշահի նորո՝ Տուտուշի (Թուրուշի) հետ: Բացի այդ, նա կապ էր հաստատել սելջուկյան սուլթանության կրոնական և քաղաքական հակառակորդ Ֆատիմյան Եգիպտոսի հետ²: Սուլթանի դիվանը դժգոհ էր նաև Նասիր աղ-Դաուլայից այն քանի համար, որ նա իշխանության վեզիր էր նշանակել ոմն քրիստոնյա քիչլե Աբու Սալի-

մարան արաբ պատմիկն իր երկի մեկ այլ տեղում քվազրել է 472(1079/8) թ.: Տես՝ Իբն ալ-Ազդակ, էջ 193, 200:

¹ Մարվանյան իշխանության վեզիր Աբու Նասր Մահամմադ իրն Ջահիրը հայտնի էր նաև Ֆախր աղ-Դաուլա մականունով: Նասր աղ-Դաուլայի մեռնելուց հետո, 1062թ. նա հեռացավ Մայյաֆա-րիկներից, մեկնեց Բաղդադ և Աբրասյան ալ-Կայիմի պարստոմ գրադեցրեց վեզիրի պաշտոնը: Երկու տարիներ ասրեղով Մայյաֆարիկներում նա քաջատեղյակ էր Մարվանյան իշխանության ճեքքին կյանքին, ոմնեցած հարստություններին և զամծապահեսաներին: Տես՝ Իբն Խալիքյան, I, Բեյքուր, 1978թ., էջ 177-178, II, Թեյքուր, 1961, էջ 176, II, Կահիրե, 1887, էջ 87, Իբն ալ-Ջաուզի, VIII, էջ 222, Իբն ալ-Ազդակ, էջ 130, 181-182, 206-208, Աբու- լ-Ֆեյսա, II, էջ 199-200:

² Ս. Թոմնազյան, նշվ. աշխ., էջ 209:

մին, որն իր կնոջ հետ միասին վարում էր ողջ գործերը¹: Դա առաջագրեց մահմեդական քնակյության դժգոհությունը: Ահա թե էլ ինչու՞ Իբն Ջահիրը մեծ կրքոտությամբ դրդեց Մելիքշահին՝ նվաճել Դիյար Բաքրը և այն միացնել իր սուլթանությանը:

Մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ 1083/4 թ. Աբրասյան ալ-Կայիմ խալիֆան վեզիրի պաշտոնից ազատեց Իբն Ջահիրին, որին փոխարինեց որդին՝ Ամիդ ադ-Դաուլան: Այս առիվ տարբեր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան աղբյուրները: Առանձին հեղինակներ գրում են, որ այդ թվականին (հիջրի 476 թ.) Մելիքշահի և վեզիր Նիզամ ալ-Մուլքի խնդրանքով Բաղդադից Իսֆահան մեկնեց Իբն Ջահիրը՝ իր զերդաստանով: Սուլթանը նրան շնորհեց Դիյար Բաքրը, հրամայեց շարժվել այնտեղ և այն խլել Մարվանյաններից, խոտրա տալ իր /Մելիքշահի-Ա.Փ./ պատվին և ամուսնը դրոշմել դրամի վրա²: Ապա 477(1084) թ. սուլթանը քյուրքմենական ուժեր ուղարկեց Իբն Ջահիրի զորքը համալրելու համար, որովհետև Մարվանյան Նասիր ադ-Դաուլան դիմել էր Եարաֆ ադ-Դաուլային միացյալ ուժերով հանդես գալու ընդդեմ Մեծ սելջուկների՝ նրան Ամիդը տալու պայմանով³: Մարվանյանների դեմ ձեռնարկվող արշավանքին սուլթանի հրամանով մասնակցեցին Խարբերդի Չուրուք ամիրայի զորքերը, Մանազկերտի և Մուշի ամիրա Մամդուկը, Իրաքում նվաճումներ կատարող Աբուտալսրեկի և սելջուկների մի շարք վասալ՝ Միջագետքի արաբ ամիրաների քանակները⁴: Երկու կողմերը՝ Մարվանյան և արաբ Ուկայիների միացյալ ուժերն ու սելջուկյան զորքերը մարտի քոնվեցին Ամիդի մոտ:

Նկատելով ուժերի անհավասարակշռությունը և չցանկանալով վնաս պատճառել արաբներին՝ Իբն Ջահիրը դիմեց խորամանկ քայլի. նա առաջարկեց հաշտության պայմանագիր կնքել: Թյուրքմենական զորախմբերը կռահեցին Իբն Ջահիրի մտաղ-

¹ Իբն ալ-Ազրակ, էջ 206:

² Իբն ալ-Ասիք, VIII, էջ 133:

³ Ա. Բոսնազյան, նշվ. աշխ., էջ 211:

⁴ Ալ-Իսֆահան, նշվ. աշխ., էջ 75: Իբն ալ-Ասիք, VIII, էջ 133; Իբն Խալլուն, III, էջ 374:

րությունը և զիշերով հարձակման անգամ ու ջախջախեցին հակառակըղին: Եարաֆ աղ-Դատույան պաշարման մեջ ընկավ և հազիվ ազատվելով՝ փախավ Ռակկա: Սելջուկյան զորքը հաշվեհարդար տեսավ արարմների հետ և տիրեց Մուսուլի մարզին: Եարաֆ աղ-Դատույան շտապեց հաշտություն կնքել սուլթանի հետ¹:

1085 թ. ապրիլ ամսին Իրն Ջահիրը գրավեց Ամիդը, իսկ նույն քվականի սեպտեմբերին՝ ներխուժեց Մարվանյան մայրաքաղաք Մայյաֆարիկին: Թե՛ Ամիդը, և թե՛ Մայյաֆարիկիին հանձնվեցին երկար պաշարումից հետո: Իրն Ջահիրը բռնագրավեց Մարվանյանների մեծաքանակ հարստությունը և այն ուղարկեց սուլթանին²: Նույն քվականին ամուր դիմադրությունից հետո Իրն Ջահիրին ենթարկվեց Ջազիրա իրն Օմարը, որով, ինչպես գրում են արաբալեզու հեղինակները, ամկում սպրեց Մարվանյան իշխանությունը³:

Վերոհիշյալ դեպքերի ավելի մանրամասն նկարագրությունը տալիս է Իրն ալ-Ազրակը: Նրա հաղորդած ավյալները, մեր կարծիքով, ավելի հավաստի են և ցույց են տալիս իրադարձությունների զարգացումը:

Իրն ալ-Ազրակը տեղի ունեցածի ողջ մեղքը քարոզում է Իրն Ջահիրի վրա և գտնում, որ իշխանության կործանման հիմնական պատճառը նրա ազաւոթյունն էր: Հանգամանորեն անդրադառնալով Իրն Ջահիրի գործողություններին՝ Իրն ալ-Ազրակը գրում է, որ իմամալով Մարվանյան իշխանության քայքայման, ներքին երկպառակությունների մասին, նա սելջուկյան վիզիր Նիզամ ալ-Մուլքին, նկարագրելով նրանց հարստություններն ու զանձարպահեստները, խոտաացավ նվաճել այդ տիրույթը և ձեռք բերել Մարվանյանների հարստությունը:

Ըստ Իրն ալ-Ազրակի, սելջուկյան վեզիրն իր հերթին այդ ամենի մասին հայտնեց սուլթանին, որն Իրն Ջահիրի գլխավորությամբ մեծաքանակ զորք ուղարկեց Դիյար Բաքր: Այդ քնթացքում Մարվանյան վերջին ամիրան՝ Նասիր աղ-Դատույան

¹ Իրն ալ-Ասիր, VIII, էջ 134-135:

² Նույն տեղում, էջ 138:

³ Նույն տեղում, էջ 139: Ավելի մանրամասն տես նաև՝ Իրն Խալիմ, III, էջ 475; Տե՛ս՝ Իրն ալ-Վալադի, II, Կահիրե, 1285թ., էջ 383, Իրն Ջահիր, XII, էջ 126-127, Ալու-լ-Ֆիդա, II, էջ 196, 200, Իրն Խալիլքան, II, Կահիրե, 1887, էջ 87:

Մայրաքարիկինն մեծամեծներից կազմած մի պատվիրակության ուղեկցությամբ մեկնեց Ջազիրա, այնտեղից էլ Իսֆահան՝ սուլթանի մոտ: Մեխիքչահը՝ Նասիր աղ-Ղատուային առաջարկեց Դիյար Բաքրը կիսել և Ջազիրա իրն Օմարի դիմաց նրան քողնել հիմնականում Ամիդ և Մայրաքարիկ քաղաքները: Համախոհների խորհրդով Նասիր աղ-Ղատույան կտրականապես հրաժարվեց և, ինչպես երևում է, իր պատվիրակության հետ ձեռնունայն վերադարձավ Մայրաքարիկին:

1085 թ. Իրն Ջահիրը մտավ Դիյար Բաքր՝ միաժամանակ պաշարելով Ամիդն ու Մայրաքարիկը: Ջորջը համարելու համար սուլթանն այստեղ քարն ուժեր ուղարկեց, որով Իրն Ջահիրը իրականացրեց Մարվանյան իշխանության գրեթե քոլոր շրջանների պաշարումը: Երկար դիմադրությունից հետո, Իրն ալ-Ազրակի խոսքերով, 1085 թ. մայիսին հանձնվեց Ամիդը: Նույն թվականի օգոստոսին /կամ սեպտեմբերին/ սելջուկների ուժեղ հարձակումներից և քաղաքի պարիսպը քանդելուց հետո ընկավ մահ Մայրաքարիկինը: Ապա՝ հետզհետե Իրն Ջահիրի գլխավորած սելջուկյան զորքերը նվաճեցին ողջ Դիյար Բաքրը: Մարվանյան ամիրային սուլթանն արքայեց Իրաք և, որպես կալվածք, նրան տվեց Բաղդադի վերևում գտնվող Հարրա գյուղը¹:

Ըստ Իրն ալ-Ազրակի, Մայրաքարիկինը նվաճելուց հետո Իրն Ջահիր Ֆախր աղ-Ղատույան լավ վարվեց քնակության հետ, վերանորոգեց քաղաքի պարիսպը, ողջ Դիյար Բաքրում վալիներ, հարկահաններ նշանակեց՝ Ամիդը հանձնելով իր տղային՝ ազ-Ջաիմին: Ապա՝ նա հայտնաբերեց Մարվանյանների հարստությունը:

Իրն ալ-Ազրակն, ավելացնելով նշում է, որ Մարվանյանների գանձապահետներին հարստության տեղափոխումը տեղի ունեցավ յիսուս զարտնի իր պլանի՝ Աբու-լ-Հասան Իրն ալ-Ազրակի միջոցով: Նա մանրամասն նկարագրում է տեղափոխման ողջ գործընթացը, քե Իրն Ջահիրն ինչպես այդ ամենը տեղափոխեց Բաղդադ և հանձնեց իր տղային՝ Ամիդ աղ-Ղատուային, որն իր հերթին փոխանցեց սելջուկյան դիվանին: Այնուհետև, արաք պատմիչը գրում է, որ մինչ այդ սելջուկյան սուլթաններ Ալփ-Աբսալանն ու Մեխիքչահը բազմիցս փորձեր կատարեցին՝ ձեռք քե-

¹ Իրն ալ-Ազրակ, էջ 206-214:

քելու Մարզամյանների հազվագյուտ և քանկարժեք իրերը¹:

Այսպիսով, 1085 թ. Մելիքշահի երամանով դեպի Դիլար Բաքր ձեռնարկված արշավանքով սելջուկները վերջ տվեցին Մարզամյան իշխանությանը: Այդ շրջանը միացվեց սելջուկյան պետությանը և, իբրև տիրույթ, հետագա տարիներին տրվեց տարերք մարդկանց²:

Ինչով քացատրելի սելջուկների այդ քայլը, մանավանդ որ Մարզամյան վերջին ամիրան ևս, ինչպես նշվեց, շարունակեց ճանաչել սուլթանի գերիշխանությունը: Այս առթիվ մալս պետք է նշել, որ Մարզամյան ամիրայությունը քաղկեցած էր հիմնականում Մայրաֆարիկիների, Ամիրի, Խլաթի, Ջազիրա իբն Օմարի շրջաններից: Միայն Մայրաֆարիկիների շուրջ կային նրանում քաղաք և այդքան էլ քերդեր: Բացի մահմեդականներից, արարներից և քրդերից Դիլար Բաքրի հիմնական ազգաբնակչությունը բնականաբար հայությունն էր: Տարածքն ուներ ռազմավարական խիստ կարևոր նշանակություն, և այնտեղ Մարզամյանների ամկայությունը տվյալ ժամանակաշրջանում արդեն լրջորեն խանգարում էր սելջուկներին իրենց ռազմական ծրագրերը իրագործելու համար: Բացի այդ, Դիլար Բաքրը և նրա գլխավոր քաղաքները՝ Մայրաֆարիկինը, Ամիրը, Խլաթն ու Բաղեշը գտնվում էին հիմնական երկու մայրուղիների հանգուցակետերի վրա, որոնք կապում էին մի կողմից Իրանը Տրապիզոնի և Միմուսի վաճառական մարտահանգիստների, և մյուս կողմից՝ Բյուզանդիայի կենտրոնական և արևմտյան նահանգների, այդ բվում և Պոլսի հետ³: Տարածքի ռազմավարական նշանակությունը գնալով մեծանում էր Մելիքշահի հակառակորդ Փոքր Ասիայի Մուլեյմանի հիմնած սուլթանությանը վերջ տալու համար: Ուստի, Մելիքշահն իր ծավալապաշտական նկրտումներն իրագործելու ճանապարհին երկու խոչընդոտներ ուներ՝ Մուսուլի, Ջազիրայի և Հսկանդի տիրակալ Ուկայի Եսրաֆ ադ-Ղատուլայի և Դիլար Բաքրի Մարզամյանների տիրույթները⁴: Պատա-

¹ Նայն տեղում, էջ 215-219:

² Նայն տեղում, էջ 220-224:

³ Մ.Բառնազյան, նշվ. աշխ., էջ 210:

⁴ Նայն տեղում:

հական չէ, որ աւրբանի դիմանը և վեզիր Նիզամ ալ-Մուլքը խկույն հավանություն տվեցին Ֆախր աղ-Ղատուլա իրն Ջահիրի առաջարկին և դիմեցին գործնական քայլերի:

1092թ. Մելիքշահի սպանությանը սելջուկյան պետությունում ստեղծվեց խառնաշփոթ իրավիճակ, որից փորձեց օգտվել Մարվանյան Նասիր աղ-Ղատուլա Մանսուրը: Նա Իրաքից բարձրացավ Ջազիրա իրն Օմար, որի կողմն էր հակված Մայյաֆարիկիների բնակչության մի մասը: Այդ նույն ժամանակ Միրիայից դեպի Դիյար Բաքր շտապեց Մելիքշահի կորայրը՝ Տուտուշ Ջաջ աղ-Ղատուլան: Նա մտավ Նիսիքին և դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ: Նրա հրամանով ավերվեց քաղաքի պարիսպը, սպանվեց շուրջ երկու հազար մարդ, չորս հրամանատար և բռնաբարվեցին կանայք¹: Բրդերի գերիշխանությունից դժգոհ Մայյաֆարիկիների բնակչության մի մասն էլ դիմեց Տուտուշին՝ քաղաքը նրան հանձնելու խնդրանքով: Այնուամենայնիվ, Մարվանյան Նասիր աղ-Ղատուլային հաջողվեց 1093թ. սկզբին մտնել Մայյաֆարիկին: Նույն րվականին Տուտուշը գրավեց Ամիդը և սրբավեց դեպի Մայյաֆարիկին: Նիսիքիների դեպքերից սարսափահար մայյաֆարիկիները 1093թ. ապրիլին առանց դիմադրության նրան հանձնեցին քաղաքի րանալիները: Հնազանդ Տուտուշին ենթարկվեց ողջ Դիյար Բաքրը, որի վալիները մեկնեցին Մոսուլ, Մինչաք և այլուր, որտեղից փախուստի դիմեցին արար Ուկայիները²: Մարվանյան վերջին ամիրան՝ Նասիր աղ-Ղատուլան հեռացավ Մայյաֆարիկիներից, որի երկրորդ իշխանությունը, ըստ Իրն ալ-Ազրակի, տևեց ընդամենը 5 ամիս³: Նա սպրեց Ջազիրա իրն Օմարում, ուր և մահացավ 1096թ.: Դրանով Դիյար Բաքրը շուրջ մեկ դար անցավ թյուրքմենական դինաստիաների (Սորմանյան Շահարմենների 1100-1207 թթ., Արտուխյանների 1101-1231թթ.) տիրապետության տակ⁴: Իրրն ճանր ամիրաներ Մարվանյան գերդատանի շտապիղները ուրոջ ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը Դիյար Բաքրի

¹ Ibn al-Qalanisi, History of Damascus, p. 122.

² Նույն տեղում, էջ 129, 123:

³ Իրն ալ-Ազրակ, էջ 229-236:

⁴ К. Восторг, Мус. джн., с. 88.

առանձին վայրերում: 1136թ. Արտոխյան Հուսամ ադ-Դինը նրանցից խլեց վերջին ամրոցը՝ Հեքախը¹:

Ամփոփելով, ասենք, որ XI դ. 40-50-ական թթ. Մերձավոր և Միջին Արևելքում սելջուկ-թուրքերի ի հայտ գալով տեղի ունեցան պատմական խոշոր փոփոխություններ, վերափոխվեց ամրոց տարածքի քաղաքական քերտեզը: Ինչպես նշվեց վերևում, Արևելքի երբեմնի ամենահզոր պետությունը՝ Արբասյան խալիֆայությունը դեռևս X դ. 40-ական թթ.-ից սկսել էր քայքայվել և սելջուկների ժամաակ ևս շարունակում էր ձևականորեն գոյություն ունենալ: Իսկ Բյուզանդական կայսրությունը ներքին խմորումների և տարրեր ճակատներում մղած պատերազմների հետևանքով խիստ բուլացել էր: Տեղական իշխանությունների մի մասը վերացել էր պատմության ասպարեզից, առաջացել էին նոր իշխանություններ: Մերձավորարևելյան ողջ տարածքում մասնատվածության քառսը ամենուրեք ուղեկցվում էր մշտական հակամարտություններով և ռազմական ընդհարումներով²: Բնականաբար նման պայմաններում Մարվանյան, այդ թվում քրդական մյուս իշխանությունները, ի վիճակի չեղան երկար դիմադրելու և մեկը մյուսի հետևից անկում ապրեցին: Չնայած Մարվանյանները, ինչպես նշվեց, զգալի ջանքեր գործադրեցին պահպանելու իրենց իշխանությունը, սակայն ներքին երկպառակությունների և հատկապես արտաքին՝ սելջուկյան պետության հուժկու հարվածների տակ վերացան պատմության քառերարեմից:

¹ Ibn al-Qala'isi, *History of Damascus*, p. 262.

² Հայ ժողովրդի պատմություն, III, էջ 466:

4. ՄԱՐՎԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆԸ

Մարվանյան իշխանությունը, իբրև ավատատիրական կազմավորում, ղեկավարվում էր ամիրայի կողմից: Ինչպես Արքայան խալիֆայությունում և մահմեդական այլ իշխանություններում, Մարվանյան ամիրայությունում ևս հիմնվեց «վեզիրի» ինստիտուտը, որն ամիրայից հետո համըխանում էր երկրորդ ղեկավարին: Ուշագրավ է, որ այդ պաշտոնը վարեցին հիմնականում այլազգի գործիչները:

Ինչպես քրդական իշխանություններում, այստեղ նույնպես իշխանությունը հորից ժառանգաբար անցնում էր որդուն կամ քնտանիքի անդամներին, որոնք իրենց հերթին ունեին ավատատիրական կալվածքներ՝ համապատասխան բերդ-ամրոցներով¹:

Քաղաքներն ունեին ռայիսներ (քաղաքապետեր), որոնց կողքին առկա էր կրոնական համայնքի պետը՝ կադին՝ դատավորը, որը վարում էր կրոնական, դատական, ինչպես նաև «վակիֆեր»-ի գործերը: Քաղաքներում գոյություն ունեւոստիկանմնրի՝ «շուրտայի» ինստիտուտը, որը հետևում էր կարգուկանոնին: Մասնավորապես՝ Մարվանյան իշխանությունում առկա էին տարբեր զբարտեսչություններ և դասեր, ինչպիսիք էին՝ մեծամեծների, վկաների, գրակարդացների, քաթիրների (քարտուղարների), նազիրների (ղիտորդ, վերակացու) և այլն²:

Անհրաժեշտ նյութերի քաղաքային պատճառով մեծք հնարավորություն չունենք լուսարանել ավատատիրական ինստիտուտների քրդական իշխանություններում: Այնուհանդերձ, ըստ մեզ հասած աղբյուրների, Մարվանյան ամիրայությունում ավատատիրական սեփականատիրության տարածված ձևերից էր «վակիֆը» (հոգ. քիվ՝ վուկուֆ):

Արքայան խալիֆայությունում վակիֆը հանդես եկավ IX դարում: Վակիֆ ճշանակում է վաճառքի ոչ ենթակա անշարժ գույք՝ կալվածք, ունեցվածք, որի տեղը կարող էր օգտվել միայն իր հասույթից, քայց անկարելի էր այն օտարել: Քե՝ Արքայան և

¹ Hacıp-k Xucray, Cəfər-namə, c. 38.

² Sbu՝ Իրն սղ-Ազնակ, էջ 108, 126, 147:

թե՛ հետագա շրջաններում վակֆ էին կոչվում այն հողերը, որոնք խալիֆայի կամ ազնվական և մեծահարուստ այլ մարդկանց կողմից առհավետ մվիրվում էին մահմեդական կրոնական և քաղաքական հաստատություններին՝ մզկիթներին, մեդրեսաներին, հիվանդանոցներին և այլն¹:

Ըստ մահմեդական շարիաթի, վակֆ կարող էին լինել ոչ միայն հողերը, այլև՝ խանութները, քարավանատները, քաղնիքները, արհեստանոցները, շուկաները և այլն: Կտակվածը համարվում էր Ալլահի սեփականությունը²: Օմայյաձ վակֆ էր հանձնվում հիմնականում անշարժ գույքը, քայք որոշ տատանումներից հետո սեփականատիրական այդ ձևը տարածվեց որոշ շարժական գույքերի, այդ թվում նաև գրքերի հավաքածուների վրա³: Վակֆերից ոչ մի տեսակի հարկ չէր գանձվում, եթե դրանցից ստացված եկամուտը ծախսվում էր տվյալ հաստատության համար, որին դրանք մվիրվել էին:

Մահմեդական Արևելքում վակֆերի կազմակերպումը զգալիորեն ուժեղացրեց մահմեդական հոգևորականության դիրքերը խալիֆայությունում:

Մարվանյան իշխանությունում վակֆը, որպես ավատատիրական սեփականության ձև կիրառվեց X դ. վերջերից⁴: Վակֆային կալվածքների հանձնումը կատարվում էր ամիրաների կողմից՝ այն դիտելով իրեն քարեգործություն: Վակֆային կալվածքների հանձնումը Մարվանյանների կողմից կիրառվեց Մայյաֆարիկինի պարսպի վերանորոգման և ամրաշինությունների համար⁵:

Ինչպես նրևում է Մարվանյան քուր ամիրաներն էլ, պաշա-

¹ И. П. Петрушевский, Ислам в Иране в VII-XV вв., А., 1966, с. 160.

² И. П. Петрушевский, Земледеание и аграрные отношения в Иране XIII-XIV веков, М.-А., 1960, 247-251.

³ А. Б. Халидов, Книжная культура. - Очерки арабской культуры V-XV вв., с. 271.

⁴ Ա. Փարզյան, Մարվանյան ամիրայությունում ավատատիրական հարստության մի քանի ձևերի մասին (ըստ Իրն ալ-Ազդակ ալ-Ֆաշիկի պատմության) .- Եջիստանդ արևելագետների համադպետական XIII գիտական նստաշրջանի թիզեզ, Երևան, 1987, էջ 21-22:

⁵ Իրն ալ-Ազդակ, էջ 110, 115, 138, 143...

պանական նպատակներով, գրադվեցին իշխանության մայրաքաղաքի պարսպի ամրաշինությամբ: Մեփական միջոցներով պարսպի վերանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո, պաշտպանությունն ուժեղացնելու և հետագա ծախսերը կատարելու համար վակֆ էին հանձնվում գյուղեր, քաղնիքներ, կամուրջներ և այլն¹:

Վակֆի ինստիտուտը զգալի տարածում գտավ մասնավորապես Մարզամյան Նասր աղ-Ղատլայի օրոք՝ XI դ. սկզբներին: Բացի Մայաֆարիկիմի պարսպից, այս ամիրան վակֆային կալվածքներ տրամադրեց մզկիթներին, աղքատներին, որբերին և այլն²: Նման վակֆեր, ըստ Իրն ալ-Ազրակի, շարունակեցին գոյություն ունենալ իշխանության անկումից հետո՝ XII դարում:

Վակֆեր էին հանձնվում նաև ամրոցների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Վակֆային եկամուտներից գոյացած գումարներով կառուցում էին այլ տիպի շինություններ³:

Ղատիլով Իրն ալ-Ազրակի տվյալներից՝ Մարզամյանների օրոք այլ պաշտոնների քվում գոյություն ունեւ վակֆային վերակացուի պաշտոնը: Պատմիչը մերք դա անվանում է «նազիր ալ-վակֆ», մերք՝ «ֆալի ալ-վակֆ» (վակֆի վերակացու, հսկիչ), ինչպես «ջարի մուամալաթ ալ-վակֆ» (վակֆի գործառույթումների կամ հաստատության հարկահամ)⁴: Սա խոսում է այն մասին, որ Մարզամյան իշխանությունում իրոք մեծ կարևորություն տրվեց վակֆի ինստիտուտին, որը նպաստում էր քուրդ իշխանների դիրքերի ամրապնդմանն ու մահմեդական աշխարհում նրանց հեղինակության քարձրացմանը:

Բացի վերոհիշյալից, ինչպես Մարզամյան, այնպես էլ քրդական մյուս իշխանություններում տարածում էր գտել «իկտա» սեփականության ձևը: Առաջին հերթին իրենք՝ քուրդ ամիրաները հանդիսանում էին խոշոր ավատատերեր, որոնց ձեռքում էին կենտրոնացված հիմնական «իկտաները»⁵:

¹ Նույն տեղում, էջ 162-164, 167, 190, 197, 222, 224-225, 246, 259:

² Նույն տեղում, էջ 115:

³ Նույն տեղում, էջ 164:

⁴ Նույն տեղում, էջ 115-116, 162:

⁵ Նույն տեղում, 180-181:

Ինչպես քրդական այլ իշխանություններում, այնպես էլ Մարվանյան ամիրայությունում որոշակի զարգացում ապրեց, մասնավորապես, ամրոցների, բերդերի և պաշտպանական այլ կառույցների շինարարությունը: Ի տարբերություն Հասանվայիների, որոնք իսկապես հույակ ձեռք բերեցին քաղմաթիվ մզկիթների և մահմեդական զանազան քարեգործական հիմնարկությունների կառուցմամբ, Մարվանյան ամիրաները շինարարական ակտիվ գործունեություն ծավալեցին:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի այդ մասին մասնավորապես Իբն ալ-Ազրակի տեղեկությունները, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Մեզ հասած նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավելի քան մեկ դար քիչ քե շատ քաղաքական անկախություն ձեռք բերած Մարվանյան ամիրաները, ինչպես նշվեց, շինարարական որոշակի գործունեություն ծավալեցին իրենց ենթակա տարածքներում: Դա, ըստ Իբն ալ-Ազրակի, սկիզբ է առնում դեռևս 984/5թ.¹ սեպտեմբեր ամսից՝ Մայյաֆարիկին քաղաքը գրավելուց անմիջապես հետո:

Իշխանության դիրքերն ամրապնդելու և Մայյաֆարիկին քաղաքի պաշտպանությունն ապահովելու նպատակով, ինչպես նրանում է, Բաղ ամիրան իսկույն ձեռնարկեց քաղաքի պարիսպը նորոգելու և կառուցապատելու աշխատանքները:

Խոսելով այդ մասին՝ Իբն ալ-Ազրակը գրում է, որ, երբ 984/5 թ.² (հիջ. 374թ.) քուրդ ամիրան զրավեց Մայյաֆարիկինը և, զբաղված լինելով նվաճումներով ու զորք հավաքագրելով, այն հանձնեց իր եղբորը՝ Աբու-լ-Ֆաուարես իբն Դուստաքին: Վերջինս էլ հաստատվեց քաղաքում և շուրջ երկու տարի նորոգեց նրա պարիսպը: Ըստ Իբն ալ-Ազրակի, այդ նմ վկայում պարսպի պատերին բողած արարներն փիմական արձանագրությունները³:

Դատելով Ասողիկի տվյալներով՝ քուրդ ամիրա Բաղն այս կարգի շինարարական աշխատանքներ էր ձեռնարկել դեռևս մինչև Մայյաֆարիկինի նվաճումը: «Եվ մինչ գալստ շփոթմամբ

¹ Նույն տեղում, էջ 51:

² Բաղի կողմից Մայյաֆարիկինի գրավման տարեթիվը որոշ ինչինակներ քվազրի են հիջ. 387 (983/4) թ.: Տես՝ Իբն ալ-Ասիր, VII, էջ 121-122:

³ Իբն ալ-Ազրակ, էջ 51:

էր քազավորութիւնն Յունաց, - գրում է Աստղիկը, - իշխարայ և Լփրկեբոտոյ ամիրայն Քատն վերստին շինէ զքաղաքն Մանազկերտ. և սրով և յատրի առեալ զքաղաքն Մուշ, խողխողեալ զքահանայս յեկեղեցուզն, որ սուրբ Փրկիչ անուանի՝ որորմնի տեսակաւ. յորում արեան ներկուածք ցարդ ևս ցուցանին ի նոյն յեկեղեցուք»¹:

Այսպիսով, Աստղիկի վկայութեանից երևում է, որ Քաղի կողմից Մանազկերտի նվաճումը տեղի էր ունեցել Վասիլ կայսեր և Վարդ Ալկերտսի միջև ծագած հակասութեանների ժամանակ: Քաղի մեռնելուց հետո (990թ.) Դավիթ Կյուրապաղատը, ինչպես գրում է Աստղիկը, իսկույն հարձակման անցավ, պաշարեց Մանազկերտը և այն զրավեց, դուրս վտարեց մահմեդական բնակչութեանը և քաղաքը բնակեցրեց հայերով ու վրացիներով (զուցե վրացադաժվան հայերով)²:

Մեր արամադրության տակ եղած նյութերը խտտում են այն մասին, որ այդուհանդերձ Մարվանյան ամիրաների շինարարական գործունեությունը հիմնականում սկսվում է Մայյաֆարիկի մի պարսպի ամրաշինություններով, որը հետագայում շարունակում են զրեթե բոլոր ամիրաները՝ Աբու Ալին (990-997թթ.), Մուսնահիդ աղ-Դաուլան (997-1011թթ.), Նասր աղ-Դաուլան (1011-1061թթ.), Նիզամ աղ-Դինը (1061-1063թթ.) և այլք: Մայյաֆարիկինը գնալով դառնում է Մարվանյանների ռազմաքաղաքական գործունեության գլխավոր կենտրոն: Ուստի պատահական չէ, որ հատկապես այստեղ էլ սկիզբ է առնում և հետզհետե քափ ստանում նրանց շինարարական գործունեությունը:

Մայյաֆարիկինը, ինչպես նշվեց, ուներ ամուր պարիսպ իր մի քանի դարպասներով ու աշտարակներով³: Խոսելով այդ մասին՝ Իբն ալ-Ազրակը նշում է, որ Մայյաֆարիկի մի պարիսպը, որը կառուցվել էր հիմն ժամանակներում, դիմացել էր մի շարք փորձությունների: Սակայն, Մարվանյանների օրոք քազմաքեփ տեղերից քանդվեցին նրա պատերը և հաճախ այն վերանորոգե-

¹ Աստղիկ, էջ 192:

² Նույն տեղում, էջ 266:

³ Ծախոք, V, էջ 237:

լու անհրաժեշտություն էր զգացվում¹: Կատարելով այդ աշխատանքները՝ Մարվանյամները, որպես կանոն, բողոմում էին արարելն վիճակն արձանագրություններ²:

Իրն ալ-Ազրակի տվյալները ցույց են տալիս, որ ինքն անձամբ հետաքրքրվել է այդ արձանագրություններով: Օրինակ, նա նշում է, որ Մուսմահիդ ադ-Ղատուլա ամիրայի անունն արձանագրված էր պարսպին դրսի կողմից՝ 22, իսկ ներսից՝ ավելի քան 30 տեղերի վրա³: Նույն ամիրան հիջ. 396(1005/6) թ. վերանորոգեց նաև պարսպի հիմնական դարպասը (Քար ալ-Մադիմա) և շինարարական աշխատանքների ընթացքում րացեց օժանդակ այլ դռներ⁴:

Մայյաֆարիկինի և նրա պարսպի մասին գրել են միջնադարյան րազմարիվ հեղինակներ: Առավել հետաքրքրական են XI դ. պարսիկ ճանապարհորդ Նասիրի խոսքովի վկայությունները Մարվանյամների օրոք քաղաքի և նրա հայտնի պարսպի, ինչպես նաև այլ կառույցների մասին:

1046 թ. նոյեմբերի 23-ին (հիջ. 438թ. օսմադ ալ-ավալ ամսի 26-ին) լինելով Մայյաֆարիկինում նա գրում է. «Քաղաքը շրջապատված է մեծ պարսպով՝ կառուցված սպիտակ քարերից, ուրնցից յուրաքանչյուրը 500 մաս կշիռ ունի: Իրանից 50 կանգուն հեռավորության վրա նույն սպիտակ քարից կառուցված են մեծ աշտարակներ: Պարիսպն իր ամրոջը երկարությամբ ժանիքավոր և այնքան լավ է պահպանված, որ թվում է, թե շինարարը դեռ նոր է ավարտել իր աշխատանքը»⁵: Այնուհետև, Ն. խոսքովի գրում է, որ քաղաքի դարպասի մոտ էր գտնվում մզկիթը՝ աղոթքի համար նախատեսված իր բոլոր հարմարություններով⁶:

Համաձայն նրա տվյալների, քաղաքից դուրս տարված էին

¹ Իրն ալ-Ազրակ, էջ 163:

² Voyages Archeologiques dans La Turquie Orientale par Albert Gabriel, avec un recueil D'Inscriptions arabes par Jean Sauvaget, vol. I, texte, Paris, 1940, pp. 312-319, 337-339.

³ Նույն տեղում, էջ 86:

⁴ Նույն տեղում, էջ 86-87:

⁵ Hacıur-u Xeyrây, с. 40.

⁶ Նույն տեղում:

արվարձանները, ուր գտնվում էին շուկաները, քարավանատները, քաղմիքները և մզկիթը, որտեղ ուրբաք օրերին անցկացվում էր նամազը¹:

Ինչպես երևում է Ն. Խոսրովի վկայություններից, Մարվանյան իշխանության ընդ մեծ քնակալայրերն ունեին համապատասխան շուկաներ, քաղմիքներ, քարավանատներ և, իհարկե, մզկիթներ²:

Ըստ պարսիկ ճանապարհորդի, ուրբաքոյա աղոթքի (Սուտ-քայի) ժամանակ այդ մարզի «սուլթանին» այսպես էին հիշատակում. «Սեծագույն ամիրա՝ իսլամի փառք, կրոնի երջանկություն, պետության պահապան և մահմեդական համայնքների պատիվ Արու Նասր Ահմադ»³: Անշուշտ, Ն.Խոսրովը ի նկատի ունի Նասր ադ-Ղատուլա ամիրային, որն, ըստ նրա, հարյուր տարեկան էր⁴:

Շարունակելով իր ճանապարհորդությունը՝ նույն քվակացին Ն.Խոսրովն անցնում է Ամիդ քաղաքով, որտեղ այն ժամանակ իշխում էր, ինչպես հայտնի է, Նասր ադ-Ղատուլայի որդին:

Պարսիկ ճանապարհորդն առանձնակի հիացումնքով է նկարագրում Ամիդի, նրա շինությունների, պարսպի, հոգևոր կառույցների գեղեցկությունը, մշելով, որ նման սքանչելի փայր նա չի համդիպել երկրագնդի վրա⁵: Ըստ Ն.Խոսրովի, Ամիդն ունեցել է կրկնակի պարիսպներ, որոնք, ինչպես և քաղաքի մյուս շինությունները, կառուցված էին գեղեցիկ ու մեծ սև քարերից: Այնուհետև, մա անդրադառնում է Ամիդի մզկիթին, նրա տակ գտնվող ջրամբարին, աղբյուրներին և այլն: Միաժամանակ նա գրում է, որ թե Մայյաֆարիկինում և թե՛ Ամիդում առկա էին մաև եկեղեցիներ⁶: Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ Մարվանյան իշխանության քնակչությունը քաղկացած էր թե՛ քրիստոնյաներից, թե՛ մահմեդականներից:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 40-41, 43:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 41-43:

⁶ Նույն տեղում էջ 40-43: Տես նաև՝ Իբն ալ-Ազրակ, էջ 107-108:

Մարվամյան ամիրայության շինարարական քուռն գործունեությունն, ինչպես նշվեց, սերտորեն կապված է այդ դինաստիայի ամենահզոր Նասր աղ-Դաուլա ամիրայի անվան հետ: Իշխելով ավելի քան 50 տարի՝ նրան հաջողվեց կարգավորել ամիրայության ներքին կյանքը և քաղաքացիական հարաբերություններ հաստատել հարևան պետությունների հետ: Այդ ամենն իր հերթին Նասր աղ-Դաուլային հնարավորություն տվեց զգալի ուշադրություն դարձնել շինարարական կառույցներին: Եթե իր նախորդների շինարարական գործունեությունն սահմանափակվեց հիմնականում եղած շինությունների, մասնավորապես, Մայյաֆարիկինի, Ամիդի պարիսպների, դարպասների վերանորոգմամբ և զմրեթափոր դամբարանների կառուցմամբ, ապա մա ոչ միայն շարունակեց այդ գործը, այլև՝ ձեռնարկեց մի քանի այլ կառույցների շինարարությունը:

Նասիր աղ-Դաուլայի անվան հետ է կապված, օրինակ, Մայյաֆարիկինի ամենախոշոր կառույցներից մեկը՝ իշխանության պալատը: Ինչպես երևում է պալատի կառուցումը և մասնավորապես նրա տեղանքի ընտրությունը լայն քննարկմամ առարկա էին դարձել: Չնայած ամիրան ցանկություն հայտնեց վերանորոգելու արար Համդանյանների հին պալատը, քայց իր վեզիրի՝ Խավաջա Աբու-լ-Կասիմի խորհրդով հիշ 403թ. սկզբներին (1012/13թ.) նա ձեռնարկեց նոր պալատի շինարարությունը՝ Մայյաֆարիկինի բարձրադիր հատվածներից մեկում՝ ալ-Մուլք աշտարակի մոտ: Այն, ըստ Իբն ալ-Ազրակի, կառուցվեց գեղեցիկ, ոսկեզօծվեցին նրա պատերն ու առաստաղը, որի վրա Մարվամյան ամիրան ծախսեց ասեղի հարստություն: Ապա՝ նա նորոգեց արվարձանի հանդիպակաց դիտարանը¹: Արար պատմիչը նշում է, որ նորակառույց պալատի տեղում գտնվում էր մի մեծ եկեղեցի, որի զույյն ու զերեզմանաքարերը Նասր աղ-Դաուլան տեղափոխեց «ալ-Մալիքիյա» եկեղեցի²: Պալատի քաղմիքի, ջրավազանների համար Միջագետքի հայտնի Ռասուլ-Այն քաղաքից ամիրան անցկացրեց մի ջրանցք³:

¹ Նույն տեղում, էջ 107:

² Նույն տեղում, էջ 107-108:

³ Նույն տեղում, էջ 108:

Քացի այդ, ըստ Իրն ալ-Ազրակի, Նասր աղ-Դաուլան Մայ-
 յաֆարիկիցից դեպի հարավ երկու օրվա հեռավորության վրա
 կառուցեց «ան-Նասրիյա քաղաքը»: Մեզ չհաջողվեց ճշտել այս
 քաղաքի գտնվելու վայրը, որովհետև նման տեղ չի արձանագր-
 վել միջնադարյան տեղանունների ոչ մի քառագրքում: Իրն
 ալ-Ազրակի վկայությունը հաստատում է միայն պարսիկ հեղի-
 նակ Նասիրի խոսքովը իր «Մաֆար-նամե» գրքում: Առանց
 մանրամասնություններ հայտնելու, մա գրում է, որ Մարվանյան
 այդ ամիրան «Մայյաֆարիկիցից յորս փարսախս հեռավորու-
 յան վրա կառուցեց մի քաղաք՝ Նասրիյա անունով»¹: Այս քա-
 ղաքը, ինչպես երևում է, դարձավ Մարվանյան գերդաստանի
 հանգստավայր, ուր Նասր աղ-Դաուլան կառուցեց դարձյալ մի
 պալատ, քաղմիքներ, բնակելի տներ, շուկա, ջրավազաններ:
 Դեպի ան-Նասրիյա տանող ճանապարհին ևս կառուցվեց մեկ
 մզկիթ, կամուրջ, հյուրանոց (քարավանատուն) և այլն: Քուրդ ամ-
 միրան զարմանն այստեղ էր գալիս իր ընտանիքի, կանանց,
 գերդաստանի մյուս անդամների հետ և ամռան սկզբներին վե-
 յադատնում էր կրկին Մայյաֆարիկին²:

Ան-Նասրիյայի շինությունների վրա, ինչպես գրում է Իրն ալ-
 Ազրակը, ամիրան ծախսեց «ամբիվ ու անհամար հարստու-
 րյուն»³:

Քացի մահմեդական այլևայլ շինություններից, Նասր աղ-
 Դաուլան (ինչպես և մյուս ամիրաները) սկզբից ևեթ զգալի ու-
 շադրություն դարձրեց Մայյաֆարիկիցի պարսպի վերանորոգ-
 մանը: Իրն ալ-Ազրակը գրում է, որ ինքը հաշվել է նրա վերանո-
 րոգած հատվածները: «Անունն արձանագրված էր պարսպի
 ներսից՝ 9-ը, -ստում են մաև 20, - գրում է պատմիչը, - իսկ դրսի
 կողմից՝ ավելի քան 30 տեղերի վրա»⁴:

Մարվանյան իշխանության մայրաքաղաքը խնելու և ոռոգ-
 ման ջրով ապահովելու մպատակով Ռաս-ուլ-Այն քաղաքից
 անցկացվեցին ևս երկու ջրանցք: Դրանցից մեկը ձեռնարկեց

¹ Наср-и Хосрай, с. 41.

² Իրն ալ-Ազրակ, էջ 141-143:

³ Նույն տեղում, էջ 143:

⁴ Նույն տեղում, էջ 164:

Մարվանյանների վակֆի քրիստոնյա վալին՝ Իրն Շահյան, ուրի վրա էլ մա մեծ գումար ծախսեց¹:

Իսկ մյուս ջրանցքն իր միջոցներով անցկացրեց Մայրաֆարիկինի առևտրականներից մեկը՝ Արու Բաքը Մուհամմադ Ջառան: Լինելով մեծ ունեցվածքի տեր անճնավորություն՝ Նասր աղ-Ղատուլայի քույրավորյամբ, մա ջուրն անցկացրեց քաղաքի մեջ, որովհետև, ինչպես նշում է Իրն ալ-Ազրակը, քնակիչները վաղուց ի վեր գործածում էին քրիտոնների ջուրը: Պատմիչի վկայությամբ, դա Նասր աղ-Ղատուլայի օրոք անցկացված երրորդ ջրանցքն էր և թվով յոթրորդը, որոնք քերվում էին մույն Ռասուլ-Այնից: Գրանից առաջինը, մինչ Մարվանյանների կողմից Մայրաֆարիկինի գրավումը, իր պալատն էր անցկացրել արաբ Համդանյան Մայֆ աղ-Ղատուլա ամիրան²:

Օմայյաժ Նասր աղ-Ղատուլայի իշխանության շուրջ 50 տարիները համեմատաբար խաղաղ էին և նրան հաջողվել էր քիչ քեշառ քարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան պետությունների հետ, թայց այդ ընթացքում, ինչպես նշվեց, մա զգալի ուշադրություն դարձրեց ամրաշինությունների վրա: Օրդինակ, այդ կարգի ամրություններ մա կառուցեց սասունցիների (արաբ.՝ սամասիմա) հարձակումները կանխելու համար: Տվյալ ամրաշինությունները, ինչպես զրում է Իրն ալ-Ազրակը, Նասր աղ-Ղատուլան³ կառուցեց իր ունեցվածքով, որով նրան հաջողվեց պաշտպանության ամուր պատենչ տեղծել Սասունի սահմանագլխում և դրանով իսկ հետ մղել «սամասիմանների»

¹ Նայն անգամ:

² Նայն անգամ, էջ 155-166:

³ Իր աշխատությունում Իրն ալ-Ազրակը քազմիցս խոսում է սասունցիների և նրանց քազազոր Մամխարիի մասին (տես՝ Իրն ալ-Ազրակ, էջ 46, 78, 168-169, 223, 284): Պետք է ենթադրել, որ Մամխարիից Վասպուրականի Արծրունյաց Մենեքերիմ քազավորն է, որը խնամակալան կապիք ռոնիք մահմեդական ամիրաների, արխազների քազազոր Բազրաու Բազրաաու-նա (տես՝ Վ. Վաքրամյան, Վասպուրականի Արծրունյաց քազավորությունը 908-1021թթ., Երևան, 1969թ., էջ 200), ինչպես նաև Մարվանյան Արու Ալիի և Նասր աղ-Ղատուլայի հետ: Մենեքերիմ Արծրունի՞ն իր աղջիկներից մեկին կնության էջ տվել Արու Ալիին, որի սպանությունից հետո նրա հետ ամուսնացավ իզրայրը՝ Նասր աղ-Ղատուլան (Իրն ալ-Ազրակ, էջ 78, 169):

(սասունցիների) կողմից սպառնացող վտանգը¹:

Բացի վերոնշյալից, Իրն ալ-Ազրակը վկայում է, որ Նասր աղ-Ղատուլային քիչ քիչ շատ մտահոգում էր ռոզզման սիստեմը: Այդ մպատակն էր հետապնդում, օրինակ, Մայյաֆարիկինում ջրամբարի կառուցումը²: Իսկ ան-Նասրիայում, ըստ պատմիչի, ռոզզումը կատարվում էր գետի վրա տեղադրված ջրանիվների օգնությամբ³:

Նասր աղ-Ղատուլայից հետո շինարարական որոշ աշխատանքներ ձեռնարկեց նրա որդին՝ Նիզամ աղ-Ղինը: Հիջ. 461 (1068/9) թ. իր միջոցներով նա կառուցեց Մայյաֆարիկինի ալ-Մուլք պալատի յորրորդ հարկը և քաղաքի ներսում, դարպասի ուղղությամբ, երկու աշտարակներ, դիտարան և այլն: Նիզամ աղ-Ղինը միաժամանակ ուժեղացրեց Մայյաֆարիկինի և Ամիդի պարիսպների ամրությունը և դա, ըստ Իրն ալ-Ազրակի, հաստատում է դրանց պատերին ամիրայի քոդած արաբերեն արձանագրությունները⁴:

Խոսելով Նիզամ աղ-Ղինի կառույցների մասին՝ արաբ պատմիչը ավելացնում է, որ նրա օրոք զգալիորեն շենացավ Մայյաֆարիկինը⁵: Վերջինի մահից հետո իշխանությունն անցավ նրա որդուն՝ Նասիր աղ-Ղատուլային, որի օրոք էլ սկիզբ առավ Մարվանյան ամիրայության քայքայումը:

Ինչպես նշվեց վերևում, հիջ. 478 (1085/6) թ. սելջուկյան Մելիք շահի զորքը ներխուժեց Մայյաֆարիկինը⁶: Դիմադրության ընթացքում սելջուկները քանդեցին պարսպի առանձին հատվածներ, ինչպես նաև «Բար առ-Ռարդ» աշտարակը (արվարձանի դարպասը): Նասիր աղ-Ղատուլան ձեռքակալվեց և արտոյվեց Մայյաֆարիկինից:

Բացի վերը նշված շինություններից, Մարվանյաններն ուշադրություն դարձրեցին նաև գմբեթավոր դամբարանների կոնս-

¹ Նույն տեղում, էջ 168:

² Նույն տեղում, էջ 168-169:

³ Նույն տեղում, էջ 141:

⁴ Նույն տեղում, էջ 197-199:

⁵ Նույն տեղում, էջ 199:

⁶ Նույն տեղում, էջ 212: Տե՛ս նաև՝ Իրն ալ-Աջիր, VIII, էջ 138:

րա), կամուրջների, մզկիթների և մահմեդական այլ կառույցների վրա¹: Մայյաֆարիկիմում Մարվանյաններն ունեին իրենց գերդաստանի դամբարանը, որի շինարարությունը 1063/4թ. սկսեց Նասր աղ-Ղատուլայի դուստրը՝ Միթ ալ-Մուլլը և այն հայտնի էր «ալ-կուրբա ալ-Մարուամիյա» (Մարվանյանների դամբարան) անունով²:

Մարվանյան իշխանության կառույցներն ու վերանորոգած շինությունների³ մի մասի ծախսերը, ինչպես նշվեց վերևում, կատարվում էին ամիրանների սեփական միջոցներով, իսկ մի մասն էլ՝ վակֆից ստացված եկամուտների հաշվին: Ինչպես նշվեց, Մայյաֆարիկնի պարսպի, մահմեդական և քարեգործական այլ հաստատությունների համար վակֆ էին համձեռնվում գյուղեր, րադնիքներ, իջևանատներ և այլն⁴:

Մարվանյան ամիրանների շինարարական գործունեության վերաբերյալ մեզ հասած արարալիզու տվյալները հաստատվում են գիտական հրապարակի վրա եղած արարերին վիմագիր նյութերով: Եվրոպացի վիմագրագետներ Մասք Ֆոն Բերխեմի, Ալբերտ Գարրիելի հրատարակած աշխատություններում տեղ են գտել նաև X դ. 90-ական-XI դ. 70-ական թթ. Մարվանյան ամիրանների՝ Մուժմահիդ աղ-Ղատուլայի, Նասր աղ-Ղատուլայի, Նիզամ աղ-Ղինի, Նասիր աղ-Ղատուլայի թողած որոշ արձանագրություններ: Ղրանք վերաբերում են եիմնականում Մայյաֆա-

¹ Նայն տեղում, էջ 57, 78, 103, 141, 143, 145, 177, 179:

² Նայն տեղում, էջ 177, 179, 247, 255:

³ Խոսելով Մարվանյանների շինարարական գործունեության մասին, Իբն ալ-Ազրակը գործածել է երկու՝ «թամա» և «ամմաթա» բառերնուստից: Տեքստում համեմատաբար ավելի գաղթածական է «թամա» բառացմաթ, որը նշանակում է կառուցել, շինել և այլն: Իսկ «ամմաթա»-ն նույնպես նշանակում է կառուցել, շինել, եիմնել, քնակեցնել: Նայն այս աղծառից էլ առաջացել է «իմաթա» գոյականը, որը նշանակում է շինք, կառույց, շինարարություն, շինարյուն և այլն (տես՝ Իբն Մամգուր, IV, էջ 604; XIV, էջ 95-96):

Ներկա բայարմատները, վաստորին, հեղինակը օգտագործել է որպես համահյնք, համարմեցնել՝ կառուցել, շինել, կառուցադրակել և այլն: Մակայն, դրանք նրբեմն այս իմաստով չեն օգտագործվում և կաշեի է հասկանալու նորոգել, վերանորոգել, մամամախանդ այն դեպքում, եթ խաթը գնում է Մայյաֆարիկիի քանդված շինարյունների վերանորոգման մասին:

⁴ Իբն ալ-Ազրակ, էջ 164, 200:

քիկիցնի, Ամլոյի սարիսպների վերանորոգմանը, մահմեդական այլ կառույցներին: Եթե իրն ալ-Ազրակը առհասարակ լուծ է ճարտարապետների, վարպետների մասին, ապա առանձին արձանագրություններում ցույց է տրվում (մահմեդական անուններով) վարպետների անունները: Դրա հետ մեկտեղ, իբրև կանոն, արձանագրություններում սկզբից նշվում է, թե ո՞ր ամիրայի հրամանով, երբ և որ վեզիրը, կառավարիչը կամ կադին (դատավոր) է իրականացրել տվյալ կառույցը¹ և ինչպիսի միջոցներով:

Ամփոփելով ասեմք, որ Մարվանյան ամիրաների ամրաշինությունների և ընդհանրապես շինարարական գործունեության մասին մեզ հասած հաղորդումները չափազանց հետաքրքրություն են ներկայացնում, հազվագյուտ են: Ինչպես դժվար չէ նկատել, դրանով Մարվանյան ամիրաներն ամենից առաջ ցանուն էին տվյալ տարածքում՝ Դիյար Բաքրում ուժեղացնել իրենց քաղաքական և տնտեսական կշիռը, ինչպես մաև ամրապնդել դինաստիայի դիրքերը և սպառնալի նրա պաշտպանությունը:

¹ Max Van Berchem, *Arabicshs in schriften aus Armenien und Diarbekr*, Berlin, 1907, p. 3-6, 8...*Shu Sush Spus' Materiaux pour l' epigraphie et l' histoire musulmanes du Diyar Bekr*, et F. Stry-gowsk, *Amida*, Paris-Heidelberg, 1910, pp. 23, 25-26, 28-29, 32, 35. *Shu Sush' Voyages Archeologiques*, նշված աշխ., էջ 312-319, 337-339.

Միջնադարյան արարալիզու և օժանդակ այլ սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին՝

– ինչպես մախկիմում, X-XI դարերում ևս քրդական ցեղերը ընակվում էին Արրասյան խալիֆայության գլխավորապես լեռնային և կիսալեռնային հսկա զանգվածներում՝ Ջիրալում, Մոսուլի մարզում, Ջազիրայում, Ատրպատականում և իրանական այլ մահանգներում, որտեղ պարսկական խալիֆայության գերիշխանությունը շատ հաճախ կրում էր ձևական քնույթ.

– ռազմաքաղաքական քուռն իրադարձություններով լի այս ժամանակաշրջանում նկատվեց քրդերի չափազանց ակտիվացումը տարրեր վայրերում, որը պայմանավորված էր ամենուրեք ժողովրդական հզոր շարժումների, մամավանդ իրանական տարրի անմախաղեպ ակտիվացման և 945 թ. Բուխնեի կողմից Բաղդադը գրավելու հետևանքով Արրասյան խալիֆայության աստիճանական քայքայման հետ.

– սկսած VIII դարից՝ անդադար ընդվզումներով քրդերն անկայուն իրավիճակ էին առաջացրել խալիֆայության կենտրոնական շրջաններում՝ դրանով իսկ զգալի լարվածություն ստեղծելով Բաղդադի արքունիքի համար.

– ելնելով տմտեսական, ռազմաքաղաքական, ինչպես նաև իր դիրքերն ամրապնդելու նպատակներից՝ քրդական վերնախավն ամբողջությամբ անցավ իսլամի ծառայության, կարևոր դեր խաղալով քրդական միջավայրում կրոնական այդ գաղափարախոսության տարածման գործում: Գրա հետևանքով խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդերի կողմից իսլամի ընդունումը կրեց զանգվածային քնույթ.

– օգտվելով խալիֆայությունում ստեղծված ռազմաքաղաքական բարենպաստ պայմաններից՝ քրդական ավագանուն, տևական պայքարի արդյունքում, հաջողվեց X դ. նրկոդդ կեսից, իսլամի դրոշի ներքո, առանձին վայրերում որոշակի քաղաքական անկախություն ձևոք րերել: Իբրև ավատատիրական ժամանակավոր կազմավորումներ, դրանք իրար հետևից էլ վերացան պատմության քստերաքեմից՝ ներքին նրկպատակություն-

մերի և արտաքին հարվածների հետևանքով: Այնուհանդերձ, X-XI դդ. իրավամբ կարելի է համարել քրդական իշխանությունների ժամանակաշրջան, որտեղ պատմության ողջ ընթացքում քրդական ավատատեր վերնախավին առաջին անգամ հնարավորություն ընձեռվեց իր շուրջը համախմբելու ցեղակիցներին և ժամանակավորապես իր տիրապետությունը հաստատելու առանձին տարածքների վրա.

– ինչպես մերձավորարևելյան պետական այլ կազմավորումներ, այնպես էլ քրդական այդ իշխանությունները քաղկացած էին հիմնականում քաղաքային և բերդ-ամրոցային տիրույթներից: Այս նրևույթը, ինչպես հայտնի է, արարածահմնդական իշխանությունների գլխավոր հատկանիշներից էր, որը եետապնդում էր ռազմական և քաղաքական մպատակներ: Իրենց ձեռքում պահելով այս կամ այն շրջանի գլխավոր քաղաքների կամ ամրոցները՝ քուրդ ամիրաները դրանով ամրապնդում էին իրենց դիրքերը տվյալ տարածքում.

– քաղաքներում, որոնք, որպես կանոն, ունեին պարիսպներ, դարպասներ, շուկաներ, կրոնական հաստատություններ և այլն, կենտրոնացված էր մահմեդական բնակչությունը, որը և հանդիսանում էր քրդական իշխանությունների հիմնական հենարանը.

– քրդական իշխանություններն իրենց կառուցվածքով, ինտիտուտներով և նկարագրով, անկասկած, մահմեդական միապետական-ժառանգական իշխանություններ էին, որոնց սերտորեն կապված էին արարածահմնդական աշխարհի հետ: Արաբներնց հանդիսանում էր քրդական այդ իշխանությունների պաշտոնական և հաղորդակցության հիմնական լեզուն.

– հաշվի առնելով քրդական ցեղերի ազրեսիվ գործողություններն Արբայան խալիֆայությունում, և ելնելով կենտրոնական իշխանության ռազմաքաղաքական և տնտեսական շահերից, ինչպես նաև նրանց հակաարաբական պայքարը մեղմելու նպատակներից՝ արարալեզու հեղինակները VIII դ. սկսեցին զբաղվել քրդերի էթնիկական ծագման հիմնահարցով՝ հատկապես շեշտը դնելով արաբական ծագման վարկածի վրա.

– պատահական չէ, որ ռազմաքաղաքական նպատակներով արաբների կողմից քրդերի արաբական ծագման վարկածի մշակման հիմնական հայրենիքը X դարից դարձան հատկապես ժամանակակից իրաքյան Քուրդիստանը և նրա հարակից

չրջանները, ուր վաղուց ի վեր հաստատվել էին մեծ թվով արա-
բական ցեղեր.

– ուսումնասիրվող ժամանակաշրջանում քրդական ցեղերի
հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, որով էլ պայ-
մանավորված էին խալիֆայության տարրեր վայրերում, մաս-
նավորապես Մոսուլի մարզում,՝ Ջազիրայում և այլուր նրանց
չփումները, ինչպես արաբական, այնպես էլ իրանական ցեղերի
հետ.

– կենտրոնական իշխանության աստիճանական քայքայ-
ման և սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական զանազան
դրդապատճառների հետևանքով քրդերենի տարրեր քարքառնե-
րով խոսող քրդական ցեղերի՝ VIII դարի կեսերից սկիզբ առած
տեղաշարժերն ուսումնասիրվող ժամանակաշրջանում ավելի
լայն մասշտաբներ ընդունեցին.

– առավել հետաքրքրական է նրանց ռազմագաղթը, մասնա-
վորապես՝ դեպի Վերին Միջագետք և պատմական Հայաստանի
հարավային շրջաններ: Քրդական ցեղերի այս ռազմագաղթը
տեղի ունեցավ ավելի խաղաղ և անաղմուկ, առանց լուրջ ընդ-
հարումների: Ռազմաքաղաքական տարրեր իրադարձություն-
ների հետևանքով X դ. երկրորդ կեսից Հայաստանի հարավ-
արևմտյան գավառներում գրեթե չբացել էր արաբական տարրը,
որի երկարատև քայքայիչ քաղաքականությունը մպաստեց
ավյալ տարածքներ քրդական ցեղերի դյուրին ներթափանցմա-
նը: Այդ գործընթացը, այսինքն՝ քրդերի տարածումը Հայաստա-
նում, մեզ հայտնի պատմական իրադարձությունների հետևան-
քով, ավելի խորացվեց հետագա դարերի ընթացքում՝ թյուրքա-
կան տիրապետության ժամանակաշրջանում.

– XI դ. 20-ական թթ. հետավոր Միջին Ասիայից սկիզբ առած
թյուրքմեն-օղուզների արտագաղթերը դեպի Մերձավոր և Միջին
Արևելք ամուր հիմքեր ստեղծեցին՝ սելջուկյան աշխարհակա-
լության ձևավորման և հետագայում տարածաշրջանում թյուր-
քական տարրի հաստատման համար: Մերձավոր և Միջին
Արևելքում սելջուկների երևան գալը ձևավորեցին ռազմաքաղա-
քական նոր հարաբերություններ, որոնք ճակատագրական նշա-
նակություն ունեցան բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև
քրդերի կյանքում: Իրենց քոլվորական կացութաձևով և վայրագ
քնույթով սելջուկներն արմատապես փոխեցին տարածաշրջանի

քղաքական քարտեզը.

– քրդական ցեղերի արտագաղթներին նոր բաժի հաղորդեց սելջուկյան տիրապետությունը, որի օրոք տաղրեր հանգամանքներով արագացվեցին հախտակ ժողովուրդների տեղաշարժերը.

– սելջուկյան լուծը շատ ավելի դաժան եղավ, քան արաբական գերիշխանությունը, որի հետևանքով անկում ապրեցին քրդական իշխանությունները, և XI-XII դդ. շարունակվեց քրդերի արտագաղթը դեպի Սիրիա, Եգիպտոս, իսկ XIII-XIVդդ. Հյուսիսային Աֆրիկա և այլուր:

КУРДЫ В ЭПОХУ АББАСИДСКОГО ХАЛИФАТА X-XI ВВ

(Резюме)

История курдов в X-XI вв. по праву считается составной частью истории подвластных Аббасидскому халифату стран и народов. Являясь одним из самых интересных периодов арабо-мусульманской истории, он ознаменовался бурными военно-политическими событиями и глубокими социально-экономическими переменами.

Период, в частности, характеризуется тем, что, массово принимая ислам, курдские племена под руководством феодальной верхушки впервые сделали попытку относительного объединения. Благодаря этому на исторической арене появились несколько независимых и полунезависимых курдских династий-временных феодальных структур, явившихся результатом определенных военно-политических условий.

Другой основной особенностью изучаемой эпохи является то, что курдская верхушка, проявившая серьезные намерения укрепить свои политические и экономические позиции и расширить сферу своего влияния в разных областях халифата, практически полностью перешла на службу исламу, способствуя этим не только новым миграциям соплеменников, но и их вовлечению в сферы так называемой арабо-мусульманской общественно-политической и культурной жизни.

Подобная беспрецедентная и мощная активизация курдских племен в X-XI вв. прежде всего тесно связана с

тем глубоким военно-политическим и социально-экономическим кризисом на Ближнем и Среднем Востоке, который еще в середине IX века начал переживать Аббасидское государство. Возникшие в упомянутую эпоху в разных областях халифата крупные народные движения, антиарабская и антифеодалная борьба, а также сепаратистские устремления местных правителей и феодальная эксплуатация, а вследствие этого крайнее расслоение общества, подорвали позиции арабского господства.

Тем не менее, длительная антиаббасидская борьба подвластных, в особенности иранских народов, под знаменем шиизма в IX-X веках, увенчалась значительным успехом. После завоевания Багдада иранскими Буидами в 945 году Аббасидское государство примерно в течение двух столетий было лишено политического господства, и на бескрайних просторах восточного халифата признавалась только его духовная власть.

Активизация иранского элемента дала также толчок началу военно-политических действий курдских племен в различных областях халифата. Начиная с этого периода и до XI века (появление тюрков-сельджуков на Ближнем и Среднем Востоке) курды в результате стечения ряда исторических обстоятельств установили действенные политические контакты с мусульманскими эмиратами, приобрели в отдельных местах некоторую политическую самостоятельность.

В 20-30-ых годах XI века на Восточный халифат из глубин Средней Азии началось мощное наступление тюркских племен: кочевников-огузов, которое в 40-ых годах того же века подготовило почву для разрушительных походов тюрков-сельджуков. Появление и долговременное господство на Ближнем и Среднем Востоке тюрков-сельджуков сыграло судьбоносную роль в жизни стран и народов региона.

Этот интересный, но одновременно сложный период в истории курдов до сих пор не становился серьезным

предметом исследования со стороны востоковедов. В опубликованных на восточных и европейских языках трудах освещаются, в основном, проблемы новой и новейшей истории курдов. Это прежде всего объясняется тем, что до сих пор в необходимой мере не изучались различные первоисточники, проливающие свет на историю курдов в средние века.

Изучение истории курдов X-XI вв. само по себе интересно и с научно-практической точки зрения: для наиболее точного комментирования исторических предпосылок сегодняшних бурных событий, общественно-политических и социально-экономических процессов, происходящих в ближневосточном регионе.

Тема очень актуальна не только в части обозначения этапов развития истории курдов, но и объективной оценки и освещения стоящих на повестке дня современных курдских проблем в странах Ближнего Востока.

Хронологические рамки работы охватывают приблизительно двухсотлетнюю историю - с первой половины X века по конец XI века - эпоху владычества Великих Сельджуков. Она полностью соответствует периодизации средневековой истории стран и народов Ближнего и Среднего Востока.

Подавляющее большинство дошедших до нас материалов по этой теме относится к военно-политическим событиям, отображенным, главным образом, в средневековых арабоязычных исторических, географических и других источниках, значительная часть которых не была использована наукой.

В данной работе в первые на фоне развития военно-политических событий, кроме различных исторических проблем, исследуется история трех курдских династий: Хасанвайхидов, Анизидов и Мерванидов. Этот выбор не случаен, поскольку было учтено то обстоятельство, что этнический элемент данных династий состоял в основном из курдских племен. Помимо прочего, были уч-

тены те географические территории, которые курды продолжают населять по сей день.

Для анализа сообщений арабоязычных первоисточников на общем фоне истории Ближнего и Среднего Востока были использованы труды армянских, русских, европейских и восточных историков-востоковедов.

THE KURDS IN THE PERIOD OF ABBASID CALIPHATE X-XI-TH CENTURIES

(Summary)

The history of the Kurds in X-XI-th centuries is considered to be a constituent part of the history of countries and nations, which were under the empire of Abbasid Caliphate.

Being one of the most interesting periods of arab-muslim history, it was marked as a period of stormy military-political events and deep social-economical changes.

The period, in particular, is characterized by total adoption of Islam, during which the Kurdish tribes led by the feudal upper class, first made an attempt of relevant consolidation.

Due to this fact, some independent and semi-independent kurdish dynasties-temporary feudal structures appeared on the historical arena, which was the result of certain military-political conditions.

On the other hand, the next important peculiarity of the studied period, is that the Kurdish upper class which showed serious intentions in strengthening its political and economical position in widening the sphere of its influence in different regions of caliphate, was totally went over to serve the Islam, promoting not only the new migrations of fellow tribesmen, but their involving in the spheres of so called arab-muslim social-political and cultural life as well.

Such an unprecedented and strong activity of Kurdish tribes in X-XI centuries, first of all is closely connected with the deep military-political and social-economical crisis in the Middle and Near East, which was faced by Abbasid Caliphate in the middle of the IX century.

Huge national movements, anti-arabic and anti-feudal struggle, separative aspirations of the local rulers, feudal exploitation and as

a result of its extreme stratification of the society which appeared in the above mentioned period, undermined the basic positions of Arab supremacy.

Nevertheless long-term antiabbasid struggle of all dependent and the Iranian nations in particular, under the Shiah banner in IX-X centuries were of big success.

After Baghdad was conquered in 945 by Iranian Buids, for nearly two centuries, Abbasid State had been deprived of its political supremacy, and on its vast territories only spiritual power was recognized.

Activizations of Iranian element, stimulated the beginning of military-political activities of Kurdish tribes in different regions of Caliphate. Since that period and till XI century, (the period when turk-seljuks appeared in the Near and Middle East) the kurds, as a result of certain circumstances, established working political contacts with the Muslim Emirates, gaining some political independence in some regions.

In 20-30 ies of XI century there was a large scale offensive on Eastern Caliphate from the depths of Middle Asia, by Turkic tribes: nomad-oguz, and this offensive in the 40-ies of the same century, provided a positive ground for destroying companies by Turkic-Seljuks. The appearance and the long-term supremacy of Turkic-Seljuks in the Near and Middle East played a basic role in the life of the countries and nations of the region.

This interesting and at the same time difficult period in Kurdish history, hasn't been seriously studied by the orientalists.

The articles published in the Eastern and European languages, introduced only the problems of Kurdish new and modern history. First of all it may be explained by the fact, that up to now different primary sources spreading light on the Kurdish history in the middle ages, haven't been seriously studied.

As a matter of fact studying the history of Kurdish in X-XI centuries, is quite interesting from the scientific and political point of view: for better comments on historical requisites of current stormy events, social-political and social-economic processes taking place in the Near East region.

The subject in actual not only for the explanation of stages of the

development in the history of Kurds, but also important for objective estimations of scheduled Kurdish problems in the Near East countries.

The chronological limits of the study, covers nearly a period of two centuries, the first half of X-th century up to the end of the XI-th century, an epoch of supremacy of the Great Seljuks. It completely corresponds the periodicity of Middle Ages history of the countries and nations of Middle and Near East.

The basic majority of available materials on this subject, refers to the military-political events, mainly reflected in the Arabic sources on history, geography and others, hasn't been used by the explorers.

In this study, for the first time, on the background of the development on the military and political events, besides the variety of historical problems, the history of the three Kurdish dynasties-Hasanvaihid, Annazid and Mervanid is being studied. The choice is not made by chance, as the ethnic element of these dynasties consisted mainly from Kurdish tribes, was taken into account.

Above all territories populated by Kurds nowadays, were also taken into consideration

The studies of Armenian, Russian, European and Oriental historians-orientalists were used for the reporting analysis of the Arab language primary sources, on the general background of the Near and Middle East history.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԶԵՆԱԳՐԵՐ

ՈՂ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Սամվել Պետեր-
բուրգի բաժանմունք, N C-350, հ. II, 782, Ֆ - Վ 202, 781, Վ-
603, 1708:

2. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների
մասին, Յակոբ ալ-Համալի, Աբու-լ-Ֆիրյա, Իբն Շադադ, կազմեց՝
Հ. Թ. Նաիրամյանը, Երևան, 1965թ.:

Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, քարգմ.՝ Վ.Գևորգ-
յանի, Երևան, 1971թ.:

Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, քարգմ., առա-
ջաբանը. ծանոթագր.՝ Վաղրագ Առաքելյանի Երևան, 1982թ.:

Մատթեոս Ուտիայեցի, Ժամանակագրություն, աշխարհարար
քարգմ. և ծանոթագր.՝ Հրայ Բարթիկյանի, Երևան, 1991թ.:

Մտեհիանոսի Տարօնեցոյ Աստղական, Պատմություն տիեզերա-
կան, երկրորդ տպագր., Ի. Ս. Պետրբուրգ, 1885թ.:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, XI, արա-
րական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, քարգ. քննադրից, առաջա-
բանն ու ծանոթ.՝ Ա Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981թ.:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, XII, ասո-
րական աղբյուրներ, Բ, Ամանուն Եղեսացի, Ժամանակագրու-
թյուն, քարգ. քննադրից, առաջաբանն ու ծանոթ.՝ Լ.Հ. Տեր-Պետրոս-
յանի, Երևան, 1982թ.:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, VI, Բյու-
զանդական աղբյուրներ, Բ, Կոմստամբուլի Միրամաժիմ, քարգմ.
քննադրից, առաջաբան և ծանոթագր.՝ Հրայ Բարթիկյանի, Երևան,
1970:

Օտար արքայութենի չարատանի և հայերի մասին, Խ. Բյուզանդական արքայութիւն, Գ, Հովհաննես Սկիւրցես, Բանակ Կոմնենոս, քարգճ. քննարկից, անտիարան և ծանոթ. Հրայ Բար-բիլյանի, Երևան, 1979թ.:

Абу Дулаф, Вторая записка, изд. текста, пер., введение и комментарии П.Г. Булгакова и А.Б. Халидова, М., 1960.

Байзиди Мела Махмуд, Нравы и обычаи курдов, пер., пред., М. Б. Руденко, М., 1963.

Байзиди Мела Махмуд, Таварих-и кадим-и Курдистан („Древняя история Курдистана,“), т.1, пер. с персидского языка на курдский язык, изд. текста,

Пред., указатели и оглавление К.Курдоева и М. Мусвезяна, М., 1986.

Бидлиси Шараф Хан, Шараф-Наме, т. I, пер., пред., примеч. и прилож. Е.И. Васильевой, М., 1967.

Бидлиси Шараф Хан, Шараф-Наме, т. II, пер., пред., примеч. и прилож. Е.И. Васильевой, М., 1976.

Насир-и Хусреу, Сафар-наме, Книга путешествия, пер. и вступительная статья Е.Э.Бертельса, М.-Л., 1933.

Папазян А., Новые источники по истории курдского народа, „Մրճափոր և Մթնին Արևելքի երկրներ և ծիրափորներ“, VII, արարական երկրներ, 1975, էջ 209-225:

Ас-Сабн Хилал, Установления и обычаи двора халифов, пер. с арабского, пер. и примеч. И.Б.Михайловой, Мю, 1983.

